

ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԱ
2008



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

Ն ո յ ե մ ք ե ր
2008

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 9-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Նոյեմբերի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 9-րդ տարեդարձի առիթով Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը:

Հավարտ սրբազան արարողության Իջման Սուրբ Սեդանի առջև Եզնիկ Սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի կատարած եկեղեցաշեն և ազգանվեր գործունեությանը: Ոգեշունչ քարոզից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ավանդույթի համաձայն Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձի առիթով, եկեղեցականաց հանդիսավոր թափոքով Մայր Տաճար բերվեց Սկևռայի նշանավոր մասնատուփը: 1283 թ. Սսի Կոստանդին արքեպիսկոպոսի հրամանով ստեղծված և 18 սրբերի (Ս. Պողոս, Պետրոս, Թադեոս, Բարդուղիմեոս առաքյալների, Գրիգոր Լուսավորչի, Հակոբ Մծբնա Հայրապետի, Հովհան Ոսկեբերանի, Ս. Կատարինեի և այլոց) մասունքներ պարունակող Սկևռայի նշանավոր մասնատուփը 500 տարի համարվում էր կորած: 1884 թ. Փարիզում այն գնվում է Բազիլևսկու բարձրարժեք իրերի հավաքածուից Էրմիտաժի կայսերական հավաքածուի համար: 2000 թ. Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե եկեղեցու օծման առիթով Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ կատարած այցի ժամանակ մասունքները Էրմիտաժի կողմից նվիրաբերվեցին Հայոց եկեղեցուն:

Օրվա ընթացքին բազում հավատավոր հայորդիներ կարողացան հավել մասնատուփին և հաղորդ դառնալ սրբազան մասունքներից բաշխվող օրհնությանը: Սկևռայի մասնատուփը ևս մեկ շաբաթ կմնա Մայր Տաճարում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՄԻՆԻԱ ԵՎ ՄՈԼԴՈՎԻԱ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոկտեմբերի 24-ին Հովվապետական այցով մեկնեց Ռումինիայի հայոց թեմ՝ կատարելու Յաշ քաղաքի Ս. Աստվածածին հայկական եկեղեցու վերածման արարողությունը:

Ռումինիա այցելության ընթացքում Նորին Սրբությանը ուղեկցում էին Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանը, Ս. Հովնան արքեպիսկոպոսը՝ որպես գավազանակիր, և օպերատոր Սուրեն Տեր-Գրիգորյանը:

24 հոկտեմբերի - Բուխարեստի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Տիրայր արքեպիսկոպոսը, Մարտիրոսյանը, Ռումինիայում ՀՀ դեսպան Եղիշե Մարգարյանը, Ռումինիայի Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարար և Ռումինիայի հայերի միության նախագահ Վարուժան Ոսկանյանը, թեմի հոգևոր դասը և բազմաթիվ հավատացյալ հայորդիներ:

25 հոկտեմբերի - Առավոտյան ժամը 10-ին Բուխարեստի հայոց Մայր եկեղեցու զանգակների դողանջների ներքո, աղուհացով դիմավորմամբ և «Հրաշափառի» երգեցողությամբ Հայոց Հայրապետը մուտք գործեց եկեղեցի, ուր կանոնական արարողությունից հետո Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց թեմակալ առաջնորդ Տիրայր Սրբազանը՝ ասելով. «Վեհափառ Տեր, սիրեցյալ Հայրապետ և Բուքրեշի սիրելի հայ քրիստոնյաներ, դարեր շարունակ հայ մարդը ուխտի է գացած Ս. Էջմիածին, որպեսզի Իջման Ս. Սեդանը համբուրե և ավելի հավատացյալ, ավելի հայրենասեր դարձած ու լիցքավորված վերադառնա իր տունը, սակայն այսօր, Վեհափառ Տեր, հանձին Ձերդ Սրբության, Ս. Էջմիածինը կուգա այցելելու, ոչ միայն մխիթարելու, ոչ միայն օրհնելու մեր թեմի ժողովրդին, այլև հաստատելու, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր պատվական դերին և առաքելության մեջ է:

Դուք եկած եք մանավանդ Ձեր հայրական օրհնությունը տալու և նոր պատրաստված Մյուռոնով օծելու փառավոր անցյալ ունեցող, վեցհարյուրամյա պատմություն ունեցող Յաշ քաղաքի մեր եկեղեցին:

Ռումինիո հայոց թեմում Վազգեն Վեհափառը ավելի քան տասը տարի եղավ վարդապետ, եպիսկոպոս և առաջնորդ, աղոթեց և քարոզեց:

Միքելի՝ ժողովուրդ, դուք ինչպես գիտեք, այս տարի թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում կտոնվի և տոնվեցալ Վազգեն կաթողիկոսի ծննդյան հարյուրամյակը: Վեհափառ Հայրապետ, և Դուք եկած եք Վազգեն Առաջինին, որ Ձեր հոգևոր հայրը եղավ, կենդանի ներկայությունը զգալու այս սրբավայրին մեջ, և ես սիրով, որդիական

հարգանքով և մեր թեմի ժողովրդի անունից դիմում եմ Ձերդ Սրբությանը՝ փոխանցելու հայրապետական Ձեր պատգամը և օրհնությունը, որով մեր ժողովուրդը ավելի հայ և ավելի քրիստոնյա պետք է դառնա: Դրսում թեև ցուրտ է հիմա, սակայն վստահ եմ, որ մեր հոգիները պետք է ջերմանան Ձեր հայրական խոսքով:»

Հավաքվածներին այնուհետև իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը: Մինչ բուն խոսքին անցնելը Նորին Սրբությունը եկեղեցում եղողներին նախ հարցրեց, թե նրանք հայերեն հասկանո՞ւմ են: Ստանալով հաստատական պատասխան՝ ասաց, որ նման հարցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ *«Երբեմն պատահում է՝ այցելում ենք համայնքներ, ուր հայերեն խոսք ենք ասում և հետո անդրադառնում, որ հայերեն չեն հասկանում, ուստի ցանկացա ճշտել, թե արդյո՞ք հասկանում եք, թե՛ ոչ, արդյո՞ք պիտի խոսեմ ձեր սրտին և դուք արդյո՞ք պետք է ընկալեք իմ խոսքը, թե՛ ոչ»:*

Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԲՈՒՒՄԱՐԵՍԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փառք և գոհություն Երկնավոր Մեր Տիրոջը, որ վերստին Մեզ առիթը շնորհեց այցելելու ձեզ, վերստին մուտք գործելու այս շքեղակառույց եկեղեցին և Մեր օրհնությունը բերելու ռումինահայ գաղութի Մեր սիրելի զավակներին:

Միջոցինե՛ր, եկեղեցու խորանի վրա ընթերցեցինք հետևյալ ավետարանական բառերը՝ խնդրեցե՛ք և կտրվի ձեզ: Դարեր շարունակ Մեր ժողովուրդը հավատարիմ է եղել ավետարանական այս պատգամին և իր աղոթքն առ Աստված բարձրացրել է՝ միշտ օրհներգելով Աստծո փառքը, Ով Իր անսպառ ողորմությունը, սերը և շնորհը առատորեն բաշխել է աշխարհասփյուռ մեր զավակներին: Մեր ժողովուրդը միշտ հայցել է, որ Տերն Իր հովանավոր Աջի և Իր բարի հայացքի ներքո պահի ազգս հայոց, որովհետև պատմությունը մեր եղել է դժվարին, փորձություններով լեցուն:

Հաճախ մենք հարկադրված ենք եղել թողնելու մեր հայրենիքը, հայրենական օջախը, մեր ազնիվ աշխատանքով ու քրտինքով կառուցված օջախները տեսել ենք կործանված, թշնամյաց կողմից ոտնակոխ, բայց երբեք չենք հուսալքվել, այլ հավատքով գորացյալ՝ խնդրել ենք Տիրոջից ուժ և կարողություն՝ կրկին շենացնելու, կրկին կառուցելու հայ կյանքը: Աստված մեզ օգնել է՝ կամք, ոգի, ուժ և կարողություն պարգևելով: Եվ մենք Տիրոջ հետ մեզ զգացել ենք զորեղ, քայլել ենք ինքնավստահ՝ չտարակուսելով, չվարանելով խոչընդոտների, դժվարությանց առջև:

Մենք կարողացել ենք լավատեսության ոգով, հույսով ու հավատքով նայել դեպ վաղվա պայծառ ու շեն օրը: Մեր ժողովրդի կյանքը մենք շենացրել ենք դպրոցներով, շենացրել ենք ազգային, կրթական, մշակութային, բարեսիրական բազում օջախներով ու հաստատություններով: Եվ ահա այսպիսի փառաշուք պատմություն է կերտել նաև ռումինահայ գաղութը: Ձեր թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանը քիչ առաջ իր խոսքում հիշատակեց, որ եկել ենք կատարելու վերածնունդ Յաշ քաղաքի Սուրբ Աստվածածին մեր եկեղեցու, որն ունի ավելի

քան վեց հարյուր տարվա պատմություն: Այսքան հարուստ պատմություն ունեցող ռումինահայությունը վստահաբար պիտի ամրորեն փարված մնա իր հայրերի սրբազան ժառանգությանը, պիտի պահի-պահպանի իր ինքնությունը՝ ի սեր ազգային այն արժեքների, որ կերտել է ի սեր Աստծո փառքի, որովհետև մեր աշխատանքում, մեր ձեռքբերումներում դրսևորված են մեր հավատքը և այդ հավատքի միջոցով Աստծո փառքը մեր ժողովրդի կյանքում և հանուն մարդկության կյանքում: Արդարև, սիրելիներ, պարծենալու, հպարտանալու, ցնծալու առիթ ունեք՝ ձեր անցյալի հարուստ պատմությամբ ու ժառանգությամբ: Եվ Մենք վերստին Մեր գոհունակությունն ենք առ Աստված բարձրացնում, որ Տերը ամուր է պահել մեր ժողովրդի զավակաց հավատքը, անսասան՝ նրանց նվիրումն ու սերը հանդեպ Հայրենին:

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ, Մեզ համար անհուն ուրախություն ու գոհունակություն է գտնվել այս քաղաքում, այս երկրում, ուր երկար տարիներ հովիվ և առաջնորդ է եղել երանաշնորհ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ում հովանու ներքո հասակ առել, կրթվել և դաստիարակվել ենք նաև Մենք, և Վազգեն Առաջինի դրոշմն ենք կրում Մեր հոգում և Մեր անձի վրա: Այս տարի մենք պետականորեն տոնախմբեցինք 100-ամյակը լուսահոգի Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ով փայլուն էջեր արձանագրեց ազգային և եկեղեցական մեր պատմության մեջ՝ իր գործունեությամբ և իր ծառայությամբ: Հայոց Հայրապետի շունչը ապրում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, և վստահ եմ, որ երջանկահիշատակ Հայրապետի շունչը ապրում է նաև այստեղ, որովհետև ձեզանից շատերը եղել են Վազգեն Վեհափառի սաները և գործակիցները, ձեզանից շատերը ստացել են Վազգեն Վեհափառի օրհնությունը, համբուրել Հայոց Հայրապետի Սուրբ Աջը: Վազգեն Վեհափառի լույս հիշատակը մշտավառ է նաև այստեղ, ինչպես և Հայաստան երկրում և Սփյուռքի մեր գաղթօջախներում: Եվ Մեզ համար անհուն ուրախություն է այստեղ նույնպես ձեզ հետ միասին տոնախմբել 100-ամյա հորելյանը Հայոց Հայրապետի և բանալ եկեղեցու պատի մեջ զետեղված հուշատախտակը՝ Ռումինիո հայոց կյանքից ներս նրա բարի, օրհնյալ վաստակը հավերժացնող:

Մենք Մեր օրհնությունն ենք վերստին բերում ձեզ, սիրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր, որ ձեր հավատքով, ձեր սիրով ու նվիրումով միշտ շեն ու պայծառ պահեք Հայաստանյայց Եկեղեցին և հայ կյանքը Ռումինիայում: Հայցում ենք, որ Տերը Սուրբ Հոգու շնորհներով առաջնորդի ձեզ, որպեսզի ձեր ընթացքը լինի անշեղ Տիրոջ ճանապարհներին և միշտ լինեք գորեղ առաքինի գործերով ու շարունակեք հարստացնել ձեր բազմադարյա պատմությունը Ռումինիո օրհնյալ երկրում:

Մեր գնահատանքն ենք բերում Ռումինիայի հայոց թեմի առաջնորդին՝ Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, որ հակառակ իր առաջացած տարիքին՝ ջանք ու եռանդ չի խնայում, որպեսզի շեն ու պայծառ լինի Ռումինիո հայոց թեմը: Մենք տեսնում ենք, թե ինչպես այս անցնող տարիներին նորովի բարեզարդվել է Բուխարեստի առաջնորդանիստ այս եկեղեցին: Մաղթում ենք, որ Աստված պահի, պահպանի Սրբազան Հորը քաջառողջ և եռանդաշատ, որպեսզի նա նույն ջանադրությամբ, նույն սիրով ու նվիրումով բարեզարդի իր առաքելությունը նոր հաջողություններով:

Մեր գնահատանքն ենք բերում ձեզ սպասավորող հոգևոր ծառայողներին, եկեղեցականներին, ովքեր իրենց ծառայությամբ եկեղեցու կամարների ներքո համախումբ են պահում մեր ազգի զավակներին, աշխույժ դարձնում հայ կյանքը, որպեսզի այն հարատև լինի Ռուսինիայում, ու նաև ձեր զավակները վառ պահեն մեր պատմությունը, արժեքները և այդ արժեքներով հավելեն փառքի գործերը մեր ժողովրդի:

Սիրելիներ՛ր, միասնաբար մեր աղոթքը բարձրացնենք առ Տերն Ամենակալ և խնդրենք, որ Տերը խաղաղ պահի աշխարհը համայն, առաջընթացի մեջ հայ կյանքը, Հայաստան մեր երկիրը և պայծառ՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, և միշտ գորդող լինի հայ կյանքը ի Սփյուռու աշխարհի և Ռուսինիո օրհնյալ այս երկրի մեջ: Եվ թող հայորդիք միշտ իրենց շուրթերին կրեն Աստծո փառաբանության խոսքերը՝ հնչեցրած սաղմոսերգուի կողմից. «Տէ՛ր, եթէ գշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Բո»:

Տիրոջ սերը, շնորհը և խաղաղությունը թող լինեն ձեզ հետ այսօր և հավիտյանս. Ամեն:

Այնուհետև տեղի ունեցավ աջհամբույր, որի ընթացքում Նորին Սրբությունը փոքրիկ խաչեր բաժանեց ներկաներին:

Դուրս գալով եկեղեցուց՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական թափուրով առաջնորդվեց Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված խաչքարի մոտ, ուր ծաղկեպսակ զետեղեց և աղոթեց անմեղ զոհերի հոգիների համար, որից հետո կատարեց բացումը եկեղեցու զանգակատան սյան վրա զետեղված հուշաքարի և Վազգեն Վեհափառի հարթաքանդակի:

Բուխարեստի հայոց Մայր եկեղեցու շրջափակում է գտնվում նաև հայ մշակույթի տունը և թանգարանը, որի սրահներում հայրապետական շքախմբի անդամները ծանոթացան Սուչավայի վանքում 600 տարի առաջ գրված հայկական ձեռագրերին և ընդհանրապես հայ եկեղեցական արվեստի այն գործերին, որոնք ստեղծվել են այստեղ կամ դարերի ընթացքում հավաքվել և այժմ խնամքով պահվում են այս թանգարանում, այդ թվում՝ եկեղեցական սպասքի, խորանի վարագույրների և սրբանկարների տարբեր նմուշներ:

Այժմ որպես թանգարանային նմուշ է ցուցադրվում նաև եկեղեցու Մկրտության հին ավազանը, որում ի դեպ հիսուն տարի առաջ Տիրայր Սրբազանը մկրտել է Ռուսինիայի Ֆինանսների այսօրվա նախարար Վարուժան Ոսկանյանին:

Թանգարանում շրջելուց հետո Վեհափառ Հայրապետը իր տպավորությունները գրեց պատվավոր հյուրերի ոսկեմատյանում:

Առաջնորդարանում կազմակերպված հյուրասիրությունից հետո Գարեգին Երկրորդը հանդիպեց Ռուսին Ուղղափառ Եկեղեցու նորընտիր Դանիել պատրիարքի հետ:

Ռուսին Եկեղեցու պատրիարքարանում Վեհափառ Հայրապետը, ողջագուրվելով Դանիել պատրիարքի հետ, շնորհավորեց ընտրության և գահակալության առթիվ:

Դանիել պատրիարքը, բարիգալստյան ողջույնի խոսքով դիմելով Նորին Սրբությո-

յանը, իր ուրախությունը հայտնեց Հայոց Հայրապետին՝ վերստին Ռումինիա այցելելու առիթով, ինչպես նաև ասաց, որ ինքն առիթն է ունեցել հանդիպելու նաև Վազգեն Վեհափառին, և հույս հայտնեց, որ Գարեգին Երկրորդի Ռումինիա այս այցելությունը և իրենց համատեղ այս հանդիպումը նոր հորիզոններ կբացեն երկու Եկեղեցիների գործակցության բնագավառում:

Պատասխան խոսքում Նորին Սրբությունը ասաց, որ ինքը քաղցրությամբ է հիշում 2000 թվականի իր այցելությունը Ռումինիա և հանդիպումը երջանկահիշատակ Թեոկտիստ պատրիարքի հետ: Անդրադառնալով այս հանդիպմանը՝ Գարեգին կաթողիկոսը ևս հույս հայտնեց, որ այն կդառնա գործակցության ընդլայնման մի նոր սկիզբ:

Այնուհետև, ի հիշատակ այս հանդիպման, կատարվեց հուշանվերների փոխանակություն: Դանիել պատրիարքը Վեհափառ Հայրապետին նվիրեց մի սրբանկար և ռումինական հոգևոր արվեստը ներկայացնող մի ալբոմ: Հուշանվերներ տրվեցին նաև պատվիրակության մյուս անդամներին: Իր հերթին Հայոց Հայրապետը Դանիել պատրիարքին նվիրեց Սրբալույս Մյուռնի օրհնության առիթով պատրաստված արծաթյա կրկնօրինակը Ս. Գեղարդի՝ պատրիարքին ասելով, որ Ս. Գեղարդը հայոց եկեղեցական այն երեք գլխավոր սրբություններից մեկն է, որով օրհնվում է Ս. Մյուռնը, և պատմեց սեպտեմբերին կատարված Մյուռնօրհնության մասին, ինչպես նաև նվիրեց Մյուռնօրհնության օրերին հրատարակված «Ս. Էջմիածնի գանձերը աշխարհի թանգարաններում» շքեղագարդ ալբոմը:

Դանիել պատրիարքը, շարունակելով Մյուռնօրհնության մասին սկսված խոսակցությունը, ասաց, որ ինքն իր հերթին ցանկանում է Նորին Սրբությանը և Հայոց Եկեղեցու ներկայացուցիչներին հրավիրել իրենց մոտ կատարվելիք Մյուռնի օրհնությանը:

Դանիել պատրիարքի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը այնուհետև այցելեց պատրիարքարանի թանգարան և ծանոթացավ այնտեղ պահվող սրբություններին և արվեստի գործերին:

Այնուհետև, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, հյուրասիրություն կազմակերպվեց Ռումին պատրիարքի կողմից:

Ռումինիայում ՀՀ դեսպան Եղիշե Սարգսյանի հրավերով այս հանդիպումից հետո Նորին Սրբությունն այցելեց Ռումինիայում ՀՀ դեսպանատուն, հանդիպեց դեսպանության աշխատակիցների հետ և օրհնեց դեսպանությանը հատկացված նոր շենքը:

Երեկոյան Բուխարեստից Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը օդանավով մեկնեց Յաշ քաղաք, որպեսզի հաջորդ օրը կատարի տեղի Ս. Աստվածածին հիմնովին վերանորոգված հայկական եկեղեցու օծումը:

Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակությանը Յաշի օդանավակայանում դիմավորեցին Յաշի միտրոպոլիտ Թեոֆանը, քաղաքի հայկական համայնքի ատենապետ Զարեհ Նազարյանը, Յաշի քաղաքապետը, շրջանի մարզպետ Գեորգե Նիկիտան:

Թեոֆան միտրոպոլիտը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպել էր շքեղ ընդունելություն, որին հրավիրվել էին նաև հասարակական-մշակութային կյանքի ճանաչված գործիչներ:

Վեհափառ Հայրապետի այցելությունը Թեոֆան միտրոպոլիտը բացառիկ իրադարձություն անվանեց Յաշ քաղաքի համար և ի հիշատակ այս հանդիպման՝ Նորին Սրբությանը նվիրեց մի սրբանկար «Տիրամայրը մանկան հետ» պատկերով՝ Տիրամոր բարեխոսությունը հայցելով համայն աշխարհի և ի մասնավորի մեր երկու Եկեղեցիների համար:

Պատասխան խոսքում Նորին Սրբությունն ասաց. *«Մեզ համար ուրախություն է գտնվել Ռումինիայի օրհնյալ հողում, ուր շուրջ հազար տարիներ ապրում են մեր ժողովրդի գավակները: Ուրախ ենք, որ Տերը շնորհ արեց, որ գանք Ռումինիա՝ կատարելու օծումը Յաշի եկեղեցու: Եկեղեցի, որ վեց հարյուր տարվա պատմություն ունի:*

Մենք ուրախ ենք, որ այսպես դարերով երկու հավատակից ժողովուրդներ իրար հետ կողք կողքի ապրել են և Աստծուն փառաբանել ու ծառայել միասնաբար՝ ի սեր այս երկրի առաջնության և որ Ռումինիո հայոց թեմի առաջնորդ է եղել Հայոց Հայրապետ դարձած Վազգեն Առաջինը: Դա այն հայրապետն է, որ Բննեսկուի բանաստեղծությունները կարող էր ծամերով արտասանել»:

Շնորհակալություն հայտնելով Թեոֆան միտրոպոլիտին ջերմ ընդունելության համար՝ Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը նրան նվիրեց մի պանակե:

26 հոկտեմբերի - Առավոտյան Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց հայկական փողոցում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին, ուր արդեն հավաքվել էին հայ և ռումինացի բազմահարյուր ուխտավորներ: Ինչպես Ռումինիայի հայոց թեմի առաջնորդարանի դիվանի հաղորդագրությունում է ասվում. «Վեհափառ Հայրապետը ծունկի գալով Ս. Աստվածածին եկեղեցու փակ դռների առջև «Բաց մեզ, Տեր, գործուն» շարականի ուղեկցությամբ բացեց եկեղեցու ավելի քան 30 տարիներ փակ մնացած դռները: Եկեղեցու գավիթ մուտք գործելուց հետո Վեհափառը բացեց գավթում տեղադրված վերանորոգության հուշաքարի ժապավենը և մտավ նոր շունչ ու տեսք ստացած Ս. Աստվածածին եկեղեցին:

Ամբողջությամբ զգեստավորված՝ Վեհափառ Հայրապետը բարձրացավ Ս. Խորան, ուր այդ պահին քահանա հայրերը ջրով և ապա գինով լվացումը կատարեցին եկեղեցու ավագ, աջ և ձախ խորանների:

Ս. Էջմիածնից բերված նորօրհնյալ Ս. Մյուռոնով Վեհափառ Հայրապետը կատարեց եկեղեցու վերածման կարգը, ապա Մովսես եպիսկոպոս Մովսիսյանը ընթերցեց եկեղեցու կառուցման 600-ամյակի և վերածման առթիվ գրված հայրապետական կոնդակը, որը թարգմանաբար ներկայացվեց նաև ռումիներեն (տե՛ս էջ 36):

Եկեղեցու օման առթիվ, ինչպես նաև Վեհափառ Հայրապետին ուղղված բարիգալության խոսքով հանդես եկավ Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը՝ ասելով. «Բարեպաշտ ուխտավոր սիրելի ժողովուրդ, ասում են, թե շատ դյուրին գործ է չորս պատ բարձրացնելը, բայց շատ դյուրին գործ չէ այդ չորս բարձրացած պատերուն մեջ

Աստծուն իջեցնել և Աստծուն բնակեցնել:

Ռուսինահայերն Անի մայրաքաղաքեն քարավան առ քարավան եկան ասպնջական այս երկիրը և երբ խաղաղ անկյուն մը գտան, իրենց անդրանիկ պարտականությունը համարեցին ոչ թե տուն և բնակարան կառուցել, այլ Աստծուն նվիրված տաճարներ, որպեսզի այդ տաճարներուն մեջ ապրեն և շնչեն այն ամենով, ինչ որ հայրենիքեն բերած են:

Մենք՝ հայերս, թեև տառապեցանք, բզիկ-բզիկ եղած աշխարհեաշխարհ ցրվեցանք, բայց հայ ժողովուրդը երջանիկ եղավ, որ ունեցավ հոգևոր հայրենիք մը՝ Հայոց Եկեղեցին:

Վեհափառ Տեր, երեսուն և ավելի տարիներ առաջ՝ 1977 թ., մեծ երկրաշարժ եղավ Ռուսինիո մեջ, այս մեր աղոթքին տունը փլվեցավ, դռները բաց էին և անգամ գողություն տեղի ունեցավ, ապա այդ դռները կողպվեցան, և մեր ժողովուրդը ասես որբացավ, և այժմ երեսուն տարիներ անց, շնորհիվ մեր ժողովրդի ծոցեն ելած երկու պատվարժան հայ երիտասարդներու՝ դոկտոր Զավեն Նազարյանի և Ֆինանսներու նախարար Վարուժան Ոսկանյանի, բացվեցան այս գոց եկեղեցու դռները: Զավեն Նազարյանը Սուրիայեն եկավ այս երկիրը և ընտանիք կազմեց այստեղ և ինքն է, որ աշխատանք տարավ, որ այս եկեղեցին գոց չմնա և Դուք՝ Վեհափառ, եկաք նորօրհնյալ Մյուռոնով օծելու Սուրբ սեղանը և Մկրտության ավազանը: Ռուսինիայի տարբեր քաղաքներից այստեղ հավաքված հայերը եկել են այս պատվական օրը Ձերդ Սրբության աջը համբուրելու և հայկականության նոր շնչով լցվելու»:

Տիրայր Սրբազանը այնուհետև Վեհափառ Հայրապետին հրավիրեց իր պատգամը տալու եկեղեցում հավաքված ժողովրդին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՅԱՇ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ Նմա»
(Շարական)

Միրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր,

Ուրախ ենք այսօր՝ տեսնելով Ռուսինիո տարբեր քաղաքներից ձեր համախմբումը Սուրբ Աստվածածին եկեղեցու նվիրական հարկի ներքո: Բարձրյալն Աստծո կամոք Մենք եկել ենք հայրենի երկրից, հավատի մեր նվիրական կենտրոն Սուրբ Էջմիածնից, որպեսզի Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքը բերենք ձեզ՝ ռուսինահայ սիրեցյալ զավակներ Մեր, որ ձեր հոգիներում միշտ պայծառ եք պահում լոյս պատկերը Սուրբ Էջմիածնի, սերը Հայրենիքի, հավատարմությունը մեր բարեպաշտ հայրերի ավանդների հանդեպ:

Միրելինե՛ր, բազմաչարչար մեր Հայրապետ Սուրբ Գրիգորի աղոթքներին ունկնդիր՝ Աստված առաքեց Իր Միածին Որդուն հայոց աշխարհ, Ով իջավ փառքի լույսով և վառեց ջահը, կանթեղը հայոց հավատքի, որպեսզի այդ կանթեղի լույսը համատարած ճառագի հայոց հոգիներից ներս և լուսավորի հայ կյանքը: Լուսավորչի կանթեղից կրակ առան և վառվեցին աշխարհասփյուռ Հայոց Եկեղեցու կանթեղները, Հայոց Եկեղեցու լույսերը: Այսօր մենք փառք և գոհություն ենք բարձրացնում առ Աստված, որ վերստին վառվում է Լուսավորչի կանթեղը Յաշ քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու կամարների ներքո: Նախընթաց վեցհարյուր տարիների ընթացքում բազում փորձություններ է տեսել այս եկեղեցին: Ինչպես հայոց բազում եկեղեցիներ, Սուրբ Աստվածածին եկեղեցին ևս հաճախ խոնարհվել է, փլուզվել, նաև կողոպտվել, բայց ռումինահայոց գորեղ հավատքը միշտ շենացրել ու պայծառացրել է եկեղեցին, աղոթքով լցրել այս հաստատությունը, որպեսզի Աստծո ներկայությամբ դուք կարողանաք գորանալ, գոտեպնդվել, լավատեսությամբ լցվել դեպի ձեր վաղվա օրը:

Այս խորանից այսուհետ նույնպես, ինչպես վեցհարյուր երկար տարիներ, պիտի շարունակվի օրհնություն բաշխվել ձեզ, պիտի շարունակեն հնչել Ավետարանի պատգամները, որպեսզի դուք՝ որպես հավատավոր զավակները մեր ժողովրդի, որպես Քրիստոսի Եկեղեցու հարազատ զավակներ, աստվածահաճո գործերով բարեգարդեք ձեր բարի ընթացքը և ձեր կյանքով օրհնաբանեք Տիրոջ այն բոլոր ողորմությունների, այն բոլոր շնորհների համար, որ Աստված բաժին է հանել մեզ մեր ողջ պատմության ընթացքում: Այս առիթով, սիրելի՛ հավատացյալներ, Մենք Մեր գնահատանքն ենք բերում Ռումինիո աստվածասեր իշխանություններին և ժողովրդին, որոնց հոգատարությամբ և խնամքով շարունակում է շեն և պայծառ մնալ հայ կյանքը օրհնյալ այս ավերում:

Մենք ողջունում ենք այստեղ ներկայությունը Ռումին Ուղղափառ Եկեղեցու և Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչների, ովքեր եկել են նույնպես ուրախակից լինելու այս իրադարձության առիթով, նաև արտահայտելու իրենց սերը ձեր հանդեպ առ Աստված ունեցած ձեր հավատարմության համար, ձեր լուսավոր հավատքի համար: Մեր աղոթքն ու բարեմաթյանքներն ենք բերում մեր քույր Եկեղեցիների սպասավորներին, որպեսզի շարունակեն Քրիստոսի Ավետարանի լույսը և սերը տարածել՝ ի խնդիր աշխարհում համերաշխության, խաղաղության ու բարօրության հաստատման:

Մենք Մեր գնահատանքն ենք բերում Ռումինիո հայոց թեմի բարեջան առաջնորդին՝ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, ով երկար տարիներ՝ հինգ տասնամյակներ, իր ծառայությունն է բերում այս թեմին: Մաղթում ենք, որպեսզի Սրբազան Հայրը շարունակի իր նվիրյալ սպասավորությունը և իր ոգեշունչ խոսքով խանդավառի, զորացնի ձեզ, որ ապրեք որպես արժանավոր զավակները ձեր հայրերի և փառավորեք անունը հայ ժողովրդի, փառավորեք մեր Սուրբ Եկեղեցին՝ աներկբա հավատով, և Աստված պիտի բազմապատիկ փառավորի ձեզ ձեր հավատքի և բարի գործերի դիմաց:

Մենք Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում տիար Վարուժան Ոսկան-

յանին և այս համայնքի բարեջան անդամ Զարեհ Նազարյանին, որոնց նախանձախնդրությամբ այս եկեղեցին պայծառաշուք կերպով բացեց իր դռները մեր զավակաց առջև և առիթ պարգևեց Մեզ, որ գանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ աղոթակից լինելու հավատավոր Մեր զավակներին, նրանց օրհնելու, նրանց գոտեպնդելու և գնահատանքի Մեր խոսքը բերելու:

Մենք ողջունում ենք նաև Ռումինիայում Հայաստանի Հանրապետության դեսպանի ներկայությունն այստեղ, ինչը վերստին վկայում է, որ Դուք վայելում եք հովանին ինչպես Հայ Եկեղեցու, այնպես և Հայոց պետության: Այսօր վերստին փառք ենք բարձրացնում երկինք, որ հայրենի մեր երկիրը իր անկախ պետականությամբ օրավուր գործառնում է, հույսն ու մխիթարությունն է դառնում աշխարհասփյուռ հայոց զավակների, որովհետև ուր էլ որ ապրելիս ենք եղել, տենչացել ենք հայոց անկախ պետականության: Գոհություն Աստուծո, որ պարգևել է մեզ Իր ամենաառատ շնորհները, և այսօր ազգս հայոց ապրում է և բերկրում իր երկրով անկախ և իր Եկեղեցիով պայծառ:

Միևեղի՝ բարեպաշտ զավակներ Մեր, միայն Աստծուն ապավինած, միայն Քրիստոսին հավատարիմ ժողովուրդ լինելով է, որ մենք կարողացել ենք ապրել և հարատևել, կառուցել մեր նոր կյանքը և պայծառացնել մեր Սուրբ Եկեղեցին, աղոթքներով գործնալ և Աստծո ողորմությունը երկնքից իջեցնել մեր կյանք: Արդարև, մեր հոգու ջերմ հավատքն է, որ մշտապես պիտի իջեցնի Աստծո Միածին Որդին Իր փառքի լույսերով: Ուրեմն շարունակենք մեր կյանքը հավատարմության այս ընթացքով և միշտ օրհներգենք մեր հայրերի աղոթասաց շարականով՝ «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ Նմա»:

Թող Տերն Իր Աջը հովանի դարձնի Ռումինիո հայոց թեմին, օրհնի մեր բարեպաշտ զավակաց, պահի ու պահպանի քաջակորով և գորեղ հույսերի և առ Աստված հավատքի մեջ: Եվ թող Էջմիածնի օրհնությունը տարածյալ լինի ձեզ վրա, որպեսզի մշտապես Էջմիածնի սիրով ապրեք և Էջմիածնին ձեր հայացքը հառած՝ շարունակեք ձեր կյանքի ընթացքը դեպի հաղթական նոր ժամանակներ՝ ձեր շուրթերից երկինք բարձրացող աղոթքներով և ցնծությամբ օրհնելով Տիրոջ Իր անսպառ ողորմության և սիրո համար, որ միշտ բաշխում է մեր ժողովրդին այսօր և միշտ և հավիտյան. Ամեն:

Վերածված այս եկեղեցուն Վեհափառ Հայրապետը նվիրեց հաղորդության մի սկիհ՝ ասելով. «Այս սկիհից թող բաշխվի Տիրոջ փրկչական խորհուրդը, այս սկիհից հաղորդություն վերցնեք և արժանի լինեք Տիրոջ մշտական շնորհին, օրհնությանը և սիրուն: Ձեր աղոթքներով և աշխատանքով շեն և պայծառ պահեք այս սուրբ եկեղեցին և միշտ հաղորդվեք Տիրոջ փրկչական սուրբ խորհրդին, Տիրոջ Մարմնին և Արյանը, որ բաշխվելու է այս սկիհից սուրբ հաղորդությամբ»:

Ի գնահատություն Տիրայր Սրբազանի նվիրյալ ծառայության՝ Վեհափառ Հայրապետը Ռումինիայի հայոց թեմի առաջնորդին նվիրեց մի պանակե, որը պատրաստվել էր Մյուռոնօրհնության առիթով:

Վերածման արարողությունից հետո մատուցվեց անդրանիկ Սուրբ Պատարագ՝ ձեռամբ Ռումինիո հայոց թեմի հոգևորական Ս. Հայազատ քահանա Մարտիրոսյանի:

27 հոկտեմբերի - Ավարտելով Ռումինիայի հայոց թեմ Հայրապետական այս այցելությունը՝ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ թեմակալ առաջնորդ Տիրայր Սրբազանի, Ռումինիայում ՀՀ դեսպան Եղիշե Սարգսյանի և Յաշ քաղաքի Ս. Աստվածածին հայոց եկեղեցու եկեղեցական վարչության ատենապետ Զարեհ Նազարյանի, ճանապարհվեց Մոլդովա:

Ռումինա-մոլդովական սահմանին Հայոց Հայրապետին դիմավորեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, Ուկրաինայում և Մոլդովայում ՀՀ դեսպան Արմեն Խաչատրյանը, Մոլդովայի հայ համայնքի ներկայացուցիչները:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Քիշինևում հանդիպեց Մոլդովայի Հանրապետության նախագահ Վորոնինի հետ: Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ հայ-մոլդովական ավանդական բարեկամական կապերին, երկու երկրների և ժողովուրդների այսօրվա հարաբերություններին, ինչպես նաև Մոլդովայի հայ համայնքին և եկեղեցական կյանքին վերաբերող խնդիրներին:

Մոլդովայի նախագահը Վեհափառ Հայրապետին խոստացավ ըստ ամենայնի աջակցել տեղի հայ համայնքի խնդիրների լուծմանը, ինչպես նաև տեղում հանձնարարեց Մոլդովայի քաղաքացիություն շնորհել Ս. Սահակ աբեղա Շաքարյանին, որպեսզի վարչական որևէ արգելք չխոչընդոտի նրա հովվական գործունեությանը:

Նորին Սրբությունը իր շնորհակալությունը հայտնեց հայ համայնքի հանդեպ մոլդովական իշխանությունների ցուցաբերած ուշադրության համար և իր բարեմաղթանքները ուղղեց մոլդովական պետությանը և ժողովրդին:

Այնուհետև, ի հիշատակ այս հանդիպման, կատարվեց հուշանվերների փոխանակություն:

Նախագահական նստավայրից Վեհափառ Հայրապետը ուղևորվեց Քիշինևի Ս. Աստվածածին հայոց եկեղեցի, ուր գնահատանքի իր խոսքն ուղղեց եկեղեցում Հայոց Հայրապետին սպասող հավատացյալ հայորդիներին և հույս հայտնեց, որ եկեղեցական համայնքային կյանքն այստեղ առավել կազմակերպված ձև կընդունի, որին ըստ ամենայնի իր մասնակցությունը կբերի և Ս. Էջմիածինը:

Քիշինևից Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկվա, որտեղից և վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ԱՐԱՄ ՍԱՐԿԱՎԱԳ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԸ ՀՆԴԿԱՍՏԱՆ
 (5-16 նոյեմբերի 2008 թ.)

2008 թվականի նոյեմբերի 8-ից 16-ը Հնդկաստանի Արևմտյան Բենգալիա նահանգի Կալկաթա քաղաքում մեծ հանդիսավորությամբ տոնախմբվեց Կալկաթայի Սուրբ Նազարեթ հայկական եկեղեցու օծման 300-ամյակը: Այս առիթով նոյեմբերի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հովվապետական այցով մեկնեց Հնդկաստան՝ մասնակցելու տոնակատարություններին:

Քոչի օդանավակայանում Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել Հնդկաստանում Հայաստանի Հանրապետության պատվո դեսպան տիար Աշոտ Քոչարյանը, Հնդկաստանի հոգևոր առաջնորդ Հոգեշնորհ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, Կալկաթայի եկեղեցական վարչության անդամներ տիկին Սյուզան Ռուբենը և տիար Սունիլ Սոբթին, ինչպես նաև Հնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ:

Այցի ընթացքում Նորին Սրբությունը երեք օր հյուրընկալվեց Հնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու Պետ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Դիդիմոս Ա-ի կողմից Հնդկաստանի Քերալա նահանգում:

Հնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցին, որը պատկանում է Արևելյան Ուղղափառ քույր Եկեղեցիների ընտանիքին, ունի քսան միլիոն հավատացյալներ և քսանհինգ թեմեր Հնդկաստանում, Միացյալ Նահանգներում, Կանադայում, Մեծ Բրիտանիայում, Արևմտյան Եվրոպայում, Պարսից ծոցի ավազանի երկրներում, Մալազիայում, Սինգապուրում, Ավստրալիայում և Նոր Զելանդիայում:

Հնդիկ Մալանկարա Եկեղեցու հիմնադիրը Թովմաս առաքյալն է, որը համաձայն Մալանկարա Եկեղեցու ավանդության՝ 52 թ. եկել և շուրջ քսան տարի քարոզել է Հնդկաստանի հարավ-արևմուտքում գտնվող Քերալայի շրջանում՝ Մալանկարայի կամ Մալաբարի նահանգում:

Հովվապետական այցի ընթացքում Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, Տ. Հովնան աբեղա Հակոբյանը՝ որպես գավազանակիր, Մայր Աթոռի օտարալեզու մամուլի պատասխանատու Տ. Կորիճ քահանա Դևեջյանը, Մայր Աթոռի համացանցային բաժնի տնօրեն երեցկին Փոլա Դևեջյանը և «Շողակաթ» հեռուստաընկերության տնօրեն տիկին Մանյա Ղազարյանը: Հայրապետական շքախմբին այնուհետև միացավ նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ տիար Զեյն Գա-

լուստյանը:

Հովվապետական այս այցի ընթացքում Վեհափառ Հայրապետը նախագահեց Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու օծման 300-ամյակին նվիրված տոնակատարություններին: Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ վերածովեց նաև Մադրասի Ս. Աստվածածին հայկական եկեղեցին, Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը այցելեց Տինգրայի Ս. Երրորդություն, Զինսուրայի Ս. Հովհաննես, Մեյդաբադի Ս. Աստվածածին հայկական եկեղեցիները: Կալկաթայում Հայոց Հայրապետն այցելեց նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող Հայոց Մարդասիրական ճեմարան, այնուհետև Ս. Նազարեթ եկեղեցում տեղի ունեցավ Հայրապետական Ս. Պատարագ և քահանայական ձեռնադրություն:

5 նոյեմբերի

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը, երեկոյան ժամանելով Քերալայի նահանգ, Հնդիկ Մալանկարա Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների կողմից առաջնորդվեց կաթողիկոսական նստավայր, ուր տեղի ունեցած բարիգալստյան և երկու հայրապետների եղբայրական ողջագուրման արարողություններից հետո Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Հնդիկ Մալանկարա Եկեղեցու Դիոփոս Ա Կաթողիկոսը երկու Եկեղեցիների հոգևորականաց դասով Մալանկարա Եկեղեցու կաթողիկոսների հանգստարանում համատեղ աղոթք բարձրացրեցին երջանկահիշատակ հայրապետների հոգիների խաղաղության համար:

Կաթողիկոսարանում այնուհետև տեղի ունեցած ընդունելության հանդիսավոր արարողության ընթացքում Գարեգին Երկրորդին և հայրապետական շքախմբի անդամներին ողջունեցին Դիոփոս Առաջինը և Մալանկարա Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները: Այնուհետև պատասխան խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ի մասնավորի ասելով. *«Փառք և գոհություն ենք բարձրացնում առ Աստված, որ պարգևեց Մեզ շնորհը՝ եղբայրական այցով լինելու Հնդիկ Մալանկարա Եկեղեցում: Մեր եղբայրական սերը, աղոթքն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ սիրեցյալ Եղբայր, Ձեր ուխտապահ եկեղեցականաց դասին և հավատավոր ժողովրդին:*

Այս պահին Մեր հոգու զգացումները մղում են Մեզ արտասանելու սաղմոսերգուի խոսքը. «Որքան բարի, որքան վայելուչ է, որ եղբայրները բնակվում են միասին» (Սաղմ. ՃԼԲ 1): Միրելինե՛ք, Հնդիկ Մալանկարա և Հայոց Եկեղեցիներն ունեն եղբայրական փոխհարաբերությունների դարավոր պատմություն, որ բարի արդյունքներով շարունակվում է առ այսօր: Հնդկաստան Մեր այս այցի ընթացքում Մենք Հովվապետական այցելություն ենք կատարելու և Մեր օրհնությունը բերելու Հնդկաստանի հայ համայնքին, որի կողմից մեծ հանդիսավորությամբ նշվելու է Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու կառուցման երեքհարյուրամյակը: Հնդկահայ Մեր հայորդյաց կյանքում հոբելյանական այս տոնակատարությունը ևս վկայություն է այս օրհնյալ երկրում մեր ժողովրդի դարավոր ներկայության, ինչը ծառայել է նաև մեր Եկեղեցիների սերտ շփումներին և նպաստել եղբայրական համագործակցությանը:

Մեր Եկեղեցին մշտապես կարևորել է փոխհարաբերությունների ամրապնդումը Հնդիկ Մալանկարա Եկեղեցու հետ, և մեր Եկեղեցիների միջև համագործակցության և եղբայրության ոգին առավել զորացնելու նպատակով Հնդիկ Մալանկարա Եկեղեցի է այցելել նաև Մեր երջանկահիշատակ նախորդներից Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Հայրապետը: Մենք վստահ ենք, որ այս օրերին համատեղ աղոթքով առավել պիտի զորացնենք սերը, բարեկամությունն ու գործակցությունը մեր Եկեղեցիների:

Միրեցյալ եղբայր ի Քրիստոս, Մենք Մեր աղոթքներում միշտ հիշում ենք Ձեզ և Ձեր աստվածասեր ժողովրդին: Ուրախ ենք, որ շուրջ մեկ ամիս առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ հայ ժողովրդի հոգևոր կենտրոնում, երբ Մենք կատարում էինք Սրբալույս Մյուռոնի օրհնության արարողությունը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչների կողքին Մեզ աղոթակից էին նաև Ձեր ներկայացուցիչները: Այդ օրերն իրապես անմոռաց եղան ինչպես հավատավոր մեր ժողովրդի, այնպես էլ քույր Եկեղեցիների հոգևոր եղբայրների համար: Օրեր էին՝ ամենքիս համար օրհնությամբ լեցուն: Եվ այդ արարողության կապակցությամբ Մենք պատրաստեցինք մեր Եկեղեցու սրբազան մատունքի՝ Սուրբ Գեղարդի մանրակերտը, որն այսօր ջերմագին զգացումներով ընծայաբերում ենք Ձեզ՝ որպես վկայություն Հայոց Եկեղեցու սիրո և գորակցության Ձեզ և Ձեր հավատացյալներին: Հաղթական գործությունը Ս. Գեղարդի թող իմանի լինի Ձեր Եկեղեցու և Ձեր Եկեղեցու զավակների վրա:

Շնորհակալ ենք, սիրեցյալ եղբայր, այն ջերմ ընդունելության համար, որ դրսևորվեց Մեր նկատմամբ առաջին իսկ պահից, երբ Մենք ոտք դրեցինք Հնդկաստանի օրհնյալ հողին: Մենք գոհունակությամբ զգացինք զորեղ հավատքը Հնդիկ Մալանկարա Եկեղեցու հավատացյալ զավակների և գոհություն բարձրացրեցինք առ Աստված, որ Տերը զորավոր է պահում աստվածսիրությունն ու ծառայասիրությունը Հնդիկ Եկեղեցու բարեպաշտ զավակների:

Շնորհակալ ենք մեր քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին, ովքեր աղոթակից եղան մեզ Մալանկարա Եկեղեցու հոգևոր նվիրական այս սուրբ կենտրոնում: Մենք հավատում ենք, որ Եկեղեցիների միջև հաստատված եղբայրական սիրով, Տիրոջ պատգամներին ու պատվիրաններին հավատարիմ՝ պիտի արդյունավորենք տերունապատվեր առաքելությունը՝ հանուն մարդկանց խաղաղ համակեցության և հանուն աշխարհի առաջընթաց ու եղբայրական սիրո մեջ զորացյալ կյանքի:

Մեր աղոթքն ու հայցն ենք առ Աստված բարձրացնում՝ խնդրելով, որ Տերը զորեղ պահի իր Սուրբ Եկեղեցին, եղբայրական սիրո և միաբանության մեջ՝ նրա հոգևոր սպասավորներին և հավատավոր ժողովրդին, որպեսզի Տիրոջ փառքը միշտ օրհնաբանվի մեր աղոթքներով և արգասավոր ծառայությամբ:

Թող Տերը զորացնի Դիդիմոս Առաջին Կաթողիկոսին՝ Մեր սիրեցյալ եղբորը, պարզև զահակալության արևշատ տարիներ, որպեսզի շարունակի առաջնորդել Հնդիկ Մալանկարա մեր քույր Եկեղեցին և նրա հավատավոր զավակներին»:

6 նոյեմբերի

Քրթայամայի Մալմիյա սրահում կազմակերպված ընդունելության ժամանակ

Դիդիմոս Առաջինը Հայոց Հայրապետին պարգևատրեց Հնդիկ Մալանկարա Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Թովմաս առաքյալի» շքանշանով:

Շքանշանի հանձնման արարողության ժամանակ շնորհակալության և գնահատանքի իր խոսքն ասաց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս

Քրիստոսավանդ սիրով ողջունում ենք Ձեզ, Ձեր բարեպաշտ հավատավոր հոտին և Ձեր Եկեղեցու բարեջան սպասավորներին՝ բերելով օրհնություն համայն հայության հոգևոր կենտրոն Քրիստոսաէջ Մայր Աթոռից և սերն ու ողջույնները հավատակից Ձեր եղբայրերի և քույրերի՝ Հայաստանի և Սփյուռքի հավատավոր Մեր զավակների:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում Ձերդ Սրբությանը Մեր նկատմամբ դրսևորած ազնիվ հոգածության և եղբայրական սիրո համար, որ երկու օրեր շարունակ վայելում ենք: «Ս. Թովմաս առաքյալի» շքանշանը, որ շնորհեցիք Մեզ, հպարտությամբ պիտի կրենք՝ որպես արտահայտությունը մեր Եկեղեցիների դարավոր բարեկամության և եղբայրական հարաբերությունների:

Այսօրվա այս հանդիպումն ու ողջագործումը Մեզ մտովի տանում են վաղ քրիստոնեական ժամանակները և հիշեցնում Մեզ մեր հիմնադիր Ս. Թադեոս, Ս. Բարդուղիմեոս և Ս. Թովմաս առաքյալներին: Նրանք, հավատարիմ Տիրոջ պատգամին, մեր երկրներում՝ Հայաստանում և Հնդկաստանում, տարածեցին Քրիստոսի Ավետարանի լույսը, որ մշտավառ պահվեց մեր ժողովուրդների կյանքում մեր Եկեղեցիների քաջեռանդ առաքելությամբ:

Ներկա ժամանակներում երկրների և ժողովուրդների համագործակցության պայմաններում նոր հեռանկարներ են բացվում մեր Եկեղեցիների առջև՝ էլ ավելի արդյունավետ իրականացնելու մեր առաքելությունը և ընձեռնված հնարավորությունների առավելագույնս օգտագործմամբ նորոգ ձեռքբերումներով սերտացնելու մեր կապերն ու հարաբերությունները, որպեսզի բարի արգասիքներով շարունակեն զարդարվել դարավոր բարեկամությունն ու եղբայրությունը Հնդիկ Մալանկարա և Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցիների միջև: Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, այսօր Մենք եկել ենք Ձեզ այցի՝ վերանորոգելու համար եղբայրական մեր սերը և համագործակցությունը, որ հատկանշել է մեր Եկեղեցիները՝ դարեր շարունակ բարի վկայություններ բերելով ողջ քրիստոնյա աշխարհին:

Մենք ողջունում ենք այստեղ ներկա քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին և շնորհակալություն հայտնում Մեզ ուղղված ջերմ խոսքերի և բարեմաղթանքների համար: Ուրախություն է Մեզ համար տեսնել համերաշխ գործակցությունը Քրիստոսի Եկեղեցու ներկայացուցիչների: Սիրելիներ՝, եղբայրության և համերաշխության ոգով առաջնորդվելով, որպես տնտեսներ Տիրոջ անդաստանում, պիտի կարողանանք բարվոք արդյունքներով զարդարել աղոթական մեր ջանքերն ու ծառայությունը՝ ի խնդիր աշխարհի գլոբալ մարտահրավերների հաղթահարման և մարդկության խաղաղ ու բարօր գալիքի:

Աղոթում ենք առ Աստված, որ խաղաղության մեջ շենություն ու բարօր առաջընթաց պարզևի Հնդկաստանի օրհնյալ երկրին, որ երկար դարեր նաև հանգրվան է դարձել բազմաթիվ հայորդյաց համար, ովքեր սիրով և եղբայրությամբ ապրել են հնդիկ ժողովրդի հետ: Թող Տերը առավել պայծառացնի Հնդիկ Մալանկարա Եկեղեցին և բարի պտուղներով նորոգ արգասավորի հարաբերությունները մեր Եկեղեցիների միջև:

Պահի զգացումներին համահունչ՝ Մեր խոսքը պիտի ավարտենք եղբայրության մասին հայ գրողի բանաստեղծական մտքով. «Ընդ աստեղոք ի՛նչ կա սիրուն, քան զանձկալի Եղբայր անուն»:

Շնորհ, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեան. Ամէն»:

Վեհափառ Հայրապետն այնուհետև իր գնահատանքը հայտնեց Հնդկաստանի իշխանություններին հայ համայնքի հանդեպ ցուցաբերած ջերմ վերաբերմունքի համար, ապա պանակե նվիրեց մյուռնօրհնությանը Հնդիկ Մալանկարա Եկեղեցու կողմից մասնակցած միտրոպոլիտին:

7 նոյեմբերի

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և հայրապետական ջրախմբի անդամները մասնակցեցին Փառմալա քաղաքի Ս. Պողոս-Ս. Պետրոս եկեղեցում մատուցված Ս. Պատարագին, որին ներկա էին Հնդիկ Մալանկարա Եկեղեցու հոգևորականները, Փառմալայում գտնվող հնդիկ եկեղեցու ճեմարանի սաները և հազարավոր հավատացյալներ: Հավարտ Ս. Պատարագի հավաքվածներին օրհնության և գնահատանքի իր խոսքն ուղղեց Հայոց Հայրապետը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԱՎԱՐՏԻՆ (Քյոթայամա, 7 նոյեմբերի 2008 թ.)

Միտելի՛ք ույրեր և եղբայրներ

Սրբազան Պատարագի նվիրական այս պահին սրբազան այս տաճարում Մեր և Մեզ ուղեկցող հոգևորականների և աշխարհականների անունից ողջունում ենք ամենքիդ և բերում Մեր Հայրական սերն ու Հայրապետական օրհնությունները:

Մենք և Մեր պատվիրակությունը Մեր սիրեցյալ եղբոր՝ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Դիդիմոս Ա Կաթողիկոսի հրավերով եկել ենք Հայաստանից՝ Սուրբ Հոգու առաջնորդությամբ ամրագրելու մեր հավատքի միությունը, որ անշեղորեն խարսխված է երեք Տիեզերական ժողովների Սուրբ ուսմունքին: Եկել ենք Մեր սիրեցյալ եղբոր հետ վերահաստատելու Մեր պատրաստակամությունը՝ առավել սերտացնելու հարաբերությունները մեր Եկեղեցիների միջև, ինչպես նաև գործակցելու

Քրիստոսի Ավետարանի լույսը մարդկության կյանքում տարածելու տերունապատվեր առաքելության մեջ՝ հանուն աշխարհում խաղաղության հաստատման, սիրո և համերաշխության գորացման:

Ուրախ ենք այսօր, սիրելի՛ քույրեր և եղբայրներ, որ հանդիպում ենք ձեզ և փոխանցում նաև սերն ու ողջույնը ձեզ հավատակից հայ ժողովրդի: Մենք գիտենք, որ աստվածասեր ու աղոթասեր են Հնդիկ Մալանկարա Եկեղեցու հավատավոր զավակները, ովքեր իրենց քրիստոնեական ողջ պատմության ընթացքում Հարության հավատի գործությամբ են հաղթահարել նեղություններ ու դժվարություններ՝ հաստատուն և զորեղ պահելով իրենց հոգին ու կամքը՝ անշեղորեն դավանելու Քրիստոսին և ապրելու Ավետարանի լույս պատգամներով ու պատվիրաններով: Հնդիկ Եկեղեցու զավակները, ինչպես զրկանքների ու փորձությունների ենթարկված և հավատքի համար հալածանքներ կրած հայ ժողովուրդը, ամուր հավատքով փարված Մայր Եկեղեցուն, հաստատուն հույսով հաղթահարել են բազում դժվարություններ ու մարտահրավերներ՝ պահպանելով իրենց ինքնությունը՝ որպես Արևելյան Ուղղափառ Եկեղեցի:

Մենք գոհունակությամբ ենք անդրադառնում, որ այսօր դուք, վառ պահելով հավատքը ձեր հայրերի, շարունակում եք աստվածահաճո ընթացքով սեր ջամբել մարդկանց հոգիներին՝ խոնարհությամբ և հեգությամբ իրականացնելով բարեգործության և գթասրտության պատվերը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, ով մեծագույն գովեստի արժանի համարեց խնամատար առաքելությունը ստանձնողներին՝ ասելով. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ Ինձ համար արեցիք» (Մատթ. ԻԵ 40): Դուք ձեր կողմից իրականացվող բարեսիրական և խնամատար ծրագրերով օգնության ձեռք եք մեկնում աղքատներին ու կարիքավորներին, հոգ տանում հիվանդներին, սատար լինում նրանց, ովքեր տուժել են բնական աղետներից և արհավիրքներից, բեկված են սրտով, անտուն են և ընչագուրկ:

Միքելինե՛ր, այս առավոտ՝ աղոթքի, խորհրդածության և հոգևոր զեղումի պահին, խոնարհվում ենք Սուրբ Գրիգորիոս Պարոմալայի՝ Մալանկարա Եկեղեցու Սրբի մասունքների առջև: Մերունդների համար անսպառ ներշնչման աղբյուր է եղել աստվածահաճո կյանքի օրինակը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ապրած Գրիգորիոս Պարոմալայի՝ հրաշագործ Սրբի, ով աղոթքի և բարի գործերի մեջ հարատևելու պատգամ է թողել իր բարեխոսությունը հայցող ուխտավորներին և հավատացյալ ժողովրդին:

Աղոթում ենք, որ Աստծո Սուրբ Աջի ներքո հոգևոր զարթոնքի նոր պտուղներով բարեզարդվի հավատավոր Հնդիկ Մալանկարա Եկեղեցին և նոր ձեռքբերումներով ու բարի իրագործումներով արգասավորվեն եղբայրությունն ու համագործակցությունը մեր Սուրբ Եկեղեցիների: Թող Տիրոջ երկնահեղ օրհնությունը հանապազ հովանի լինի մեր քույր Եկեղեցիներին և հավատակից մեր ժողովուրդներին:

Շնորհք, սեր և ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ և ընդ ամենեւեան. Ամէն:

Վեհափառ Հայրապետն այնուհետև այցելեց Փառմալայի վանական համալիր, ուր

գտնվում է Հնդիկ Մալանկարա Եկեղեցու ճեմարանը, որտեղ կրթություն են ստանում Հնդիկ Եկեղեցու ապագա հոգևորականները: Փառմալայի այս վանքում ժամանակին հյուրընկալվել է նաև Վազգեն Վեհափառը և ի նշանավորումն հայոց երջանկահիշատակ Հայրապետի այցելության՝ ճեմարանի պատին մի հուշաքար է փակցվել, որ 1963 թ. նոյեմբերի քսաներեքին Վազգեն Առաջինը այցելել է այստեղ:

Ճեմարանում կայացած հանդիսության ընթացքում Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց ճեմարանի տեսուչը, ապա հավաքվածներին իր օրհնությունը բերեց Գարեգին Երկրորդը՝ ի մասնավորի ասելով. *«Մեր հոգևոր սպասավորներ, մեր հավատավոր ժողովրդի ջերմ սերն ու ողջունն ենք բերում ձեզ, սիրելի՛ հավատակից մեր եղբայրներ և քույրեր: Այսօր Աստծո ողորմած կամքով ձեզ հետ մասնակցեցինք Ս. Պատարագի արարողությանը: Մենք աղոթեցինք առ Բարձրյալ Տերը, որպեսզի պայծառ հավատքով, սիրով շարունակեք ձեր բարեպաշտ կյանքի ընթացքը, և մարդիկ տեսնեն ձեր գորավոր հավատքը, այդ հավատքից ճառագող լույսը, ձեր առաքինազարդ գործերը և փառաբանեն մեր Փրկչին ու Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին: Մենք հայցեցինք Ամենակալից, որ ձեր բարի համբավը, որպես հավատավոր ժողովրդի, միշտ հնչի աշխարհի բոլոր ծայրերում:*

Այսօր Մենք աղոթեցինք նաև աշխարհի խաղաղության համար, որպեսզի մարդիկ, ազգերը, պետությունները ապրեն սիրո, եղբայրության և խաղաղ գործակցության մեջ: Մեր աղոթքը առ Աստված բարձրացրեցինք Մեր սիրեցյալ եղբոր և ձեր Հայրապետի՝ Դիդիմոս Առաջին Կաթողիկոսի համար, որպեսզի Տերը գորացնի նրան՝ շնորհելով Հովհաննեսյան առաքելության ծաղկուն և արգասավոր երկար տարիներ»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը դիմեց այնտեղ ներկա Հնդիկ Եկեղեցու ճեմարանի սաներին՝ ասելով. *«Միրելինե՛ր, Դուք հոգևոր այս կրթօջախում պատրաստվում եք տերունապատվեր նվիրյալ առաքելության՝ ի փառս Աստծո, ի պայծառություն Հնդիկ Մալանկարա Եկեղեցու: Հաստատուն եղեք ձեր հավատքի մեջ, ամուր պահեք ոգին եկեղեցանվիրումի և աստվածսիրության, որպեսզի ապագային, որպես քաջ և բարի հովիվներ, Ավետարանի լույսը տարածեք հավատավոր ձեր ժողովրդի կյանքում և նոր իրագործումներով բարեզարդեք անդաստանը ձեր Սուրբ Եկեղեցու:*

Թող սերը, շնորհը և խաղաղությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի լինեն միշտ մեզ հետ այսօր և հավիտյանս. Ամեն»:

Վեհափառ Հայրապետն այնուհետև մասնակցեց Ս. Գրիգորիոս Պարումալայի անունը կրող հիվանդանոցի հիմնաքարի օրհնության արարողությանը. Հնդիկ Եկեղեցու հովանու ներքո կառուցվելիք այդ հաստատությունում բուժում կստանան հոգեմտավոր խնդիրներ ունեցողները և թմրամոլությամբ տառապողները:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնելով օրհնության այս արարողությանը մասնակցելու համար, իր խոսքում նշեց. *«Հնդիկ Մալանկարա Եկեղեցու հավատացյալների հավատքը պտղավորված է արդյունազարդ գործերով, որոնք պիտի հավելվեն բարի ծառայությամբ Ս. Գրիգորիոս Պարումալայի անունը կրող հիվանդանոցում: Ապաքինման կարոտ, մտավոր տկարություն ունեցող ան-*

ձինք այստեղ խնամք և մխիթարություն են ստանալու: Ծառայությունը նման անձանց քրիստոնյաներիս կոչումն է: Այդ ձևով առատացնում ենք նաև Աստծո օրհնությունը մեր կյանքում:

Միրելինե՛ր, Մենք Մեր գնահատանքն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել այս ձեռնարկի իրականացման գործում: Աղոթքով մաղթում ենք, որ զորանա Հնդիկ Մալանկարա մեր քույր Եկեղեցին աստվածասեր և մարդասեր այսպիսի գործերով և հաստատվի Աստծո օրհնության մեջ:

Մեր սերը և օրհնությունն ենք բերում ձեզ ամենքիդ: Թող Տերը մշտապես պահի և պահպանի ձեզ բարի ընթացքներում»:

8 նոյեմբերի

Վեհափառ Հայրապետը առավոտյան մեկնեց Կոլենջերի շրջան, ուր մասնակցեց տեղի հիվանդանոցի երիկամների պատվաստման բաժանմունքի հանդիսավոր բացմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսն այնուհետև մասնակցեց Հնդիկ Մալանկարա Եկեղեցու այս շրջանի քարոզչական կենտրոնի ձայնագրման և տեսագրման ստուդիայի հանդիսավոր բացմանը: Այստեղ տեղի ունեցավ նաև Հայոց Հայրապետի մամլո ասուլիսը, որի ընթացքում Նորին Սրբությունը բարեմաղթեց, որ Հնդիկ Մալանկարա Եկեղեցու նորաստեղծ այդ թեմը հաջողությամբ կատարի իր առաքելությունը՝ իր գործունեությունը արդյունավորելով գեղեցիկ տարբեր իրագործումներով: Հայոց Հայրապետը կարևորեց հատկապես այն հանգամանքը, որ կատարվող եկեղեցական արարողություններին մասնակցում են մեծ թվով երեխաներ և երիտասարդներ, որը եկեղեցու կենսունակության կարևոր նախապայմաններից է: Նորին Սրբության բնորոշմամբ. «*Մենք տեսանք կենդանի եկեղեցին մեր Տիրոջ, և Մեր հոգին փառավորվեց Ձեր հավատքով*»:

Այս թեմի առաջնորդին ժամանակին Վազգեն Վեհափառը լանջախաչ էր նվիրել, և Գարեգին Բ Կաթողիկոսը մաղթեց, որ Վազգեն Վեհափառի նվիրած վարդապետական խաչի հետ նա կրի և իր նվիրած եպիսկոպոսական պանակեն:

9 նոյեմբերի

Նոյեմբերի 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Քերալա նահանգում ավարտելով իր եղբայրական այցը Հնդիկ Մալանկարա Եկեղեցու Պետ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Դիդիմոս Ա-ին, մեկնեց Մադրաս, ուր նոյեմբերի 9-ին կատարեց Ս. Աստվածածին եկեղեցու վերածման արարողությունը: Եկեղեցին, որ գտնվում է հայկական փողոցում՝ Չեննայի կենտրոնում, կառուցվել է 1712 թվականին և վերանորոգվել Կալկաթայի հայկական համայնքի ջանքերով:

Ս. Աստվածածին եկեղեցին Ծայրագույն Արևելքի ամենահին հայկական եկեղեցիներից մեկն է: Եկեղեցու տարածքում գտնվում են նշանավոր հայորդիների բազում շիրիմներ, ի թիվս որոնց նաև Տ. Հարություն քին. Շմավոնյանի գերեզմանը: Վերջինիս գերեզմանի խաչքարը բերվել է Հայաստանից, որը օրհնել է երջանկահիշատակ

Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր Հովվապետական այցի ընթացքում 1963 թվականին: Հայտնի են Շամիր ընտանիքի շիրմաքարերը, որոնք գտնվում են եկեղեցուն կից դամբարանում, որը գոյություն է ունեցել մինչ Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը: Այնտեղ է գտնվում նաև հայ բարերար Խոջա Պետրոս Ոսկանի հուշաքարը, ում աճյունն ամփոփված է Հնդկաստանում, սակայն նրա վերջին ցանկության համաձայն սիրտը թաղվել է Նոր Զուղայում:

Արարողության ընթացքում Հնդկաստանի հոգևոր հովիվ Ս. Օշական վարդապետ Գյուլգյուլյանի կողմից ջրով և գինով լվացվեցին եկեղեցու Սուրբ Սեդանը և այլոները, ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանից բերված նորօրինյալ Սրբալույս Մյուռոնով վերածեց եկեղեցու Ս. Սեդանը: Նորին Սրբությանն ընթերականեր Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Ս. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը և Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Ս. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը կատարեցին եկեղեցու 16 պուների օծումը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր Հայրապետական պատգամն ուղղեց Ծայրագույն Արևելքից, Եվրոպայից և ԱՄՆ-ից ուխտավորաբար եկած հավատացյալներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԱԴՐԱՍԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՕԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Միրելի բարեպաշտ զավակներ Մեր

Խնդությամբ և բերկրանքով է լցված Մեր հոգին: Կատարեցինք վերածումը Մադրասի Ս. Աստվածածին եկեղեցու, որը մեր հայրերի կողմից կառուցվել է 1712 թ.: Շուրջ 300 տարիներ այս եկեղեցին հայորդյաց կրթել և դաստիարակել է մեր հայրերի քրիստոնեական սուրբ հավատքով՝ իր առաքելությունը կատարելով Հնդկաստանի մեր ժողովրդի կյանքում: Ժամանակների ընթացքում, սակայն, Հնդկաստանի հայ համայնքը տկարացել է և նվազել: Այսօր սակավաթիվ հայորդիներ են ապրում Գալկաթայում, ովքեր իրենց հոգում կրելով սերն ու նվիրումը իրենց հայրերի՝ շեն և պայծառ են պահում Հնդկաստանի այս օրինյալ հողում կերտված ու հաստատված հավատո մեր տները՝ աղոթավայրերը, եկեղեցիները:

Միրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր, անհուն գոհունակությամբ ենք անդրադառնում, որ հավատավոր Մեր հայորդիք հեռավոր Ամերիկայից ու աշխարհի տարբեր երկրներից տեղեկանալով, որ Գալկաթայում իրենց եղբայրներն ու քույրերը համախմբված տոնախմբում են երեքհարյուրամյակը Մադրասի Սուրբ Աստվածածին եկեղեցու հաստատման, եկել են ուրախակից լինելու նրանց, խանդավառելու, գոտեպնդելու, ոգի փոխանցելու, որպեսզի հնդկահայ Մեր զավակները շարունակեն պահպանել ու պայծառացնել մեր հայրերի սուրբ ժառանգությունը ավանդաշատ այս երկրում:

Միրելի՛ն՝ քրիստոս մեր Տերը, իր լուսե վարդապետության ուսուցմամբ կարեն-

րելով առ Աստված ամուր, անսասան հավատքով պսակյալ առաքինի կյանքն ու գործը, ասում է, որ ավագի վրա շինված տունը կործանվում է հողմերից, անձրևներից, իսկ այն տունը, որ կառուցվում է ապառաժի վրա, դիմակայում է ամեն տեսակ հողմերի և փոթորիկների (Մատթ. Է 24): 300 տարի այս աղոթատունը կանգուն է մնացել՝ հակառակ բոլոր տեսակի հողմերի և փոթորիկների, քանզի հավատքի և աստվածպաշտության վեմի վրա է հաստատվել մեր բարեպաշտ հայրերի կողմից: Աղոթքով ու խոնարհումով հիշենք այս եկեղեցու բակում հանգչող մեր աստվածասեր նախնայաց, ովքեր գրական, կրթական և հասարակական-մշակութային քաջեռանդ գործունեությամբ ու մեծարժեք ձեռքբերումներով պայծառություն են հավելել հնդկահայ գաղթօջախի ազգային-եկեղեցական կյանքին: Ի թիվս նրանց հիշենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և հավատավոր մեր ժողովրդի նվիրյալ սպասավոր Հարություն քահանա Շավոնյանին, ով 1794 թ. հիմնեց և լույս ընծայեց առաջին հայ պարբերականը՝ «Ազդարար» ամսագիրը, որը մեծագույն ձեռքբերում էր ոչ միայն հնդկահայ, այլև համայն հայության հասարակական-մշակութային կյանքում:

Այսօր մենք հավատարիմ ենք մեր հայրերի թողած ժառանգությանն ու ավանդներին և գոհություն ենք բարձրացնում առ Աստված, որ դարերի ընթացքում անսասան է պահել մեր ժողովրդի վեմ-հավատքի վրա հաստատված ազգային-եկեղեցական կյանքը, ուժ տվել հաղթահարելու փորձություններ ու դժվարություններ և վերհանելու նոր կյանքի ու արարումների՝ հակառակ կոտորածների, ջարդերի և ավերների: Հայցենք, որ Տերը միշտ Իր սերը գորավիզ դարձնի մեզ, Իր Աջը պահի մեր հայրենի երկրի վրա, աշխարհասփյուռ հայության վրա, որպեսզի այն, ինչ որ կերտում ենք հավատքով, ծաղկի ու պտղաբերի, դիմակայի ժամանակի հողմերին ու փոթորիկներին, ինչպես Սուրբ Աստվածածին մեր այս եկեղեցին, և մեր աղոթքի տներում միշտ փառաբանական աղոթք հնչի մաշտոցյան լեզվով, աղոթք հնչի Նարեկացու շնչով:

Գոհունակ սրտով Մեր գնահատանքն ենք բերում հնդկահայոց հոգևոր հովվին՝ Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանին, Գալկաթայի հայ եկեղեցական վարչության բարեջան անդամներին, որոնց նախանձախնդիր, հետևողական աշխատանքով պայծառացել է եկեղեցին: Լիափույս ենք, որ շինարարական աշխատանքների ավարտից հետո այստեղ կունենանք հայ եկեղեցական, որպեսզի բաց պահի եկեղեցու դռները բարեպաշտ հավատացելոց առջև և իր աղոթքն առ Աստված բարձրացնի՝ հայցելով Տիրոջ օրհնությունն ու ողորմությունը մեր ժողովրդին: Եվ Սուրբ Աստվածածին եկեղեցին իր առաքելությունը կվերստանձնի ինչպես մեր ժողովրդի, այնպես էլ Հնդկաստանում ապրող և Հնդկաստան այցելող հավատացյալների կյանքում:

Մենք Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում հնդկահայ համայնքին, ինչպես նաև Միությունի տարբեր երկրներից Հնդկաստան ժամանած հայորդյացող ձեր նվիրումի, հայասեր ոգու համար, որ առաջնորդել է ձեզ դեպի Մադրաս, դեպի Հնդկաստան, Գալկաթա և բոլոր այն սրբատեղիները, որ ձեզ հետ պիտի անցնենք մի քանի օրերի ընթացքում: Միասին աղոթք պիտի բարձրացնենք, որպեսզի Տերը գորացնի հայի հավատքը, հայ կյանքը, որ հայորդին մշտապես կարողանա ապրել և արարել Քրիստոսի սիրով, պահել և պահպանել մեր հայրերի կտակած սրբազան ժա-

ռանգությունն ու արժեքները:

Աստծո սերը և օրհնությունը թող հովանի լինեն մեր ազգի, մեր Հայրենիքի, հայ կյանքի վրա ի սփյուռս աշխարհի:

Շնորհ, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեան. Ամէն:

Վերածման արարողությունից հետո Հոգեհանգստյան կարգ կատարվեց ի հիշատակ եկեղեցու կառուցողների և բոլոր նրանց, ում ջանքերով պահպանվել և մեր օրերն է հասել այն:

10 նոյեմբերի

Տինգրայի Սուրբ Երրորդություն եկեղեցում Նորին Սրբությանը մեծ խնդությամբ, ծափողջույններով և ցնծությամբ դիմավորեցին հնդկահայ համայնքի հավատացյալներն ու հարյուրավոր հյուրեր և ուխտավորներ, որոնք Ս. Նազարեթ եկեղեցու օծման 300 ամյակի տոնակատարություններին մասնակցելու կապակցությամբ հեռավոր Հնդկաստան էին հասել Հայաստանից, ԱՄՆ-ից, Իրանից, Անգլիայից, Ավստրալիայից և այլ երկրներից, որոնց թվում էին նաև նախկին հնդկահայեր, Մարդասիրական ճեմարանի շրջանավարտներ, ինչպես նաև եկեղեցական վարչության հրավերով Կալկաթա ժամանած հնդկահայ համայնքում նախկինում ծառայած հոգևորականներ: Եկել էին նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երգչախմբի անդամները՝ ղեկավարությամբ տիար Ռուբեն Շարբայանի, որոնց ներկայությունն ու պրոֆեսիոնալ երաժշտական կատարումները առավել շքեղություն ու շունչ էին հաղորդում տեղի ունեցող արարողություններին: Երգչախմբի կատարմամբ «Հրաշափառ» շարականի երգեցողության ներքո, Մարդասիրական ճեմարանի սաների, հոգևորականների և ներկաների ուղեկցությամբ թափորը շարժվեց դեպի Ս. Երրորդություն եկեղեցի, որտեղ և կատարվեց «Հրաշափառի» արարողությունը, որից հետո ներկաները առաջնորդվեցին դեպի եկեղեցուն կից նորակառույց հանդիսությունների սրահ, ուր և Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ կատարվեց շենքի բացման հանդիսավոր արարողությունը, հընթացս որի Նորին Սրբությունը ողջունեց ներկաներին՝ բաշխելով ամենքին իր օրհնությունը:

11 նոյեմբերի

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը վերստին այցելեց Տինգրա՝ մասնակցելու եկեղեցուն կից նորակառույց սրահում կազմակերպված սեմինարին, որը նվիրված էր հնդկահայերի հարուստ պատմությանը և անցյալին: Սեմինարին ներկա էին նաև հնդկահայ համայնքի ներկայացուցիչները և 300-ամյակի հանդիսությունների առիթով Կալկաթա եկած բոլոր հյուրերը:

Սեմինարը սկսվեց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և միասնական աղոթքով: Ներկաներին ողջունեց և բարի գալուստ մաղթեց Կալկաթայի եկեղեցական վարչության նախկին ատենապետ տիար Հայկ Սուքիաս Կրտսերը: Օրվա բանախոս-

ներն էին հնդկահայոց հոգևոր հովիվ և Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը և դոկտոր Օմար Խալիդին: Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանը տեսասալիկների ցուցադրմամբ ներկաներին ներկայացրեց Հնդկաստանի տարածքում գտնվող բոլոր հայկական եկեղեցիների հին և նոր լուսանկարները՝ ծանոթացնելով դրանց հակիրճ պատմությանը, թե ժամանակին ինչպիսի լքված և անմխիթար վիճակում են գտնվել նման հոյակերտ շինությունները, որոնցից մի քանիսը նույնիսկ խոնարհված էին, սակայն Կալկաթայի եկեղեցական վարչության և հոգևոր հովվի բարեջան աշխատանքների շնորհիվ հիմնովին վերակառուցվել և վերանորոգվել են՝ պահպանելով նախկին տեսքն ու հմայքը, որոնք այժմ կրկին կենդանություն են ստացել, որտեղ վերստին խնկաբույր աղոթք է հնչում հայորդիների շուրթերից: Մեմինարի ավարտին գնահատանքի և օրհնության խոսքով ներկաներին դիմեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հայրապետական շքախմբի անդամները հնդկահայոց հոգևոր հովվի և եկեղեցական վարչության անդամների ուղեկցությամբ եղան նաև միանձնուհիների այն վանքում, ուր ապրել և գործել է Մայր Թերեզան: Նորին Սրբությանը վանքի մուտքին հոգևոր երգեցողությամբ դիմավորեցին միանձնուհիները մայրապետի գլխավորությամբ՝ ստանալով Հայոց Հայրապետի օրհնությունը: Նորին Սրբությունը շրջեց վանքում, եղավ Մայր Թերեզայի ապրած սենյակում: Այնուհետև հոգեհանգստյան կարգ կատարվեց նրա շիրմի մոտ:

12 նայեմերի

Վեհափառ Հայրապետն այցելեց Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարան, որն այժմ ունի ութսուն աշակերտ: Ճեմարանի մուտքին Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին Մարդասիրական ճեմարանի ղեկավարությունը, ուսուցչական կազմը, սաներն ու հյուրերը: Թմրկահարների համաչափ նվազակցությամբ և ծափողջույնների ներքո Ամենայն Հայոց Հայրապետն առաջնորդվեց ճեմարան, ուր Նորին Սրբությանը երկու փոքրիկ ճեմարանականներ մատուցեցին ավանդական բարիգալստյան աղն ու հացը: Այնուհետև հնչեցին Հայաստանի Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության օրհներգերը, որից հետո բոլոր ներկաները շարժվեցին դեպի հանդիսությունների սրահ՝ մասնակցելու գեղարվեստական ցերեկույթին:

Հանդիսությունը սկսվեց Տերունական աղոթքով, որին հաջորդեց Մարդասիրական ճեմարանի օրհներգը երգչախմբի և սաների կատարմամբ: Ամենայն Հայոց Հայրապետին և հյուրերին բարեգալստյան խոսքով ողջունեց ճեմարանի վարչական տնօրեն Հարություն սրկ. Համբարձումյանը, ինչպես նաև կրթական տնօրեն տիար Սումիթրա Մալիկը, որին հաջորդեց ուսուցիչների և սաների կողմից պատրաստված գեղարվեստական համերգային ծրագիրը, որտեղ սաները հանդես եկան թատերական գեղեցիկ ներկայացմամբ՝ հարուստ գույներով, երաժշտական կատարումներով, արտասանությամբ և երգ ու պարով ոգևորելով ներկաներին:

Հանդիսության ավարտին ամփոփիչ գեկույցով Ամենայն Հայոց Հայրապետին և ներկաներին դիմեց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը՝ անդրադառնալով ճեմարանի գործունեությանը, անցուդարձին, կատարված նորոգություններին և անցնող տարում գրանցված հաջողություններին: Հնդկահայոց հոգևոր հովիվը հատուկ շեշտեց, որ Վեհափառ Հայրապետի առաջին այցելությունը մեծ խանդավառություն էր ստեղծել, և իրենք փորձեցին ամեն ինչ անել, որ այդ խանդավառությունը չցրվի: Նա վկայակոչեց քանքարների առակը՝ ասելով, թե իրենք աշխատեցին քանքարաթաքույց չլինել, այլ շենացնել, նորոգել և ավելացնել հոգևոր մշակութային այն մեծ ժառանգությունը, որն իրենց է ավանդվել հնդկահայության նախորդ սերունդների կողմից:

Հոգեշնորհ Հայր Սուրբը Նորին Սրբությանը նվիրեց նկարագարող մի գրքույկ, որը տպագրվել էր Մարդասիրական ճեմարանի հիմնադրման 185-ամյակի, ինչպես նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախորդ՝ 2007 թ. Հովվապետական այցի ընթացքում ճեմարան կատարած այցելության առիթով:

Ցերեկային ավարտվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության և ողջունի խոսքով:

Ներկաներին ուղղված խոսքում Նորին Սրբությունն ասաց. «Միրելիներ՛ր, այս միջոցառման ընթացքում հուզումնալի պահեր ապրեցինք ամենքս: Այստեղ ներկաներից շատերը մտովի ճամփորդեցին դեպ անցյալ դարեր, երբ հայորդիք Հնդկաստանում կառուցեցին կրթական, մշակութային, բարեսիրական հաստատություններ, եկեղեցիներ և գորացրին հայ կյանքը հոգևոր արժեքներով՝ ավանդաշատ այս երկրում տարածելով բարի համբավը մեր ժողովրդի:

Շատեր վերապրեցին իրենց մանկությունը և պատանեկությունը, երբ որպես աշակերտ և ուսանող եկան Գալկաթայի Մարդասիրական ճեմարան, հաղթահարեցին տարբեր դժվարություններ, ուսում առան, գորացան հավատքի, առ Հայրենին նվիրումի մեջ և այսօր իրենք են մտածում իրենց ներդրումը բերել հարազատ հաստատությանը՝ քաղցր հուշերով և գոհունակ սրտով օրհնելով բոլոր նրանց, ովքեր այս հաստատության հովանու ներքո իմացության լույսն են ջամբել իրենց:

Այսօր Մենք Մեր խոնարհումն ու աղոթքն ենք բերում մեր նախնյաց, ովքեր տեսիլքն են ունեցել այստեղ եկեղեցի և կրթական հաստատություն կառուցելու, որոնցով պայծառացել է մեր ժողովրդի կյանքը Հնդկաստանի հեռավոր այս ափերում:

Նաև Մեր բարձր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում բոլոր նրանց, ովքեր անցնող տարիների ընթացքում կարողացել են պահել այս հաստատությունը և նրա առաքելությունը շարունակել ազգային մեր կյանքում: Այսօր շնորհիվ երախտարժան անձանց նախանձախնդրության՝ այս հաստատությունը շարունակում է կրթել ու դաստիարակել մեր սիրասուն մանուկներին ու պատանիներին:

Դժվարին ժամանակներ է ապրել Գալկաթայի Մարդասիրական ճեմարանը, սակայն, փառք Տիրոջը, այլևս հաղթահարվել են խնդիրներն ու խոչընդոտները: Ուրախ ենք, որ հեռավոր այս ափերում շարունակվում է հայ կյանքը, գործում է եկեղեցին,

գործում է ճեմարանը: Փառք Աստծո, այս օրը հույս և լավատեսություն է ներշնչում, որ վաղվա օրն ավելի լավ պետք է լինի, պիտի առավել գորանա հայ գաղթօջախը Հնդկաստանում և նոր ձեռքբերումներով պիտի հավելվի անգին ժառանգությունը հնդկահայ համայնքի»:

Դժվարությունների հաղթահարման և հնդկահայ կյանքի սկսված նոր վերելքի համար Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Կալկաթայի եկեղեցական վարչությանը, այստեղ սպասավորող հոգևորականներին և ճեմարանի անձնակազմին, ինչպես նաև սաներին, որ բավարար կամք դրսևորելով՝ հաղթահարում են առկա դժվարությունները:

Նորին Սրբությունն այնուհետև վստահություն հայտնեց, որ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը Սփյուռքի հայկական լավագույն կրթական հաստատություններից մեկը պետք է դառնա: Վեհափառ Հայրապետը, հատուկ շեշտելով, թե ամեն ինչ պետք է անել, որ այս հաստատությունը շարունակի գործել, որպես խոսքի ամփոփում՝ ասաց. «Թող Աստված շեն և պայծառ պահի Մարդասիրական ճեմարանը: Այս հաստատությունը հնդկահայության վաղվա օրվա երաշխավորն է ու կարևորվում է ոչ միայն հնդկահայության, այլև ընդհանրապես մեր ազգային-եկեղեցական կյանքում»:

Հանդիսությունից անմիջապես հետո Նորին Սրբության նախագահությամբ կատարվեց նաև ավագ լսարանի սաների համար նախատեսված նոր ննջարանային մասնաբաժնի հանդիսավոր բացումը, ինչպես նաև բոլորովին նոր վերանորոգված սեղանատան բացումը, որտեղ և տեղի ունեցավ ճաշկերույթ: Վեհափառ Հայրապետը առանձին հանդիպում և մտերմիկ զրույց ունեցավ նաև ճեմարանի սաների հետ:

Նույն օրը երեկոյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երգչախումբը անգուգական համերգային ծրագրով հանդես եկավ Կալկաթայի Բիրլա Մաքհադար նշանավոր համերգասրահում: Երգչախումբը հանդիսատեսին ներկայացրեց ինչպես հայկական ժողովրդական ու հոգևոր, այնպես էլ եվրոպական դասական կատարումներ:

13 նոյեմբերի

Նորին Սրբությունն իր գլխավորած շքախմբի, եկեղեցական վարչության, Կալկաթայի հոգևոր հովվի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երգչախմբի, հյուրերի և ուխտավորների հետ միասին մեկնեց Կալկաթայից մոտ երկու ժամ հեռավորությամբ գտնվող Չինսուրայի Սուրբ Հովհաննես հայկական եկեղեցի:

Ըստ պատմական տվյալների՝ Չինսուրայի Ս. Հովհաննես եկեղեցին Հնդկաստանի առաջին հայկական և Արևմտյան Բենգալիայում կառուցված երկրորդ քրիստոնեական եկեղեցին է՝ հիմնված 1695 թ.: Ցավոք, այսօր երբեմնի հայաշատ Չինսուրա քաղաքում այլևս հայեր չեն ապրում: Այստեղ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ կատարվեց ժամերգություն և «Հոգեհանգստյան» արարողություն:

Երեկոյան հյուրերը կրկին այցելեցին Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարան, որտեղ եկեղեցական վարչության կողմից կազմակերպվել էր բացօթյա ճաշկերույթ: Այստեղ հյուրերը վերստին առիթ ունեցան մոտիկից ծանոթանալու և շփվելու

Ճեմարանի սաներին ու նրանց առօրյային:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ կատարվեց նաև նորակառույց լվացքատան բացման արարողությունը: Այս անգամ ժապավենը կտրելու պատիվն ընծայվեց Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ տիար Զեյնա Գալուստյանին:

14 նոյեմբերի

Նորին Սրբությունը հայրապետական շքախմբի անդամների, եկեղեցական վարչության, հոգևոր հովվի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երգչախմբի, հյուրերի և ուխտավորների հետ միասին մեկնեց Կալկաթայից մոտ վեց ժամ հեռավորությամբ գտնվող Սեդաբաղի Սուրբ Մարիամ Աստվածածին հայկական եկեղեցի:

Սեդաբաղի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին կառուցվել է Զուղայեցի նշանավոր վաճառական, բարեգործ Խոջա Պետրոս Հարությունյանի անձնական միջոցներով 1758 թ., ի հիշատակ իր ծնողների: Ցավոք, այսօր, ինչպես Հնդկաստանի մյուս երբեմնի հայաշատ վայրերում, նույնպես և Սեդաբաղում, հայեր չեն ապրում: 2006 թ. Կալկաթայի նորընտիր եկեղեցական վարչության և հոգևոր հովվի նախաձեռնությամբ ամբողջովին վերանորոգվել է այս չքնաղ եկեղեցին, կառուցվել է նոր զանգակատուն և հյուրատուն, բարեկարգվել ու կանաչազարդվել է եկեղեցու ընդարձակ տարածքը և հայոց համայնքին են վերադարձվել նախկինում ապօրինաբար զավթված հողատարածքները:

2007 թ. մարտի 4-ին Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի Հայրապետական պատվիրակ Տ. Ադան արքեպս. Պալիոզյանի ձեռամբ օծվել են Ս. Աստվածածին վերանորոգված եկեղեցու Ս. Մեղանը և պուների 16 խաչերը:

2008 թ. նոյեմբերի 14-ը Սեդաբաղի Ս. Աստվածածին եկեղեցու համար պատմական օր էր: Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ և ձեռամբ տեղի ունեցավ նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանի վարչական տնօրեն Հարություն սրկ. Համբարձումյանի քահանայական ձեռնադրության կոչման արարողությունը:

Նորին Սրբությունն իր խոսքում նշեց, որ այդ օրը կատարվում է ընծայման արարողությունը, իսկ հաջորդ օրը պիտի կատարվի քահանայական ձեռնադրությունը: Վեհափառ Հայրապետը, շարունակելով խոսքը, ասաց. «*Աղոթակից եղեք Մեզ այս արարողության ընթացքում և հայցեք Բարձրալի ողորմությունը, սերը և Սուրբ Հոգու շնորհները բարեշնորհ Հարություն սարկավագին, որպեսզի նա՝ որպես քաջ և բարի հովիվ, կարողանա բոլորանվեր սիրով ծառայել Տիրոջը, մեր ժողովրդին և մեր Սուրբ Եկեղեցուն:*

Միրելինե՛ր, դարերի հոլովություն հոգևոր սպասավորները Ավետարանի լույսով են խմորել մեր Սուրբ Եկեղեցու և հավատավոր ժողովրդի կյանքը, իրենց առաքինազարդ գործոց և առաքելության քաջարի օրինակներով խանդավառել և ոգեշնչել են հայորդիներին նոր արարումների և իրագործումների: Մեր հոգևոր հայրերը նաև Աստծո օրհնությամբ գորացրել են հայազգի մեր երախտարժան գործիչներին և լծակից եղել նրանց հայրենանվեր գործունեության ընթացքներում: Լիահույս ենք, որ

Հնդկաստանում հայ համայնքի զորացմանն ու վերագարթոնքին զուգընթաց պիտի ավելանա նաև թիվը Հնդկաստանում սպասավորող մեր հոգևորականաց և առավել պիտի շողա փառքը Հնդկաստանի հայոց զաղթօջախի:

Մեր աղոթքն է, որ Աստված Իր օրհնությունը մշտապես հեղի այս երկրի վրա, այստեղ ապրող ազգությունների և Մեր զավակների վրա, որպեսզի Քրիստոսասեր հայորդիք Տիրոջ ողորմությամբ շարունակեն Հնդկաստանում պայծառ պահել և շենացնել ազգային-եկեղեցական մեր կյանքը»:

«Նայեաց ի մեզ» հոգեպարար շարականի երգեցողության ներքո ընծայացուն ծնկեց եկեղեցու Ավագ դռան մոտ և աստիճանաբար, սաղմոսասացների ու դպիրների երգեցողության ներքո, խարտավիլակ Գերաշնորհ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանի ուղեկցությամբ մոտեցավ Սուրբ Խորանին բազմած ձեռնադրող Վեհափառ Հայրապետին:

Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու խորանին կատարվեց նորընծայի ուղղափառ հավատքի հրապարակային քննություն: Խարտավիլակները վկայեցին նորընծայի հոգևոր-իմացական պատրաստվածության և արժանիքների մասին, իսկ ընծայացուն միաբերան մերժեց և նզովեց հերետիկոսներին ու հերձվածողներին՝ ուխտելով հետևել սուրբ առաքյալների, երանաշնորհ հայրապետների ու վարդապետների հավատքին՝ ի նշան իր ուղղափառ դավանության արտասանելով Ս. Գրիգոր Տաթևացու հեղինակած «Հավատամքը» և ուխտելով հավատարիմ մնալ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Այս օրը հնդկահայ համայնքի համար հատկանշական էր նաև նրանով, որ համայնքում անհիշելի ժամանակներից քահանայական ձեռնադրություն տեղի չէր ունեցել, իսկ Սեդրաբաղի Ս. Մարիամ Աստվածածնի խորանին նման արարողություն առաջին անգամ էր կատարվում:

15 նոյեմբերի

Նոյեմբերի 15-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հնդկաստան Հովվապետական այցելության վերջին՝ եզրափակիչ օրն էր, և չափազանց հանդիսավոր ու տոնական մթնոլորտ էր տիրում Կալկաթայի Սուրբ Նազարեթ 300-ամյա եկեղեցում, որտեղ հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի մատուցվեց Հայրապետական Ս. Պատարագ, որի ընթացքում տեղի ունեցավ նաև քահանայական ձեռնադրություն: Հընթացս Ս. Պատարագի, նորընծան սաղմոսների փոխասացության ներքո ծնկաչոք բարձրացավ Ս. Խորան: Դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը՝ ընծայալը բարձրացրեց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման: Մեծ հանդիսավորությամբ Ս. Խորան բերվեց Սրբալույս Մյուռոնը, և ձեռնադրող Վեհափառ Հայրը «Առաքելոյ աղանույ» շարականի երգեցողության ներքո հեղեց Սուրբ Մյուռոնը բթնոցի մեջ, որից հետո դրոշմեց ընծայացուի ճակատը, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ տալով նրան քահանայական նոր անուն: Հարություն սրկ. Համբարձումյանը վերակոչվեց Տ. Ավետիս քահանա: Պատարագից Վեհափառ Հայրը նորած թափանալին փոխանցեց նաև Հաղորդության սկիզբը՝ նրան տալով պատարագելու և Տիրոջ

մարմինն ու արյունը ժողովրդին բաշխելու իշխանությունը: Հայրապետական Պատարագի ընթացքում խորանին սպասավորում էին Մայր Աթոռի դիվանապետ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Ս. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Ս. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, հնդկահայոց հոգևոր հովիվ Ս. Օշական վարդապետ Գյուլգյուլյանը և գավազանակիր Ս. Հովնան աբեղա Հակոբյանը:

Հայրապետական Ս. Պատարագին առավել մեծ շքեղություն և շունչ հաղորդեց նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երգչախումբը՝ ղեկավարությամբ Ռուբեն Շարբաթյանի:

Հընթացս Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ շնորհավորելով Ս. Ավետիսին քահանայական ձեռնադրության առիթով, ինչպես նաև երեցկնոջը, նորընծայի ծնողներին ու հարազատներին, և հնդկահայ համայնքին քահանայական այս ձեռնադրության առիթով:

Ն.Ս.Օ.Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(15 նոյեմբերի 2008 թ., Կալկաթա)

Միրելի բարեպաշտ հավատացյալներ

Փառք և գոհություն ենք բարձրացնում առ Ամենակալն Աստված, որ ամենքիս շնորհը պարգևեց՝ մասնակից լինելու Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու 300-ամյակի տոնախմբության հանդեսին և գոհաբանական աղոթք մատուցելու Տիրոջը, որ 300 տարիներ շարունակ Իր օրհնությունն է բաշխել մեր հավատավոր զավակներին այս սրբազան տաճարի լույս խորանից:

Այսօր ձեզ հետ աղոթակցությամբ կատարեցինք Մայր Աթոռի միաբան Բարեշնորհ Հարություն սարկավազ Համբարձումյանի քահանայական ձեռնադրության և օծման սրբազան արարողությունը՝ կոչելով նրան սպասավորության Տեր Ավետիս անունով: Թերևս նախախնամական էր այս անվան շնորհումը, որովհետև այսօր մեր հոգիներին, յուրաքանչյուրիս իդձերին ու ցանկություններին համահունչ է զգացումը ավետիսի, քանզի ակնկալում ենք այստեղ տեսնել Կալկաթայի վերանորոգված, աղոթաբույր կյանքը, որով ապրել են մեր նախնիք 300 երկար տարիներ: Մեր բարի ցանկությունն է, որ Սուրբ Նազարեթ եկեղեցու 300-ամյա տարեդարձի տոնախմբությունը լինի սկիզբը վերազարթոնքի, որ այստեղ վերստին նոր օջախներ կազմվեն, հայորդիք գան՝ տերը դառնալու այն ողջ ժառանգության, որ 300 տարիների ընթացքում կերտել և ստեղծել են մեր ժողովրդի զավակունք ավանդաշատ այս հողում:

Այս օրերին մենք ձեզ հետ շրջեցինք այդ նվիրական վայրերում, ծանոթացանք այն բոլոր արժեքներին, որ ունենք հնամենի այս երկրում՝ որպես ժառանգություն մեր նախնիներից մեզ թողնված: Եվ Մեր հոգին ցնծաց ուրախությամբ՝ տեսնելով, որ այդ ժառանգությունը պահպանվում է հոգատարությամբ, և փոքրաթիվ հայորդիք այստեղ նախանձախնդրություն են դրսևորում՝ շեն պահելու, պայծառ պահելու մեր ա-

դոժքի տները, մեր ազգային հաստատությունները, հույսով և հավատով, որ վերստին նոր զարթոնք պիտի լինի այդ հաստատություններից ներս: Պիտի առաքելություն ստանձնենք՝ խրախուսելու, քաջալերելու մեր մտերիմներին, բարեկամներին, որպեսզի նրանք այցելեն հարուստ պատմություն ունեցող հնդկահայ գաղթօջախ՝ տեսնելու ձեռքբերումները այս գաղթօջախի, որպեսզի նրանց հոգիները հպարտությամբ լցվեն, նաև վստահությամբ՝ դեպի Հնդկաստանի հայ կյանքի վաղվա օրը: Այստեղ այցելող յուրաքանչյուր հայորդի այդ զգացումով, այդ ապրումով պիտի թողնի այս գաղթօջախը՝ լավատես ու վստահ Հնդկաստանի պետությունում բնակություն հաստատած մեր ժողովրդի զավակաց վաղվա օրվա նկատմամբ:

Մեր այս իդաերի երաշխիքը բոլորիս համար Կալկաթայում գործող Մարդասիրական ձեռնարանն է, որտեղ կրթություն են ստանում ութսուն հայորդիներ, և որտեղից մեր հայացքն ուղղվում է դեպի ապագան: Մենք այս լավատեսությամբ այսօր կատարեցինք ձեռնադրությունը Տեր Ավետիս քահանայի՝ հավատալով, որ այստեղ կրկին պիտի տիրի հոգևոր աշխուժությունը, և հայորդիք պիտի համախմբվեն եկեղեցու կամարների ներքո իրենց հոգևոր հովվի շուրջ ու նվիրումով պիտի շարունակեն 300 տարիների ընթացքն ու պատմությունը հնդկահայ գաղութի:

Թող Տերն ունկնդիր լինի մեր հայցին և աղոթքին, մեր աղաչանքին և հարատևություն պարգևի հայ կյանքին Հնդկաստանի այս օրհնյալ երկրում, որ միշտ աղոթքով զարդարված լինեն մեր եկեղեցիները և մեր զավակաց ուխտով՝ դեպ այդ եկեղեցիներն առաջնորդող ճանապարհները:

Այսօր Մեր գնահատանքն ենք բերում Ս. Նազարեթ եկեղեցու վարչության անդամներին, հոգևոր հովիվ Տ. Օշական վարդապետ Գյուլգյույանին, նրան օգնական և աջակից Տեր Ավետիս քահանային, բոլոր հայորդյաց, որ նվիրում և կյանք են ներդրել՝ բարի արդյունքներով պայծառագարդելու փառքը հնդկահայ գաղթօջախի: Նաև ցանկանում ենք Օշական վրդ. Գյուլգյույանի կուրծքը զարդարել լանջախաչով՝ ի գնահատություն իր նվիրյալ ծառայության: Հայրապետական Մեր օրհնությունն ու սերն ենք բերում ձեռնարանի սաներին, ովքեր եկել են տոնախմբելու այս կարևոր իրադարձությունը: Մաղթում ենք, որ Կալկաթայի Մարդասիրական ձեռնարանի մանուկ և պատանի հայորդիք, գոտեպնդված անցյալի ձեռքբերումներով և առավել խանդավառ այսօրվա վերագարթոնքով, քաջեռանդ լինեն ուսման մեջ և շարունակեն բարի ավանդույթներն ու աստվածահաճո ընթացքը հնդկահայ Մեր զավակաց:

Տոնական այս առիթով, որպես մշտահունչ աղոթք Ս. Էջմիածնից, ցանկանում ենք վարչությանը փոխանցել այս սրբապատկերը՝ Լուսավորչի տեսիլքը ներկայացնող, ըստ որի՝ Միածին Որդին իջավ ի Հայաստան և ցույց տվեց այն տեղը, ուր հիմնվեց Ս. Էջմիածնի մեր նվիրական Մայր Տաճարը: Թող այստեղ ապրող Մեր զավակունք իրենց հայացքը հառեն դեպ Սուրբ Էջմիածին, որի հանդեպ ջերմ սերն ապրում է յուրաքանչյուր հայի հոգում:

Միևնույն ժամանակ հայորդիներ, վերստին Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված և հայցում Տիրոջ զորավոր Աջի հովանին հնդկահայ գաղութի համար: Թող Տերը պահի, պահպանի և զորակից լինի հնդկահայ Մեր հայորդյաց և աշխարհասփ-

յուր համայն Մեր ժողովրդին Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո:

Ս. Պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը հնդկահայոց հոգևոր հովիվ Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանին հանձնեց վարդապետական լանջախաչ՝ որպես գնահատանք և պարգև հոգևոր իր սպասավորության ու կատարած մեծ ծավալի աշխատանքների համար:

Նորին Սրբությունը մասնավոր գնահատանք հայտնեց և շնորհավորեց նաև եկեղեցական վարչության անդամներին՝ Ս. Նազարեթ եկեղեցուն նվիրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բերված մի սրբապատկեր:

Նույն օրը երեկոյան Կալկաթայի Թաջ Բենգալ հյուրանոցում տեղի ունեցավ Ս. Նազարեթ եկեղեցու օծման 300 ամյակին նվիրված տոնակատարությունների ավարտի եզրափակիչ հանդիսությունը: Վեհափառ Հայրապետը, շնորհակալության իր խոսքն ուղղելով ներկաներին և բերելով իր օրհնություններն ու բարեմաղթանքները, բարձր գնահատեց Կալկաթայի եկեղեցական վարչության և հոգևոր հովիվ կատարած աշխատանքները հնդկահայոց կյանքում, որոնց շնորհիվ կրկին վերազարթոնք է ապրում երբեմնի բազմահազար հնդկահայոց համայնքը: Նորին Սրբությունն իր խոսքում մասնավորապես ասաց. «*Երկու տարիներ առաջ Հնդկաստան Մեր այցելության առիթով այստեղ Մեր խոսքն էինք ուղղում ձեզ՝ այս սրահի մեջ նստած հայորդիներին: Ուրախություն, սակայն միաժամանակ և անհանգստություն կար Մեր սրտում: Ուրախ էինք, որովհետև որոշակի հաջողություններ կային հնդկահայ համայնքում, հատկապես ընտրվել էր նոր վարչություն, և հույս կար Մեր հոգում, որ բարեհաջող պետք է ընթանան աշխատանքներն այս համայնքում: Բայց Մենք նաև մտահոգ էինք, որովհետև գիտեինք այն դժվարությունները, որոնց առջև կանգնած էր Մարդասիրական ճեմարանը, այն մարտահրավերները, որոնք առկա էին այստեղ: Աստված էր Մեր հույսը և լավատեսության ակունքը: Մենք հորդոր և պատգամ ուղղեցինք Մեր զավակներին, մասնավորապես եկեղեցական վարչությանը, որ իրենց հոգաձության, իրենց գործունեության առանցքը դարձնեն խնամքը Մարդասիրական ճեմարանի, հնամենի մեր եկեղեցիների և գերեզմանատների, որպեսզի այստեղ շարունակվի աշխույժ ու արթուն կյանքը հայության, և մարդիկ խոսեն հայոց ձեռքբերումների մասին՝ այցելելով այս երկրում առկա մեր հոյակերտ հուշակոթողները:*

Մենք ձեզ հետ այսօր այցելեցինք և՛ Մարդասիրական ճեմարան, և՛ եկեղեցիներ, և՛ շիրմատներ, ուր խաղաղության մեջ հանգչում են մեր նախնիք: Այդ սրբությունները, հուշարձաններն ու կոթողները լոկ քարեր չեն, այլ աղոթք են, սրբազան մասունքներն ու վկաները մեր դարավոր պատմության: Մենք ուրախ ենք, որ նոր, բարեկարգ իրավիճակ ենք տեսնում այս այցելության ընթացքում: Մեր նվիրական պարտքը և պարտականությունը պիտի լինի հոգալ Հնդկաստանում մեր դարավոր ժառանգության պահպանման համար, և այս առաքելությունը պետք է արդյունավորվի նաև Մարդասիրական ճեմարանի բեղուն գործունեությամբ: Մենք պետք է նվիրյալ աշխատանքով ու հոգաձությամբ պայմաններ ստեղծենք Մարդասիրական ճեմարանի սանուց համար, որպեսզի նրանք իրենց ուսումնառությունից հետո շարունակեն ապրել այստեղ, հիմերը դնեն նոր, աշխույժ կյանքի և փոխանակ ձգտելու մեկնել եվ-

րոպական երկրներ կամ Միացյալ Նահանգներ, այստեղ բարգավաճ դարձնեն համայնքային կյանքը և ապրեն շեն ու բարօր: Մենք հավատում ենք, որ պիտի հաջողենք այս առաքելությունը, որպեսզի երբ հայեր և այլ ժողովուրդների զավակներ այցելեն Հնդկաստանի հայ գաղթօջախ, մեր դարավոր պատմությունն ու ձեռքբերումները և հայոց փառքը այս հնամենի երկրում չտեսնեն միայն մեր հուշարձանների ու գեղեցկակերտ կառույցների միջոցով, այլև՝ աճող, զորացող ու աշխույժ համայնքներով և վերագարթոնքով ու ծաղկող կյանքով ավանդասեր ու բարեպաշտ հայության:

Միերիներ, ինչպես ասում է պատմահայր Խորենացին, քաջերի սերունդները քաջերն են, և մենք այդ քաջերի զավակներն ենք: Չգիտենք հուսահատվել, չգիտենք դժվարությունների առջև ծնկել և այդ հաղթական ոգին պիտի առնենք այդ մենավոր եկեղեցիներից, այդ շիրմաքարերից, պիտի հասկանանք նրանց լեզուն, պիտի ընկալենք նրանց խորհուրդը, պիտի ճանաչենք նրանց էությունը և մեր հայացքի առջև պիտի տեսնենք այն դժվարությունները, այն մաքառումները, որոնց արդյունքում կերտվել, ստեղծվել է այդ ամենը՝ հույսով, հավատով և լավատեսությամբ: Այդ հույսով ու լավատեսությամբ և մեր դարավոր ժառանգության արժևորմամբ պիտի շարունակենք կերտել մեր նոր կյանքը՝ հավատով, որ պիտի գա այն օրը, երբ ազգս պիտի միավորվի իր Մայր Հայրենիքի նվիրական հողի վրա, Արարատի նվիրական հայացքի և Ս. Էջմիածնի օրհնության ներքո:

Այսօր Մեր պատգամը և հորդորն է վարչության անդամներին, որ նրանք իրենց հայացքի առջև կերպավորեն տեսիլքը հնդկահայոց նոր առաջընթացի և նվիրյալ ջանքերով կերտեն նոր փառքը հնդկահայոց նորոգվող կյանքի:

Կալկաթայի Սուրբ Նազարեթ Եկեղեցու 300-ամյակի կապակցությամբ Մենք Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում բոլորիդ, և աղոթում, որ Աստծո Սուրբ Աջը հովանի լինի ձեզ ամենքիդ, աշխարհասփյուռ ազգիս հայոց, և Տերն օգնական լինի մեր ծրագրերի իրագործման ճանապարհին»:

Վեհափառ Հայրապետը նաև իր գնահատանքը հայտնեց Հնդկաստանում ՀՀ դեսպանին և Կալկաթայի եկեղեցական վարչության նախկին ատենապետին:

Հավաքվածներին այնուհետև բարի ճանապարհ մաղթեց Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանը՝ ասելով. «Ինձ համար սրտի մեծ ուրախություն է այստեղ կանգնել և շնորհակալություն հայտնել ձեզ բոլորիդ ձեր ներկայության համար, որ եկել եք՝ միասնաբար տոնախմբելու Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու կառուցման 300-ամյակը:

Բարի եկած եք և բարի ճանապարհ Ձեզ բոլորիդ, որ մեզ էլ ոգևորեցիք, խանդավառեցիք, ապագայի հույս ներշնչեցիք, որովհետև Ծայրագույն Արևելքում և Հնդկաստանի այս ամերիկյան փոքրաթիվ հնդկահայ համայնքը կփորձե իր ինքնությունը պահպանել աշխարհին ցույց տալու համար, թե մենք կմնանք և պիտի փորձենք նույն ձևով մնալ որպես հայեր ի Հնդկաստան:

Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունը եղավ մեզ համար նոր լիցքավորում, նոր ուժ, որպեսզի մենք ստանալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը՝ շարունակենք մեր հայացքները ուղղել դեպ Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին և Արագածի բարձունքներից ստանանք լույսը Լուսավորչի կանթեղից, որպեսզի կարողանանք

այն եկեղեցիները, որոնք այցելեցիք, ձեր աչքերով տեսաք, աղոթեցիք, որպեսզի այդ եկեղեցիները բաց մնան, չգոցվեն:

Չմոռանաք մեզ, վաղը դուք պիտի գնաք, մի մասը պետք է մնա, ինչպես պարսկահայերը կասեն, հոգնած չլինեք, Տերը ձեզ հետ, Աստծո օրհնությունը ձեզ հետ: Գնացեք, բայց չմոռանաք, հիշեք մեզ, պատմեք ձեր հարազատներին, որ գան և իրենց աչքերով տեսնեն: Նախկին ուսանողները իրենց կապը չկտրեն, մենք էլ որբի նման չմնանք, խապրիկի մը չսպասենք, այլ միշտ կապը մնա, որ մենք ստանանք ուժ և կարողություն՝ տեսնելով, լսելով ձեզնից կարողանանք շարունակել մեր առաքելությունը հեռավոր այս ափերում:

Երբեմն, երբ Մայր հայրենիքից այցելողներ կուգան, կըսեն, թե ի՞նչ կուգեք Հայաստան, կըսենք՝ լավաշ բերեք, որպեսզի Հայաստանի համը մեր շրթների վրա միշտ մնա: Եկե՛ք, այցելեցե՛ք, տեսե՛ք մեր ժողովրդի՝ հնդկահայոց մշակույթը, ավանդը, և մենք կլիցքավորվենք ձեր ներկայությամբ»:

16 նոյեմբերի

Վեհափառ Հայրապետը մեկնեց Բանգլադեշ՝ այցելելու Դիաքայում գտնվող Ս. Հարություն պատմական հայկական եկեղեցի, որը գտնվում է քաղաքի Արմանատոլիա կոչվող վայրում, որն իր անվանումը ստացել է ժամանակին Հայկական մեծ համայնք ունենալու տարիներին: Եկեղեցին և հարակից գերեզմանը հիմնադրվել են 1781 թվականին Բենգալիայի հայերի կողմից, որոնք ժամանակին առևտրական խոշոր գործունեություն էին ծավալել Հնդկաստանի ողջ տարածքում:

Ս. Հարություն եկեղեցի այցելության ընթացքում Նորին Սրբությունը հանդիպեց նաև Դիաքայում այժմ բնակվող միակ հային՝ Մայքլ Մարթինին, որը և վերջին շրջանում խնամում ու հոգ է տանում տեղի հայկական եկեղեցուն և հարակից գերեզմանատանը:

Դիաքա ուղևորության ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Տ. Կտրիճ քին. Դեեջանը և Կալկաթայի եկեղեցական վարչության անդամներ տիկին Սյուզան Ռուբենը և տիար Սունիլ Սոբթին:

*Տ. Ավետիս քին. Համբարձումյան
Արամ սրկ. Ծառուրյան*

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՇԱՐԺԱՅԻ ԷՄԻՐԻ ՀԵՏ

Նոյեմբերի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով Հովվապետական իր այցը Հնդկաստան, մեկնեց Արաբական Միացյալ Էմիրություններ, ուր հանդիպում ունեցավ Արաբական Միացյալ Էմիրությունների Բարձրագույն Խորհրդի անդամ, Շարժայի Էմիր Շեյխ Սուլթան բին Մոհամմադ ալ Քասիմիի հետ:


Շարժայի Էմիրը, ջերմորեն ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ուրախությամբ վերհիշեց տարիներ առաջ Հայաստան կատարած իր այցի մանրամասները: Հայոց Հայրապետը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, իր գնահատանքը հայտնեց Շեյխ Սուլթան բին Մոհամմադ ալ Քասիմիին՝ Արաբական Էմիրությունների հայ համայնքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի և ուշադրության համար՝ մասնավորապես ընդգծելով Նորին Գերագանցության անմիջական աջակցությունը հայերին Շարժայում հայկական եկեղեցի հիմնելու և կառուցելու գործում: Նորին Սրբությունը նաև իր երախտագիտությունը հայտնեց Շարժայի Էմիրին՝ Հաղարծինի պատմական վանքի վերանորոգման աշխատանքները հովանավորելու համար:

Էմիրը բարձր գնահատանքով անդրադարձավ Միջին Արևելքում ապրող հայերին՝ բնութագրելով նրանց որպես հասարակության հավատավոր, բարեպաշտ, արժանավոր և աշխատասեր անդամներ, և հատկապես շեշտեց գիտելիքի և կրթության հանդեպ սերը, որ մեծապես արժևորվում է հայ ընտանիքներում: Շարժայի Էմիրն իր ուրախությունը հայտնեց Հաղարծինի վանական համալիրի և վանքի ճանապարհի նորոգման և բարեկարգման աշխատանքների մասին տեղեկանալու առիթով:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը և Շարժայի Էմիրը խոսեցին նաև միջկրոնական երկխոսության կարևորության, Արաբական Էմիրություններում այլ կրոնների և մշակույթների նկատմամբ ցուցաբերվող հանդուրժողականության, ինչպես նաև փոխադարձ սիրո և հարգանքի անհրաժեշտության մասին, որոնք խաղաղ և համերաշխ կյանքի գրավականն են:

Հանդիպմանը ներկա էին Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը, Տ. Կտրիճ քահանա Դենջյանը և պրն Վարուժան Ներզուգյանը:

*ՄԱՅԼ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՅԱՇ ՔԱՂԱՔԻ
Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՎԵՑՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՇՆԻ ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻԻՍ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՍ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ՀԱԻԱՏԱՅԵԱԼՍ
ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ՈՐ Ի ՅԱՇ, ՌՈՒՄԻՆԻԱ**

Ռումինիայի եւ Բուլղարիայի Հայոց թեմերի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկեանից ուրախութեամբ տեղեկացանք, որ Բարձրեալի օրհնութեամբ աւարտուել են Յաշ քաղաքի Սուրբ Աստուածածին եկեղեցու վերանորոգութեան աշխատանքները եւ շուտով պատմական սրբավայրը իր օրհնաբաշխ դռները պիտի բացի հաւատացելոց առջեւ:

Սիրելի զաւակներ Մեր,

Ահաւասիկ աւելի քան վեց դարեր են անցել այն օրուանից, երբ Ռումինիոյ Յաշ քաղաքում հաստատուած հաւատաւոր հայորդեաց ազնիւ ջանքերով ու զոհողութիւններով վեր խոյացաւ Սուրբ Աստուածածին եկեղեցին: Հայրենիքից տարագրուած ու կոտորածներից մազապուրծ ձեր հայրերը, հակառակ բոլոր դժուարութիւնների, աննուազ սիրով հոգ տարան եկեղեցու պայծառութեանը եւ մշտապէս համախմբուած նրա կամարների ներքոյ՝ իրենց ազգային եւ եկեղեցական կեանքը պայծառազարդեցին սուրբ խորանից ճառագող կենարար լոյսով:

Սուրբ Աստուածածին եկեղեցու շնորհիւ է, որ Յաշ քաղաքի մեր «փոքր ածուն»՝ Քրիստոսասէր հայ համայնքը կարողացաւ մշտավատ պահել մեր լոյս հաւատի կանթեղը, այլեւ հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան ոգին փոխանցել յետագայ սերունդներին: Այսօր դուք՝ արժանի հետնորդներդ ձեր հայրերի, շարունակում էք հաւատոյ գործերով բարեզարդել մեր եկեղեցու պատմութիւնը Ռումինիոյ օրհնեալ հողում: Բարձրեալի կամքով առաջիկային գեղեցիկ առիթը պիտի ունենանք կրկին անգամ այցե-

լելու տիրախնամ ձեր թեմ՝ Սուրբ Էջմիածնից օրհնությունն ձեզ բերելու եւ նորօրհնեալ Միւռնոնով վերստին օծելու Սուրբ Աստուածածին եկեղեցին: Ուրախ է Մեր հոգին, որ հաւատացեալ հայորդիներդ պիտի շարունակէք բարեգարդուած դարաւոր եկեղեցու կամարների ներքոյ աղօթք ու հայց բարձրացնել առ Աստուած՝ շինություն ու առաւել պայծառություն յաւելելով համայնքային ձեր կեանքին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք յղում Ռումինիայի եւ Բուլղարիայի Հայոց թեմերի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկեանին, Թեմական Խորհրդի բարեջան անդամներին, վերանորոգութեան աշխատանքներին կարեւոր աջակցություն բերած մեր ժողովրդի արժանաւոր զաւակներ Տիարք Վարուժան Ոսկանեանին եւ Զարեհ Նազարեանին, Սուրբ Աստուածածին եկեղեցու հոգեւոր հովուին, եկեղեցական վարչութեան անդամներին եւ բարեպաշտ բոլոր հաւատացեալներին: Մաղթում ենք, որ Բարին Աստուած հանապազ Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի եւ երկնաստուր Իր շնորհներով զարդարի Յաջ քաղաքի սիրեցեալ Մեր զաւակներին եւ Ս. Աստուածածին եկեղեցու բոլոր նուիրեալներին:

Մեր գնահատանքն ենք բերում Ռումինիոյ իշխանություններին ու բարեսէր ժողովրդին՝ եկեղեցու նորոգությունը պետական միջոցներով իրականացնելու համար: Բարեգարդուած եկեղեցին ռումին ժողովրդի հաւատաւոր ոգու ու աստուածասիրութեան բարի վկայությունն է, նաեւ նոր խորհրդանիշը հաւատակից մեր ժողովուրդների դարաւոր բարեկամութեան: Մեր աղօթքն է, որ Բարձրեալն Աստուած խաղաղութեան մէջ անշրջելի առաջընթաց ու շինություն պարգեւի բարեկամ երկիր Ռումինիային՝ Իր Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքոյ առաջնորդելով դէպի նոր բարգաւաճում ու յաջողություններ:

Թող օրաւոր զօրանայ եկեղեցասիրութեան ու հայրենասիրութեան ոգին եւ աստուածահաճոյ գործերով արգասաւորուի սէրն ու միությունը հայաշունչ Ձեր համայնքում՝ ի շինություն տիրախնամ ձեր թեմի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 2-ն Հոկտեմբերի
Յամի Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 910

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ

Նոյեմբերի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով:

Միասնական Տերունական աղոթքից հետո Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետը և իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ժողովականներին: Նորին Սրբությունը Խորհրդի անդամներին ներկայացրեց Հնդկաստան և Հնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցի կատարած Հովվապետական այցերի մանրամասները և տեղեկացրեց Արաբական Միացյալ Էմիրություններ այցի ընթացքում հայ համայնքի և Շարժայի Էմիր Շեյխ Սուլթան բին Մոհամադ ալ Քասիմիի հետ ունեցած հանդիպումների մասին:

Ժողովին մասնավոր անդրադարձ կատարվեց Վիրահայոց թեմի խնդիրներին՝ թեմի իրավաբանական կարգավիճակի, հայկական եկեղեցիների վերադարձման հարցերին և նոյեմբերի 16-ին տեղի ունեցած Թբիլիսիի Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցու նկատմամբ հերթական ոտնձգության և հայկական գերեզմանների պղծման դեպքին: Իրավիճակի մասին զեկույցով հանդես եկավ և մանրամասներ հաղորդեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Խնդրի շուրջ ծավալված քննարկումներից հետո Նորին Սրբությունը Հայրապետական իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց Վիրահայոց թեմի առաջնորդին և ողջ վիրահայությանը ձեռնարկած քայլերի համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը տեղեկացրեց ժողովականներին, որ նկատի ունենալով այն, որ Վրաց իշխանությունների և Վրաց Եկեղեցու կողմից որևէ ընդառաջում չի կատարվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիմումներին՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շարունակելու է այս հարցը մշտապես հանձնել միջազգային հանրության ուշադրությանը՝ բարի հույսով, որ ներդրված համընդհանուր ջանքերի շնորհիվ բարվոք լուծում կստանան վիրահայության ազգային-եկեղեցական կյանքում առկա խնդիրները:

Այնուհետև Գերագույն Հոգևոր Խորհուրդը հանդես եկավ կոչով.

«Գերագույն Հոգևոր Խորհուրդը, խորապես մտահոգված Վրաստանում Վիրահայոց թեմի և հայկական եկեղեցիների նկատմամբ դրսևորվող ոտնձգություններով, դատապարտում է քրիստոնեության ոգուն, եղբայր ժողովուրդների բարեկամությանն անհարիր քայլերն ու գործողությունները:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը կոչ է ուղղում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու զավակներին՝ զորավիգ լինել վիրահայությանը իրենց ջանքերում և նա-

2008

ԷԶՄԻԱԾԻՆ

ԺԱ 39

խանձախնդիր պայքարում ի պաշտպանություն հայկական եկեղեցիների և հայրենական իրենց սրբությունների»:

Օրակարգում ընդգրկված էին նաև ներեկեղեցական և միջեկեղեցական կյանքին առնչվող այլ հարցեր:

Ժողովը փակվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

*ՄԱՅԸ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ»
ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհաբանի հանդիսությունների դահլիճում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ ՀՀ Կրթության և գիտության նախարար տիար Սպարտակ Մեյրանյանի, տեղի ունեցավ հանրակրթական դպրոցների ուսուցիչների ամենամյա մրցանակաբաշխությունը: Արդեն վեցերորդ տարին է, որ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանավորությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից Հայաստանում անցկացվում է հանրակրթական դպրոցների «Հայոց Եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն» և բնագիտական առարկաների ուսուցիչների մրցույթ:

Հանդիսությունը բացվեց Տերունական աղոթքով, այնուհետև ողջույնի խոսք ասաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Պարթև աբեղա Բարսեղյանը՝ նշելով, որ Հայ Եկեղեցու մշտական ուշադրության և հոգածության կենտրոնում է եղել ու մնում հայ դպրոցն ու կրթությունը, երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակությունը:

Այնուհետև մրցույթի ընթացքին անդրադարձավ ՀՀ ԿԳ նախարարության հանրակրթական վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը: ՀՀ Կրթության և գիտության նախարար տիար Սպարտակ Մեյրանյանն իր խոսքում կարևորեց սեփական ինքնության ամրագրումը մատաղ սերնդի դաստիարակության գործում. «Այսպիսի միջոցառումները, որոնք կազմակերպվում են հայոց հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կողմից, շատ կարևոր նշանակություն ունեն՝ գնահատելու և ծրագրավորելու համար մատաղ սերնդին կրթելու և դաստիարակելու աշխատանքը, քանի որ այն միայն գիտելիքի փոխանցում չէ: Դա ազգային ինքնության փոխանցում է, դա սեփական Հայրենիքը, պատմությունը, լեզուն և մշակույթը սիրելու գիտելիքն է, որն էլ ամենակարևոր գիտելիքն է»:

Հանդիսությանը Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հանրակրթական ոլորտի պատասխանատու Էյա Սարիբեկյանը ներկայացրեց մրցույթի վերջնական արդյունքները, ապա 42 ուսուցիչներ Ամենայն Հայոց Հայրապետից և ԿԳ նախարարից ստացան վկայականներ, դրամական պարգևներ և հոգևոր գրականություն: Մրցանակների արժանացան մրցույթի մասնակից 18 ուսուցիչներ, երրորդ մրցանակ ստացան 13 ուսուցիչներ, երկրորդ մրցանակը տրվեց 8 ուսուցիչների, իսկ առաջին մրցանակի արժանացան երեք ուսուցիչներ:

Խրախուսական մրցանակների հանձնումից հետո ուսուցիչների անունից շնորհակալական խոսք ասաց առաջին մրցանակի արժանացած հայոց լեզվի ու գրակա-

նության ուսուցչուհի Անահիտ Գևորգյանը (Սյունիքի մարզ, Քաջարանի թիվ 1 դպրոց):

Հավարտ հանդիսության ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքի խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ուսուցիչներին՝ երիտասարդ սերնդին եկեղեցասեր ու հայրենանվեր ոգով կրթելու բարձր առաքելությունն արդյունավետ իրականացնելու համար. *«Խորախորհուրդ է այն երևույթը, որ ուսուցիչներդ գալիս եք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ արժանանալու գնահատանքի ձեր աշխատանքի, ձեր ծառայության համար: Գալիս եք Ս. Էջմիածին, ուր ոգին է մեր ուսուցչապետի և հայոց եռամեծ վարդապետների, գալիս եք կարծես հաշվետվություն ներկայացնելու նրանց, ում գործի շարունակողն եք: Խորախորհուրդ է պահել նաև այն առումով, որ գալիս եք այստեղ անդրադառնալու ձեր կոչմանն ու առաքելությանը, որ միայն գիտելիքով պաշարումը, գիտելիքի զինումը չէ ձեր կոչումն ու առաքելությունը, այլև դաստիարակությունը, կրթումը, առաջնորդումը հայ երեխային, հայ պատանուն, որպեսզի նա իր կյանքը կազմակերպի մեր հայրերի կողմից նշված աստվածահաճո ընթացքներում, որպեսզի իր կյանքով կարողանա կերտել ու կառուցել Աստծո օրհնությանն ու գնահատանքին արժանի մեր ազգային կյանքը: Ձեր կրթած, ձեր դաստիարակած սերունդն է, որ պիտի կառուցի և կերտի հայ կյանքը»:*

Նորին Սրբությունն իր բարձր գնահատանքը հայտնեց նաև ԿԳ նախարարին և նախարարության պաշտոնեությանը՝ սերտ համագործակցության համար, ինչի շնորհիվ ամեն տարի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հետ համատեղ կազմակերպվում է հայ ուսուցչին գնահատելու և արժանին մատուցելու ամենամյա հանդեսը: Վեհափառ Հայրապետը նաև իր գնահատանքը հայտնեց Իրմա և Սիլվա Ստեփանյաններին՝ «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխությունը հովանավորելու համար:

Արարողության ընթացքում ասմունքով և գեղարվեստական կատարումներով հանդես եկան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ՔԴԿ աշխատակիցներն ու «Սպեղանի» երգչախումբը:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց Հայոց աշխարհի առաջին լուսավորիչներ Ս. Թադևոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Օրվա պատարագին էր Մայր Աթոռի Քրիստոնեական Դաստիարակության կենտրոնի տնօրեն Ս. Վարդան աբեղա Նավասարդյանը: Հընթաց սրբազան արարողության Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Ս. Թադևոսի և Ս. Բարդուղիմեոսի կատարած սխրանքին՝ շեշտելով, որ այսօր էլ ամենքս առաքյալների նման պիտի դառնանք նոր լուսավորիչներ՝ մեր առաքինի կյանքով, գործերով և նվիրվածությամբ դառնալով քրիստոնեության քարոզիչները մեր ընտանիքներում և շրջապատում:

Տոնի առիթով հանդիսավոր թափորով Մայր Տաճար էին բերվել Քրիստոսի երկու առաքյալների մասունքներով Սուրբ Աջերը, որպեսզի բարեպաշտ ժողովուրդը, հավելյով դրանց, հաղորդ դառնա առաքյալների օրհնությանը:

Այնուհետև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված առաքյալների տոնին:

Ձևավորված ավանդույթի համաձայն՝ այս օրը հռչակված է որպես կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների տոն: Միջոցառումը բացվեց Ս. Վարդան աբեղա Նավասարդյանի ողջույնի խոսքով. Հայր Սուրբն անդրադարձավ ՔԴԿ-ի ստեղծման պատմությանը և առաքելությանը, ինչպես նաև մեր օրերում կիրակնօրյա դպրոցների կարևորությանը և տոնի առիթով ջերմորեն շնորհավորեց մեկօրյա կիրակնօրյա վարժարանների ուսուցիչներին, ովքեր անձանձրությամբ նվիրվածությամբ շարունակում են հավատքի սերմերը ցանել մատաղ սերնդի հոգիներից ներս:

«Քրիստոնեության լույսն ի Հայս» թեմայով բանախոսությամբ հանդես եկավ Գևորգյան Ճեմարանի հայոց պատմության դասախոս Պետրոս Հովհաննիսյանը՝ անդրադառնալով առաքելական քարոզչության նշանակությանը մեր ժողովրդի կյանքում և եկեղեցի-դպրոց հարաբերություններին՝ այսօրվա ուսուցիչներին համարելով առաքյալների և Ս. Թարգմանչաց գործը շարունակողներ:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի ձեռամբ տեղի ունեցավ պարզևաբաշխություն: Թեմակալ առաջնորդների կողմից առաջադրված ինը ուսուցիչների (Արարատյան Հայրապետական թեմից՝ Տիգրանուհի Սուքեյան, Արմավիրի թեմից՝ Ռուզաննա Հարությունյան, Գեղարքունյաց թեմից՝ Քնարիկ Քոչարյան, Կոտայքի թեմից՝ Սիրանույշ Առաքելյան, Շիրակի թեմից՝ Սվետլանա Արզումանյան, Գուգարաց թեմից՝ Ալբինա Գարյան, Տավուշի փոխառաջնորդությունից՝ Մանյա Խեչյան, Սյունյաց թեմից՝ Լաուրա Գրիգորյան և Սյունյաց փոխառաջնորդությունից՝ Նոնա Հայրապետյան)

հանձնվեցին պատվոգրեր և վերջին շրջանում Մայր Աթոռում հրատարակված հոգևոր գրականություն: Ուսուցիչների անունից շնորհակալական խոսքով հանդես եկավ Ալվարդ Կաղզվանցյանը՝ իր սրտի զգացումները կիսելով ներկաների հետ և անդրադառնալով կիրակնօրյա դպրոցների ուսուցչի բարձր կոչմանը:

Հանդիսության ավարտին ներկաներին Հայրապետական իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց, որ ՔԴԿ-ն շարունակում է տարիներ առաջ հաստատված այս ավանդույթը՝ առաքյալների տոնին պատվելու կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներին: Վեհափառ Հայրապետը գնահատանքով արձանագրեց, որ կիրակնօրյաները գործում են բոլոր թեմերից ներս և ուսուցիչներին, իբրև հոգևոր սպասավորների աջակիցների, այսօր վերապահված է հոգեդէն եկեղեցին հաստատել մեր ժողովրդի զավակների հոգիներում և բարի օրինակ լինելով մանուկների համար՝ նրանց հոգիները սնուցանել աստվածապաշտությամբ և աղոթքով: *«Ամենաօրհնյալ և պատվավոր աշխատանք են վստահել Եկեղեցին և ազգն ուսուցիչներին: Որքան հավատավոր է ազգը, այնքան գորավոր է նա: Աստծո հետ ենք մենք գորեղ, Աստծո հետ ենք ի վիճակի հաղթահարել ամեն տեսակ դժվարություն: Աստծո հետ ենք ի վիճակի միայն մեր կյանքն առաջնորդել սրբության, բարության և լույսի մեջ»*, - նշեց Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաև թեմակալ առաջնորդներին և հոգևոր սպասավորներին՝ կիրակնօրյա դպրոցներին ըստ ամենայնի աջակցելու համար:

Հանդիսությանը շարականների կատարումներով հանդես եկան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի երգչախումբը, Էջմիածնի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» կիրակնօրյայի ուսուցչուհի Կարինե Ավետիսյանը, ասմունքեց Նաիրա Հակոբյանը:

ՄԱՅԸ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՐՈՁԽՈՍԱԿԱՆ

Տ. ՄԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼՅԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(9 նոյեմբերի 2008 թ.)

*«Ինչպես Հայրս ուղարկեց Ձիս, այդպես ալ Ես
կուղարկեմ ձեզ աշխարհ... ամէն Ս. Հոգին»:*

(Հովհ. Ի 21-22)

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի վերջին պատգամն էր Իր առաքյալներուն, իր աշակերտներուն: Կուգէր աշխարհ ուղարկել Իր աշակերտները, Իր հետևորդները և իրենցմէ հետո գալիք բոլոր հավատացյալ սերունդները, իրեն հավատարիմ բոլոր ծառայողները Տեր Հիսուս կուգէր աշխարհ ուղարկել: Ինչո՞ւ աշխարհ կուգէր ուղարկել, որովհետեւ, «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդին տվավ, որպէսզի ով որ հավատա Անոր, չկորսվի, այլ ունենա հավիտենական կյանք » (Հովհ. Գ 16):

Աստված սիրեց աշխարհը, Աստված կսիրէ աշխարհը նույնիսկ իր մեղքերով, որովհետեւ հոնտեղ Իր կորսված որդիները կան, անառակ որդիները, տունէն հեռացածները, անդունդին եզրին գտնվողները, կույրերը, կաղերը, աղքատները, շղթայվածները, կործանվածները: Եվ Հայր Աստված երկինքէն նայեցավ և շատ սիրեց այս աշխարհը, շատ սիրեց մեզ և Իր Միածին Որդին ուղարկեց, բայց մէկ մարդ չէր բավեր այս գործին համար: Տեր Հիսուս բազմացուց զինք տասներկու հոգիներուն, հետո այդ տասներկուքը բազմացուցին իրենց հարյուր քսան հազարներով, հարյուր քսան միլիոններով և այսօր աշխարհի վրա երկու միլիարդի մոտ քրիստոնյա կա և ամենը սահմանված են այս աշխարհի համար, այս աշխարհի մեջ որպէս լույս և աղ գտնվելու: Եվ մենք այսօր յոթը քահանաներ ձեռնադրեցինք, որպէսզի կատարեն Տեր Հիսուս Քրիստոսի վերջին կտակը, սիրո կտակը և պիտի ուղարկենք զանոնք մեծ սիրով դեպի աշխարհ, պիտի երթան Հայաստան աշխարհ, պիտի երթան ի սփյուռս հայության, պիտի երթան հոն աղ և լույս ըլլալու, և որքան շատ գործ ունին իրականացնելու:

Միւրեւի՝ նորօծյալ մեր տերհայրեր, Հայաստանի մեջ այնքան շատ գործ կա, որ դուք պիտի երթաք և պիտի տեսնեք ձեր աչքերով: Իրապաշտ ըլլանք, դուք միլիոնավոր հայորդիներու համար միայն տերտեր եք: Միլիոններ չեն կրնար զանազանել եպիսկոպոսէն դպիրը և ամենն իրենց համար տերտեր է, ուրեմն ձեր պարտականություն է (իրենք հանգանք չունին), այդպէս բերել և մեր կյանքը, մեր ճակատագիրը, մեր տխուր պատմությունը: Մենք հազարավոր եկեղեցականներ կորսնցուցեր ենք Ջարդի օրերուն, համայնավարությունը հալածել է քրիստոնեությունը և Աստուծո քահանաների մեռցուցած է և Միբիր արքայեր է, և բնականաբար հիմա մեր ժողովուրդը չի գիտեր եկեղեցիի մասին:

Դուք պիտի երթաք անոնց, դուք պիտի ըսեք, որ իրենց համար եկաք, իրենց համար պատգամ ունիք Աստուծմէ, սիրո պատգամ ունիք, պիտի հիշեցնեք, որ իրենք հավիտենական հոգի ունին, պիտի հիշեցնեք, որ անոնք մահկանացու են, պիտի հիշեցնեք, որ իրենց բուն երկիրը, հայրենիքը երկինքում է, և դուք պիտի սորվեցնեք եկեղեցիի ճամփան, պիտի ծանոթանաք անոնց հետ, պիտի այցելեք, պիտի նստիք անոնց սեղաններուն, պիտի մտնեք իրենց տուններուն և երբ որ իրենց քովէն բաժնվիք, ձեզի պիտի ըսեն «տեր հայր»:

Մեծ տարբերություն կա երկուքի միջև, և դուք տեր հայր պիտի ըլլաք, հայր պիտի ըլլաք, պիտի սրբեք իրենց արցունքները, պիտի հետաքրքրվիք, փոթորկալից տուններն ներս պիտի մտնիք, խաղաղություն պիտի բերեք, աղքատներուն հույս պիտի բերեք, հիվանդներուն բժշկություն, ձեզի պիտի տեսնեն և պիտի ըսեն՝ մեր հոգևոր հայրը կուգա:

Այս մեծ գործը ձեր ուսերուն վրա է ահա, սակայն այս գործին համար դուք առանձին չեք, որովհետև Տեր Հիսուս ըսավ՝ առեք Ս. Հոգին, և դուք այսօր այս օծումով քահանայության ստացաք նաև Ս. Հոգիի ամբողջ գորությունը և շնորհները այս առաքելական գործը կատարելու համար: Միայն թե շնորհները կնամանին սերմի, եթե չեն ցանվիր և չեն խնամվիր, չեն մեծնար: Դուք առաքելական բոլոր իշխանությունները ունիք, բացի մարդ ձեռնադրելը: Այս մեծ գորությունը և իշխանությունը՝ կապելու և արձակելու մարդոց հոգիները, ի գործ պիտի դնեք և մեր մխիթարանքի, շատ մխիթարանքի կարոտյալ մեր սիրելի ժողովուրդին օգտին պիտի հասնիք, մեջտեղ պիտի կենաք, քահանայի գործը այս է. Աստուծո և ժողովուրդին մեջ, երբեմն ժողովուրդի մոտ, երբեմն՝ Աստուծո, երբեմն Աստուծմե պիտի առնեք ժողովուրդին, պիտի բաշխեք շնորհները, երբեմն պիտի առնեք ժողովուրդեն իրենց դարդերը, իրենց նեղությունները, իրենց մեղքերը և պիտի մատուցեք Աստուծո:

Դժվար է ձեր գործը, սակայն փառավոր գործ է ձերը. հոգիներու փրկության հավիտենական գործն է ձերը: Աստուծո Որդին՝ Տեր Հիսուս Քրիստոս, երկրի վրա ներկայացնելու գործն է: Սուրբ մը կսե, որ եթե հեռուն տեսնամ երկու հոգի կուգա անոնցմե մեկը հրեշտակ է, իսկ մյուսը քահանա: Ես նախ և առաջ պիտի երթամ, պիտի խոնարհիմ քահանային առջև, որովհետև հրեշտակը կներկայացնե ինք զինք, բայց քահանան կներկայացնե Տեր Հիսուս Քրիստոս՝ Աստուծո Որդին:

Այս փառավոր կոչումը դուք պիտի արժևորեք՝ ձեր կյանքը դնելով, ձեր գործը ամենեն շատ սիրելով և երբ որ պիտի նայիք աշխարհ, հոնտեղ պիտի տեսնեք տխրությունը, հոնտեղ պիտի տեսնեք չքավորությունը, պիտի տեսնեք տագնապը: Ամեն տարի մեկ միլիոն մարդ անձնասպան կըլլա այս աշխարհին վրա, տասը միլիոն մարդ անձնասպան ըլլալ կփորձե, քառասուն միլիոն մարդ անոթի կմեռնե, դժբախտ աշխարհ մըն է մերը և դուք այդ լույսն եք, իրենց հույսը, զորս Աստուծմե պիտի առնեք և աշխարհին պիտի տաք:

Ես կշնորհավորեմ ձեզ, ձեր օծումը, ձեր քահանայությունը: Կշնորհավորեմ ձեր բարեկամները և ծնողները, երեցկիները: Իրենք մեծ բաժին ունին ձեր պատրաստության, և նաև կշնորհավորեմ ձեր ուսուցիչները Գևորգյան Հոգևոր Ճեմարանին և մեր հոգևորական դասը: Այսօր նշմարեցիք, որ ես ձեզ նոր անուններ տվի, բոլորը մեր Մայր Աթոռի ծառայող եկեղեցական գերաշնորհ սրբազան հայրերն են, անոնք ձեզ պես օծվեցան և երկար տարիներ պատիվով, անբասիր վարքով և առանց ամոթի կկրեն այդ անունը: Իրենք եկեղեցվո սյուներ են, դուք ալ կկոչվիք եկեղեցվո սյունը դառնալու և կրելու ձեր անունները անբասիր և սուրբ, որպեսզի մենք ալ ձեզ նայինք և ըսենք՝ մշակ առանց ամոթո:

Մենք վստահ ենք, դուք արդեն խոնարհ սիրտով եկաք՝ ընդունելու քահանայական այս շնորհը, Աստված ձեզ արդեն օծտեց բոլոր պետք եղած օրհնությամբ և օգնությամբ ու ձեզ հետ պիտի լինի միշտ, մինչև որ դուք չձգեք անոր ձեռքը:

Աստված օրհնե ձեր բոլորը, Աստված ձեզ աղ և լույս դարձնե աշխարհին համար և ձեզ հետ միասին օրհնե մեր հավատացյալ ժողովուրդը Հայաստան և ի Սփյուռու աշխարհի. Ամեն:

**Տ. ՄԱՂԱՔԻԱ ԱԲԵՂԱ ԱՄԻՐՅԱՆԻ ՔԱՐՈԶ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(21 նոյեմբերի 2008 թ.)

«Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ Իւրոյ, զի ահա յայսմհետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք»:

«Որովհետև հայացքը դարձրեց Իր աղախնու խոնարհության վրա, և բոլոր ազգերը ինձ երանի պիտի տան»:

(Ղուկաս Ա 48-49)

Սիրելի՛ հավատացյալ քույրեր և եղբայրներ, այսօր Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին տոնում է Մարիամ Աստվածածնին նվիրված յոթ տոներից մեկը՝ Աստվածածնի տաճարին ընծայման տոնը, որն ամեն տարի անշարժորեն նշվում է նոյեմբերի 21-ին: Հայ Եկեղեցու տոնացույցում և մեր եկեղեցական տոների շարքում յուրահատուկ տեղ են զբաղեցնում Աստվածամորը նվիրված տոները:

Ամենախնամ Աստուծո օրհնությամբ երբ ծնվեց Սուրբ Կույսը, նրա ծնողները՝ Հովակիմն ու Աննան, իրենց արած ուխտի համաձայն, նրան որոշեցին տաճարին ընծայել: Երբ լրացավ մանկան երրորդ տարին, ծնողները բազմաթիվ ընծաներով և նվերներով իրենց զավակին կրկին տաճար տարան և հանձնեցին Զաքարիա քահանայապետին: Եվ մինչ յոթ տարին լրանալը ծնողներն ամեն տարի տաճար էին տանում, որի մասին Սողոմոն արքան այսպես է ասում. «Արքան ինձ իր սենյակը տա՛րավ», մեծ արքայի այն սենյակը, որն անմեկնելի լույսերի խորանն է:

Ըստ ընկալյալ ավանդության՝ Մարիամը տաճարում մոտ ինը տարի մնացել և դաստիարակվել է բարեպաշտ կանանց և հոգևոր քույրերի խնամքի ներքո: Եվ այսպես՝ տաճարի շրջակայքում, հոգևոր խոկումների և սրբազան ներշնչումների մթնոլորտում Մարիամն իմացապես և մարմնապես աճում է «Որպես ձիթենի պտղալից, որպես ծառ, որ տնկեալ է ի գնացս ջուրց, որ պտուղ իւր ի ժամու տացէ»:

Սուրբ Գրիգոր Նարեկացին այսպես է բնութագրում Ամենասրբունիի Կույսին. «Նախքան զծնանել Բանին առ ի քէն անթերի լրականութեամբ, հրեշտակական թևոցն սքողմամբ՝ ցանգ արկեալ պահէիր անաղարտ անբծութեամբ»: Իրապես, սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, տաճարում Մարիամը պատրաստվում էր Աստուծո ամենօրյա քաղցր և ուշադիր հայացքի ներքո:

Միբելի՝ հավատացյալներ, ընծայվելով Սուրբ Տաճարին և ապրելով Աստուծո տանը՝ Սուրբ Կույսն ստացավ Սուրբ Հոգու յոթնարփյա շնորհները՝ զարդարվելով յոթ առաքինություններով: Իր ողջ կյանքի ընթացքում ապրեց իբրև անբիժ աղավնի, աճեց ու զարգացավ հասակով և աստվածային իմաստությամբ: Տաճար ընծայման այս սուրբ ու նվիրական խորհրդի մեջ Աստվածածինն իր կատարյալ օրինակով մեզ ամենքիս ցույց է տալիս աստվածսիրության և խոնարհության առաքինությունները, որոնք առանց գործի և նվիրումի անօգուտ են: Թողնելով իր տունն ու ազգականներին, իր աշխարհային բոլոր ցանկություններն ու ձգտումները՝ շտապում է դեպի Աստուծո տաճար՝ իրեն նվիրաբերելու և ընծայելու Աստծուն՝ հաստատուն խոստումով, մշտնջենավոր ողջախոհությամբ և ծառայական խոնարհությամբ: Իր ձեռքին ունենալով զույգ տատրակ՝ որպես իր անմեղ ու մաքուր սիրտը, որի վրա փայլում է իր հոգու անմեղությունը, հեգությունն ու խոնարհությունը, ինքնակամ գալիս է հանապազօրյա ծառայություն բերելու Աստծուն: Իր բոլորանվեր առաքինություններով հանդերձ՝ իր հոգին ու միտքն Ամենակարող Աստծուն ծառայեցնելով՝ ասում է. «**Ձի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմհետէ երանեսցեն ինձ յամենայն ազգք»:**

Եվ գիտե՛ք, սիբելիներ, ինչպես Հին Կտակարանում մեր հավատի հայր Աբրահամն իր որդի Իսահակի ողջակիզման համար երրորդ օրը տեսավ Մորիա լեռը, նույնպես նաև Սուրբ Կույսն Իր կյանքի երրորդ տարում տաճարին ընծայվեց՝ տեսնելու այն նվիրական վայրը, որտեղ զոհաբերվում էին գառներն ու ոչխարները, որոնք օրինակն էին Քրիստոսի՝ Իր ապագա զավակի: Աստվածամոր տաճարին ընծայվելը նույնանում է նաև հինկտակարանյան այն դրվագի հետ, երբ ուխտի տապանակը մտավ Վկայության Խորան, իսկ տապանակի գերումից հետո վերացավ Իսրայելի փառքը: Սակայն Տերը, կամենալով կրկին փառավորել իսրայելացիներին, այս անգամ տաճար տարավ Սուրբ Կույսին, որպեսզի այն փառավորվի Մարիամով՝ Խորհրդական տապանակով, ով իր մեջ կրեց անպարագրելի Բանն Աստուծո, Ով ոչ միայն Իսրայելի ժողովրդին Սինայի անապատից դեպի Ավետյաց Երկիր առաջնորդեց, այլև ամբողջ մարդկային ցեղը՝ երկնային Երուսաղեմ, դեպի հավիտենական կյանք ու փրկություն:

Իրապես, չափազանց մեծ և կարևոր են այն բոլոր հատկանիշները, որոնք ունեն Աստվածածինը, ում օրինակելի և առաքինի կյանքը բոլոր ժամանակներում մարդկության համար ներշնչումի մշտաժող աղբյուր է եղել: Սակայն այս ամենից առավելն այն է, որ Մարիամն արժանացավ Աստուծո Որդու մայրը լինելու մեծագույն երանությանը, ում համար Եղիսաբեթն այսպես է ասում. «Օրհնեալ ես Դու ի կանայս եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո» (Ղուկ. Ա 42-43): Իբրև Աստվածամայր՝ Մարիամը վեր է, քան մարգարեները, առաքյալները, մարտիրոսներն ու վարդապետները և ավելի վեր, քան իշխանություններն ու պետությունները, սերովբեներն ու քերովբեները, ով զիջում է միայն Արարչին՝ Անեղ Բնությանը՝ գերազանց ու աներևույթ Աստվածությանը: Սուրբ Կույս Մարիամը եղավ այն մշտամնա շնչավոր եղեմական դրախտը, որտեղից բխեց կյանքի հորդառատ և անսպառ աղբյուրը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը:

տոս՝ Կենաց այն Աղբյուրը չորս գետերի բաժանված, որն ավետարանիչների քարոզչությունն է՝ լաված աշխարհի չորս կողմերում՝ Սուրբ Հոգով ու հավատքով:

Նա մեզ համար դարձավ Անկեզ Մորենի, քանզի սպառող հուրը աստվածության փայլակնատարած լույսով բնակվեց նրա որովայնում և չրոցակիզեց, որից ոչ թե մեկ Մովսես առաքվեց Եգիպտոս՝ Փարավոնին պատժելու և Իսրայելն ազատելու, այլ տասներկու առաքյալներ՝ ուսուցանելու ողջ աշխարհին Տիրոջ պատգամները, ովքեր կործանեցին անմարմին փարավոնին իր գորքերով հանդերձ և հեթանոսներին փրկելով՝ սուրբ և անմահ կյանքի կոչեցին:

Միբելինե՛ր, այս է պատճառը, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին խորին հարգանք և ջերմ սեր է տածել Աստվածամոր անձի նկատմամբ՝ նրան կոչելով որպես «Մայր Փրկչի», «Մայր հաստատության ամենայն մարդկան», «Բոլորի փրկության մայր», «Միջնորդ Աստուծո և մարդկան» և այլն: Մարիամը միաժամանակ մեզ համար հավատավոր, առաքինի կնոջ և ամենակարևորն անձնագոհ մոր մարմնացումն է եղել, ով իր կյանքի օրինակով և կատարած բազմաթիվ առաքինի ու լուսավոր գործերով բարձրացրել է մոր դիրքն այս աշխարհում: Եվ սրա համար էլ Մարիամ Աստվածածինը հայ ժողովրդի հոգեկանության մեջ ընկալված է որպես մոր գերագույն տիպար: Ոչ թե այնպիսի մեկը, որ լոկ զավակ է ծնում, այլ այնպիսին, որն ապրում է իր զավակի համար: Եթե մենք թերթենք Ավետարանի էջերն ու հետևենք այն բոլոր դրվագներին, ուր ներկայացված է Աստվածամոր կյանքը, կտեսնենք իրական մոր տիպարը: Հարկ է հիշել նրան, երբ ուխտի գնալիս տասներկու տարեկան Իր զավակին կորցրեց բազմության մեջ ու ամեն ինչ թողնելով՝ Իր զավակին փնտրելու գնաց: Նա, Ով տառապեց ամեն անգամ, երբ Իր զավակը հալածվեց: Նա, Ով Իր զավակի խաչելության պահին Նրա ողջ տառապանքն Իր անձի մեջ կրեց:

Եկե՛ք, ուրեմն, սիրելի հավատացյալներ, խորախորհուրդ այս սրբազան Պատարագի ընթացքին միասնաբար աղոթք վերառաքենք ամենօրինյալ Սրբուհուն՝ Սուրբ Կույս Աստվածածնին, որ բարեխոս լինի Իր Միածին Որդուն մեզ ամենքիս, մեր ազգի ու ժողովրդի, մեր Սուրբ Եկեղեցու համար աղաչելով ու խնդրելով ասենք. «Մայր Սուրբ սքանչելի Լուսոյն, աղաչեա, զի լռեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սեր և արդարութիւն ի յերկրի», - այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

**Տ. ԱՐՄԱՇ ԵՊԻՄԿՈՊՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(30 նոյեմբերի 2008 թ.)

*«Տէր թող զղա այս ամ էս, թերեւս արասցէ
պտուղ» (Տէր թող որ այս տարի էս, թերեւս այն
պտուղ տա):*

(Ղուկ. ԺԳ 8)

Միբելի՝ հավատացյալներ, այսօրվա մեր կյանքը լի է տարբեր տեսակի պահանջներով, ամեն մեկս կպահանջենք մեր դիմացիներն, մեր գործավորներն, մեր ծանոթներն և անծանոթներն, եթե կուտանք մեկու մը պարտականություն, անմիջապես կսպասենք արդյունքը իր աշխատանքին, անմիջապես կսպասենք տեսնել աշխատանքի առաջընթաց մը և եթե այդ չստանանք, անմիջապես պիտի հեռացնենք զինք աշխատանքէն և կպահանջենք: Բնական երևույթ է, բայց ինչ սարսափելի է, երբ այդ պահանջը կուգա և կհասնի մեզի և ալ մեզմէ հաշիվ կպահանջէ: Ահա այս երևույթին մասին է այսօրվա Ավետարանին առակը, ուր կկարդանք և կպատմվի մեզ, թե մեծատուն մը իր այգիին մէջ թզենի մը ուներ և այն խնամելէ և մշակելէ ետք, երեք տարիներ համբերելէ ետք կուգա և կսպասէ պտուղը ծառէն և պտուղը չգտնալով՝ անմիջապես կհրամայէ այգեգործին՝ ըսելով. «Ահավասիկ երեք տարի է, որ պտուղ կսպասեմ և չեմ գտներ, ուրեմն կտրեմ այս ծառը և կրակը նետեմ»: Եվ ահա այդտեղ այգեգործը կսէ, թե տէ՛ր, թող այս տարի էս, գուցէ արտը կրկին մշակեմ, կրկին հերկեմ և հառաջիկա տարի տա իր պտուղը:

Ինչ գեղեցիկ պատմություն, մարդու կյանքէն առնված, ամեն օր ապրվող, ամեն անգամ կլսենք, կիմանանք կյանքի այս հատվածը: Այգեգործ մը եթե իր ճակտի քրտինքով կտնկէ ծառ մը, անմիջապես կսպասէ անոր պտուղը և կհարցնեմ՝ տեսա՞ծ եք արդո՞ք պարտիզպան մը, որ պտուղ չտվող ծառ մը պահէ, բնական երևույթ չէ. ծառ մը եթե պտուղ չի տար, կդատապարտվի փչացումին, ծառ մը եթե իր բարեբեր պտուղները չի տար իր մշակներուն և մեզ, անմիջապես պետք է կտրել և կրակը նետել: Եվ ահա տանտիրոջ պահանջն ալ այս էր, թե եթե ծառը պտուղ չի տար, ապա անմիջապես կտրել և փչացնել, որպէսզի այն հողը չզբաղեցնէ և գուցէ անոր տեղ ուրիշ ծառ մը, ուրիշ բույս մը տնկվի և ցանվի մեր կյանքի բարօրության համար: Եվ այս առակը Քրիստոս մեզ կփոխանցէ ապաշխարության Իր պատգամին, ապաշխարության Իր կոչին և հրավերին ընդ մեջէն:

Բնական երևույթ է պտուղ չտվող ծառը կտրել և նետել, բայց եթե պահ մը մտածենք մեր կյանքին և ապաշխարության ընդ մեջէն, եթե պահ մը մտածենք հոգևոր

կյանքին ընդ մեջեն, այս անգամ նոր իմաստավորումով, նոր լույսով մը կ'իտսի այս առակը մեր սրտին:

Մենք՝ քրիստոնյաներս, լուսավորվածներս Սուրբ Մկրտությամբ, աղաչեցինք և խնդրեցինք, որ ստանանք Ս. Մկրտությունը և ծառայենք Աստուծո, ուրեմն ամեն մեկս թզենի մըն ենք, անմեն մեկս պտղատու ծառ մըն ենք Եկեղեցվո այգեստանին մեջ: Պահ մը ենթադրենք, պահ մը մտաբերենք արդյոք, երբ կանվինք Եկեղեցվո պարարտ հողեն, այն պտուղը կուտանք, պահ մը մտածենք, եթե տան տերը, մեր տերը գա և Ինք պտուղը սպասե. վայ մեզ, եթե մենք չկարողանանք պտուղը տալ, վայ մեզ, եթե մենք մեր առաքինության և սիրո գործերով, հավատքի և աղոթքի պտուղներով չներկայանանք Տիրոջ, և հրամանը սարսափելի պիտի ըլլա՝ ըսելով, թե ահա այս պտուղ չի տար, կտրեցեք և անմիջապես կրակը նետեցեք: Հատու սուր մըն է Տիրոջ բարկությունը և Իր բարկության մեջ, սակայն, փրկություն մը կա, և Տիրոջ բարկության մեջ, սակայն, ողորմություն մը կա: Այն պարտիզպանը, որ կտեսնե, թե ծառը պտուղ չի տար, չի հարցներ այգեգործին, այլ անմիջապես կձեռնարկե և կհրամայե կտրել ծառը և դուրս նետել արտեն: Բայց Իր բարկության մեջ ողորմության, զթառատ մարդասիրության կաթիլ մը կդնե արարիչ Աստված և ականջալուր կըլլա այգեգործին, որ կխնդրե այս տարի ևս համբերել, գուցե առաջիկա տարում պտուղ տա: Եվ այս կտեսնենք մենք ամբողջ Աստուծո և մարդու հարաբերություններու մեջ, Սուրբ Գիրքին մեջ: Աստված տեսավ, թե Սողոմ - Գոմոր պտուղ չէր տար և եթե կուտար, չար պտուղ էր և ուզեց անմիջապես կործանել, բայց պահ մը կեցավ և անցած Մովսես մարգարեին, որ համարձակությունն ունեցավ սակարկելու, փրկելու նույնիսկ տասը, հինգ կամ մեկ արդար մը այս քաղաքներեն: Եվ երբ չգտնվեցավ, անշուշտ, ճարակը դարձավ կրակի և փչացումի:

Սիրելիներ, երեկ Հայաստանյայց Եկեղեցին տոնախմբեց մեր առաջին լուսավորիչներուն՝ Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներուն հիշատակը, որոնք Աստուծո լույսը, ապաշխարության հրավերը բերին Հայաստան աշխարհ և քարոզեցին, հիմնեցին եկեղեցին, տվին մեզ պարարտ հողը, որուն մեջ մենք կարմատանանք օր օրի՝ այնտեղեն սնվելու և մեր սիրո, մեր հավատքի պտուղները տալու: Ուրեմն ինչ պատիվ հայորդիին, որ ունինք այսպիսի այգեգործներ: Եվ եթե Աստված Իր բարկությամբ վերցնե մեր մեղքերը, Աստված Իր բարկությամբ անդրադառնա և Իր հատու սուրով գա վերացնելու մեզ, որպես ծառերը Իր պտղատու այգիին, այն ժամանակ պիտի հնչեն մեր սուրբերուն՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներուն, մեր Եկեղեցվո այգեգործներուն բարխոսությունը և աղոթքը, որոնք պետք է ըսեն, թե Տեր, այս տարի ևս թող մնա, կրնա ըլլալ առաջիկա տարին պտուղ տան: Եվ այգեգործին աշխատանքը ի՞նչ է. պարարտեցնելն է, հողը կրկին հերկելն է, այգեգործության արվեստն է: Արտը, որ պարզ հող մըն է, անկե պտղատու և բերրի հող դարձնելն է: Աստված տված է մեզ կարելիություն արմատանալու և խորը արմատներ ունենալու եկեղեցվո վարդապետության մեջ, եկեղեցվո արտեն ներս, անկե սնվելու, անկե պարարտանալու և բարեհամ պտուղներ տալու: Ուրեմն պահ մը կենանք և մտածենք, թե մենք արդյոք կուտանք պտուղները, պահ մը անդրադառնանք, թե մենք մեր հարաբե-

րություններուն մեջ մեր եղբայրներուն, մեր դրացիներուն, մեր ծանոթին և անծանոթին կուտանք հարգանքի և սիրո արտահայտությունը: Վստահ եմ, որ բոլորս պիտի ըսենք՝ այո, կուտանք. մենք կհարգենք մեր դրացիները, մեր բարեկամները, մեր ծանոթները և անծանոթները, բայց անդրադառնանք, թե երբ անպատված ենք անձ մը, կզգանք, թե անոր մեջ գոյություն ունի Աստուծո պատկերը, անոր մեջ գոյություն ունի Աստուծո լույսը և իրեն անպատվելով՝ կանպատվենք Աստծո ներկայությունը մեր դիմացինին մեջ, եթե կընենք, ուրեմն պտուղ չենք տար, եթե կընենք, ուրեմն առաքինության պարարտանյութը մեր հոգիին մեջ կսպառենք և կփչացնենք: Եվ եթե այդպես է, հիշենք Հովհաննես Մկրտիչին ահագոյ ահագանգող բարբառը անապատին մեջ, որ կըսեր՝ ապաշխարեցեք, և այն ծառը, որ պտուղ պիտի չիտա, պիտի կոտրվի և կրակը նետվի, այնտեղ փչանալու և այնտեղ փռշտանալու և մոխրանալու:

Ուրեմն, սիրելիներ՝ ր, այսօր այս Ս. Պատարագեն և այս Ս. Խորանեն հրավեր մըն է մեզ ապաշխարության, չնմանվելու անպտուղ ծառի, այլ կրկին անդրադառնալու, կրկին զգալու աղոթքին ընդ մեջեն, ապաշխարության ընդ մեջեն, խոկումին ընդ մեջեն ուժը Եկեղեցվո արտին, այնտեղեն ստանալու մեր հոգվո հավատքի գորությունը և տալու պտուղները մեր հոգիին և առաքինության, և փառք Աստուծո, որ գրասիրտ է և մարդասեր, որ կարգեց մեր եկեղեցվո մեջ սուրբեր, կարգեց առաքյալներ, որոնք միշտ բարեխոս պիտի ըլլան, այգեգործները պիտի ըլլան գալու իրենց աղոթքով պարարտացնելու մեր հողը՝ մեր ոտքին տակի, մեր սնունդը, որմէ մենք ըմբռնանք և տանք մեր սիրո, մեր հավատքի և հոգվո արտահայտությունը. ահա այս է պտուղը և եթե կրցանք տալ այս պտուղը, եթե կրցանք ամեն մեկս ըլլալ պտղատու առաքինության, պտղատու սրբության, պտղատու աղոթող, մեր պտուղներեն ընդ մեջեն պիտի փառավորվի զԱստված, պիտի փառավորվի Տերը այսօր, վաղ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌՈՒԲԵՆ ՌԱՖԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ս. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՎԱՆՔԻՑ

Ս. Քրիստափորի վանական համակառույցը գտնվում է Արագածոտնի մարզի Թալին քաղաքից 5 կմ հարավ՝ Դաշտադեն, նախկինում՝ Ներքին Թալին գյուղի՝ երբեմնի շեն Քաղենի՝ Արենի տեղավայրի հարավային եզրին։ Ճարտարապետական ուրույն հորինվածքով եկեղեցին դասվում է VII դարին բնորոշ՝ արտաքուստ և ներքուստ խաչաձև, նմանատիպ կառույցների շարքին։ Արևելյան կողմում գլխավոր խորանն է, իսկ արևմտից՝ զլանաձև հաստ որմնասյուներով շքամուտքը։ Եկեղեցու հյուսիսային պատին արտաքուստ փորագրված է երկու տող արձանագրություն։ Վիմագիրը փորագրված է փոքր չափերի ուղղաձիգ կանոնավոր տառաձևերով, որոշ տառանշաններ առանձնանում են իրենց հին գրելաձևով։ Ստորև փորձել ենք առաջին անգամ վերծանել արտոնագրում տեղ գտած հնչյունական, քերականական առանձնահատկությունները, մեկնաբանել բնագրի պատմական նշանավոր անձի, տերմինի և տեղանվան հիշատակությունները։ Բնագիրը փոքր-ինչ հողմահարված է։ Արձանագրության սկզբից մի փոքր վեր՝ միջամասում, փորագրված է **ՄՐԲՈՅՄ Է** տառակապակցությունը։ ՄՐ-ը տառերի վերնամասում հստակ փորագրված է պատվի նշան, որը թույլ է տալիս բառը վերծանել հետևյալ կերպ՝ ՍՈՒՐԲՈՅՄ կամ, որ ավելի ստույգ է, ՍՈՐԲՈՅՄ¹ Է՝ գաղտնավանկ **Ը** հնչյունի վերականգնմամբ, որի վաղագույն օրինակը հանդիպում է Հռիփսիմի տաճարի 618 թ. շինարարական բնագրում. «Ես՝ Կոմիտաս եկեղեցապան Սըրբոյ Հռիփսիմի»։ Քննվող արձանագրության բովանդակությունը հետևյալն է.

ՅԱՆՈՒՆ ԱՅ ԱՅՄ ԻՄ ԳԻՐ Է ՅԻՍՈՒՀՈՒՐՍ, ՈՐ ԿԱՊԵՅ Ի ԾՈՎՆ ԻՄ ԱՐԴԷՆՑ, ԵԻ ԱՌԻ Ի ՔՈՒՃԱԿ ՈՎԻՏՆ ԲԱԳՈՍԻ ԵԻ ԳՈՒԴԱՆԻ ՀՈՂՆ ՄԼԱՐԻ [ՈՒ ՏՎԻ] ՍԲ. ՔՐԻՍ[Տ]ԱՓՈՐԻՆ. Ի ԹՎԻՍ ՀԱՅՈՑ։ ՆԼ։ ՊԱՐՈՆՈՒԹԻ ՄԱՆՈՒԶԵԻ, Ի Տ[Է]ՐՈՒԹԻ ՍԷՐՈԲԻՆ։

Բնագիրն ըստ բնույթի նվիրատվական է. Յիսուհուրս իր վաստակով «կապել», ձեռք է բերել հարստություն, ունեցվածք՝ «ծով արդենց» և գնել Քու(Ճ)չակում Բագոսի (հ)ովիտը և գու(դ)թանի հողն Սլարի ու նվիրել Ս. Քրիստափորին ի թվիս ... հայոց, պարոնության Մանուչեի, ի տերության Սերոբին։ Վիմագիրը փորձենք վերծանել հատված առ հատված.

ա) «ՅԱՆՈՒՆ ԱՅ ԱՅՄ ԻՄ ԳԻՐ Է» արտահայտությունը սովորական բանաձև է, որով սկսվում են բազմաթիվ վիմագրեր, որի վաղ օրինակը հանդիպում է Արթիկի շրջանի Նոր Կյանքի X դ. տաճարի ՆԾԹ (1010) թ. հիշատակագրում «ԱՅՄ ԻՄ ԳԻՐԷԱՆ [Է]»², Լմբատավանքի ՈԿԵ (1216 թ.) բնագրում մի փոքր այլ նրբերանգով է փորագրված. «ԱՅՄ ՄԵՐ ԱՐՁԱՆ ԱՆՋՆՋԵԼԻ Է»։ **Յիսուհոր** անձնանունը սկզբնաղբյուրներ-

¹ Է. Ա. Իճաճե, Избранные труды, Ереван, 1963, №. 407: Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973, էջ 116:

² Հ. Ա. Մեղրոնյան, XI դարի վիմագրեր Նոր կյանքից, Լրաբեր, 1983, թվ. 5, էջ 65:

րում ավանդված չէ և սեռը դժվար է որոշել, հավանաբար՝ արական: Այն բաղիյուսական բարդություն է՝ կազմված **ՅԻ(Ե)սու և հուր** բաղադրիչներից: Առաջին բաղադրիչը՝ **Յիսու** > **Յեսու**, **Եսու**՝ արական անձնանուն է, ծագել է Եհովա «մեծանձն լինել» բառից, **Յ**-հին (**ի**) նախդիր է: Հայոց անձնանունների մեջ գործածվել է V-XVI դարերում³: Ուշագրավ է **Յիսու** > **Յեսու**, **Եսու** անվան **Ե** > **Ի** հնչյունահերթագայության առկայությունը, որն ըստ ակադ. Է. Աղայանի. «հայերենը գրաբարում ուներ թուլացող և ուժգնացող երկբարբառներ, որոնց մեջ **ա, ո, ի** ձայնավորները (**այ, աւ, ոյ, իւ**) հանդես են գալիս որպես վանկարար»⁴: Վիմական արձանագրություններում ևս նկատվում են **Ե** > **Ի** հնչյունափոխության բազում օրինակներ, ուր նախաշեշտ **Ե, Է** ձայնավորները փոխվում են **Ի**-ով՝ **ի** ձայնավորի ետընթաց առնամանությամբ: Գիտական գրականության մեջ բազմաթիվ նմանատիպ օրինակներ համակողմանի քննված են, և այն մեր պահանջներից դուրս է, ուստի բավարարվենք մի քանի օրինակների մեկնաբանությամբ. **երեց>երից>իրից**, «Այս է հանգիստ Սահակ իրիցորդոյ», Ագարակ (Աշտարակի շրջ.), իրիցանի (Անի ՉԺԸ): Տեկորի ՆՁԵ (1036) արձանագրության մեջ այս երևույթը մի փոքր այլ ձևով է ավանդվել՝ **Ո>ի**. «ՆՁԵ թվ. հայոց ի թագաւորութենէ Յիվանէսի շահանշահի» (ՍԱԲ 207⁵: Հաղբատի Ս. Սիոն եկեղեցու շինարարական արձանագրության մեջ **Տերանուն** անձնանվան տրական հոլովածը փոխադրված է **Տիրաննո**, փոխանակ՝ **Տերանունան** կանոնավոր ձևով. «գրեցաւ գիր յիշատակ Գ քահանայից եղբարց՝ Անդրէի, Դանիէի, Տիրաննո»⁶: Անունն առկա է նաև Հաղբատի Ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատի բնագրում. **Հ(այոց)ՆՆ (991) Տիրանուն երեց**⁷, այսպես նաև Քանաքեռի որմնափակ խաչքարի ՉԺԵ (1266) բնագրում. «Վկա Տիրերն»⁸: Ներկայիս Գավառ քաղաքի ձորամիջի գերեզմանատան խաչքարի քիվին անձնանունը փոխադրված է յոթերորդ **Է-ով**. Տիրունս⁹: Գանձասարի ՉԻ (1271) թ. վիմագրում նույնպիսի երևույթ է արձանագրված. «Թիւ[ին] :ՉԻ: Կամաւն ԱՅ հրամանաւ տ[եառ]ն Խաչ[ի]ն Աթաբակին» (Դ, V, Երևան, 1982, էջ 50): Այս տիպի հնչյունաբանական հերթագայություն է տպագրված նաև Ստ. Օրբելյանի մատենագրական երկում. «Տերունականին Պօղոս երեց, Տիրանուն երեց»¹⁰: Հակառակ երևույթն է նկատվել Սանահնի հետևյալ արձանագրությո-

³ **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, Կ. Գ, Երևան, 1946, էջ 526, հայերեն տառադարձված է նաև ըստ ասորականի Յիշով: Այս անունով հայտնի է «Յեսու հաջորդ Մովսեսի, Հրեից գորավար և առաջնորդ, որ նվաճեց Պաղեստինը»: Մատենագրության մեջ մեկնված է «Յեսու փրկիչ և Յիսուսն փրկիչ լուսի»:**Գրիգոր Տաթևացի**, Հարցմանց, էջ 417:

⁴ **Է. Բ. Աղայան**, Մեսրոբյան այբուբենը և ուղղագրությունը, ՊԲՀ, 1962, 2, էջ 35:

⁵ Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 24: **Ս. Ա Ավագյան**, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973, էջ 136:

⁶ **Կ. Ղաֆադարյան**, Հաղբատ, Երևան, 1963, էջ 248: Տեկորի V դ. տաճարի անթվակիր բնագրում նմանատիպ երևույթն ավանդվել է **այ** երկբարբառով: Վանահոր անունը փոխադրվել է «**ՏԱՅՐՈՆ**» ձևով: Ն. Մառն ուղղել է **Տիրոն**, որն ըստ հեղինակի պետք է առաջացած լինի **Տիրան կամ Տիրոն**-ից (H. Марр, К датировке ктиторийской надписи Текорского храма. «Христианский Восток», т. III, вып. I, 1914, Петроград, էջ 66-ի ծան.):

⁷ **Կ. Ղաֆադարյան**, նույն տեղում, էջ 141:

⁸ **Ս. Ա. Ավագյան**, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 59:

⁹ Դիվան հայ վիմագրության, Կ. Դ, IV, կազմ. Ս. Բաբխուդարյան, Երևան, 1973, էջ 267:

¹⁰ **Ստեփաննոս Օրբելեան**, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 216:

յան մեջ՝ **հ>ե**. «կամ ազատե, կամ վանեցս հայր»¹¹: **հ>է** հնչյունափոխությունը նկատվում է անձնանուններում և տեղանուններում. «Այս է հանգիստ **էզնատիոսի** (Իզնատիոս)» (Ալայազ ԶԾԳ, Դ III, 111), պատարագ:Ա: Մհասին (Մինաս) (Հավուց թառ ԺԳ Հով ՀԹ 26): Արցախի Գտչավանքի 1241 թ. բնագրում եպիսկոպոս բառը փոխադրվել է **իպիսկոպոս** ձևով. «Ամարասա **իպիսկոպոս**» հիմնեցաք զեկեղեցիս ի թվիս:ՈՂ: (1241)»¹²: **Գրիգոր** անունը **է** հնչյունով փոխադրվել է Հռիփսիմե տաճարի 618 թ. շինարարական վիմագրում. «Ես Կոմիտաս եկեղեցական Սըրբոյ Հռիփսիմէի կոչեցայ յաթոռ սրբոյ **Գրեգորի**»¹³:

Յիսուհուր(ս) անվան առաջին բաղադրիչն **ի** հնչյունի գրությամբ հանդիպում է X-XIII դդ. բազմաթիվ վիմագիր բնագրերում. օրինակ՝ Խծկոնքի ՆՁ (1031) հիշատակագրում փոխադրված է **ի** հնչյունով. «Ի բարեխաւսութիւն ինձ՝ եկեղեցականիս **Յիսէի**»¹⁴: Հաղբատից 5 կմ հարավ-արևելք՝ Բերդիկ հնավայրի մի խաչքարի հիշատակագրում ևս. Ես՝ Գրիգոր, որդի **Յիսէի**, թվին ՈԿԱ (1212)¹⁵: Նման հոմանիշ գրությամբ հիշվում է նաև Սանահնի մեծ գավթի մուտքի հյուսիսային պատի արձանագրությունում. «Ուստա Սարգսին և աշակերտաց նորայ Հերապետ, Դաւիթին, **Յիսուին**»¹⁶: Յիսուհուրս անվան **ս**-ն ստացական հոդ է, թեև առկա է **այս** ցուցական դերանունը¹⁷, որի վաղ օրինակը հայտնի է Բագնայրի տաճարի VII դ. բնագրից (Տէր Եզրաս)¹⁸:

բ) Երկրորդական նախադասությունը գլխավորին կապող **Որ** շաղկապն այստեղ նույն կիրառությունն ունի, ինչ այլ բնագրերում և միջին հայերենում ժամանակի մակբայի իմաստով գործածված **ինչ** բառը, որն արտահայտում է «երբ, հենց որ, երբ որ» իմաստները¹⁹: Նույն եկեղեցու արևմտյան խաչաթևի հարավային պատի ՆԲ (953) թ. բնագրում փոխադրված է **ինչ** շաղկապը, որը Հ. Եղիազարյանը վերծանել է՝ «ի թվականին»²⁰, պետք է լինի՝ «Յանուն ԱՅ **ինչ** թուականի: ՆԲ: (953) կամ եղև»: **Ինչ** բառի հաջորդ օրինակը գտնում ենք Արուճի տաճարի 987 թ. հիշատակագրում. «Յանուն ԱՅ **ինչ** ՆԼԶ (987) ես Սմբատ շահնշահ»²¹: Նույն իմաստային կիրառությունն ունի նաև Հառիճավանքի XIII դարասկզբի նվիրատվական բնագրում **ուր** շաղկապը. «Ես Գրի-

¹¹ Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 50 :

¹² Ա. Հակոբյան, Գտչավանքի շինարարական արձանագրությունը և հարավային Արցախի եպիսկոպոսության սահմանները, «Հանդես ամսօրեայ», 1999, էջ 259:

¹³ Կ. Ղաֆադարյան, Избранные труды, ст 407.

¹⁴ «Արարատ», 1904, էջ 991:

¹⁵ Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 252 :

¹⁶ Նույն տեղում, էջ 140:

¹⁷ Բնագրում հավանական է՝ ընդգծված է ներկա ժամանակը, ինչպես Տարսայիճ Օրբելյանի ԶԻԴ (1275) թ. արձանագրությունում. «Այս իմ գիր է Տարսայիճիս, որ **իշխեցող է** ի Սիւնեց նահանգիս» (Դ III, 235), Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 104:

¹⁸ Կ. Ղաֆադարյան, Избранные труды, ст 377. Հեղինակը այն համարում է ցուցական հոդ:

¹⁹ Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 111:

²⁰ Հ. Ս. Եղիազարյան, Ներքին Թալին գյուղի Ս. Քրիստափորի անվան վանքը և նրա վիմագիր արձանագրությունները և գյուղի մյուս հուշարձանները, «Էջմիածին», 1971, Ը, էջ 54:

²¹ Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, Երևան, 1974, Ս. Ա. Ավագյան, «Հակ» հարկային տերմինը վիմական արձանագրություններում, էջ 44: Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 111:

գոր միաբանեցաւ սբ. ուխտիս, **ուր** մեռանեմ զիմ հակն կատարեն ամեն»²²:

զ) Երկրորդական նախադասության բայը **կապեց-ն** է (կապեալ, արկանել կապանս, ՆՀԲ, էջ 1054), **ի** հնչյունը նախդիր է և արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ՝ «**ի ծովն**» նորոշյալ հոդ է:

X-XIV դարերի վիմական հուշարձաններում **ե>ի** հնչյունի առկայությունը դառնում է հաճախակի, որն օրինաչափ երևույթ է տվյալ ժամանակաշրջանի համար:

դ) **ԿԱՊԵՑ Ի ԾՈՎՆ ԻՄ ԱՐԴԵՆՑ** արտահայտության **արդենց**ում առկա է **այ > ե > է** անցումը՝ **արդինք-արդայնք-արդեանք**(g)-**արդենք-արդենց**²³: **Արդինք-արդեանք** հոգնակի ձևը հարստություն, ունեցվածք իմաստով օգտագործված է Մարմաշենի 1225 թ. կոնտեքստում. «պարգեւեալ արդինս յոլովս՝ գեղարայս, այգես, տանս կուղպականի և ջաղացանի»²⁴։ **Արդենք(անք-ամբ)** կազմությամբ բառ հանդիպում է 1270 թ. վիմագրում. «Ի թվ։ՉԺԹ։ հալալ **արդե/ա/մբ** գնեցի»²⁵: Համանուն բանաձևը նկատվում է նաև Հառիճավանքի Ս. Գրիգոր եկեղեցու արևելյան պատի բնագրում. «Ես Սարգիս ճոնս **ի քրտանց իմ** ետու ընծայ ի սբ. ուխտս»²⁶: Նմանատիպ օրինակ է նաև Մրենի տաճարի ՉԼԳ (1284) բնագրի հետևյալ հատվածում. «գնեցի զՄրեն իմ հալալ **արդեանց**»²⁷, նույնն է նաև Մրենիի տաճարի ՉԽԴ (1295) «ես Դաւիթ միաբանեցաւ սուրբ Կաթողիկէիս եւ արարի արդինք»²⁸: Քննվող բառն օգտագործված է նաև Յաղաց քարի մի արձանագրությունում՝ «արար բագում **արդինս** ի վանորայս. և ետ ի վանսն Յաղաց քարոյ ի Գեղաքունի զԳառնակերն»²⁹: «**ԿԱՊԵՑ Ի ԾՈՎՆ ԻՄ ԱՐԴԵՆՑ**» արտահայտության համանիշ իմաստային զուգահեռ օրինակը գտնում ենք Նորատուսի պատմական գերեզմանոցի մի տապանաքարի բնագրում՝ կիրառված «**ըռզակ**» բառ-եզրույթով. «Տանուտեր Սարգսի որդի Գալուստին, ես ի գալուստն Նորատուսին, ի շատ մուլք ու **ըռզակ** թողի»³⁰: Սարգսի որդի Գալուստը «շատ **մուլք**» անշարժ գույք՝ կալվածք, **ըռզակ**՝ արդյունք, հարստություն է թողել: **Ըռզակ** միջին հայերենում հաճախակի հանդիպող բառ է և նշանակում է «ապրանք, հարստություն, գանձ, կայք, ունեցվածք»։ Այն ծագում է արաբերեն arzag արմատից³¹, հանդիպում է միջնադարյան տաղերգու Ֆրիկի քերթվածքներում «**ժողովեցի** շատ մի բարի, **ըռզակ** արի գնա թատարի»³²: Այս բառ-իմաստներին հոմանիշ են նաև Սայաթ-Նովայի քերթվածքներում օգտագործված՝ որպես անձեռակերտ ոգու և մտքի ստեղծագործություն, **բունյաթ, դովլաթ** բառ եզրույթները. «Բունիաթս ավագ չիմանաս, քարափ է, քար ու

²² Նույն տեղում, էջ 153:

²³ Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, էջ 94:

²⁴ Անձնական հավաքածու:

²⁵ Դիվան հայ վիմագրության, հ. III, կազմ. Ս. Բարխուդարյանը, Երևան, 1967, էջ 124:

²⁶ Դ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881:

²⁷ Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, Երևան, 1974, **И. А. Орбели**, Надписи Мрена, ст. 39.

²⁸ Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա:

²⁹ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 424:

³⁰ Դիվան հայ վիմագրության, հ. IV, կազմ. Ս. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 41: Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաբանություն, Երևան, 1978, էջ 90:

³¹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 132:

³² Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. Բ, Երևան, 1946, էջ 251: Ֆրիկ, Դիվան, Նյու Յորք, 1952, էջ 497:

կրեն է»³³:

Վիմական սկզբնաղբյուրներում հաճախ հանդիպող՝ «Ի հալալ ինչից», «իմ հալալ գանձով գնած հերնետիրաց», «ինչք»՝ **հարստություն, գանձ, անշարժ կայք** իմաստով գործածվող բանաձևի հիման վրա պատմաբան Թ. Հակոբյանը ուշագրավ վարկած է առաջարկում Անիի քաղաքային դասի, բնակչության հասարակական շերտերի՝ արհեստավորների ու առևտրականների սեփականատիրական իրավունքի վերաբերյալ: Հեղինակի կողմից գիտական շրջանառության մեջ դրվող վարկածը հակադրվում է Ն. Մառի այն կարծիքին, որ անվանի անիագետը հայտնել էր անցյալ դարասկզբին հնագիտական և վիմագրական նյութերից ելնելով: Ըստ Ն. Մառի՝ Անիի արհեստավորական և առևտրական «հասարակ» խավի սեփականատիրական իրավունքի մասին որոշակի ոչինչ չկա, և ընդհանրապես հայտնի չէ, թե այդ «խավի ներկայացուցիչները սեփական տուն կամ խանութ ունեցել են, թե ոչ, կամ ինչպիսին է եղել տնատերերի և վարձակալողների հարաբերությունը»³⁴: Անշուշտ, հաստատապես պետք է կարծել, որ մեծավաստակ անիագետի կարծիքը վերաբերում է Անիի չքավոր, ունեզուրկ դասի սեփականատիրական իրավունքին, և ոչ՝ արհեստավորական կամ առևտրական խավին: Պատմաբան Թ. Հակոբյանը իր մատնանշած վարկածը հաստատում է Անիի երկու վիմագիր բնագրերով. **«Ցանուն ԱՅ ես Խաչատուր ետու զիմ գանձագին սարաւոյթով տունս ի սուր Առաքեալս» և «ես Մարգիս լարարարս ետու զիմ տունս ի սուրբ Գրիգոր, որ առնեն ինձ ժամ ի տարին: ԺԵ: ար»**³⁵: Ուն Խաչատուրը, հեղինակի կարծիքով, «հասարակ» քաղաքացի է, քանի որ նա վիմագրում հիշվում է առանց տիտղոսի, սեփական «սարավոյթով տնատեր» է և այն ձեռք է բերել «գանձագին» եղանակով³⁶: Հեղինակը, ամփոփելով իր վարկածը, եզրակացնում է՝ «Անիի բնակելի տների մի մասը **ցածր խավի** ներկայացուցիչների, **գերազանցապես առևտրականների ու արհեստավորների, սեփականությունն էր**»³⁷:

Անիի նվիրատվական արձանագրությունների համակողմանի քննությանն անդրադառնալիս պատմաբան Գնել Գրիգորյանը ի մասնավորի չի անդրադարձել Թ. Հակոբյանի վերոհիշյալ կարծիք-վարկածին, սակայն խոսելիս վերը նշված երկու բնագրերից առաջինի՝ «սարավոյթով տունս» արտահայտության մասին, մակաբերել է որպես «բարձրաշեն կամ բարձր պատշգամբով առանձնատուն»³⁸:

Դժվար է համաձայնել պրոֆ. Թ. Հակոբյանի այն թեզին, ըստ որի «հասարակ աշխատավորական բնակչություն» ասելով նկատի պետք է ունենանք **«ցածր խավի ներ-**

³³ Մայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն և պարսկերեն խաղերի ժողովածու, կազմ. Մ. Ս. Հասարթյան, Երևան, 1959, Դովլաթ (դէվլէթ) հարստություն, ինչք, էջ 259, Ռափայել Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1966, էջ 677: Նույն իմաստով՝ թուրքերեն-հայերեն բառարան, Դովլաթլուփաթթամ, ճոխություն, կազմ. Եղիա Մուշեղյան Կարնեցի, Երևան, 1986, էջ 43: Սասնա ծռեր, կազմ. Ս. Հարությունյան, Երևան, 1977, էջ 654:

³⁴ Բ. Բ. Ի ձձձ, Աի, էջ 32:

³⁵ Դիվան հայ վիմագրության, հ. I, կազմ. Հ. Ա. Օրբելի, էջ 12:

³⁶ Թ. Ն. Հակոբյան, Անիի պատմություն, Երևան, 1980, էջ 160:

³⁷ Նույն տեղում, էջ 160:

³⁸ Գնել Գրիգորյան, Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին IX-XIV դդ., Ս. Էջմիածին, 2002, էջ 37, 39:

կայացուցիչներին՝ գերազանցապես առևտրականների ու արհեստավորների³⁹։ Գիտնականը տարբերակում է Անիի հասարակայնության քաղաքային ստորին դասի մի քանի շերտ՝ «ցածր խավ՝ արվարձաններում գյուղատնտեսությամբ զբաղվողներ և օրավարձով աշխատող ընչազուրկներ»⁴⁰։ Որոնք ապրելիս են եղել հասարակ խրճիթներում «արհեստավորներ և առևտրականներ»⁴⁰։ Նկատելի է, որ ապրանքային արտադրության և առևտրի զարգացման հետ առաջացած քաղաքային վերնախավը՝ հետագայում «մեծատունք», շնորհիվ առևտրական և վաշխառուական, ինչպես նաև խոշոր ֆեոդալների տնտեսության մեջ եկամտաբեր պաշտոններ զբաղեցնելուն, կուտակել էին բավականին մեծ հարստություն⁴¹։ Ուստի նրանք իրենց ունեցվածքով, կուտակած հարստությամբ պետք է զբաղեցնեն հասարակական, եթե ոչ բարձր, ապա միջին սանդղակը։ Եվ «Ի հալալ ինչից, կամ գանձագին» հայրենիք-ունեցվածք ձեռք բերած նվիրատուներ Խաչատուրը և լարարար Մարգիսը այսպիսի սոցիալական միջին, և ոչ «ցածր խավի ներկայացուցիչներ» են։ Այս են հաստատում նաև գիտնականի մատնանշած օրինակները, քանի որ նվիրաբերված անշարժ գույքերը գնահատվել, արժեքավորվել են բավականին բարձր պատարագաժամով (ի տարուջն :Ե: ար ժամ..., և ի տարին:ԺԵ:ար): Կարծում ենք, որ պրոֆ. Թ. Հակոբյանի «հասարակ աշխատավոր» արտահայտության «հասարակ» տերմինի կիրարկությունը պետք է ընկալվի ռամիկ⁴² ունեզուրկ եզրույթով, քանի որ ինչպես հեղինակն է բնորոշում՝ Անիի աշխատավորական սոցիալական ստորին խավը՝ «արվարձաններում հողագործությամբ զբաղվողներ և օրավարձով աշխատող ընչազուրկներն են, որոնք որևէ արժեք չեն ներկայացնում»⁴³։

Միխթար Գոշը «հասարակ» բառ-եզրույթը մակաբերում է շինական, գյուղացի իմաստով. «եթե պակասիցե գանձ արքունի, ամենեքեան հասարակ վճարիցեն»⁴⁴։ «Ռամիկ» համարվել են ոչ միայն շինականները, այլև քաղաքային բնակչության ստորին խավերը⁴⁵։ Ակադ. Հ. Մանանդյանը, քննելով «ռամիկ» տերմինը, կարևոր տեղեկություն է հայտնում. «Քաղաքային բնակչության ստորին խավերը՝ արհեստավորները, թերևս մանր առևտրականները, որոնք շինականներից միանգամայն տարբեր՝ սոցիալական հատուկ դասակարգեր էին»։ Հեղինակը նորովի մեկնաբանելով տվյալ եզրույթը՝ հակադրվում է Ն. Մառի և Ն. Ադոնցի մեկնաբանություններին, և հիմնվում է հայագետ Հ. Հյուբշմանի ստուգաբանությանը՝ ըստ որի «ռամիկ» բառը ծագել է պարթև րամ բառից և հայերեն նշանուն է երամ, խումբ, զունդ, բազմություն, հոտ⁴⁶։ Մատենագրության մեջ բառն օգտագործված է ընդհանրապես ժողովուրդ, հասարակ խաժամուժ իմաստով. «առեալ ընդ իւր գնախարարսն և զազատս և զայլ ամենայն ռա-

³⁹ Թ. Հակոբյան, Անիի պատմություն, էջ 160:

⁴⁰ Նույն տեղում, էջ 158:

⁴¹ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Երևան, հ. 2, 1964, էջ 74:

⁴² Տր. Աճառյան, Տայերեն արմավական բառարան, հ. 4, Երևան, 1979, «հասարակ ժողովուրդ, գիղացի կամ քաղաքացի», էջ 140:

⁴³ Թ. Խ. Հակոբյան, Անիի պատմություն, էջ 158:

⁴⁴ Միխթար Գոշ, Դավրապանագիրք, էջ 215-216:

⁴⁵ Հ. Մանանդյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1981, էջ 34, 40, 304:

⁴⁶ Նույն տեղում, էջ 38:

միկն»⁴⁷: Հենց ստորին «ռամիկ» հասարակ խավը նկատի ունի նաև մեծանուն բանաստեղծ Դանիել Վարուժանը իր հանճարեղ «Օ, Տալիթա» քերթությունում, որ գրում է.

Այսօր կուգեմ դահլիճին մեջ ծաղրված
Մերս առջևդ պղծել,
Խաբված հոգիս բերել *ռամիկ* աղջկան
Գարեջուրով մը ծախել:

Արհեստավորական և առևտրական խավն իրենց ձեռքին աստիճանաբար կուտակելով շարժական ու անշարժ գույք՝ նվիրատվություններ էին կատարում՝ դրանով իսկ տարբերվելով օրավարձով, «քարայրային և ստորերկրյա» ապրող ունեզուրկ չքավորներից:

Ե) «ԱՌԻ Ի ՔՈՒՃԱԿ ՈՎԻՏՆ ԲԱԳՈՍԻ ԵՒ ԳՈՒԴԱՆԻ ՀՈՂՆ Մ[Ա]ԼԱՐԻ» արտահայտությունում Քուչ(ճ)ակը բնակավայր է Արագածոտնի մարզում, Ապարանից 8 կմ հարավ⁴⁸: «ՄԼԱՐ(Ի)» անձնանուն է, որ նշանակում է՝ «մռայլ, մարախուղ, մշուշ, պղտորություն»⁴⁹: Հավանաբար Ա-ն ընկել է, պետք է լինի Մ[Ա]ԼԱՐԻ: *Ովիտն Բագոսի* տեղանվան, հանդամասի անվանում է: Հատիճի Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի նվիրատվական արձանագրությունում բառս վկայված է եկեղեցական տոնի անվամբ. «հայր Համազասպ սահմանեաց որ ի Սարգսի և ի *Բագոսի* տունին :Բ: պատարագ»⁵⁰ : Բագոսը վաղ միջնադարյան քրիստոնեական ավանդության մեջ սրբացված վկաներից է, նահատակվել է Անտիոքոս դքսի կողմից, Մաքսիմիանոս կայսեր ժամանակ⁵¹: *Ովիտ*(ն) ըստ ՆՀԲ-ի նշանակում է «Հովիտ Հով և խոտաուետ և ծաղկաուետ վայր դաշտային, ի ստորոտս լեռանց, ձորակ»⁵²: Պետք է կարծել, որ տեղավայրն աչքի է ընկել իր հարուստ բուսականությամբ, բերքառատ դաշտավայրով, ուր մերթ ընդ մերթ, հավանաբար կատարվել են *բագոս*-յան խրախճանքներ⁵³: Նման

⁴⁷ Ղազարայ Փարպեցույ Պատմություն Հայոց, Դր. Բ. գլ. ԽԱ Տփղիս, 1904, էջ 73:

⁴⁸ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, հ. 5, 2001, էջ 448, նախկին Ալիքուչակը, որ ժողովուրդը բացատրում է որպես 50 քուչա(փողոց): Դժվար է պնդել, թե խնդրո առարկա տեղանունը ինչ չափով է առնչվում վերոհիշյալ բնակավայրին, սակայն Բառարանի հեղինակները տեղանունը բխեցնում են Նահապետ Քուչակի անունից, որը, մեր կարծիքով, համոզիչ չէ, քանի որ խնդրո առարկա տեղանունը ավելի վաղ է արձանագրված Ս. Քրիստափորի վանքի պատին, քան ստեղծագործել և հանրաճանաչ է դարձել Վանի Խառակոնիս գյուղի միջնադարի բանաստեղծ Նահապետը «որ մականունն աշըղ Քուչակ ասի», գործել է XV դարի վերջին և XVI դարի սկիզբին: Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, Երևան, 1940, էջ 417:

⁴⁹ Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 567, Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ.3, Երևան, 1944, էջ 341:

⁵⁰ Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 158:

⁵¹ Վարք և վկայաբանություն, Բ, էջ 272-279, Մ. Հարությունյան, Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, 2006, 265:

⁵² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 122: Նման մեկնաբանություն է նաև Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարանում. «Հովիտ երկու լեռների միջև բացված դաշտավայր, գոգ, ծոց», հ. 4 Երևան, 1944, էջ 133:

⁵³ Մ. Հարությունյան, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 47: Ըստ հեղինակի հունական դիցարանի՝ «Դիոնիսյան կամ Բագոսյան տոնախմբությունները», աղերսվում, նույնացվում են «պտղաբեր երկրի, բուսականության, խաղողագործության ու գինեգործության» վայրի տեղամասին: Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, 2006, էջ 265:

թավուտ մարգագետնի, հարուստ բուսականությամբ տեղավայրի, հանդամասի մասին է փաստում Գտչականքի վերոհիշյալ բնագրի հետևյալ վկայությունը. «Խազինամարգ՝ խոտո տեղ»⁵⁴: *Խազինա* բարբառային բառը նշանակում է գանձ, հարստություն⁵⁵, ուստի «Խազինա(մարգ)» պետք է մակաբերել թավուտ, հարուստ մարգագետին: *Բագոսը* բառը Ստ. Մալխասյանի բացատրական բառարանում բերված է ուղիղ ձևով⁵⁶: *Ուլիտ* բառը սպասելի էր *հովիտ* կամ *յովիտ ձևով*, ինչպես օրինակ Ամբերդի արձանագրության մեջ «*ՆՀԵ(1026) ՅԱնբերդի պտուղ տան» յ – հի*, կիսաձայն ընկել է: Երևույթը նկատելի է X-XIV դդ. վիմագիր հուշարձաններում. Անիի Գրիգոր Պահլավունու եկեղեցու Վահրամ իշխանաց իշխան Պահլավունու արձանագրության հետևյալ հատվածում. «գնեցի :Բ: կուղպակ և գՈրսատին *Ոշականաց*: Այգի :Ա: գՈշականց»⁵⁷:

զ) «ԳՈԻԹ(Դ)ԱՆԻ ՀՈՂՆ Մլարի» Մ[ա]լար(ի): «ԳՈԻԹ(Դ)ԱՆԻ ՀՈՂՆ» հանդամասի տեղանվանում է, դաշտամաս ընդհանուր առումով: Ձեռագիր ու վիմագիր հուշարձաններում բառը հայտնի է տարբեր հոմանիշներով, որպես աշխատանքային ռենտա կամ կոռ օրավար, կոռավար «երկու մեծ կոռավար» (Դսեդ, ՎՏ, 80), կոռ արտով (Ս. Սիոն, ՎՏ, 123), կիսավար՝ վարելահողի տարածքային, չափման, քանակական միավոր: Վիմագիր սկզբնաղբյուրներում հաճախ հանդիպող *օրավարը* ունի հերկման տարբեր ժամանակային դրսևորումներ՝ *մին արավար հող :Ա: գութանի հող ճաղագով*⁵⁸, *Ժ արավար հող, ԹՎ.ՉՀԵ, Լ (30) արավար հող, Մ (50) արավար հող, թվիս ՈԿԴ Խ (40) արավար հող*⁵⁹: Գտչականքի վերոհիշյալ 1241 թ. վկայագրում օրավարն արտահայտված է հետևյալ ձևով, «*Ա: լծո հող ի* Տահիս, *:Ա: լծո ի* Տող, *:Ա: ի* Գաքա, *:Ա: ի* Մոխենիսն»⁶⁰: Հովհաննավանքի ՉՂԹ (1350) բնագրերում օգտագործված է «*գութանավի գլխովն*» արտահայտությունը, որը նույնպես գութանով հերկվող վարելահող է. «Բունկայ ծովեն, *Գութանավի գլխովն*» (ԿՂՀ 92): Ուշագրավ վկայություն է հայտնում Ստ. Օրբելյանը. Սյունյաց Տեր Սողոմոն եպիսկոպոսը վճարել է 1200 դրամ և գնել է Դրատափ գյուղի «Խոտոյ կոռավարն», որը նախկինում հափշտակված էր: Եպիսկոպոսը փրկագնելով ձեռք է բերում հափշտակված կալվածքները. «Տեառն Մաղօմօնի՝

⁵⁴ Ա. Նակորյան, Նշված աշխ., էջ 259:

⁵⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Բ, Երևան, 2002, էջ 261:

⁵⁶ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, էջ 301, Բագոս, գ, Անփոյթ՝ անհող մարդ: Բաքոս, գ, Հին հռոմայեցոց դիցաբանության մեջ՝ գինու և խրախճանքի աստուծո անունը: Նույնը՝ էջ 357: *Բագն* ըստ Հր. Աճառյանի՝ առաջին իմաստով նշանակում է («բերանի կապ»), երկրորդ իմաստով բառը ծագած է համարում պահլավերեն *bag* բառից՝ բաժին, ժառանգություն, մաս, «Չիք իմ, ասէ, որդեակ՝ որ ունիցի զբագ և զբաժին իմ»: Իսկ երրորդ իմաստով՝ «կից, միասին, հաւաքուած. *Ձի բագ անկանիլ մեղք տարւոյն քառասուն աւուրքք*»: Վերջապես «Աստուած», որից կազմված են *Բագարան* («աստուածների բնակավայր»), *Բագաւան* («աստուածների աւան»), *Բագայառիճ* («աստուածների գիւղ»): Հեղինակի՝ առաջին իմաստով բացատրությունը՝ հողատեսակ, հովիտ, որպես մեկ այլ հանդամասի կամ տեղամասի բերանի կապ, *սահմանաբաժին*, վիմական սկզբնաղբյուրներում և բարբառներում հանդիպում է տարբեր տերմիններով՝ *եղեզ*, *(եղեզ)* և *կոպար* արտահայտությամբ:

⁵⁷ Դիվան հայ վիմագրության, պրակ 1, էջ 32, 63:

⁵⁸ Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 198:

⁵⁹ Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 112, 123, 133, 137, 174:

⁶⁰ Ա. Նակորյան, Նշված աշխ., էջ 262:

Միւնեաց եպիսկոպոսի, որ յառաջ ժամանակաց զԽոտոյ կոռավարն Տեառն Գեորգեայ սուրբ նշանին հոգեցատուր էր արարեալ՝ յափշտակյալ էին, առի զԴարատափ ի հալալ վաստակոց իմոց, ոչ հոգեցատուր և ոչ յերախայրեաց, այլ գնեցի հազար և երկերիւր դրամի»⁶¹:

Վրաց ակադ. Ա. Շանիձեն Կոշի տաճարի վրացերեն հուշարձան-բնագրի մեզ հետաքրքրող հատվածը վերծանել է հետևյալ կերպ. «одна сахневель (земли) вашими быками и плугом вечно была (обрабатываемая) для нас» ընդգծելով **«այն, ինչ կարելի է վարել գութանով մեկ օրում»**, այսինքն՝ **մեկ օրավար**: Պատմաբանն իր ասածը հաստատել է՝ Իվ. Ջավախաշվիլու աշխատությունից վկայակոչելով 1225-1260 թթ. գրված Շիոմդվիսի փաստաթղթից մի հատված, ուր տերմինը հեղինակը հաստատապես մեկնում է որպես հողային չափի միավոր (**մեկ գութանի հող**)⁶²: Վերջինիս մեկնաբանությամբ առարկում է անվանի հայագետ Պ. Մուրադյանը՝ առաջարկելով բառը վերծանել **արոր կամ մաճ**՝ «ելակետ ունենալով Կոշում գործածական նորմը, որով, ըստ հեղինակի, անհավանական են **գութան, օրավար** կամ **գութանավար** տերմինները՝ պատճառաբանելով, որ վաղ շրջանից ի վեր **օրավար** չափի միավորի հիմքում ընկած է **արորավարը**»⁶³: Հարգարժան հայագետը, հանգամանալից, մանրագնահիտ քննել է Կոշի վրացերեն բնագիրը, և իրավական սահմանման հատվածից մակաբերել, որ երկրի տերեր՝ մանդատությունուցես Իվանեն ու նրա կինը Խոշա(ք)ը՝ կոշեցիներին «թողել, ազատել են վերին հանդամասի **շարիաթից**, իսկ վարի հանդամասից՝ **«միայն ցորենի դալայից»**՝ այդ երկու պարտությունների դիմաց՝ «սահմանելով **մեկ արոր իրենց եզով ու սարքով մշտապես գործելու է պատրոնների համար**»⁶⁴:

Անառարկելի է պրոֆ. Պ. Մուրադյանի առաջարկված տարբերակը, քանի որ երկրի պատրոնները սահմանել են նոր պարտությունը: Ոչ թե ապահարկել, զեղչել կամ օտարել են՝ թեթևացնելով կոշեցիների տնտեսական հարկերը, այլ ավելի ծանրացրել նոր շարունակական կոռային աշխատանքով⁶⁵: Վիմագիր աղբյուրներում նման իրողություն հանդիպում է, երբ մի պարտություն փոխվում է այլ արդյունավճարի: Տվյալ երևույթի գուցահեռ օրինակը հանդիպում է Ջազավանի 1325 թ. իրավական-տնտեսական բնագրում. «թողաք զվանաց կոռս, զմարդո, եզին, իշո և զամենայն ցեղ կոռ և զհասարակ ի տուրքս միացուցաք»⁶⁶: Պրոֆ. Պ. Մուրադյանի վարկածը՝ տրվելիք վարուցանքի գործիք (արոր իրենց եզով ու սարքով) հարկհասութ, կարելի է հաստատել նաև Կոթավանքի տաճարի ՉԻԴ (1275) արձանագրությամբ, որով Տարսայիճ Օրբելյանի գործակալ Ջուրբեկը (**ի զլուխ** ինքնակամ Ռ.Գ.) սահմանել է՝ վերացնելով գյուղապետ-դեմեթարին տրվելիք հարկերը. այդ թվում՝ մշակ, գործիք առարկաները. «պարոն Տարսայիճին, ես Ջուրբեկս թողի դեմեթարայիակն, զդոշն, մշակն, գործիքն :Ժ: գրիւ հաց ի

⁶¹ Ստեփաննոս Օրբելեան, Պատմություն նահանգին Սիսական, էջ 215:

⁶² Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 101: (Թարգմանությունը՝ Պ. Մուրադյանի)

⁶³ Նույն փեղում, էջ 102:

⁶⁴ Նույն տեղում, էջ 103:

⁶⁵ Նույն փեղում, էջ 107:

⁶⁶ Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 185:

գեղս :Ա: եզ, :Ա: կով իմ գլխու»⁶⁷: Թեև բնագիրը չի մասնավորեցնում, թե վերադաս իշխանության կողմից գյուղապետ-դեմեթարի օգտին համայնքից գանձվող հասույթը ինչպիսի գործիք է եղել, սակայն «մշակ, (Ա) եզ, (Ա) կով, :Ժ: գրիվ հաց» վկայակոչված գործիք-առարկան կարելի է մակաբերել՝ վարուցանքի գործիք՝ արոր, որ պակասեցրել, զեղչել է դեմեթար Ջուլբեկը: Կոռային նմանատիպ աշխատանքի բնույթի ու տնտեսության մասին է վկայում նաև Ստ. Օրբելյանին վերագրված «Ժամանակագրութեան» հավելվածի հետևյալ հատվածը. «Ա օր վար անեն, Բ օր հունձն, և եզնարածքն Ա օր խոտ հարեն»⁶⁸: Արոր տերմինը վիմագրերում հանդիպում է վեցկի ձևով⁶⁹: Բառը հայտնի է մատենագիր Մատթեոս Ուռեայեցու վկայությունից՝ Արծնի քրեպիսկոպոս Դավթուկի հարստությունը նկարագրելիս. «Քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորայ, ութ հարիւր վեցկի եզանց ելանէին»⁷⁰: Վեցկին հայտնի է Սանահնի ՉԺԳ(1264) թ., ինչպես նաև Թանատի վանքի XIII դ. արձանագրություններից: Վեցկին՝ ծանր արոր-նախագութանն է, որ գործի է դրվել (երեք, չորս գույգ) եզներով կամ գումեշներով:

Անիի մայր տաճարի 1056-1058 թթ. արձանագրության «զվեցկե կոռ» արտահայտությունը գործիք-կոմպլեքս իմաստով ընկալել ու մեկնաբանել է ազգագրագետ Վ. Հ. Բդոյանը՝ գրելով. «*Այստեղ ոչ թե կոնկրետ գործիք ենք հասկանում, այլ գործիքի հետ միաժամանակ լծասարքերը, լծկանները և մարդկանց անձնակազմը, որոնք կարող էին կոռի ենթակա լինել*»⁷¹: Նկատենք, որ իրավա-օրենսդրական վերոհիշյալ արտոնագիրն ընթերցելիս դժվար է համաձայնվել հեղինակի եզրահանգման հետ, քանի որ բնագրում շեշտվում է, թե բյուզանդական «արևելից կատեպան» Բագրատ Վիսկացին ապահարկել, թեթևացրել է պետությանը՝ տվյալ դեպքում, Բյուզանդական կայսրությանը տրվող, անեցի մշակների պարտադիր աշխատանքային ռենտան. «Կամ եղև իմ Բագրատա մագիստոռսիս և արևելից կատեպանիս Վիսկացոյս ազատեցին *զվեցկե կոռ և զսայլի և զկամին և զանգարիոն...*»⁷²: Այսինքն, բյուզանդական վերականգնող «Բագրատա մագիստոռսը» վերացրել, ապահարկել է՝ անեցի հողագործների պարտադիր հարկապարհակային կոռային աշխատանքով՝ *ձեռք բերվող տուրք-հասույթը*, զսայլի, զկամին և զանգարիոն՝ հարկապարհակները, և ոչ թե *վարելագործիքը և նրա հետ «միաժամանակ լծասարքերը, լծկանները և մարդկանց անձնակազմը»*, այլ ուղղակի «զվեցկե *կոռը* և զսայլի և զկամին և զանգարիոն»»: Վեցկին ըստ հե-

⁶⁷ Դիվան հայ վիմագրության, հ. Դ, IV, էջ 267: Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, էջ 166:

⁶⁸ Ս. Աբրահամյան, Ստ. Օրբելյանի ժամանակագրություն, Երևան, 1942, էջ 44:

⁶⁹ Վ. Հ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 176, «Նախագութանը, ըստ հեղինակի՝ *ճղլա* անունն է կրում, որով հերկելիս են եղել խամ ու խոպան հողերը: Արցախի խաչեն գավառում վեցկին հայտնի էր *կռո* անունով: Արորը Բարձր Հայքի գավառներում, ինչպես նաև Ջավախքում, Ախլցխայում, Վանանդում, Ապարանի շատ գյուղերում կրել է *հարոր* անունը: Բագրևանդի շրջանում հայտնի էր խարօր ձևով, իսկ հին Բայազետում կոչվելիս է եղել վեցկի կամ չորոց(ք) անունով: Հեղինակի հավաստմամբ՝ հարօրը Ախլցալքի գյուղերում երեք տեսակ էր. *աչոռն* հարօր, որ ամենափոքրն էր՝ *ճղլա* անուն էր կրում, որով հերկում էին խամ ու խոպան հողերը»: էջ 153:

⁷⁰ Մատթեոս Ուռեայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 103:

⁷¹ Վ. Հ. Բդոյան, նշված աշխ., էջ 248:

⁷² Դիվան հայ վիմագրության, պրակ 1, էջ 37:

դինակի նշանակել է *կոմսյէքս*, որն իր մեջ իմաստավորել է «խմբական աշխատանք», այդ սկզբունքով գիտնականը սխալ է համարում վեսկի, վեսկու իմաստը բխեցնել վեց թվականից, նախ այն պատճառով, բացատրում է հեղինակը, որ բառը առանձին վերցրած նշանակել է *և գործիք և թե կոմսյէքս*⁷³:

Դսեղի Բարձրաքաշ վանքի ՈՂ (1241) թ. նվիրատվական բնագրում հիշատակված է կոռավար տերմինը. «Ես Գրիգոր, որդի Մարծպանա... էտու յիմ վանքս և զՄերեկագունուց տափն և *զմեծ կոռավարն յԱգանդակի*»⁷⁴: Կոռային հարկատուրք ռենտայի փոխակերպումն օրենսդրական հաստատումն է ամրագրում Ձագավանի վերոհիշյալ արձանագրությունը, ուր. «զամենայն ցեղ կոռ» պետք է մակաբերվի, թե տեղական գործակալ իշխանիկները ապահարկել, զեղչել են վանքին հատկացվող գյուղատնտեսական բոլոր հացահատիկային կուլտուրաների կոռային տուրքհասույթները:

Կոռի վրացերեն բնագիրն ուշագրավ օրինակ է, ուր ուղղակի ընդգծված է ավատատեր սյուզերենի և հողագործ գյուղացիների, համայնքի միջև կնքվող որոշման համաձայնագիր. «Մենք մանդատությունցես Իվանես և Խոշան՝ թողինք ձեր կոռեցիների վերին հանդամասի շարիաթը և վարի հանդամասից՝ միայն ցորենի դալայից է ազատված կոռեցի մարդը: *[Եւ] Դուք սահմանեցիք*, որ մեկ արոր ձեր եզով ու իր սարքով մշտապես մեզ համար լինի»⁷⁵: **Շարիաթ, դալայ** տերմինները Պ. Մուրադյանը մեկնաբանել է որպես առանձին հասույթներ, սակայն, ամենայն հավանականությամբ, դրանք պետք է ընկալվեն միևնույն տուրքային իմաստով, թեև տեքստաբան-փորագրողը մի դեպքում «**վերին հանդամասից**» տուրքահարկը արձանագրել է **շարիաթով**, իսկ մյուս դեպքում՝ «**վարի հանդամասից**» միայն ցորենի **դալայից** > **դալայով**, որը միևնույն բնահարկն է: Ասվածին կովան կարող է հանդիսանալ Օշականի պարոն Սահմատինի 1288 թ. արձանագրության օրենսդրական որոշումը. «Թուին ՉԼԷ ես պարոն Սահմատինս, որդի պարոն Աւետեացն, թողի զՅաւշականո գիացի և զդարմանի *զշարիատն զվերին և զներքի զամէն հանդի*»⁷⁶: Նմանատիպ երևույթի օրինակ է ընդգծել նաև պրոֆ. Հ. Մանանդյանը Անիի 1046-1050 թթ. Առոն մագիստրոսի բնագրում շարիատ տուրքահարկի հոմանիշ է համարել «պախտ» բնահարկը. «Բերի ոսկե մատանեաւ գիր ազատութեան վասն *պախտից տանց* քաղաքիս և թաստակին, զոր տային ամ յամէ»⁷⁷:

Համաձայն Կոռի բնագրի՝ «*դուք սահմանեցիք*», այսինքն՝ պատրոնի և համայնքի միջև եղել է համաձայնություն, պայման, ուր կնքվել է «համաձայնագիր, պայմանա-

⁷³ Վ. Հ. Բոդյան, նշված աշխ., էջ 247: Պրոֆ. Ս. Հակոբյանը վեցկին մեկնաբանում է. «Եթե մի քանի ընտանիքներ հարկադիր կերպով դուրս էին բերում մի քանի լծկան, այս պարագային կոռը կոչվում էր «վեցկե» կոռ», Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1964, էջ 112: Անընդունելի է վերոհիշյալ գիտնականների առաջարկվող սահմանումը, քանի որ «լծկանը» կարող են բերել համայնքի բազմաթիվ ընտանիքներ, և գործիքը գործի դնելու համար կպահանջվեր, ինչ խոսք՝ «խմբական աշխատանք», սակայն վարելու համար նախատեսված առարկա-գործիքը մեկն էր՝ ծանր կամ երեք զույգ լծկան ունեցող նախագութանը, որ շեշտվում է բառարաններում:

⁷⁴ Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 74:

⁷⁵ Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 101:

⁷⁶ Վիմական տարեգիր, էջ 130:

⁷⁷ Նույն տեղում, էջ 27, տարեթվի ուղղումը՝ ըստ Հ. Մանանդյանի, երկ.Դ. Երևան, 1981, էջ 154:

գիր», համաձայն որի համայնքը, ծուխը պարտավորվել է վերը շեշտված հարկերի, պարտության պահանջարկի, զեղջման դեպքում շարունակաբար կատարել՝ «մեկ արոր՝ իրենց եզով ու իր սարքով մշտապես մեզ՝ (պատրոններին) համար⁷⁸»։ Նկատելի է, որ ազատման, փրկագնման, ապահարկման երևույթը միջնադարյան Հայաստանում հեշտությամբ չի իրագործվել, հաճախ այն իրագործվել է փրկագնման դրամական մեծ գումարով։ Ուշագրավ օրինակ է հենց Կոշի տաճարի հարավային պատի հայերեն բնագրի հետևյալ սահմանումը «ՇԺ (1051) թվ. հայր Յոհանես, Մաղատին երդուեալ տանուտերքս, դատաւորն, աւագէրէցն, մանկեաւագն **թափեցին** զբնաջուր առուն :Մ: (200) **դահեկան գիր**, որ Աւագին տան»⁷⁹։ Նույնանման փրկագնման մասին է հաստատում նաև Հոռոմոսի վանքի 2 (1251) թ. բնագիրը՝ ըստ որի ավերակ ջրաղացը դրված է եղել գրավ։ «Ես Յովանէս մականունն Յիսիկ միաբանեցա սուրբ ուխտիս, յետ աւետման տաթարիս վանացս ջաղանիս աւեր և գրաւական էր, :Ն: **դահեկան էտու և ջաղացն թափեցին**» (ՍԱԲ 156, ՎՏ 95)։ Գեղարդավանքի XIII դ. նվիրատվական բնագրում ևս ընդգծված է թափել բայը, սակայն հավանական է, առնել-գնել իմաստով։ «Ես Ուսլունս միաբանեցա սբ. ուխտիս, էտու :2: **դահեկան և թափեցի** զԳառնոյ խոպանն» (ԳՀԽՊԳ48)։ Հաճախ ապահարկման իրողությունը կատարվել է՝ ի նկատի ունենալով նաև դավանակից լինելու հանգամանքը՝ «վասն միամտութեան նոցա»։ Այդ է վկայում Ավանի տաճարի 1285 թ. հիշատակությունը։ «Ես Դաւիթ, որդի Դեմէտրէ թագաւորին, թողի զԱւանայ զայգեաց շարէտն, վասն **միամտութեան սոցա**»⁸⁰։ Կարծեք թե Կոշի իրավատնտեսական բնագրի գուգահեռ օրինակն է Հառիճավանքի գավթի հյուսիսային պատի 7 տողանոց թերի արձանագրությունը՝ փորագրված մոտավորապես նույն ժամանակներում։ Եղծված և անստույգ վերծանությամբ այս բնագիրը, թեև անհասկանալի և անորոշ է, թե ինչ կապակցությամբ են ապահարկել այդ ծանր տուրքերը վանահայր Պետրոսը և վարդապետ Խաչատուրը, սակայն վերջիններս սահմանել են այսուհետ՝ «ոչ ինչ անասուն չստանան, և ոչ սերմացան, ոչ փեթակ, ոչ ոչխար», անեծքի բանաձևում ևս հոգևոր պետերը նգովք են ամրագրել՝ «[եթե] կաշառաւք հայր լինի գնոյն նգովքս առցե»⁸¹։

Գրավոր աղբյուրներում, կալվածագրերում տվյալներ են պահպանվել, ըստ որի այգիների տարածքը որոշվում է որթատունկերի քանակով⁸²։ Արճեշի Ս. Աստվածածին եկեղեցու 1291 թ. մի բնագրի համաձայն ոմն Խաչիկը նվիրաբերել է «Վ (3000) տակ» որթատունկ։ «Էտ Խաչիկն զայգին ի Գողիսն Վ տակ, էտ Աստաշին Մեթարն զիրեանց այգին Բ (5000) տակ»⁸³։ Այգիների տարածքը հաճախ որոշվում է նաև ոռոգման ջրի հոսքի տևողության քանակով (շաբաթական 1, 2 օր) կամ հոսող ջրի տրա-

⁷⁸ Պ. Մուրադյան, նշված աշխ., էջ 101։

⁷⁹ Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 100։

⁸⁰ Վիմական փարեցիր, էջ 127։

⁸¹ Հ. Շողազարյան, Հառիճավանքը և նրա վիմագրությունը, Էջմիածին, 1957, Ա, էջ 57։ Ձեռագիր, Ս. Բարխուդարյան, Հառիճ, անտիպ։ Անեծքի բանաձևում ասվածն առանձին հոլովվել է Կանոնագրքում և մասնավորապես Ձագավանի ժողովի որոշումներում։

⁸² Չ. Փափազյան, Այգիներն ու այգետեղերը ըստ հայերեն և պարսկերեն կալվածագրերի, Լրաբեր, 1982, 1, էջ 68։

⁸³ Ն. Սարգսյան, Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 268-269։

մագծով (բաժին, բահի ջուր)⁸⁴: Հենց այս իրողությունն է փաստում Արուճի տաճարի 3ԺԶ (867) վկայագիրը, ըստ որի դրկից գյուղերի միջև, գետակից կամ առվից, ջրօգտագործման նպատակով ծագած վեճը լուծվել է՝ «:Ա: և կէս Կոշա և :Ա: Արճո» օրերի քանակով, որտեղից էլ հետևություն. Կոշ գյուղը իր վարելահողով, այգիների տարածքով ավելի ընդարձակ էր: Հենց այդ խնդիր-պարագան էլ հարկադրել է տեղական բարձրաստիճան գործակալ Գրիգորին յուրաքանչյուր գյուղի շաբաթական ջրօգտագործման չափը սահմանել⁸⁵: Հետագոտողները շեշտում են, որ արորի հետ մեկտեղ Արագածոտնում գործելիս է եղել նաև գութանը, որ օգտագործվում էր նոր հողակտորներ և քարքարոտ հողեր վարելու համար: Միջնադարյան Հայաստանում, գրավոր աղբյուրներում, հոգևոր հաստատություններին նվիրված առքի և վաճառքի դրված տարածությունները «կոռային աշխատանքերը» երկրագործական պահանջներից ելնելով կիրառության մեջ է եղել *օրավոր* մակերեսի չափման միավորը⁸⁶: Ըստ ուսումնասիրողների՝ սկզբնապես *օրավար* վարելահողի մակերեսի չափը կիրառվել է *արորի* համար, ապա պատմական զարգացմամբ այն անցել է *գութանին* և հաշվարկվել նրա համար⁸⁷:

Կոշի վրացերեն վիմագիրը տարեթիվ չունի, և ակադ. Ա. Շանիձեն ժամանակ սահմանում է 1214-ից մինչև 1219 թթ., իսկ Պ. Մուրադյանը՝ 1214-1215 թթ.⁸⁸:

Է) Հիշատակագրողը առանձնակի կարևորվում է *«Պարոնութի Մանուչէի, ի տերութի Սէրոբին»* արտահայտությունը: «Պարոնութի Մանուչէի» արտահայտության անձնավորությունն ամենայն հավանականությամբ IX դարավերջի և X դարասկզբի սելջուկյան իշխան Փալտունի թոռ Մանուչեն է: Ըստ պատմիչ Վարդան Արևելցու՝ այս գործարքը կատարվել է 1118 թ.: Իսկ ակադ. Բ. Առաքելյանը, անդրադառնալով պատմական այդ իրողությանը, գրում է, որ այն տեղի է ունեցել 1072 թ.⁸⁹: Պատմական այս իրողության կապակցությամբ Գնել Գրիգորյանը, համադրելով Վ. Միսրոսկու և Լ. Գյոզալյանի մեկնաբանությունները, գրում է հետևյալը. «Քեյ Սուլթանը սերում էր քրդական Շադադյան տոհմից, որի նախնիներից Աբուլ-Ասվարը 1072 թ. Անին գնել էր սելջուկյան սուլթան Ալի-Աբսլանից և տվել իր որդուն՝ Միսուչիիին, որ հայ աղբյուրներում հայտնի է Մանուչե անունով»⁹⁰: Ողջունելի է, որ հեղինակը պատմական այս իրողությունը քաղել է օտար սկզբնաղբյուրից⁹¹, հետևելով անվանի դասական գիտնականներին⁹²: Ն. Մառը նույնպես շեշտում է, որ Անին գնել է Դվինի ամիրա Ա-

⁸⁴ Զ. Փափազյան, Նշված աշխատությունը, էջ 68:

⁸⁵ Մ. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 41:

⁸⁶ Ռ. Զ. Վարդանյան, Օրավարը որպես հողի մակերեսի չափման միավոր, ՊԲՀ, 1968, 2, էջ 191: Վ. Զ. Բոդյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 319, Հեղինակն օրավար տերմինը յուրահատուկ է համարում Արևելահայաստանին, իսկ Արևմտահայաստանում գործածվում էր արտավար անունը: Գիտնականը շեշտում է նաև, որ «Գնունիքի Այլուր գյուղում օրավար բառին համագոր էր *գութան* բառը, իսկ Բորչալույում՝ *հախկը*»:

⁸⁷ Ռ. Զ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 195:

⁸⁸ Պ. Մուրադյան, նշված աշխ., էջ 104:

⁸⁹ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. 2, Երևան, 1964, էջ 78:

⁹⁰ Գնել Գրիգորյան, Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին IX-XIV դդ., էջ 34:

⁹¹ Լ. Մելիքսեթ Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 1, Երևան, 1934, էջ 207:

⁹² Н. Я. Мартынов, Ани, էջ 32, Կ. Զ. Բասմաջյան, Անիի անցեալն ու ներկան, Վենետիկ, 1923, էջ 29, Ա. Հով-

բուսավարը⁹³։ Անշուշտ, երկու հեղինակների վկայակոչած աղբյուրը նույնն է՝ «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 1, էջ 207», որը մի փոքր տարբերվում է պատմիչ Վարդան Արևելցու հայտնած վկայությունից։ Էականը երբեք էլ այն չէ, թե օտար հեղինակի կամ մատենագրի, Վարդան Արևելցու հաղորդած տեղեկություններից որն է ստույգ։ Բիարկե կարևոր է, թե ի վերջո ով է գնել Անին, հայրը՝ Աբուլ-Ասվարը, թե որդին՝ Փալտունը, սակայն առաջնայինն այն է, որ քաղաքի նոր *սեփ* են դարձել Շադադյանները։ Ուշագրավ կլիներ, եթե օտար աղբյուրները լրացման կարգով հաղորդեին, որ սուլթանի արշավանքի մասնակից զորապետն Աբուլ-Ասվարն էր, կամ որդին՝ Փալտունը, որից կարելի էր հետևեցնել տարեթվային տարբերակներ։ Անիի պատմական ճակատագրի համար կարևոր նշանակություն ունեցած այս պատմաիրավական գործարքի կապակցությամբ ուշագրավ եզրահանգում է կատարել պրոֆ. Թ. Հակոբյանը՝ գրելով. «ավերված Անիի հանձնումը Շադադյաններին պատմատեսական առումով չի կարելի վաճառք համարել, դա Ալփ-Արսլանին տրվել է իբրև *սուկ նվեր* Անիում կառավարիչ նշանակելու համար»⁹⁴։ Հարկ ենք համարում անդրադառնալ մատենագիր Վարդան Արևելցու վկայության «*առնու*» և «*սեփ*» բառերի կոնտեքստային իմաստաբանական տարբերությանը, որով կփորձենք արծարծել պատմաիրավական այդ եղելության ուշագրավ դրվագների առանձնահատկությունները։

Անշարժ գույքի առք ու վաճառքի բազում օրինակներ են ավանդված մատենագրական և վիմագրական բնագրերում, որոնցից մի քանիսը փորձենք վկայակոչել։ Աշոտ Ա Բագրատունու դուստր մեծ իշխան Վասակ Սյունեցու կինը՝ «մեծ թագուհի» Մարիամը, կառուցելով Առաքելոց և Աստվածածին եկեղեցիները, զարդարում է այն «մեծամեծ սպասուք», գնում. «զգեօղն Շողուագայ ընդ 60000 դրամի, ազատ յամենայն աշխարհական հարկաց և գեօղ մի ի Մագազ գաւառի ընդ 3000 դահեկանի», ընծայելով եկեղեցիներին՝ որպես «սեպհական ժառանգութիւն»⁹⁵։ Հաջորդ ուշագրավ օրինակը Ն. Գետիկի վանքը, վանքապատական գյուղերը և մյուս կալվածքները, Կարինից գաղթած մեծահարուստ Ումեկի կողմից գնած, Ն. Գետիկի վանական համալիրի Աստվածածին եկեղեցու գործարք հիշատակագիրն է. «Ես Ճարս, իմ հայր Ումեկն գնել էր զԳետիկ ի :ԽՌ: (40000) կարմիր դուկատի, ի թվին ՉԼԲ (1283)»⁹⁶։ Բերված օրինակներից կարելի է հետևեցնել, թե միջնադարում որքան թանկ է արժեցել անշարժ գույք կալվածքը, հայրենիքը։ Եթե Սյունյաց իշխանուհի Մարիամը մի դեպքում, ավելի հարուստ գյուղը «ի հագարացի մարդկանէ» գնում է 60000 դրամ և մյուս՝ 3000 դահեկան, իսկ մեծահարուստ Ումեկը «Ն. Գետիկի վանքը, վանքապատական գյուղերը և մյուս կալվածքները, 80000 կարմիր դուկատով», ապա, ինչ խոսք, Անիի պես հայտնի մեծ, «հարյուր հազարից ավելի» բնակիչ ունեցող քաղաքը, իր բազմաթիվ եկեղեցիներով չէր կարող վաճառվել կամ գնվել «ոսկիակուտ նկարս ծաղկոցի» արժեքով, սակայն չպետք է աչքա-

հաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, էջ 148149:

⁹³ **Н. Я. Марр**, Ани, էջ 32:

⁹⁴ **Թ. Խ. Հակոբյան**, Անիի պատմություն, Երևան, 1982, էջ 41:

⁹⁵ **Ստեփաննոս Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 173-174:

⁹⁶ Դիվան հայ վիմագրության, պրակ 6, կազմ. **Ս. Ա. Ավագյան, Հ. Ռ. Զանփուլադյան**, Երևան, 1977, էջ 71:

թող անել նաև այն պարագան, որ «ոսկիակուռ նկարս ծաղկոցի»-ին սուլթանին տրվելիք նվեր էր, և այն երբեք էժանագին չէր կարող լինել: Թանկարժեք իրերի քանակական կոնկրետ արժեչափը վիմագիր և մատենագիր սկզբնաղբյուրներում դժվար է որոշել, զորօրինակ Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը գնելով «զջուրն ի լեռնէ Ձագեձորոյ» Վարարկան ջուր-առուն բերելով Տաթևի վանք՝ վճարել է 12000 դրամ և «**մի պատուական գոհար և բազում ծախիւք**»⁹⁷: Ի վերջո դժվար է որոշել, թե որքան գումար է վճարվել երկրամասի տեր Փիլիպպե իշխանին՝ իրականացնելու այդ դժվարին աշխատանքը, անորոշ է «**մի պատուական գոհար և բազում ծախիւք**»-ի արժեչափը: Ուստի Վարդան Արևելցու հաղորդած կոնտեքստի «առնու» բայը կարծում ենք՝ պետք է ընկալվի ոչ թե գնել, առք ու վաճառք ուղղակի իմաստով, այլ Փալտուն ամիրան, լինելով սուլթան Ալի-Արսլանի զինակից լավագույն զորապետներից մեկը իր նվիրված ծառայության դիմաց, հատուցման կարգով, որպես ռազմընծա ստացել է Անին իր ողջ մերձակա տարածքներով. կամ ավելի ազդեցիկ, մերձակից լինելով սուլթանին՝ առել, գնել է Անին՝ «ոսկիակուռ նկարս ծաղկոցի»-ով: Վերջինս իր հերթին՝ «առաքէ», **նշանակել, կարգել է** Մանուչեին՝ իր թոռանը, որպես պուգերեն «տէր» իշխան Անիի: Վարդան Արևելցու վերոհիշյալ կոնտեքստից կարելի է հետևեցնել, որ Գրիգոր Ապիրատյանը Մանուչեի կողմից նշանակված էր Անիի վերակացու կառավարիչ. «որպես և մեծաւ հանդիսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր ի ներքս զԳրիգոր զորդի Վասակայ, զթոռն Ապիրատիւն, զոր ասեն ունել ի գլուխ ազատաց կանանցն հինգ հարիւր թագս երևելիս, զի տէր էր մեծ զօրաց և բազում ազատաց»⁹⁸: Շաղաղյանների ժառանգական հավակնությունները Անիի նկատմամբ օրինականացել են հայոց Բագրատունյաց թագավորական տան հետ ազգակցական և խնամիական կապով⁹⁹:

Մատենագիր Վարդան Արևելցու վկայությամբ քաղաքը ավելի է ծաղկել, շենացել Մանուչեի իշխանության ժամանակաշրջանում, քան նախկինում. «Շենացաւ քաղաքն Անի ոչ ինչ պակաս քան զառաջինն»: Պատմիչի այս խոսքը պետք է ընկալել վերապահումով, քանի որ 1064 թ. սելջուկները Ալի-Արսլանի զլիավորությամբ պաշարեցին Անին, գրավելով քաղաքը՝ սոսկալի ավերեցին: Մի ձեռագիր հիշատակագրի համաձայն՝ Ալի-Արսլանը գրաված Անիի մերձակայքում փորում է մի խանդակ և մորթագերծ անում Ռ (1000) մարդու. «Մահու Տողրիլին եղև ինքն սուլթան (Ալի-Արսլան) և դարձեալ եկն ՃՌ (100000) առ զԱխլքալաք և զՍամշոյտլէ և զԱնի: Եւ Ռ (1000) այր զենու ի փոս մի և լուանայ յարիւնս նոցայ, զոր ասեն, թե զոհ մեռելոց իւրոց արար զայն»¹⁰⁰: Դեպքերին ականատես Արիստակես Լաստիվերտցին այսպես է ներկայացնում քաղաքի հերոսական ժողովրդի դիմադրությունը սելջուկ հրոսակներին. «Բազում բիրուք և անթիւ սպառագինօք ջանայր, հնարէր զի գդուռն երկաթի և զնիզս ի բաց իվեցէ», սակայն ապարդյուն «անյոյս լեալ յաղագս ամրո Քաղաքի ժողովրդի» և իշխանավոր ավագանու միջև ծագած երկպառակության պատճառով՝ սելջուկները խուժում են քաղաք՝ սփռելով մահ ու ավեր¹⁰¹: Նույն պատկերն է ներկայացնում նաև

⁹⁷ Մտեփանես Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 254:

⁹⁸ Վարդան Արևելցի, Տիեզերական պատմութիւն, էջ 103:

⁹⁹ Ա. Հովաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, էջ 148-149:

¹⁰⁰ Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ, հ. II, կազմ. Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 133:

¹⁰¹ Պատմութիւն Արիստակէայ վարդ. Լաստիվերտցոյ, Թիֆլիս, 1912, էջ 110:

մատենագիր Մատթեոս Ուռհայեցին. «Բազմութին քաղաքին նման դալար խոտոյ ի հունձս ածէին և քարակոյտս ի միմեանց վերայ կոյտ արարին»¹⁰²: Անի քաղաքի կոռուստներն այնքան մեծ են եղել, որ այդ արհավիրքների վրա 80 տարի անց ողբացել է նաև Ներսես Շնորհալին իր «Ողբ Եդեսիոյ» պոեմում: Տվյալ ժամանակաշրջանի մասին ուշագրավ բնութագրական հետևության է հանգել նաև Թորոս Թորամանյանը՝ շեշտելով, «Շետտատյաններու շրջանին մեջ ճարտարապետության և գեղարվեստներու զարգացման տեսակետով առանձնապես աչքի ընկնող ոչինչ չեմ գտներ: Ես այստեղ Շետտատյաններու անունով կարող եմ քանի մը արվեստագիտական այլանդակություններ և պատմական վշտառիթ անցքեր»¹⁰³: Ն. Մառն այն կարծիքն է հայտնել, որ X-XI դարերի հայ ճարտարապետությունը կրել է սելջուկյան մուսուլմանական ճարտարապետության ազդեցությունը: Շաղաղյանների տիրապետության ժամանակներն ըստ նրա եղել են «ճարտարապետական մշակույթի առաջընթացի շրջան»¹⁰⁴:

Շաղաղյանների 125 տարվա իշխանության ժամանակաշրջանում կառուցված ճարտարապետական հոգևոր շինությունները և վիմագիր սկզբնաղբյուրները խոսում են Անիում նշանակալից մահմեդական ազգաբնակչության տարրի առկայության մասին, որն իր ուրույն հետքն է թողել քաղաքամայր Անիի թե՛ քաղաքական և թե՛ մշակութային կյանքի վրա: Սակայն անհնարին է համաձայնել անվանի գիտնականի վերոհիշյալ կարծիքին, թե «Շաղաղյանների տիրապետության ժամանակաշրջանի «ճարտարապետական մշակույթի առաջընթացը» կարող է ստվեր ձգել Բագրատունյաց ճարտարապետական բացառիկ մտահղացումների և ձեռքի անգուգական ստեղծագործությունների արգասիքներին: Հատկանշական է ավերակ Անի այցելած Լեոյի վկայությունը, որ մահմեդական տիրակալները խնայել են Անիի գեղեցկությունը, հմայքը, գայթակղվել նրա հարստությամբ՝ «կոտորելուց ու քանդելուց հետո նրանք շինել ու զարդարել են քաղաքը իրենց օգտի համար»: Ավարտելով իր խոսքը՝ հայագետը ցավով նկատել է, որ «կանգուն, շեն ու վաճառաշահ Անին այլևս այն չէր կարող լինել հայի համար, ինչ էր Բագրատունիների ժամանակ»¹⁰⁵: Ուշագրավ հետևության է հանգել նաև հայ ճարտարապետության գիտակ Ն. Մ. Տոկարսկին՝ ընդգծելով, թե սելջուկյան սուլթան Ալի-Արսլանի այդ ավերիչ արշավանքի հետևանքները այնքան մեծամասշտաբ էին, որ «Անին այլևս ուշքի չեկավ, և հետագա կառուցումները կատարվել են հին ճարտարապետական կոթողների վրա»¹⁰⁶: Անժխտելի է, որ հայ ճարտարապետ, քարգործ-վարդպետները հայրենական մոնումենտալ ճարտարապետության մեջ օգտագործել են օտար տարրեր՝ սիրաշահելով ժամանակի տիրակալներին:

Մանուչեն Դվինի ամիրա Աբու-լ-Ասուարի որդին էր, իսկ մայրն էր Հովհաննես-Սմբատ թագավորի եղբոր՝ Աշոտ Բագրատունու դուստրը: Ազգակցական այդ կապը

¹⁰² **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 148: **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Փարիզ, 1859, էջ 7677:

¹⁰³ **Թորոս Թորամանյան**, Կյոթեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Ա, Երևան, 1942, էջ 339:

¹⁰⁴ **Н. Я. Марр**, Ани, столица древней Армении, էջ 209-210: Հեղինակի հայտնած վերոհիշյալ կարծիքը բազմիցս մերժվել է նյութական մշակույթի գիտնականների կողմից:

¹⁰⁵ **Լեո**, Անի, Երևան, 1963, էջ 17:

¹⁰⁶ **Н. М. Токарский**, Архитектура Армении IV-XIV вв, Ереван, 1961, стр. 247.

Մանուչեի սերունդին թույլ է տրվել իրեն համարելու իրավական ժառանգը և հաջորդը՝ Շիրակի ու Անի քաղաքի¹⁰⁷։ Մատենագիր Վարդան Արևելցու հավաստմամբ նա իրեն շրջապատել էր «ի գլուխ բազում ազատաց, ի ներքս զԳրիգոր գորդի Վասակայ, զթոռն Ապիրատին»¹⁰⁸։ Պահլավունյաց տոհմի Ապիրատյան ճյուղից էր Գրիգորը, որը 1093 թ. հիշվում է Շիրակի և Անիի իշխան, քաղաքի անմիջական ղեկավարը¹⁰⁹։ Պատմիչի հավաստմամբ վերջինիս շքախմբի կանանց գլուխը զարդարում էր «հինգ հարիւր թագս երևելիս, զի տէր էր մեծ զօրաց»¹¹⁰։ 1082 թ. Մանուչեի համաձայնությամբ Հաղբատում կաթողիկոս է ձեռնադրվում Ապիրատյան Գրիգոր իշխանի եղբայր Բարսեղը, որի նստավայրն է դառնում Անի քաղաքը¹¹¹։ Հայոց ռազմական ուժերը զորավար Գրիգոր Ապիրատյանի ղեկավարությամբ Արշարունիք գավառի Կաղզվան գյուղում 1099 թ. ջարդում են թուրքական հրոսակներին։ Ճակատամարտում իշխան Ապիրատյանը դժվարին իրավիճակում փրկվում է ամիրա Մանուչեի կյանքը։ Սակայն ետդարձին անվեհեր զորավարը զոհվում է՝ նետահարվելով դարանակալած թուրքի ձեռքով։ Ամիրան մեծ շուքով քաջ ասպետի դին ամփոփում է Կեչառիսի վանքում։ Ըստ Հր. Բարթիկյանի՝ Մանուչեն մահացել է 1118 թ.¹¹²։ Սակայն Հ. Մանանդյանը կարծում է, որ Մանուչեի ամիրայության ժամանակաշրջանը Անիում տևել է 1072 թ. մինչև 1110 թ.¹¹³։ 1173 թ. արձանագրությունում «Գարիանուն» մականունով է հիշվում Մանուչեն. «Հոգևոր տեառն Բարսեղի, հայոց կաթողիկոսի և յամիրապետութեան բարիանուն սուլդանի որդի ամիր Մահմուտի թոռն Մանուչեի, յամի ՌԻԲ»¹¹⁴։

ը) Տարակուսելի է բնագրի տարբերվելը։ ԹՎԻՍ ՀԱՅՈՑ :ՆԼ։ Եթե թվականը վերծանենք :ՆԼ։ (981), ապա այդ տարբերվելը համընկնում է Բագրատունյաց հարստության՝ Սմբատ Բ Տիեզերակալի թագավորության ժամանակաշրջանին։ Իսկ եթե վերծանենք հարյուրավորը՝ չ-ը շղագիր, ապա թվականը կլինի 1281։ Այդ թվականին Անիի պատրոնը Շադադյանները չէին։ Մեզ թվում է, որ հարյուրավորը պետք է վերծանել շղագիր շ (1081)։ Հավանական է՝ փորագրիչը շ շղագիրը փորագրել է հակառակ։ Այդ տարբերվելը համընկնում է Մանուչեի իշխանավարման ժամանակաշրջանին։

թ) «Ի Տ[Է]ՐՈՒԹԻ ՄԷՐՈՒԲԻՆ»։ հավանական է Սերոբբ տեղական իշխանավորներից է, պալատական պաշտոնյա ծառայող¹¹⁵։ Տեկորի 1036 թ. «ՆՁԵ թ. Հայոց ի թագա-

¹⁰⁷ Ն. Մանանդյան, հ. Գ, Երևան, 1977, էջ 87։

¹⁰⁸ Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, էջ 108։

¹⁰⁹ Ստեփաննոս Օրբելեան, Պատմություն նահանգին Սիսական, էջ 320։ Բ. Առաքելյան, Քաղաքները և արքեպիսկոպոսները Հայաստանում IX-XIII դդ., հ. 2, էջ 164։

¹¹⁰ Հ. Մանանդյան, հ. Գ, Երևան, 1977, էջ 87։

¹¹¹ Վարդան Արևելցի, էջ 108։ Հայ ժողովրդի պատմություն ակադեմիական բազմահատորյակի III հ. վկայված է. 1076 թ. Փիլարտոս իշխանը, Մարաշի մոտ գտնվող Հոնի քաղաքում հիմնելով նոր կաթողիկոսություն, բուն Հայաստանում նույնպես, Կյուրիկեի գլխավորությամբ, Գրիգոր Ապիրատյանի եղբոր՝ Բարսեղ Պահլավունուն, Վկայասերի համաձայնությամբ՝ 1081 թ. Հաղբատում օծում են կաթողիկոս, էջ 479։

¹¹² Մատթեոս Ուռայեցի, Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածականը և ծանոթությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 340, 341։

¹¹³ Հ. Մանանդյան, հ. Գ, Երևան, 1977, էջ 88։

¹¹⁴ Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 85։

¹¹⁵ Ռ. Ի. Մաթևոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 180։

տրություն Յիվանէսի շահնշահիի և հայրապետութե տեառն Պետրոսի վերադիտողի և ի տէրութե Սարգսի արեւելից դուկսի»¹¹⁶ բնագրի «**ի տէրութե**» արտահայտության համար պատմաբան Ռ. Մաթևոսյանը գրում է, որ Սարգիսը չէր կարող ունենալ «տէրութիւն» որպէս գերադասություն ֆեոդալների նկատմամբ, «տվյալ դեպքում այն պետք է հասկանալ որպէս շահնշահ Հովհաննէսից ստացած արքունի ծառայություն»¹¹⁷: Այս դեպքում, ըստ պատմաբանի, պետք է ընդունենք, որ Բագրատունյաց արքայական տունն ունեցել է **դուքսի** պաշտոն-գործակալություն, որն անհնար է: Արձանագրության վկայությամբ «արեւելից դուկս»՝ բյուզանդական պաշտոնյա Սարգիսն, ոչ թե ենթակա, ծառայող-գործակալ է, այլ, սեփականատիրական իրավունքով հայրենիք, կալվածքի ավատատեր, բայց ոչ Բագրատունյաց արքայական տան ծառայող, թագավորին ենթակա պաշտոնյա:

«**ի տ[է]րութի Սերոբին**» արտահայտությունը կարելի է մակաբերել նաև հոգաբարձու, հովանավոր տերմինով, որը վանքի սեփականատերը չէր, սակայն վերջինս օգտվում էր միաբանության եկամուտներից և հոգում նրա անդամների պետքերը:

Այսպիսով, խնդրո առարկա վիմագիրը կարևորվում է ոչ միայն գրության աչքի զարնող վայելչագրությամբ, այլ նաև հետաքրքիր բառ-տերմինով, պատմական նշանավոր անձի հիշատակումով:

¹¹⁶ Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 134,135:

¹¹⁷ Ռ. Ի.Մաթևոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 180:

ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԸ» ՈՐՊԵՍ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ

(Դատաստանագրքի հանդես գալու նախադրյալները, պատճառները,
ստեղծման աղբյուրները)

Միջնադարյան Հայաստանի քաղաքական-իրավական միտքն իր ծաղկմանը հասավ օրենսդիր և իրավագետ, եկեղեցական և հասարակական-քաղաքական գործիչ, մանկավարժ և առակագիր, անկախ Հայաստանի ջատագով, խոշոր մտածող, գիտնական Մխիթար Գոշի աշխատություններում: Գոշը մեծ հեղինակություն էր վայելում ժամանակի պետական ու քաղաքական այրերի շրջանում: Նա Զաքարե (ամիրսպասալար) Երկայնաբագուկի խոստովանահայրն էր ու խորհրդատուն: Մխիթար Գոշի գրչին է պատկանում շուրջ մեկ տասնյակ աշխատություն: Թվենք դրանցից մի քանիսը՝ «Համառօտ մեկնություն մարգարեությանն Երեմիայի», «Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա», «Յայտարարություն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ» աստվածաբանական աշխատությունը, «Առակք», «Շարք հայրապետացն Աղուանից»-ը և այլ աշխատություններ:

Թվարկված աշխատությունների ցանկում բացառիկ արժեք է ներկայացնում «Գիրք Դատաստանի»-ն: Այն հայ միջնադարյան իրավունքի գլուխգործոցն է և որպէս այդպիսին առաջնակարգ տեղ է գրավում աշխարհի ճանաչված օրենսդրական հուշարձանների շարքում: Գոշը դատաստանագիրք կազմելու մասին սկսել է մտածել 12-րդ դարի 80-ական թվականներից: Այդ խնդրանքով նրան է դիմում Աղվանից Ստեփանոս Բ կաթողիկոսը, որի երկար թախանձանքներից հետո մեծանուն իրավագետը ձեռնամուխ է լինում ազգային օրենսգրքի կազմմանը: «Հայոց թվականության 633-ին (1184 թ.) ձեռնարկելով «Գիրք Դատաստանի»-ի կազմումը՝ Գոշը ժամանակի իրավահարաբերություններին համահունչ դարձնելու համար երկար տարիների ընթացքում կատարելագործում էր այն: Նա հավատում էր, որ «Դատաստանագիրքը» իրենից հետո մշտապես կհամալրվի իմաստուն մարդկանց կողմից քննվող նորագույն դատական գործերով»¹:

Գոշի «Դատաստանագիրքը» կազմված է նախադրությունից (նախաբան), եկեղեցական կանոններից և աշխարհական-քաղաքացիական օրենքներից: «Դատաստանագրքի» նախաբանը ունի 11 գլուխ: Նախադրության Բ գլխում Մխիթար Գոշը Դատաստանագիրք գրելու անհրաժեշտությունը բացատրում է 12 պատճառներով: Նշենք դրանցից մի քանիսը՝

1. հայերիս բազում անգամ պարսավել են թե՛ այլադավանները և թե՛ քրիստոնյաները, որ մենք գրավոր դատաստան-դատաստանագիրք չունենք,

¹ Ռ. Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան, Երևան 2001, գիրք 1, էջ 338:

2. ծուկության պատճառով մարդիկ չեն վարժվում օրենսգիտության մեջ, անգիտակ են օրենքներին, հետևապես նրանց որոշումներն էլ ճիշտ չեն կամ շեղվում են օրենքից, ուստի **«կամեցաք գրով դատաստանիս զնոսա իբրև ի քնոյ զարթուցանել»²,**
3. Մովսիսական օրենքները, մարգարեների խոսքը և Ավետարանը մեկ անգամ արդեն տրված լինելով, այդպես էլ մնացել են անշարժ, քարացած. մինչդեռ մարդկանց վարքն ու բարքը տարբեր է և փոփոխվում է ժամանակի ընթացքում, ըստ ժողովրդի և ըստ երկրի: Նշված օրենքները այդ հանգամանքը հաշվի չեն առել: Դատաստանագիրք է պետք և այնպիսին, որը նկատի ունենա այդ շատ կարևոր հանգամանքը³,
4. Դատաստանագիրքը գրվում է, որպեսզի հայերը այն չունենալու պատճառով չդիմեն այլազգիների, որ միևնույն է թե՛ մահմեդական դատարաններին: Եվ այսպես, օտարազգիները պարսավում էին հայերին, որ նրանք չունեն Դատաստանագիրք, հայերը զգում են Դատաստանագրքի պակասը և այդ պատճառով իրավացի են համարում հանդիմանությունը:

Ինչպես պրոֆ. Խ. Սամվելյանն է նշում. «Մխիթար Գոշը խորթ չէր տիրապետող ֆեոդալական դասակարգին. նա միշտ շփվում էր այդ դասակարգի հետ, հեղինակություն վայելում այնտեղ, և ինքն էլ նմանապես պատկանում էր հոգևոր ֆեոդալականությանը՝ վարելով վանահոր և այլ պաշտոններ: Հիրավի, Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» միանգամայն ծառայում էր հայ ֆեոդալականության ազգային միտումներին՝ իր իրավաբանական նորմերի բովանդակությամբ: «Դատաստանագրքի» բոլոր հոդվածներում կարմիր թելի պես անցնում է ազգային տարբերակման գաղափարը, ուր հայը հակադրվում է «այլազգուն», ուր իրավական գերակշռությունը պատկանում է հայությանը, հանձին ավատական դասի և դրա «այլազգիներից» իրավաբանական պաշտպանության միջոցները⁴:

Հիմնական աղբյուրները, որոնք Գոշն օգտագործել է «Դատաստանագիրքը» գրելիս «Նախադրության» Ժ գլխում արված իր իսկ խոստովանությամբ Աստվածաշնչյան օրենքներն են և եկեղեցական կանոնները: Գոշը մեկ առ մեկ թվում է իր օգտագործած աղբյուրները՝

1. Բնավորական օրենք. Այսպես է անվանում «Դատաստանագրքի» հեղինակն այն օրենքները, **«զոր ունէին նահապետքն Աբրահամ և այլքն առանց գրոյ, զոր ունէին զնոյն և հեթանոսք...»⁵:** Բնավորական օրենք ասելով, երբեմն էլ այն բնորոշելով «օրենք» տերմինով՝ Մխիթար Գոշը նկատի ունի իրավունքի զարգացման ամենասկզբնական աստիճանը, որում իրավաբանական նորմերը բանավոր էին, իսկ օրենքներն առաջին անգամ գրի են առնվել Մովսես մարգարեի ձեռքով, երբ նա դրանք ստացավ Աստծուց՝ 10

² Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Երևան 1975, էջ 3:

³ Դատաստանագրքի Բ խմբագրության մեջ այդ կետը սահմանված է այլ կերպ:

⁴ Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատոր I, Երևան 1939, էջ 79-80:

⁵ Բատաստանց Վ., Մխիթար Գոշի Դատաստանագիրք, Յառաջաբանությամբ հրատարակողի, Վաղարշապատ, 1880, գլ. Ժ, էջ 65:

պատվիրանների տեսքով: Այստեղ բնավորական օրենքի մեջ պարզապես պետք է տեսնել այն, ինչ որ մենք անվանում ենք սովորութենական իրավունք, որի մասին Գոշը գրում է. **«Աստուած ի սկզբանէ ի բնութիւն մարդոյն սահմանեաց ընտրել զիրաւացի»**⁶, այսինքն՝ առաջին օրենքը Աստծուց տրվել է մարդու բնությանը, ուստի և այդ նախնական օրենքը բնավորականն է:

2. Քրիստոնյա ազգերի օրենքները, **«գոր լուաք և տեսաք ի նոսա բարուք դատաստանս»**⁷: Մխիթար Գոշը չի հիշատակում, թե որ Քրիստոնեական ազգերի օրենսդրություններից է օգտվել, սակայն դժվար չէ կռահել, որ առաջին հերթին դրանք եղել են Հայաստան մտած օրենսդրությունները, այն է՝ ասորա-հռոմեական դատաստանագիրքը, որը մեծ մասամբ կրում է՝ **«Օրենք յաղթող թագաւորացն Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լևոնի»** վերնագիրը և ապա՝ հունա-բյուզանդական օրենքները:
3. Մահմեդական իրավունք. Մահմեդական օրենքներից հեղինակը նկատի է առել **«ոչ գոր նոքա ուսան ի Մահմետայ զախտաւոր բանս կամ զդատաստանս, այլ գոր առին ի Մովսիսի օրինացն՝ մեք զայնս ընտրեմք և առնումք»**⁸: Մխիթար Գոշին դժվար չէր օգտվել մահմեդական իրավունքից, քանի որ Հայաստանն այն ժամանակ շարունակում էր տակավին գտնվել մահմեդական իրավական ինստիտուտների ազդեցության ներքո, որ սկսվել էր արաբական տիրապետության շրջանից և պահպանվել սելջուկյան տիրակալության օրերին, չնայած որ Դատաստանագրքի հորինման պահին Հայաստանն արդեն թոթափել էր մահմեդական իշխանությունը և Զաքարյանների ավատատիրական իշխանության տակ էր գտնվում: Ըստ Խ. Սամվելյանի՝ **«Բավական է միայն նշել, որ այդ ժամանակ վարչապետական ու հարկային տերմինաբանության մեջ մեծ չափերով պահպանվել և իշխում էին արաբա-թյուրքական անուններ, ինչպես այդ ակներև է վիմագիր ու մատենագրական հուշարձաններից»**⁹:
4. Հին և Նոր Կտակարան. Մխիթար Գոշը գրավոր օրենք է համարում Աստվածաշունչը՝ **«յամենայն իսկ տառից ի Հնոց եւ ի Նորոց առն լի է զիմաստս եւ զխրատս, զի եւ ամենայն Կտակարանք զի՞նչ այլ ինչ է, եթէ ոչ խրատ դատաստանի»**¹⁰: Որպես աղբյուր Հին Կտակարանից նա հիմնականում օգտվել է «Ելից», «Դևտացոց» և «Երկրորդ օրինաց» գրքերից:
5. Մխիթար Գոշը Դատաստանագրքի համար ամենամեծ չափերով հոդվածներ է քաղել **«ի կանոնաց գրոց»**. **«... զի եւ անդ գտանի ոչ միայն զարութեամբ ընտրել դատաստան, այլ եւ յատուկ լինել բան դատաստանի»**¹¹:

1964 և 1971 թվականներին Վազգեն Հակոբյանի աշխատասիրությամբ հրատարակ-

⁶ Նույն տեղում, Նախ., Ա, էջ 6:

⁷ Նույն տեղում, Նախ., Ժ, էջ 65:

⁸ Նույն տեղում:

⁹ Խ. Սամվելյան, նշվ. աշխ., հատոր I, էջ 82:

¹⁰ Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ. Խ. Թորոսյանի, էջ 23:

¹¹ Նույն տեղում:

վել են «Կանոնագիրք Հայոց»-ի երկու հատորները: Վ. Հակոբյանը երկրորդ հատորում նշում է՝ «Կանոնագիրք Հայոց»-ի առաջին հատորը բովանդակում է Հովհան Օձնեցու խմբագրությունը (8-րդ դար), իսկ նույնի երկրորդ հատորը՝ X-XI դարերի խմբագրություններում Հովհաննես Իմաստասեր Օձնեցուց հետո Կանոնագրքում կատարված ավելացումները¹²: Հովհան Օձնեցին Միջնադարյան Հայաստանի եկեղեցու, իրավագիտության, մատենագրության, մշակույթի և հասարակական-քաղաքական այն նշանավոր դեմքերից է, որ բարձր գնահատանքի և մեծարանքի է արժանացել դեռևս իր կենդանության օրոք և դարեր շարունակ իր պատվավոր տեղն է զբաղեցնում հայ ազգային-ազատագրական շարժման, դիվանագիտական ու հասարակական-քաղաքական մտքի հսկաներ Մովսես Խորենացու, Եղիշեի, Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Մխիթար Գոշի, Դավիթ Ալավկա որդու և այլոց կողքին¹³:

¹² Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հատոր II, Երևան 1971, էջ 7:

¹³ Ռ. Ավագյան, նշվ. աշխ., Գիրք I, էջ 143-144:

ԱԶՆԻՎ ՀԱԿՈՐՑԱՆ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՐՈՒՆԻ ՏՈՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Տերունի են այն տոները, որոնք նվիրված են մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Աստվածամորը և ունեն նախատոնակ ու մեռելոց:

Քրիստոնեական առաջին և կարևորագույն տոները Սուրբ Ծնունդն է: Այս տոնն իր մեջ բովանդակում է Քրիստոսի ծնունդը, Հայտնությունը և Մկրտությունը: Եկեղեցում այն նշվում է հունվարի 6-ին:

Դեռևս 5-րդ դարում Հռոմեական Եկեղեցու կողմից ընդունվեց Քրիստոսի ծնունդը նշել դեկտեմբերի 25-ին՝ հեթանոսներին քրիստոնեական տոնից հեռու պահելու նպատակով: Սակայն այն հետագայում ընդհանրացավ, և այսօր գրեթե ողջ քրիստոնեական աշխարհը Քրիստոսի ծնունդը նշում է դեկտեմբերի 25-ին, իսկ Հայտնությունն ու Մկրտությունը՝ հունվարի վեցին: Միայն Հայ և Ղաթի Եկեղեցիներն են բոլորը միասին նշում հունվարի վեցին:

Ծիսակատարությունները Հայ Եկեղեցում սկսում են հունվարի հինգի երեկոյան, երբ մատուցվում է Ս. Ծննդյան ճրագալույցի Պատարագ (ճրագալույց նշանակում է ճրագ (մում) լուցանել(վառել): Այն խորհրդանշեց Բեթլեհեմյան աստղը, որն առաջնորդեց մոգերին Հիսուսի մոտ): Հունվարի 6-ին՝ Ս. Ծննդյան Պատարագից հետո, կատարվում է Ջրօրհնեքի արարողություն, որը խորհրդանշում է Հիսուսի Մկրտությունը Հորդանան գետում: Հատուկ աղոթքներով, շարականների երգեցողությամբ օրհնվում է ջուրը Ավետարանով, Ս. Խաչով և սրբագործվում Սրբալույս Մյուռոնով: Օրհնված ջուրը բաժանվում է ժողովրդին: Հունվարի 7-ին Սուրբ և Անմահ Պատարագ է մատուցվում ի հիշատակ մեռելոց, և կատարվում է հոգեհանգստյան արարողություն:

Եկեղեցական այս արարողություններից հետո տոնն իր «շարունակությունն» է ունենում ժողովրդական կյանքում: Ուշագրավ է այն փաստը, որ ժողովուրդն այս տոներ անվանում է նաև «Փոքր զատիկ»՝ տարբերելու համար «Մեծ զատիկը»՝ Հարությունը: Եվ ինչպես Հարության տոնին են պատրաստում բրինձով և չամիչով փլավ, այնպես էլ Սուրբ Ծննդյան տոնին:

Սուրբ Ծննդյան տոնակատարությունների բաղկացուցիչ մասն է կազմում նաև Տնօրհնեքի արարողությունը: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ Տնօրհնեքի արարողության հաստատողը հենց Քրիստոսն է եղել: Ավետարանի վկայությամբ՝ Ս. Զատիկի երեկոյան հարուցյալ Քրիստոս փակ դռների միջով մտավ Վերնատուն, ուր հավաքվել էին աշակերտները, և օրհնեց նրանց (Հովհ. Ի 19-20): Առաքյալները, հետևելով Քրիստոսի օրինակին, Փրկչի Ս. Ծննդյան և Հարության տոներին շրջում էին քրիստոնյաների տները և ավետում Աստվածահայտնության և Հարության բարի լուրը: Այսպես էլ նրանց հետևորդները՝ քահանաները, այցելում են իրենց հովվության ներքո գտնվող քրիստոնյաների տները և օրհնում նրանց ու նրանց բնակարանները: Քահանան օրհնում է ընտանիքի անդամներին, հացը, աղը և ջուրը՝ որպես խաղաղության, մաքրության, բարեպաշտ կյանքի և մկրտության խորհրդանիշ:

Խորհրդային ժամանակաշրջանում մեր ժողովրդից քչերը գիտեին Տնօրինների մասին կամ գերադասում էին չիմանալ, քանի որ իրենց հարկի ներքո ընդունելու էին հայ քահանայի, իսկ դա արգելում էր ժամանակի գաղափարախոսությունը: Այժմ արդեն շատերն են ցանկանում Ս. Ծնունդից և Հարությունից հետո քահանային իրենց տուն տանել, որպեսզի նա խնկարկությամբ Ամենակալից պահպանություն հայցի օջախի անդամների համար:

Քառասնօրյա Փրկչի Երուսաղեմի տաճար գալու տոնը հայ ժողովրդի ամենասիրված տոներից է, որը Հայ Առաքելական Եկեղեցում կոչվում է **Տեառնընդառաջ**: Տեառնընդառաջ նշանակում է «ելնել Տիրոջն ընդառաջ»: Ժողովուրդն այն անվանում է նաև Տերընդեզ (Տերն ընդ ձեզ): Հայ Առաքելական Ս. Եկեղեցում այս տոնը նշվում է փետրվարի 14-ին՝ Քրիստոսի Ծննդից 40 օր հետո: Այս տոնը խորհրդանշում է Հիսուսին ծննդից 40 օր հետո Տիրոջ տաճար ընծայաբերելը: Այդ ժամանակ տաճար է գալիս Ս. Հոգով առաջնորդված Սիմեոն Ծերունին, ով մարգարեական հոգով տեսնում է, որ Նա է Մեսիան: Նա Մանկանն իր գիրկն է առնում, օրհնություն մատուցում Աստծուն և ասում. «Լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար» (Ղուկ. Բ 23):

Հայ Առաքելական Եկեղեցում ծիսակարգն սկսվում է փետրվարի 13-ին՝ երեկոյան ժամերգության ավարտին, երբ սկսվում է նախատոնակը: Տեառնընդառաջի նախատոնակին եկեղեցում նախ կատարվում է Անդաստանի կարգը՝ արտերի և այգիների օրհնությունը, որը ձմռան ավարտի և գարնանամուտի մունետիկն է, ապա կատարվում է մոմի օրհնության կարգը: Ժամերգության ավարտին հավատացյալները եկեղեցում օրհնված մոմով վառում են իրենց մոմերն ու այդ լույսը, որպես Քրիստոսի փրկության լույսի խորհրդանշ, տանում են իրենց հետ՝ լուսավորելու իրենց տները: Սակայն սա զուտ ժողովրդական սովորություն է, և ոչ թե ծիսական կանոն: Այս սովորությունը արմատացած է հատկապես նորապսակների շրջանում: Եկեղեցու օրհնված կրակով նրանք վառում են իրենց օջախի կրակը: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ խարույկի կրակը բորբոքելով՝ Աստծո սիրո հուրն ենք խնդրում: Այս արարողակարգն այնքան է արմատավորվել մեր ժողովրդի կյանքում, որ անգամ խորհրդային տարիներին, երբ քչերն էին ամուսնանում եկեղեցական արարողակարգով, Տեառնընդառաջին անպայման եկեղեցի էին գալիս՝ օրհնված կրակ տանելու և իրենց նորաստեղծ օջախը վառելու համար: Վերջին տարիներում փետրվարի 14-ին, Պատարագից հետո, Հայ Առաքելական բոլոր եկեղեցիներում կատարվում է նորապսակների օրհնության կարգ: Ժողովրդական սովորությամբ է նաև Տեառնընդառաջին նորապսակներին այցելելը և նվերներ տալը:

Այսպիսով, Տեառնընդառաջի տոնը նախ և առաջ ճշմարիտ լույսի, աստվածային լույսի տոնն է. «Աստված լույս է, Նրա մեջ խավար չկա» (Ա Հովհ. Ա 5):

Տերունի հաջորդ տոնը **Հարությունն** է, որին նախորդում է «Ավագ» կամ «Մեծ» շաբաթը, որովհետև ավանդում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկնային կյանքի յոթ օրերի ուսուցումները, մահը և հարությունը: Այս շաբաթվա յուրաքանչյուր օր ևս կոչվում է Ավագ:

Ավագ շաբաթը սկսվում է Ծաղկազարդի կիրակիով՝ Հիսուս Քրիստոսի Երուսաղեմ մուտքով, որի ժամանակ մարդիկ ծառերից ճյուղեր էին կտրում և սփռում Տիրոջ ճանապարհին: Ծաղկազարդի օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի հրամանով հայտարարված է մանուկների օրհնության օր՝ կապված այն բանի հետ, որ Երուսաղեմի տաճար մտնելու ժամանակ մանուկներն աղաղակում էին. «Օրհնություն Դավթի որ-

դուն» (Մատթ. ԻԱ 15):

Հիսուս Երուսաղեմ մտավ ավանակի վրա նստած, ինչը խորհրդանշում է, որ այսուհետ մարդկությունը Քրիստոսի լուծը պիտի կրի, Նրա սիրո պատվիրաններով կամ Նոր օրենքով պիտի մտնի Երուսաղեմ՝ Աստծո թագավորություն:

Հանդերձները էշի վրա գցելն Ավագանի միջոցով մաքրվելն է խորհրդանշում, քանի որ մերկանալով մեր հին հանդերձից՝ նորն ենք հագնում, ինչպես ասվում է մկրտության բանաձևում. «Որք ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք, ալելուիա»:

Իսկ ճանապարհին հանդերձներ փռելը խորհրդանշում է Հիսուսին երկրպագելը. մենք ճանապարհ ենք պատրաստում Նրա համար, մեր անձը նվիրում Նրան:

Արմավենու ճյուղերը մեր ընծաներն են մեր տիրոջը, ինչպես Ծննդյան օրը մոզերի բերած ընծաները: Նրան ճանաչում ենք որպես թագավոր՝ հաղթական պսակը գլխին, անեծքը վերացնող և մեզ կենդանություն պարգևող: Մեզանում Ծաղկազարդին ընդունված է ուտենու ճյուղեր օրհնել, որոնք անպտուղ են, ինչպես հեթանոսները, որոնք պտղաբերվեցին միայն Քրիստոսին ընծայվելուց հետո: Ուտենու ճյուղերի փափկությունը խորհրդանշում է Քրիստոսի հետևողների խոնարհությունը, իսկ ճյուղի սնամեջ լինելը՝ հոգով աղքատությունը, որն ունեցողներին երանի է տալիս Տերը: Քրիստոսի հետևորդները պետք է դատարկ լինեն աշխարհի մեղքի փաթեմությունից, որպեսզի մաքուր սրտով փառաբանեն Տիրոջը:

Ավագ երկուշաբթի - Անպտուղ թզենու չորացում: Նվիրված է աշխարհի արարչագործությանը: Այս օրը մտաբերում ենք այն օրը, երբ Հիսուսի անեծքով չորացավ անպտուղ թզենին, և Երուսաղեմի տաճարի մաքրագործումը: Պտուղն այլաբանորեն խորհրդանշում է մարդկային բարի գործերն ու առաքիլությունները, որոնցից զուրկ մարդը կպատժվի: Իսկ տաճարի մաքրագործմամբ Տերը մեզ սովորեցրեց պատշաճ վերաբերմունք դրսևորել սրբությունների հանդեպ:

Ավագ երեքշաբթի - Տասը կույսերի առակը: Այս օրը մի ներքին ընդհանրությամբ կապված է նախորդ օրվա հետ. ակնարկում է, որ մեր առաքինի գործերի պտուղներով հոգեպես պետք է պատրաստ լինենք Քրիստոսի Երկրորդ Գալուստին, այլապես կչորանանք թզենու պես և երկնքի արքայությունից դուրս կմնանք հիմար կույսերի նման:

Ավագ չորեքշաբթի - օծում և մատնություն: Այսօր հիշատակում ենք այն մեղավոր կնոջը, ով թանկագին յուղով օծեց Քրիստոսի ոտքերը, ինչը խորհրդանշեց Տիրոջ մոտալուտ մահը: Այս օծմանը հաջորդեց Հուդայի մատնությունը:

Ավագ հինգշաբթի - Վերջին ընթրիք, հաղորդության խորհրդի հաստատում, Ոսկվա: Առավոտյան մատուցվում է Սուրբ Պատարագ՝ ի հիշատակ Վերջին Ընթրիքի ժամանակ Հաղորդության խորհրդի հաստատման, երբ Հիսուս վերնատանը վերցրեց հացը, օրհնեց այն և տվեց տասներկուսին՝ որպես Իր մարմնի խորհրդանիշ: Ապա բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց և պատվիրեց խմել՝ որպես Իր արյան խորհրդանիշ, որը պետք է թափվի շատերի համար:

Պատարագը իմաստավորվում է մարդկանց փրկության համար Քրիստոսի գոհաբերությամբ, խաչվելով, Իր արյունը հեղելով ու Հաղորդության խորհրդի կատարումով: Երեկոյան կատարվում է Ոսկվայի արարողությունը: Վերջին ընթրիքից հետո Հիսուսը ջուրը լցրեց կոնքի մեջ, ծունկի եկավ աշակերտների առջև ու ծառայաբար լվաց նրանց ոտքերը՝ սրբելով մեջքին կապված սրբիչով (Հովհ. ԺԳ 5):

Հնում սովորություն էր որպես հարգանքի նշան հյուրերի և մեծերի ոտքերը լվանալ:

Եկեղեցու մեկնիչ Սուրբ Հայրերը մի այսպիսի գեղեցիկ համեմատություն են կատարում, ինչպես Ադամը պտուղը ճաշակելու համար նախ ոտքերով ընթացավ, այսինքն քայլեց դեպի ծառը, Քրիստոս էլ մարդ արարածի քայլերը դեպի երկնքի արքայությունը ուղղելուց առաջ նախ աշակերտների ոտքերը լվաց: Արարողությունից հետո հավատացյալներին բաժանվում է օրհնված յուղ, որը վերջիններս օգտագործում են հիմնականում հիվանդությունների դեպքում: Ավագ հինգշաբթի երեկոյան կատարվում է նաև խավարման արարողությունը, որի ժամանակ Խորանին վառվում են տասներկու հավասարաչափ մոմեր և մեկ հատ մեծ՝ նրանց միջև: Յուրաքանչյուր ավետարանական ընթերցումից հետո անջատվում են տասներկու մոմերից երկուսը և վերջում մնում է միայն մեջտեղի մեծ մոմը: Դա խորհրդանշում է աշակերտների փախչելը և Հիսուսի միայնակ մնալը:

Ավագ ուրբաթ - Տիրոջ խաչելությունը և թաղումը: Հիշատակում է Տիրոջ չարչարանքները, խաչելությունն ու մահը:

Ավագ շաբաթ - Դժոխքի ավերում և ճրագալույցի Ս. Պատարագ: Ավագ շաբաթ օրը նվիրված է Հիսուսի թաղմանը և գերեզմանի կնքմանը: Հիսուս գերեզման դրվելով՝ իջնում է դժոխք և ավերում այն՝ փրկություն շնորհելով արդարների հոգիներին: Երեկոյան կատարվում է ճրագալույցի Պատարագ: Այն կատարվում է Օննդյան և Հարության տոներին նախորդող օրվա երեկոյան: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարության տոնին լսում ենք «Քրիստոս յարեալ ի մեռելոց» ավետիսը և պատասխանում. «Օրհնեալ է յարությունն Քրիստոսի»:

Հարություն. «Ինչու եք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ հարություն առավ» (Ղուկ. ԻԴ 5):

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը եկեղեցու մեծագույն տոներից է և արտահայտում է Աստվածորդու տնօրինական առաքելության և մարդու փրկագործության խորհուրդը:

Աստծո Որդու խաչի վրա մահվամբ մարդը վերստին հավիտենական կյանք ունենալու իր կոչմանն արժանացավ:

Ս. Հարության տոնը մեր ժողովուրդն անվանում են նաև Զատիկ: Զատիկ նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և վերադարձ առ Աստված: Զատիկը և՛ Հին, և՛ Նոր Կտակարաններում համարվում է մեծագույն տոներից մեկը: Այն կապված է ազատագրության և փրկագործության պատմական իրողությունների հետ: Հին Ուխտի զատիկը նախատիպն ու նախօրինակն է Հիսուս Քրիստոսի ինքնակամ զոհաբերության: Աստծո Որդին՝ որպես Աստծո Գառ, իր արյունը թափեց աշխարհի և մեղավոր մարդկության համար, խաչվեց և երրորդ օրը հարություն առավ, որպեսզի մեզ մաքրի մեղքերից և արժանի դարձնի հավիտենական կյանքին. «Ահա Գառն Աստուծո, որ վերցնում է աշխարհի մեղքը» (Հովհ. Ա 29):

Եգիպտոսից դուրս գալու խորհրդով (Հին Ուխտի Զատիկ) հին աշխարհը խորհրդանշաբար ազատվեց մարմնավոր գերությունից, իսկ Քրիստոսի Հարության խորհրդով մարդկությունը զրկվեց մեղքի և մահվան տիրակալությունից, խավարից դարձավ դեպի հավատն ու հավիտենական կյանքը:

Հարության տոնը մեր հավատացյալ ժողովուրդը տոնում է մեծագույն հավատքով ու ուրախությամբ: Հավատացյալները ձու են ներկում, որը խորհրդանշում է Հարությունը և Նոր կյանքի սկիզբը: Կարմիր ձուն խորհրդանշում է Քրիստոսի արյամբ աշ-

խարհի ներկված ու փրկված լինելը: Այս օրը հավատացյալները նաև փլավ են պատրաստում, որի բրինձը ժողովրդական մեկնաբանությամբ խորհրդանշում է ժողովրդին, իսկ չամիչը, որը խառնում են փլավին, խորհրդանշում է առաքյալներին, որոնք ժողովրդի մեջ քարոզում են Աստծո խոսքը:

Քրիստոսի երկրավոր կյանքի կարևորագույն օրերից է Պայծառակերպությունը, որը տեղի ունեցավ Փրկչի քարոզչության երրորդ տարում Թաբոր լեռան վրա: Մովսես Խորենացին այս տոնի մասին ասում է. «Երրորդության Լույսը՝ Միածինն այսօր Թաբոր լեռան վրա Իր շուրջ փայլեցրեց՝ ճառագայթելով արարածներին, որով երկինքը ցնծաց և երկիրը պայծառացավ...»: Եկեղեցին այս տոնն անվանում է նաև Վարդավառ և նշում է այն Ս. Հարության տոնից 14 շաբաթ կամ Հոգեգալստից յոթ շաբաթ հետո եկող կիրակի օրը: Այս տոնին առնչվող հին հայկական սովորություններ ու ավանդույթներ կան. օրինակ իրար վրա ջուր ցողելը: Ըստ ժողովրդական մեկնաբանության՝ այդ օրվա ջուրը օրհնված է և միմյանց վրա ջուր ցողելով մեղքերից մաքրվում են: Սակայն այս սովորույթն իր մեջ որևէ ծիսական բնույթ չի կրում: Ենթադրվում է, որ երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը կարգավորում էր քրիստոնեական տոները, Պայծառակերպության տոնին առնչեց Նավասարդյան տոնակատարությունից որոշ սովորություններ ու ավանդույթներ, որպեսզի մի կողմից ժողովուրդը չկտրվեր իր արմատներից և մյուս կողմից հակազդեր հեթանոսական այն մեծ տոնին, որն իբրև նոր տարվա՝ ամանորյա հանդիսություն կատարվում էր Աշտիշատում:

Սուրբ Զատիկից 50 օր հետո նշվում է Հոգեգալուստը՝ Սուրբ Հոգու գալստյան տոնը (հունարեն Պենտեկոստե): Այս տոնը հիշատակումն է Սուրբ Հոգու գալստյան առաքյալների վրա աղավնու կերպարանքով, ինչպես խոստացել էր նրանց Հիսուս Քրիստոսը, որպեսզի նրանց տա տարբեր լեզուներ ու Ս. Հոգու շնորհը՝ բոլոր վայրերում Աստծո Խոսքը քարոզելու համար:

Համբարձումը նշվում է Քրիստոսի Հարության օրվանից 40 օր հետո՝ հինգշաբթի օրը: Սա Հիսուսի երկինք համբարձվելու տոնն է: Հրաշափառ հարությունից 40 օր անց հին հայկական Ձիթենյաց լեռան վրա Իր վերջին պատգամներն ու հորդորները տալուց հետո Քրիստոս համբարձվեց երկինք՝ նստելու Հոր աջ կողքին: Համբարձման տոնը ժողովուրդը անվանում է նաև «Վիճակ», «Ծաղիկ գովել», «Ջան Գյուլում»: Տոնի ժողովրդական արտահայտություններից է վիճակ գցելը՝ յոթ աղբյուրից հավաքած ջրում, «Ջան Գյուլում» երգելը և ծաղիկ հավաքելը:

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՏՈՆԵՐԸ

Հայ Եկեղեցին Ս. Խաչին նվիրված չորս տոն ունի՝ Ս. Խաչի Երևում, Խաչվերաց, Վարագա Ս. Խաչ և Խաչի Գյուտ:

Խաչի Երևման տոնը կապված է այն հրաշքի հետ, երբ 351 թ. Երուսաղեմում, Գողգոթայից մինչև Ձիթենյաց լեռ տարածված պայծառ ու լուսավոր երկնքում երևում է խաչի նշանը: Հայ Առաքելական Եկեղեցին Խաչի Երևման տոնը նշում է Հինանց հինգերորդ կիրակի օրը, Ս. Զատիկից 28 օր հետո, 35 օրվա շարժականությամբ՝ ապրիլի 19-

ից մինչև մայիսի 23-ը:

Խաչի Գյուտի տոնը հիշատակում է Քրիստոսի խաչափայտի գյուտը՝ կատարված 326 թ. Կոստանդիանոս կայսեր մոր՝ Հեղինեի կողմից, ում ջանքերով խաչափայտը գտնվում է Գողգոթայի աղբանոցից: Այստեղից նախապես հանվում են երեք խաչ և իմանալու համար, թե որն է Տիրոջ խաչը, մի մահացածի մարմին են հաջորդաբար դնում խաչերի վրա: Տիրոջ խաչի վրա դնելիս մահացածը կենդանանում է, և այդպես գտնվում է Տիրոջ խաչը: Ի պատիվ Տիրոջ խաչի գյուտի՝ Հեղինե թագուհին Գողգոթայի վրա Ս. Հարություն եկեղեցին է կառուցում և խաչն այնտեղ է բարձրացնում ի ցույց ժողովրդի: Խաչի գյուտի տոնը Հայ Առաքելական Եկեղեցում նշվում է հոկտեմբերի 26-ի մերձակա կիրակի օրը:

Խաչվերացը հիշատակն է Քրիստոսի գերեվարված խաչի վերադարձի: Խաչվերացը խաչի ամենահին տոնն է, որն իր սկզբնաղբյուրներով հասնում է մինչև վաղ քրիստոնեական ժամանակները: Խաչը բարձրացնելու և վերացնելու առաջին արարողությունը վերագրվում է Հակոբոս առաքյալին, ով խաչը ի տես ժողովրդի բարձրացնելով «Խաչի Քո, Քրիստոս, երկրպագեմք» օրհնությունն ու աղոթքն է ասել: Խաչի բարձրացման հաջորդ արարողությունը Խաչի Գյուտն է: Երրորդը խաչի գերեվարձն է: 614 թ. Պարսից Խոսրով թագավորը պարտության է մատնում բյուզանդացիներին, գրավում Երուսաղեմը և գերեվարում Քրիստոսի խաչափայտը: Սակայն Հերակլ կայսրը 628 թ. կարողանում է պարտության մատնել պարսիկներին և ետ վերադարձնել խաչափայտը: Պատմական այս դեպքի հիշատակումով էլ Եկեղեցին նշում է Խաչվերաց տոնը, որը մեր Եկեղեցու Տաղավար տոներից հինգերորդն է և նշվում սեպտեմբերի 14-ի մոտակա կիրակի օրը: Այս օրը հայոց բոլոր եկեղեցիներում երեկոյան ժամերգության ընթացքում կատարվում է հանդիսավոր թափոր և անդաստան, որի ժամանակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ի տես ժողովրդի, բարձրացվում է Քրիստոսի Խաչափայտի մասունքով խաչը:

Ժողովուրդն այս տոնն անվանում է նաև Մբխեչ (Մուրբ խաչ), և այդ օրը ի հիշատակ նախորդ տարվա Խաչվերացից հետո մինչև այդ օրն ընկած բոլոր մահացածների, զոհաբերվում են զառներ: Սակայն սա նույնպես զուտ ժողովրդական սովորույթ է:

Վարագա Խաչի տոնը զուտ հայկական է և կապված է ազգային ավանդության հետ: Վարագա լեռան վրա Թողիկ ճգնավորի և Հովել աշակերտի ճգնությունից հետո հրաշալի տեսիլքով երևում է Վարագա լեռան վրա պահված այն մասունքը, որն իրենց հետ Հայաստան էին բերել և այստեղ ամփոփել Հռիփսիմյանց կույսերը: Այս տեսիլքի մասին Թողիկը պատմում է Ներսես Գ կաթողիկոսին, ով Վարդ Ռշտունի սպարապետի հետ Վարագ գալով ստուգել է եղելությունը և մեծահանդես տոնախմբություն կատարել: Նույն վայրում Կաթողիկոսը կառուցել է Ս. Նշան եկեղեցին: Այս առիթով Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը գրում է. «Նշանաւ ամենայաղթ Խաչիւդ» շարականը և տնօրինում, որ ամեն տարի սեպտեմբերի 28-ի մոտակա կիրակի օրը կամ Խաչվերացից երկու շաբաթ հետո կատարվի Վարագա Ս. Խաչի տոնը: Սովորաբար Վարագա Մուրբ Խաչի տոնին՝ սեպտեմբերի 28-ին է կատարվում նաև Մյուռնոսօրհնության Սրբազան արարողությունը:

ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԵՐԸ

Ս. Աստվածածինը, որպես միջոց փրկագործության, անբաժան է Հիսուսի փրկչական տնօրինություններից: Աստվածամոր հետ կապված տոներն են՝ Աստվածածնի մոր՝ Աննայի հղության հիշատակի տոնը (դեկտեմբերի 8), Աստվածամոր ծնունդը (սեպտեմբերի 8), Աստվածամոր տաճար ընծայման օրը (նոյեմբերի 21), Ավետումը՝ հրեշտակի ավետիսը Մարիամին: Եկեղեցու հայրերը Սուրբ Մարիամին միշտ նմանեցրել են Եկեղեցու հետ, որովհետև նրանից ծնվեց Քրիստոս, իսկ Եկեղեցու Ավագանից ծնվում են քրիստոնյաները: Աստվածամոր հեգությունն ու խոնարհությունը բոլոր ժամանակներում մայրության օրինակ է հանդիսացել: Ավետման տոնը տոնվում է ապրիլի 7-ին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Ավետման տոնը հռչակվել է Մայրության օրհնության օր: Վերափոխումն Ս. Աստվածածնի տոնը Մարիամ Աստվածածնի երկինք վերափոխվելու հիշատակի օրն է: Հայ Եկեղեցին այն կատարում է օգոստոսի 15-ի մերձակա կիրակի օրը: Հայ Եկեղեցում Վերափոխման տոնի օրը Պատարագի ընթացքում կատարվում է Խաղողօրհնեքի արարողություն, որը տոնի մի մասն է կազմում: Խորհրդանշական իմաստով եկեղեցի բերված խաղողի բերքի օրհնությամբ Հայ Եկեղեցին օրհնում է նաև հայոց ողջ այգեստանները: Խաղողօրհնեքը համընկնում է Սուրբ Գրքի պատվիրանին՝ առաջին բերքը պետք է ընծայել Տաճարին:

Տիրամոր հիշատակության տոների շարքում ուշ շրջանում ավելացել են Ամենասրբուհի կույսին պատկանած իրերի գյուտին նվիրված տոներ: Դրանցից է Ս. Կույսի տուփի գյուտի տոնը, որը Հայ Եկեղեցին նշում է հունիսի 14-ից հուլիսի 18-ի միջև: Աստվածամոր գոտու հայտնության տոնը նշվում է օգոստոսի 20-ից սեպտեմբերի մեկը հանդիպող կիրակի օրը:

Տերունի տոների մեջ են մտնում նաև Եկեղեցու տոները: Դրանք են՝ Նոր Կիրակին և Աշխարհամատրան Կիրակին: Կատարվում է ի հիշատակ եկեղեցու հաստատության: Հատուկ կերպով տոնախմբվում է չորս տաճարների հիշատակի օրը: Դրանք են՝ Գողգոթայի վրա Հեղինե թագուհու կողմից կառուցված տաճարը, Բեթղեհեմի՝ Քրիստոսի ծննդյան վայրում կառուցված տաճարը, Ձիթենայց լեռան՝ համբարձման բարձունքին կառուցված տաճարը և Գեթսեմանում Ս. Կույսի գերեզմանին կառուցված տաճարը:

Ընդհանրական Եկեղեցու տոների թվին է պատկանում Տապանակի տոնը, որը կատարվում է Վարդավառի կիրակիի նախորդ շաբաթ օրը: Ս. Էջմիածնի տոնը կատարվում է Հոգեգալստից երկու շաբաթ հետո, իսկ Շողակաթի տոնը կատարվում է Աստվածածնի վերափոխման տոնի նախորդ շաբաթ օրը:

ԽԱՌԱՏՅԱՆ ԱԼԱ

ԵՊՀ Հայ գրականության ամբիոն

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՅԵՂԱԿԵՐՏՄԱՆ ԿՈՆՅԵՊՑԻԱՆ «ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ

Դանիել Վարուժանի պոետական հնարքների առաջին խոշոր համակարգը «Յեղին սիրտը» ժողովածուն է, որի վերլուծության ընթացքը պետք է սկսել հենց «Յեղին սիրտը» հասկացությունից: Ի՞նչ է այն և ի՞նչի է հանգեցնում: Վերնագիրը հուշում է, որ գործ ունենք Վարուժանի կառուցած միֆի հետ, որի ապակողավորումը շարքի բանաստեղծություններից յուրաքանչյուրի մեջ պարունակված մասնավոր կոդերն են: «Յեղ» բառը արդեն խտացում է և կոլեկտիվի հասկացություն է պարունակում. բառարանում այն բացատրվում է որպես՝ «1. Նախնադարյան հասարակության հիմնական արտադրական բջիջը, որը հիմնված է արյունակցական կապի վրա և միավորում է մեկ նահապետի սկսած տոհմերը: 2. Մեկ նախահորից սկսած ամբողջությունն է»¹: Արյունակցական կապի վրա միավորված այս *ամբողջի* հատկանիշները, որոնք պարփակում են ազգի էությունը, Վարուժանի մոտ արտահայտվում է *ցեղ* բառում, որն էլ իր հերթին սոսկ բառից վերածվում է միֆի, և Վարուժանը դառնում է ինքն իր ստեղծած միֆի բացատրողը. *ցեղ* բառի մեջ տեսնելով հայի գենետիկ կառուցվածքը՝ նա մի կողմից դիտարկում է այն, մյուս կողմից ներկայացնում ժամանակի մեջ նրա ձևախեղումը և պարտադրում նրա վերափոխումը: Միֆի բացատրումը իրականանում է բանաստեղծության մեջ ցեղի գենետիկ կառուցվածքը ստեղծելով: Յեղի գենետիկայի ըմբռնում-ընկալումը դառնում է «Յեղին սրտի» գաղափարագեղարվեստական կոնցեպցիայի հիմքը: Յեղի գենետիկ կառուցվածքը Վարուժանի ոչ տեքստային (այսինքն՝ ոչ բանաստեղծական) ձևակերպումներում խորհրդանշվում է «մեհյանով», որն ունի հստակ կառուցվածք: «Յեղ մը, որ կուգե ապրիլ՝ պարտավոր է ստեղծել: Մեհյան մը պետք էր կանգնել: Մենք կուգենք ծառայել անոր կառուցման»², - հետագայում այսպես էին որակում «մեհենականները» իրենց ստեղծագործական ծրագիրը, որում ամենակարևորը գենետիկայի հայտնաբերումն է և նրա ըմբռնումը: Շարքի առաջին բանաստեղծությունը միտում է *ցեղային* հատկանիշների ծագումնաբանական և ժամանակի մեջ այս կամ այն կերպ ձևային պարտադիր փոխանցումների ենթարկվելու ուրվագծի արտահայտմանը, որը հետևյալն է՝ հին հայրենիքն ու փառքը, ավերված տունը՝ հոր, մոր և հարսի միջնորդավորված կերպարներում, և տարագրություն:

Վարուժանի ցեղաճանաչման պոետիկայի հիմքում ընկնում է Թորգոմի միֆը՝ *Թորգոմի* և *Թորգոմի տան* փոխլրացմամբ, որը Վարուժանի ցեղակերտման ընթաց-

¹ Տե՛ս Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, Ե., 1976, էջ 1474:

² Տե՛ս Դանիել Վարուժան, ԵԼԺ, հ. 3, Ե., 1987, էջ 213:

քում ցեղի ծագումնակիրն է և հայրենիքի խորհրդանիշը: Թորգոմը մարմնավորում է հայի հոգևոր և ֆիզիկական հիմնական հատկանիշները. նա Վարուժանի պոետիկայում հայի գոյության կերպի հզոր նախաձևն է՝ իր մեջ պարունակելով այն բոլոր հատկանիշները, որոնցում ժողովրդի ենթագիտակցությունը իր էության լավագույն վավերացումն է տեսնում: Այս կերպարով ժողովածուի պոետիկայում անընդհատ ամրագրվում է Թորգոմի վերամիֆականացման անհրաժեշտությունը.

Եկո՛ւր, եկո՛ւր. ժամանակն ա՛յս է. եկո՛ւր...

Ահա ցեղեղ մաս մ'ազնիվ՝

Գաղափարի, գուպարի մեջ հալումաշ՝

Ճամբուղ վրրա կը սըփռե

Իր արյունին հետ նոր վարդեր, կակաչներ...

(էջ 84)

Թորգոմի կերպարակերտմանը զուգահեռ կառուցվում է նաև հակացեղի միջը, որն իր բովանդակությամբ Թորգոմի հակամիջն է: Հակակառուցումները պոետիկ սկզբունք են Վարուժանի համար, որոնցում մի կողմից հաստատվում է հայի միֆական կերպարը, մյուս կողմից՝ ժխտվում այն, ինչը հակաթորգոմական է և հակասում է հայության լինելիությանը և ցեղի բնութագրիչ ամբողջությանը: Այս առումով բնորոշ է «Անիի ավերակներուն մեջ» բանաստեղծությունը, որը գուրկ լինելով գուտ էսթետիկ արժեքից՝ շարային կառույցում գաղափարական գերծանրաբեռնվածությամբ է ստեղծված և ունի դիրքային հստակություն: Այդ հակակառուցումներին է նպատակամիտում նաև ժամանակի եռաչափ համակարգը, որի առաջին բաղադրատարրերը՝ պատմության ընթացքն ու ներկան, դրսևորվում են որպես հակակառուցում: Անիի անկումը բանաստեղծական կոնստեքստում դիմախեղման ընթացքի վավերացումն է և խորհրդանշվում է Անիի ավերակների պատկերով.

Ըլլա լացի, համբույրի,

Հիշատակի, մըտածման,

Մըռնչելու համար ըլլա, օ՛ն, մըտնենք.

Մըտնենք հըսկա քաղաքն հըսկա աճյունի,

Մըտնենք Շիրիմն հայության...

(էջ 86)

Պատկերը ժամանակային և իմաստային առումով վավերացնում է Թորգոմի միֆի կազմաքանդումը, խորհրդանշում Թորգոմի չգոյությունը պատմության ընթացքում, որը բերել է տրամաբանական վերջավորության՝ «հայության Շիրիմի»: «Նեմեսիս», «Հայրենիքի ոգին», «Անիի ավերակներուն մեջ» բանաստեղծությունները պոետական կառույցը տանում են երկու ուղղությամբ՝ մի կողմից քերթողի կերպարն է, ով միֆ է արարում և նպատակամիտում հայի կերպարի վերածնման, մյուս կողմից հայությունն է, որ գնացել է ապամիֆականացման ճանապարհով՝ գրկվելով Թորգոմի միֆից, ասել է թե՛ իր նախաստեղծ կերպարից: «Դարերով ընդհատված տոհմային փառահեղ քաղաքակրթության թելը ձեռք առնելու է և շարունակվելու: Այդ մաքրահ-

յուս թելը խզված-ընդհատված է Բագրատունյաց դարաշրջանեն, Անիի ավերակներուն փաթթված ըլլալուն համար»³, - գրում է բանաստեղծը՝ Անին դիտելով հայութեան անկման խորհրդանիշ: «Անիի ավերակներուն մեջ» բանաստեղծությունում միաժամանակ Վարուժանը կերտում է նաև իր կերպարը, տեղի է ունենում կերպարային փոխանցում քնարական հերոսից Վարուժանին, ով ընթանում է այդ արարման ճանապարհով՝ ժողովածուում փաստագրելով «Յեղին սիրտը» ստեղծող Վարուժան-բանաստեղծի արարող կերպարը.

*Սա գանկը հոս լուսին մըն է, ես՝ Աստված...
Ըլլալ Աստված, ո՛վ հեզություն, այս ըլլալ
է միմիայն ծաղրանքկարն Աստուծո,
Քանի որ մեր հոգին հարձըն է Բընության,
Ու սոսկ անոր տաք ծոցին մեջ՝ Բեղմնավոր,
Չունենալով նույն ինք իրե՛ն սեփական
Հայրենիքի այս Ոչընչին, բռնին դեմ՝
Իբր առաջին սերմընցու
Խո՛սք մ՛որ ստեղծե, ներդաշնակե, պոռթկալով
Փռչիններեն Անիի
Քանան մը նո՛ր և ազա՛տ:*

(էջ 90-91)

Վարուժանը իր ցեղակերտումը պոետականացնում է աստվածային արարչության համարժեքով՝ այս դեպքում էլ փոխառելով աստվածային գործառույթներ՝ *Ոչնչից Քանան* արարելով. նրա համար ցեղի դիմախեղումը համարժեք է չգոյությանը: Այսպիսով, Անիի ավերակները այն ժամանակն է, որը մի կողմից դառնում է վերասերման մեկնակետ, մյուս կողմից՝ կորցրած դիմագծի (պատմության) խորհրդանիշ, որ հակադիր է առասպելին, որն էլ, ինչպես ասացինք, ցեղի լիարժեք կերպարի ժամանակն է, նրա ծննդյան ժամանակը, իսկ մի երրորդ կողմից՝ որպես պատմության տրամաբանական ընթացքի ողբերգական գիտակցություն, ներկայի պատճառ, որ բնութագրվում է «Մարած» խորհրդանիշով:

Յեղարարման գործընթացը, որ պիտի ավարտվեր Մեհյանի կանգնումով՝ հիմքում ունենալով ազգային հատկանիշների վերագիտակցումը, որպես որմնային կառույց կերտում է օջախը, առանց որի ստեղծումը վերացական է և ոչ ցեղային: Յեղի գոյատևման և շարունակության համար օջախը հրամայական հաստատուն է և որոշակի ձև ու բովանդակություն է պահանջում և Վարուժանի մեհյանակառուցման հաջորդ քայլը դրա բնույթի մեջ որոշակիություն մտցնելն է: Օջախի, տան հիմնարար, կառուցողական խորհրդանշական գործառույթը սկսվում է դեռևս «Մարսուտներից»՝ «Մոխիրներուն առջև» բանաստեղծությունից, որտեղ *սոււնը* կառույցի կենտրոն լինելով հանդերձ՝ երևում է խորհրդանիշի մի կողմով և բազմակողմանի բացահայտվում հետագա ժողովածուներում, ընդ որում՝ ցանկացած բանաստեղծության մեջ

³ Տե՛ս Վարուժան Դ., ԵԼԺ, հ. 3, էջ 386:

խորհրդանիշը գործում է որպես առանձին ինքնուրույն միավոր, մի բան, որ բխում է խորհրդանիշի էությունից. «Խորհրդանիշը և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլանում միշտ մի որոշակի տեքստ է, այսինքն՝ տիրում է իր մեջ փակված մի նշանակության և որոշակի արտահայտված սահմանով, ինչը թույլատրում է հստակ գատել շրջապատող նշանային կոնտեքստից»⁴: *Տունը* այստեղ կիրարկված է առարկայական իմաստով և խորհրդանիշի առաջին շերտով՝ որպես տանիք, պատսպարան, արարչության նախապայման.

*Տարաբա խոտ մայր, կաթին գունատ փրթթումին
Պատըսպարան չը մընաց,
Հանկարծ ոտքին կը զարնըվի սարսուռով՝
Օրոցքեն փայտ մը, խանձա՛ծ:*

(էջ 29)

Այրված հյուղի պատկերում ժխտվում է տան գոյությունը, ինչն էլ խորհրդանիշի գործառույթի բացակայության է տանում: Այստեղ Վարուժանի ասելիքը գաղափարախմբաբանական խտացման առաջին աստիճանում է և հստակ բանաձևային պատկերում է ստանում. վերը բերված պատկերը կառուցվել է իմաստային խտացման սկզբունքով՝ *տունը* արարման խորհրդանիշ է՝ չնայած բանաստեղծության մեջ սահմանները նեղացվել են մինչև *ընտանիքի* աստիճանի: «Մարած օճախը» դառնում է «Մոխիրներուն առջև» բանաստեղծության *տան* սիմվոլի փոխակերպման մի այլ դրսևորում, որը պայմանավորելով ժողովածուից ժողովածու փոխանցումը՝ դառնում է ժողովածուի ցեղաբարման կենտրոնական արտահայտչամիջոց: «Մոխիրներուն առջև» բանաստեղծության մեջ *տուն* խորհրդանիշը աճում է մինչև հայրենիքի խորհրդանիշի աստիճանի: Բանաստեղծության մեջ այն բնութագրվում է թորգոմական հատկանիշներով և ժամանակային առումով կապվում է անցյալին. «Ատեն մ'երան...»: Անցյալ ժամանակը օջախի՝ Վարուժանի կառուցելիք մեհյանի համար անհրաժեշտ բնույթի պարունակյալն է: «Ատենը» Վարուժանը բացատրում է որպես օջախի գործառույթի անվերապահ եղելություն, ուր արարման պայմանը և արարիչը փոխադարձաբար ապահովում էին միմյանց ներկայությունը և անհրաժեշտությունը, իսկ օջախի գոյությունը, ըստ Վարուժանի, կապվում էր պապ-հայր-թոռ եռամիասնությանը, որոնցից յուրաքանչյուրի բացակայությունը ոչ արարում է ամուսին-կին, որդի-մայր փոխհարաբերությունների հետ: Անցյալի *տուն* խորհրդանիշի հետ անմիջականորեն կապվում է պապի և թոռի՝ որպես ազգային հատկանիշները կրող-փոխանցողի և այն ընկալող ու զարգացնողի փոխհարաբերություն, որը եղել է ցեղապահպանման, ցեղաբարման պայման: Որպես ազգային հատկանիշի ամբողջություններ՝ բանաստեղծության մեջ կրկին շեշտվում են միջերը՝ Արտավազդ և Վահագն.

Ատենն մ'անոր դրրան առջև նըստեցավ

⁴ St' u Лотман Ю. М., Символ в системе культуры, www.yandex.ru .

*Ծերունկն, և թո՛ղ ծունկերուն մեջ առած,
Պատմեց զըրրոյցն Արտավազդի, Վահագնի,
Անոր հոգւոյն տեղալով
Վերջին ազնիւ մնացորդը խոնջ օրերուն.*

(ընդգծ. մերն է -Ա. Խ.) (էջ 94)

Բանաստեղծության շարունակությունը կառուցվում է հակադրության վրա. Թոր-գոմա տանը հակադրվում է մարած օջախը, հայրենիքի ճշմարիտ պատկերին, որն էր ցեղային հատկանիշների կրումն ու դրա իրացման գործառնությունը, հակադրվում է ցեղային հատկանիշներից հրաժարումը, առանց ցեղաբարձման գերագույն պայմանի գոյությունը, որը փաստվում է կոտորած դռան, չորացած արյան և ագռավի ու կատվի մկավունի խորհրդանիշներով և ի վերջո հանգում է կորստի.

*Ու մըտա ներս...Ո՛վ յսեղճ տուն,
Լավ էր դու բանտ կամ գերեզման ըլլայիր,
Այդ հողդ ոսկոր փրտեցըներ. սյուներուդ
Մեջ դագաղն փորեին.
Լավ էր ըզքեզ հորինող մե՛ն մի կրաքար
Ծովափներուն փռչի փռչի քայքայվեր,
Քան թե կանանչ երդիքիդ տակ ծածկերի.
Մարած օճախ, մեռած սիրտ հայ գեղջուկի՝
Որուն համար կանգնելը հարկ չէ այլ ինչ
Բայց թե դամբանն իր և իր հեզ սերունդին,
Ավա՛դ, շինել իր ձեռքերով...
Մըտա, հոն:*

(էջ 96)

Պապի և թոռի սերնդապահպան փոխհարաբերության հիմքում Վարուժանը կարևորում է հոր կերպարը որպես դոմինանտ արարողի՝ հետևաբար ազգապահպանի և սերնդաշարունակողի ու փոխանցողի, ով ցեղի և դրա գեղարվեստական կառույցի՝ մեհյանի հենասյունն է: Այս սկզբունքը հիմնավորվում է պոետիկայի մեջ հոր բացակա կամ չգո կերպարի՝ որպես ոչ արարողի հերքմամբ, քանի որ հոր լի, գործող կերպարային դրսևորում «Յեղին սրտի» պոետիկայում չկա: Առաջին, այդ լի գործառնության կերպիր հայրը կերպվում է «Սարսուռների» «Հայր, օրհնե՛» բանաստեղծության մեջ, որից հետո նրա՝ ցեղակերտվածքի տեսանկյունից թյուր կերպարային դրսևորումներ են միայն, բայց որը վերականգնվում է հաջորդ ժողովածուում: Որպես ոչ արարում կամ ցեղային հատկանիշներից զրկման գործընթաց են կերտվում են նաև «Հորս բանտին մեջ», «Կարոտի նամակ» բանաստեղծությունները: Հոր կերպարը «Հորս բանտին մեջ» բանաստեղծության մեջ դառնում է Վարուժանի եռաչափ ժամանակի՝ ներկայի վավերացում՝ իր վրա կրելով ընտանիքի և տան տիրոջ ու պահապանի խորհրդանշական գործառնությունները: Առանց հայր տան պատկերը ոչ արարում է և Թորգոմի տան ժամանակակից հակամիֆը: Պատկերում տունը և ընտանիքը կորց-

նում են իրենց դիմագիծն ու շարունակելիությունը, կյանքը կասեցվում է, այսինքն՝ կործանվում են մեկյանի հիմնասյուները.

*Ըսի թե մեր տանիքին վրա, լուսնին տակ,
Բուերը պար կը բռնեն,
Թե այս տարի մեր վարդենին չորացավ
Գերեզմանատան խորշակեն:*

(էջ 113)

Այս պատկերում կյանքի կասեցման խորհրդանիշներ են բուն, գերեզմանատունը և չորացած վարդենին: Բուի խորհրդանիշը կապվում է լուսնի հետ թշնամության, հաճախ նաև մահվան հետ՝ ասոցացվելով մթին: Բանաստեղծության երկրորդ պլանում այն նաև ազգային թշնամիներին է խորհրդանշում, քանի որ հարաբերվում է հոր բանտի մեջ գտնվելուն, իսկ բանաստեղծության վերջում թշնամու առկայությունը խորհրդանիշի չտեսնվող դիտելի պատկերից վերածվում է դիտելի տեսանելիի՝ «Եղենի»: Հոր և որդու չհաղորդակցումը «Հորս բանտին մեջ» բանաստեղծությունում խորհրդանշում է հայրենիքը ժառանգելու և պահելու կարողության խաթարումը, էության չփոխանցումը, որ բերում է դրա չճանաչման և եղենի:

*Կարկառեցիր սև վանդակին ետևե
Շրթունքներդ իմ շրթներուն.
Բայց իրարու անոնք, ավա՛ղ, չ'հասած՝
Մեր համբույրին դողդոջուն՝
Նույն ժամանակ եղան օրրան և դագաղ:*

(էջ 112)

Կործանվող տան պատկերին է միտում նաև «Կարոտի նամակ» բանաստեղծությունը: Բանաստեղծության մեջ կործանվող տունը սիմվոլանում է օտար «սանդուղներով բարձրացող» տղայի պատկերում և արարող գործառույթներից զրկվող մոր կերպարում.

*Հերիք օտա՛ր սանդուղներե ելլեն վեր
Ոտքերդ՝ որ օր մ'ափերուս մեջ տաքցուցի.
Հերի՛ք ալ սիրտդ՝ ուր իմ ծիծերս եմ պարպեր՝
Դատարկ սրբտես դուրս հյուծի:*

*Ջահրակին տակ թներս աշխատ հոգներ են.
Կ'հյուսեմ պատանքս ա՛լ ծամերովս ըսպիտակ.
Ա՛յս. քեզ տեսնեն անգամ մ'աչքերս ու փակեն
Թող հոգիս ա՛լ իրենց տակ:*

(էջ 115)

Նախորդ բանաստեղծության՝ բանտարկված հոր կերպարի հետ օտարացած որ-

դու և «միշտ օջախին ծարավի» մոր կերպարները ամբողջացնում են ոչ արարման սիմվոլիկան: Օջախի, այսինքն՝ արարման ծարավ մայրը այս դեպքում արարման հովանավորն է՝ առավել գործառնություններով: Այն հիմք ունենալով ընտանիքը՝ բանաստեղծության մեջ զաղտնագրում է նաև հայրենիքի պահպանումը՝ «անծանոթ լուսին» և «օտար սանդուղներ» փոխաբերություններում: Հոր չգոյությունը վերջնական կործանման է հասցնում՝ նրա և հոր հարաբերության բացակայության պատճառով: Որպես ընտանիքի հիմնասյուն՝ հայրը Վարուժանի պոետիկայում դառնում է հայրենիքի խորհրդանիշ և նրա չգոյությունը մորը զրկելով հովանավորչության հատկանիշներից՝ փոխակերպում է հայրենիքի պահպանման մորը: Հոր և մոր՝ համապատասխանաբար ցեղաբարձման և ցեղապահպանման հարաբերության բացակայությունը ոչ արարչության է փոխակերպվում «Ավերակներու տիկինը» բանաստեղծության մեջ, ուր *ավերակը* չգո տղամարդն է, այսինքն՝ հայրենիքը, իսկ առանց ամուսին կինը խորհրդանշվում է որպես «ավերակներու»՝ կործանվածի տիկին՝ զրկված իր հովանավորչությունից և գայթակղում է օտար տղամարդկանց (պետություններին) աստվածաշնչյան հայտնի առասպելի անունների իմաստային կիրարկմամբ՝ «Օլիաբա, Մալոմե» (իմա՝ Ոլիբամա): Օլիաբան ցեղաբարձող կնոջ միջին է, և բանաստեղծության մեջ նրա կիրարկումը մոր նախկին գործառնությունների վերհուշն է. «Եսավի կին Ոլիբամայի որդիներն են ցեղապետ Յեուսը, ցեղապետ Եզդունը, ցեղապետ Կորիսը: Սրանք Եսավի կին՝ Աննայի դուստր Ոլիբամայից ծնված ցեղապետերն են» (Ծննդ., ԺԸ 35-36,).

*Այս խրախճանքի ժրխորումեն արթընցած
Գայլ Վահաններն, Դավիթ Բեկերն ընձառյուծ.
Հերոսներն հին՝ գաղափարին հինօրյա,
Գինովությունը տեսան
Օտարներու առջև պարող իրենց մոր:*

Օտարի առջև պարող մոր կերպարը «ցեղապետեր» ծնող մոր միջին քաղաքական նենգափոխումն է, ցեղ ծնող հատկանիշի քաղաքական կորուստը, այդ պատճառով քանդվում է նրա «Օլիաբա» անվանված էությունը, այլ կերպ ասած՝ ժամանակի եռաչափ հարթությունում անցյալի մայրը Օլիաբա է, իսկ ներկան նրա ձևախեղումը՝ Մալոմե անվանված:

Այսպիսով, հայրը, լինելով ցեղի նախաստեղծ միջին՝ Թորգոմի էության շարունակողը, և այնպես, ինչպես Թորգոմի միջին էր կապվում Թորգոմի տան հետ, հայրն էլ հայրենիքի և հայրենի տան, և չիրականացնելով իր՝ նախասահմանված գործառնությունները, դառնում է ցեղի կործանման պատճառ և որպես ցեղաբարձման հրամայական՝ Վարուժանը իր մեծիանը կառուցում է այդ կորցրած հատկանիշների վերահաստատմամբ՝ հայրական իրավունքի վերականգնմամբ. հայրական օրենքը պետք է լինի ցեղի և հետո մարդկային կյանքի («Հեթանոս երգեր») շարժիչ ուժը:

Լ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԷԹՆՈՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ.

Հայրենական գիտության պատմության մեջ կարևոր տեղ է գրավում 1920-1930-ականների հեղափոխական բուռն շրջանը: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Կովկասում՝ խորհրդային կարգերի հաստատմամբ պայմանավորված, զգալի հետաքրքրություն առաջացավ տարածաշրջանի բազմաթիվ ժողովուրդների ազգաբնական հետազոտությունների նկատմամբ. այն նպատակաուղղված էր՝ կյանքի կոչելու ազգային ու մշակութային քաղաքականությունը:

Խորհրդային Միությունում, «հզոր և ոգևորող սոցիալական փորձարկումների» պայմաններում, ազգագրական գիտությունը սոցիալիստական հասարակարգի ժողովրդատնտեսական և կիրառական խնդիրների համակարգում առաջնակարգ տեղ էր գրավում: Հետազոտվում էին քաղաքի ու գյուղի արտադրողական ուժերը, ժողովուրդների կենցաղը՝ հնից նորին անցումային շրջանում, կոլտնտեսային շարժումը, ազգային և մշակութային քաղաքականության հիմնախնդիրները և այլն¹:

Կովկասյան տարածաշրջանի էթնոմշակութային բարդ խճանկարի և քաղաքական լարված պայմանների պարագայում նման մոտեցումը կարևոր էր ու արդիական: 1920-ականներին Կովկասի ուսումնասիրության կարևորությունը համընկավ Խորհրդային Ռուսաստանին բնորոշ երևույթներից մեկի՝ գավառագիտության «ոսկե տասնամյակի» հետ, որն էլ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ուղենիշ հանդիսացավ գիտության տարբեր ոլորտների հետազոտության համար²:

Չնայած տարածաշրջանի քաղաքական բարդ պայմաններին, գավառագետ-ազգագրագետները հսկայական աշխատանքներ կատարեցին ինչպես ժողովրդական մշակույթին ու կենցաղին վերաբերող նյութերի հավաքման ու մշակման գործում, այնպես էլ՝ սոցիալ-տնտեսական ու մշակութային վերափոխումների ասպարեզում: 1920-ականների կեսերին մեծ զարգացման հասավ զբոսաշրջությունն ու գիտարշավների

¹ *Т. Д. Соловей*, От буржуазной этнологии к советской этнографии. История отечественной этнологии первой трети XX века. М., 1998, с.42, 72, 74, 80.

² *С. О. Шмидт*, Золотое десятилетие советского краеведения – Отечество. Краеведческий альманах. М., 1990, вып. 1, с. 16. Նշենք, որ գավառագիտական զանգվածային շարժմանը ներգրավվեցին երկրի հանրապետական և ինքնավար կազմավորումները: 1920-ականներին գավառագետների բազմաազգային բնակը ակտիվորեն զբաղվում էր իր երկրամասի բնական պաշարների, աշխարհագրության, կենդանական ու բուսական աշխարհի, պատմական ու մշակութային ժառանգության հետազոտությամբ: Ամենուր կատարվում էին ֆենոլոգիական, օդերևութաբանական, ջրաբանական, ագրարային, մելիորացիոն, կենդանաբանական և այլ դիտարկումներ, հետազոտվում էին հնագիտական, ճարտարապետական հուշարձանները, ձայնագրվում էին անցյալի հուշերը: 1922 թ. ստեղծված Ռուսաստանի գավառագիտության կենտրոնական բյուրոն, ակադեմիկոս Ս. Ֆ. Օլդենբերգի գլխավորությամբ, կարգավորում և ուղղորդում էր ամբողջ երկրի կազմակերպական ու գիտահետազոտական աշխատանքները:

կազմակերպումը, որոնք նպաստեցին գիտական ու կիրառական մեծ արժեք ներկայացնող բազմաքանակ ու բազմաբովանդակ ազգագրական նյութերի գրառմանը:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակը նշանավորվում է տարեց տարի «բազմաթիվ ինստիտուտների, գիտական կոմիտեների, հանձնաժողովների, ասոցիացիաների և այլ հաստատությունների լայնածավալ գործունեությամբ: Փնտրվում էին գիտական ուժի համախմբման ու նրանց գործունեության կազմակերպման ձևերի օրինակելի տարբերակներ: Կովկասագիտությանը ևս վիճակված էր անցնել վերակառուցման փուլերը, չնայած հետազոտական աշխատանքները շարունակվում էին դեռևս նախահեղափոխական տարիներից գործող գիտական նախկին կենտրոններում»³:

Հետհեղափոխական առաջին տարիներին բազմաթիվ գիտական կենտրոնների մեջ հատուկ տեղ էր գրավում Կովկասի և Մերձավոր Արևելքի ուսումնասիրության Անդրկովկասի կենտրոնը, *Անդրկովկասյան գիտական ասոցիացիան*, որն այժմ մոռացության է մատնված: Նրա կարճ, սակայն բեղմնավոր գործունեությունը նշանակալի հետք է թողել այդ տարածքի և հատկապես Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչան ուսումնասիրության պատմության մեջ:

Ավելի քան մեկուկեսդարյա որոշակի աշխատանքի փորձ կար դեռևս մինչև հեղափոխական շրջանում: Անդրկովկասյան տարածաշրջանում, Լեռնային Ղարաբաղի աշխարհաքաղաքական, ռազմավարական և պատմամշակութային դիրքի կարևորությամբ պայմանավորված ինչպես հետազոտողների, այնպես էլ ցարական կառավարության աշխատակազմի հետաքրքրությունների դիրքորոշումները համընկնում էին. նշված տարածքը նրանք դիտում էին որպես Ռուսաստանի ծայրամաս: Պատահական չէր, որ ինչպես «Հիշարժան գրքեր» մատենաշարում ընդգրկված Երևանի, Ելիսավետպոլի և այլ նահանգների մասին՝ նահանգային վիճակագրական կոմիտեների կողմից հրատարակված նյութերի մեծ մասը, այնպես էլ «Նյութեր»՝ Անդրկովկասի երկրամասի պետական գյուղացիության տնտեսական կենցաղի ուսումնասիրման վերաբերյալ՝ այլ հրատարակություններ⁴, հիմնականում հենվում էին կառավարության գործակալների պաշտոնական հաղորդումների վրա: Սակայն կառավարական կառույցները նշված պարբերականի համար փաստագրական ու վիճակագրական հարուստ նյութ հավաքելով հանդերձ, տեղերում չեն ձևավորել խմբեր, որպեսզի այդ ուղղությամբ պարբերաբար դիտարկումներ իրականացվեն:

Մինչև հեղափոխական շրջանում Կովկասում ազգագրա-գավառագիտական կազմակերպությունների կենտրոնը մնում էր Ռուսական աշխարհագրական ընկերության կովկասյան բաժինը: Նրա «Գրություններում» և «Լուրերում», ինչպես նաև կովկասագիտական մեծաքանակ գրականության մեջ, դեռևս հեղափոխության շրջանում, հավաքվել ու հրատարակվել են հսկայական արժեքավոր նկարագրական նյութեր: Արդեն XIX դ. կեսերից հիշյալ տարածաշրջանի, նրա բնաաշխարհագրական յուրահա-

³ Страницы отечественного кавказоведения, М., 1992, с.8.

⁴ *А. Г. Деконский*, Экономический быт государственных крестьян Шушинского и Джебраильского уездов Елисоветпольской губернии – Материалы для исследования экономического быта государственных крестьян Закавказского края (далее – МИЭБГКЗК), т. IV, ч. 1, Тифлис, 1886; Крестьянская реформа в Елисоветпольской губернии (извлеченные из отчета М. Кучаева) – Там же, т. I, Тифлис, 1885; *А. А. Калантар*, Задачи и способы исследований скотоводства – Материалы для устройства казенных летних и зимних пастбищ и для изучения скотоводства на Кавказе, т. I, Тифлис, 1887 и др.

տուկ միջավայրի, պատմամշակութային նկարագրի, բազմաթիվ հնությունների ու կենցաղամշակութային առանձնահատկությունների նկատմամբ հետաքրքրություններ հանդես բերեցին հայ, ռուս և արտասահմանցի գիտնականները, ճանապարհորդները և ուրիշներ:

Իրենց յուրահատկություններով առանձնացող Լեոնային Ղարաբաղի առանձին գյուղերի կյանքի ու կենցաղի տարաբնույթ տեղեկությունները արտացոլվել են Կովկասի մինչհեղափոխական պարբերականներում: Մասնավորապես XIX դ. վերջերից նրանք հրատարակվում էին Կովկասի ուսումնական օկրուգի «Կովկասի վայրերի և ցեղերի նկարագրության նյութերի ժողովածուի» մեջ, ինչպես նաև այլ հրատարակություններում: Դրանք հիմնականում կազմվում էին տեղի ուսումնարանների ուսուցիչների ու տեսուչների կողմից և նվիրված էին որոշ գյուղերի նկարագրությանը (Հաղբուր, Կուսապատ, Սարով, Գետաշեն, Քարինտակ և այլն), հնություններին (Ս. Ավետարանոց)⁵, ներընտանեկան կյանքի առանձին կողմերին⁶, ինչպես նաև Անդրկովկասի, այդ թվում Ելիսավետպոլի նահանգի արհեստագործական զբաղմունքներին (Շուշի, Կուսապատ, Հաղբուր և այլն)⁷:

Նույն ժամանակաշրջանում Ղարաբաղի և Զանգեզուրի տարբեր մասերում հնագիտական հուշարձանների ուսումնասիրությամբ և պեղումների կազմակերպմամբ զբաղվում էր Շուշիի ռեալական ուսումնարանի ուսուցիչ, ծագումով գերմանացի Էմիլ Ռեպերը: Շուշիի գավառի պեղումների մասին նրա զեկույցը հրատարակվել է Ռուսական հնագիտական հանձնաժողովի հաշվետվություններում՝ 1892, 1894-1898 թթ.: Այդ նույն ժամանակ հրատարակվեց նաև Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանցի «Արցախ» հնագիտական և մասամբ աշխարհագրական բնույթի գիրքը, որի մեծ մասը նվիրված է Լեոնային Ղարաբաղին⁸:

Լեոնային Ղարաբաղի տարածքի երկրաբանական հետազոտությունների մեջ մեծ ներդրում ունի գերմանացի ականավոր գիտնական, Կովկասի երկրաբանության «հայր», Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հերման Աբիխը (1806-1886 թթ.)⁹: Արցախի ազգագրական ուսումնասիրությունների առաջին փորձը պատկանում է հայ ականավոր գիտնական-ազգագրագետ, հնագետ, վաստակա-

⁵ *И. Давидбеков*, Село Гадрут, Джеванширского уезда, Елисаветпольской губ. Сборник материалов для описания местностей и племен Кавказа (далее-СМОМПК), Тифлис, вып. VI, 1888, с.153-192; *Н. Григоров*, Село Саров, Джеванширского уезда, Елисаветпольской губ., -Там же, с.123-132; *Г. Израелов*, Село Касапет – Там же, вып. XIII, 1892, с. 42-58; *Г. Осипов*, Селение Барда, Джеванширского уезда, Елисаветпольской губ. – Там же, вып. XVII, 1893, с. 119-137; *Ф. Джейранов*, Селение Чайкенд, Елисаветпольского уезда той же губ. – Там же, вып. XXV, 1898, с. 59-100; *Г. Осипов*, Селение Даш- Алты Шушинского уезда, Елисаветпольской губ. – Там же, с. 101-136; *Е. Мелик-Шахназаров*, Из древностей селения Ченахчи – Там же, вып. XIX, 1894, с. 78-83.

⁶ *Г. Мелик-Адамов, Х. Хачанов*, Роль академика Германа Абиha в изучении природы и культуры исторического Арцаха (к 200-летию со дня рождения) – «Республика Нагорный Карабах. Прошлое, настоящее, будущее». Материалы международной конференции. Степанакерт, 2006, с. 190-194.

⁷ Промысловые занятия в некоторых населенных пунктах Закавказья - СМОМПК, вып. XI, 1891, с. 1-79, 87-89 и др.

⁸ *Մ. Բարխուդարյանց*, Արցախ, Բարս, 1895:

⁹ *Г. Мелик-Адамов, Х. Хачанов*, Роль академика Германа Абиha в изучении природы и культуры исторического Арцаха (к 200-летию со дня рождения) – «Республика Нагорный Карабах. Прошлое, настоящее, будущее». Материалы международной конференции. Степанакерт, 2006, с. 190-194.

շատ բանահավաք, Թիֆլիսի «Հայկական ազգագրական ընկերության» (1906-1916 թթ.) և «Ազգագրական հանդեսի» հիմնադիր Երվանդ Լալայանին (1864-1931 թթ.): Քսանվեց հատորից բաղկացած հրատարակության (1896-1916 թթ.)¹⁰ առաջին հատորը նվիրված է պատմական Վարանդային, որի տարածքի մի մասը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի սահմաններում: Հատորի պատրաստման աշխատանքներին մասնակցել են նաև այլ հեղինակներ:

Լ. Աթաբեկյանի «Վիճակագրական տեղեկություններ» վերտառությամբ բաժինը պարունակում է հետաքրքիր տվյալներ Շուշի գավառի բնակչության թվի, խտության, էթնիկ կազմի ու դավանանքի, ինչպես նաև ժողովրդագրական ցուցանիշների՝ ամուսնության, մահացության ու բնական աճի վերաբերյալ, որոնց մեծ մասը ներկայացված է աղյուսակներով:

Գ. Տեր-Ղազարյանի «Տնտեսական դրություն» բաժնում ներկայացված է համառոտ տեղեկանք գյուղատնտեսության գլխավոր ուղղությունների մասին. նշված են այգեգործական ու դաշտավարական հիմնական մշակաբույսերը, ինչպես նաև անասնազնախաբանակն ու տեսակները. հիշատակվում են նաև հետևյալ զբաղմունքները՝ շերամապահություն, մեղվապահություն, ձկնորսություն և որսորդություն: Ներկայացվել են տվյալներ 1895 թ. Շուշիի ու համանուն գավառի ինչպես արհեստների, վարպետների, աշակերտների և բանվորների թվի, այնպես էլ գործարանային արտադրության ու առևտրի վերաբերյալ:

Աշխատանքի հիմնական մասը պատկանում է Ե. Լալայանին. նա ներկայացրել է հետազոտվող տարածքի պատմական համառոտ ակնարկը, տեղագրությունը, բնահյուսությունը, բուսական ու կենդանական աշխարհը, շարադրել է նաև համառոտ տեղեկանք Շուշի քաղաքի, մի շարք հայտնի բնակավայրերի, վանքերի, սրբատեղերի ու ամրոցների վերաբերյալ: Աշխատանքում հետաքրքիր տեղեկություններ կան լուսավորության վիճակի (Վարանդայի և Շուշիի դպրոցների, գրադարանների, թատրոնների, տպարանների թվի), ինչպես նաև XIX դ. 90-ականների փոստային աշխատանքների վերաբերյալ: Ինչպես «Ազգագրական հանդեսի» մյուս հատորներում, այստեղ ևս զգալի տեղ է հատկացվել ընտանեկան կյանքին ու հավատալիքներին: Այս երկու համեմատաբար մեծ բաժիններն էլ կազմում են աշխատանքի ազգագրական հատվածը: Բավականին հանգամանորեն են ներկայացված ամուսնությունն ու հարսանիքը, երեխայի ծնունդը, ներընտանեկան հարաբերությունները, թաղման ծեսը, ինչպես նաև հավատալիքներն (այդ թվում բազմաթիվ պաշտամունքներ) ու օրացուցային տոները¹¹: Ցավոք, արժեքավոր վերոհիշյալ աշխատանքում բացակայում են հայերի ավանդական կենցաղի այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են տնտեսությունը, նյութական մշակույթը և հոգևոր մշակույթի որոշ բաժիններ:

Հետաքրքիր է, որ Ե. Լալայանը աշխատանքը համարել է որպես «նյութեր ապագա հետազոտությունների համար» ու նշել է գրքի վերնագրում: Չնայած այդ նյութերի

¹⁰ Ուշագրավ է, որ այս հանդեսի առաջին գիրքը հրատարակվել է 1896 թ. Շուշիում, իսկ մնացած հատորները՝ Թիֆլիսում: Մանրամասն տե՛ս՝ Է. Գ. Կարապետյան, К 60-летию армянского этнографического журнала «Азгагракан Андэс» - Советская этнография, 1956, N2, с.111-114; Դ. Ս. Վարդույան, К 100-летию армянского периодического издания «Азгагракан Андэс» (Этнографическое обозрение) - Лавровские (среднеазиатско-кавказские) чтения, СПб., 1998, с.129-130.

¹¹ Ե. Լալայան, Վարանդա, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1898, գիրք Բ:

նկարագրական բնույթին, նրա նշանակությունը արդի շրջանում բավականին մեծ է, քանի որ արտացոլում է նախահեղափոխական շրջանի (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ) հայ հասարակության ավանդական կենցաղը:

Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասի էթնիկ պատմության և էթնովշակության ավանդույթների համար նոր փուլ էին հետահեղափոխական առաջին տասնամյակները, որոնք առաջ քաշեցին ժամանակի գիտահետազոտական և կիրառական նոր խնդիրներ: Դրանց լուծման համար նոր ստեղծված գիտական կենտրոնների թվում 1923 թ. ամռանը Թիֆլիսում կազմավորվեց Կովկասի և Մերձավոր Արևելքի հետազոտման *Անդրկովկասի գիտական ասոցիացիան*, որը գտնվում էր Անդրկովկասի կենտրոնական գործադիր կոմիտեի կազմում: Ցավոք, այդ տարիների գրականության մեջ նրա գործունեության մասին քիչ տեղեկություններ կան, իսկ գիտական այդ հրատարակությունները վաղուց դարձել են եզակի: Այդ պատճառով էլ, աշխատանքը գրելիս մեծ դժվարությամբ հնարավոր եղավ հավաքել և վերականգնել նրա դաշտային-հետազոտական գործունեության կարևոր մանրամասները (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղում), տվյալներ գիտարշավի որոշ մասնակիցների մասին: Խորհրդային առաջին տարիներին ստեղծված այդ կառույցը, իր կանոնադրության համաձայն, նպատակ ուներ գիտական բազմակողմանի հետազոտություններ կատարել ոչ միայն Անդրկովկասի հանրապետություններում ու Մերձավոր Արևելքի երկրներում, այլև գիտական ու կիրառական գիտելիքներ տարածել նրանց մասին¹²: Այս նպատակներն իրագործելու համար նախատեսվում էր կազմակերպել գիտարշավներ ու էքսկուրսիաներ, հրատարակել աշխատանքներ, գիտատեղեկատվական կապեր հաստատել գոյություն ունեցող գիտական ընկերությունների ու կազմակերպությունների հետ, Ասոցիացիայի խնդիրների լուծման նպատակով գիտական փոխօգնություն և համագործակցություն կազմակերպել ինչպես տեղերում, այնպես էլ՝ Անդրֆեդերացիայի տարածքից դուրս¹³:

Մասնագետների ներկայացուցչական կազմը հնարավորություն տվեց իրագործել համալիր մեծածավալ հետազոտություններ: Քանի որ նշված ժամանակաշրջանում դաշտային հավաքչական գործունեությանը տրվում էր ոչ միայն գիտական, այլև կիրառական մեծ նշանակություն, Ասոցիացիան իր հիմնադրման օրվանից անցավ Անդրֆեդերացիայի հանրապետությունների ու մարզերի հետազոտման աշխատանքներին: Այս ուղղությամբ առաջին քայլը եղավ 1923 և 1924 թթ. Հարավային Օսեթիայի Ինքնավար Մարզի բազմակողմանի ուսումնասիրությունը, որը մենշևիկների ավերածություններից հետո վերականգնում էր իր տնտեսությունը, պարզում արտադրողա-

¹² Закавказская Научная Ассоциация по изучению Кавказа и Ближнего Востока при Зак. ЦИК-е.-- Краеведение на Кавказе. Общекавказский научно-информационный журнал, №1, Владикавказ, 1924, с.105.

¹³ Անդրկովկասյան գիտական ասոցիացիան (այսուհետ՝ ԱԳԱ) կազմված էր երկու բաժնից՝ քաղաքատնտեսական (բաժնի վարիչ՝ Լ. Դ. Սարգսյան) և պատմագագաբանական (բաժնի վարիչ՝ Գ. Ֆ. Չուրխին): Նրանք երկուսն էլ, Ասոցիացիայի նախագահ Ս. Ի. Կասյանի և պատասխանատու քարտուղար Ի. Ի. Ռոզդակի հետ ներկայացնում էին ԱԳԱ-ի նախագահությունը: Ասոցիացիայի գիտաշխատողներ էին համարվում տարբեր բնագավառների հանրաճանաչ կովկասագետ-գիտնականներ՝ պատմաբաններ, հնագետներ, ազգագրագետներ, լեզվաբաններ, տնտեսագետներ, գյուղատնտեսներ, ինժեներներ, բնագետներ: Նրանց թվում կային նաև իրավաբաններ, երկրաբաններ, անտառագետներ, հողագետներ, կենդանաբաններ, կենսաբաններ, տեխնոլոգներ:

կան ուժերի ու տնտեսական ռեսուրսների և բնակչության արդի վիճակն ու կենցաղը: Համալիր այս արշավախումբը, չնայած սուղ պայմաններին, հատուկ մշակված ծրագրով, արժեքավոր արդյունքների հասավ Հր. Օսեթիայի բուսականության, գյուղատնտեսության, անտառտնտեսության, ինչպես նաև բնակչության նյութական ու հոգևոր մշակույթի հետազոտման գործում: Գրառվեցին ազգագրական նյութեր օսերի կենցաղի ու հավատալիքների մասին ու այլ արժեքավոր տվյալներ՝ երկրաբանական քարտեզ կազմելու նպատակով¹⁴: 1924 թ. օսեթական գիտարշավին մասնակցում էին անվանի կովկասագետներ Ս. Վ. Տեր-Ավետիսյանը, Գ. Ֆ. Չուրսինը, Ե. Գ. Պչելինան:

Հաջորդ խոշորամասշտաբ հետազոտությունը Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և Լեռնային Քրդստանի¹⁵ 1924 թ. ամռանը կազմակերպված գիտարշավն էր, որի ընթացքում հավաքվեցին տնտեսական, ազգագրական և հնագիտական նյութեր: Այս ծրագրի շրջանակներում Անդրկովկասի գիտական Ասոցիացիան կարողացավ միավորել գիտության անվանի ներկայացուցիչների (հայ և ռուս)՝ գիտարշավին տալով ինտերնացիոնալ բնույթ: Գիտարշավի նպատակներից ու խնդիրներից ելնելով, իրենց մասնակցությունն էին բերել տնտեսագետներ, ազգագրագետներ, հնագետներ, քրդագետներ, ինչպես նաև մեկ լուսանկարիչ: Ուշադրության է արժանի համալիր մոտեցումը գիտարշավին, հատկապես տարբեր բնագավառների առաջատար մասնագետների մասնակցությամբ: Արշավախմբի ղեկավարն էր Անդրկովկասի գիտական ասոցիացիայի պատմա-ազգագրական բաժնի վարիչ Գ. Չուրսինը (ազգագրություն): Արշավախմբում ընդգրկված մտավորականներից յուրաքանչյուրի գործունեությունը պայմանավորված էր որոշակի առաքելությամբ. քրդերեն լեզվի ու կենցաղի ուսումնասիրությամբ պետք է զբաղվեր քրդագետ Ա. Ղազարյանը (Լազո), Ս. Լիսիցյանը՝ Լեռնային Ղարաբաղի ազգագրության, Թ. Աթաբեկովը՝ Քրդստանի և Զանգեզուրի տնտեսության, Գ. Քոչարյանը՝ Լեռնային Ղարաբաղի տնտեսության համակողմանի բացահայտման, իսկ Ս. Տեր-Ավետիսյանը՝ Լեռնային Ղարաբաղի, Քրդստանի և Զանգեզուրի պատմական անցյալի հուշարձանների, Ե. Պչելինան՝ նախնադարյան մշակույթի ու անձավային կացարանների, արշավախմբի լուսանկարիչն էր Ն. Ստեփանյանը¹⁶:

Գիտարշավի բոլոր մասնակիցները Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի գիտաշխատողներ էին և պատկանում էին կովկասագետների ավագ սերնդին: Բացառությամբ Լազոյի և Թ. Աթաբեկովի, մյուսները այդ ժամանակի հայտնի գիտնականներ էին, որոնց բեղմնավոր գործունեությունը մեծ ճանաչման էր արժանացել: 1924 թ. Ղարաբաղ-զանգեզուրյան գիտարշավի մասնակիցներից երեքը՝ Ս. Տեր-Ավետիսյանը, Ս. Լիսիցյանը և Գ. Չուրսինը համարվում էին ռուսական ակադեմիական գիտության խոշոր կենտրոններից մեկի՝ Թիֆլիսի Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի աշխատակիցներ. ի դեպ կենտրոնը կարևոր դեր էր խաղում կովկասագի-

¹⁴ Известия Центрального Бюро краеведения, 1925, №3, с. 83. Նշենք նաև, որ 1924 թ. հետախուզական բնույթի հնագիտական պեղումները, որ իրականացվել են Խվյե, Թլի, Էդիսի գյուղերում, ցույց տվեցին, որ Հարավային Օսեթիայի բրոնզեդարյան մշակույթը նման է Հյուսիսային Օսեթիայի դամբարանային թաղումների մշակույթին:

¹⁵ Նկատի է առնված Ադրբեջանական ՍՍՀ Քրդստանի գավառը, որը որպես առանձին ինքնավար վարչամիավոր կազմավորվել է 1923 թ.՝ Շուշիի, Ջանաշիրի և Ղուբաթլիի գավառների նախկին տարածքներից:

¹⁶ Закавказская Научная Ассоциация по изучению Кавказа и Ближнего Востока..., с. 99.

տության զարգացման գործում¹⁷: Ե. Պչեկնան այդ ժամանակ Մոսկվայի պետական պատմության թանգարանի աշխատակից էր:

Առավել տեսանելի դարձնելու պատմամշակութային արժեքների վերհանման, հետազոտման գործում վերոհիշյալ մտավորականների ավանդը, նպատակահարմար գտանք ստորև հանգամանորեն ներկայացնել նրանց գործունեության վերաբերյալ հակիրճ տվյալներ:

Տեր-Ավետիսյան Սմբատ Վարդանի (1875-1943 թթ.), Պետերբուրգի համալսարանի շրջանավարտ, հանրահայտ հայ պատմաբան, հնագետ, մանկավարժ, պատմ. գիտ. դոկտոր (1936 թ.): 1904 թ. մասնակցել է Անիի հնագիտական պեղումներին (ղեկ. Ն. Մառ): Անցյալ դարի սկզբներին հետազոտել է Նոր Զուղայի հայկական ձեռագրերը, հավաքել և կազմել է Հայաստանի ու նրա սահմաններից դուրս գտնվող վիմագիր արձանագրությունների ժողովածուն: Ավելի ուշ հնագիտական պեղումներ է կատարել Ղազախի շրջանում, Ղարաբաղում, Գիլանում, Նախիջևանում, Արմավիրում, Կարսում, Դվինում և այլ վայրերում: 1915-1917 թթ. Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի կողմից գործուղվել է Վան, Բիթլիս և Էրզրում, որտեղ հավաքել է ավելի քան հազար արձանագրություն, պատմական փաստաթղթեր և ազգագրական նյութեր: 1920-ական թվականներին նա Թիֆլիսի կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի առաջատար աշխատակիցներից մեկն էր. 1925-1931 թթ. նույն ինստիտուտի փոխտնօրենն էր, իսկ 1931-1934 թթ.՝ ՍՍՀՄ ԳԱ Անդրկովկասյան բաժանմունքի քարտուղարը: Երևան տեղափոխվելուց հետո, 1937 թ. գլխավորում էր ՍՍՀՄ ԳԱ Հայկական բաժանմունքի հնագիտության բաժինը: Նա միաժամանակ դասախոսում էր Երևանի պետական համալսարանում, որի հնագիտության ամբիոնի վարիչն էր¹⁸:

Գրիգոր Ֆիլիպի Չուրսին (1874-1930 թթ.): Նա ժամանակի առաջատար կովկասագետներից էր, կովկասյան ժողովուրդների ազգագրության խոշորագույն հեղինակություններից էր: Ավելի քան 30 տարի զբաղվել է դաշտային ազգագրական և հետազոտական գործունեությամբ, հեղինակ է ավելի քան 50 գիտական աշխատանքների, որոնք վերաբերում են Կովկասի ժողովուրդների նյութական ու հոգևոր մշակույթի տարբեր ոլորտներին: Նա կազմել է ազգագրական նյութերի հավաքման ծրագիրը, որով առաջնորդվում էին ազգագրագետները՝ Կովկասի ժողովուրդների կենցաղի ու սովորույթների մանրամասն ընթացքում (Բաքու, 1929 թ.): Նրա գիտական կենսագրության մեջ առանձնանում է 1916-1918 թթ.: Այդ տարիներին նա ղեկավարում էր Թիֆլիսի կովկասյան թանգարանի Կովկասի ժողովուրդների ազգագրության բաժինը, որից հետո նշանակվեց Ռուսաստանի աշխարհագրական ընկերության կովկասյան բաժանմունքի քարտուղար: 1923 թ. հետո Գ. Չուրսինը Թիֆլիսի կովկասյան պատմա-հնագիտական

¹⁷ Վերոհիշյալ ինստիտուտը, որ հիմնադրել ու անփոփոխ ղեկավարել է ակադեմիկոս Ն. Յա. Մառը (1917-1931թթ.), ՍՍՀՄ ԳԱ-ի կազմում (մինչև 1925թ.) Ռուսաստանի ԳԱ) հումանիտար բաժանմունքում զբաղեցնում էր առաջնակարգ դիրք: Այդ հաստատությունում աշխատել են ժամանակի լավագույն կովկասագետ մասնագետները: Առաջին հաստիքային աշխատողների թվում էին Տ. Ն. Չուբինաշվիլին, Ե. Ս. Տակաիշվիլին, Դ. Պ. Գորդենը, Ս. Ն. Կակաբաձեն, Ս. Դ. Լիսիցյանը, Ս. Վ. Տեր-Ավետիսյանը, Լ. Մ. Մելիքսեթ-Բեկը, Գ. Ֆ. Չուրսինը, Ս. Ֆ. Տիգրանյանը, Կ. Մ. Կալաշնիկովը և այլք: Մանրամասն տե՛ս՝ *Л. М. Варданян, Степан Лисицян и Кавказский историко-археологический институт в Тифлисе – Этнографическое обозрение*, 2000, №1, с.113-128.

¹⁸ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 663:

ինստիտուտի աշխատակից էր, միաժամանակ Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի պատմա-ազգագրական բաժանմունքի վարիչն էր ու նախագահության անդամ: Նա իր մասնակցությունն է ունեցել նաև 1926 թ. Համամիութենական մարդահամարի անդրկովկասյան հանձնաժողովի աշխատանքներին: 1928-1929 թթ., նախ Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի պատմա-ազգագրական կաբինետի վարիչն էր, ապա գիտքարտուղարը: 1929 թվականից նա Լենինգրադի պետական համալսարանի ազգաբանական բաժանմունքի Կովկասի ազգագրության ամբիոնի պրոֆեսոր էր¹⁹:

1924 թ. օսեթական և Զանգեզուր-դարաբաղյան գիտարշավից հետո, 1925 թ. Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի կողմից երկու անգամ գործուղվեց Աբխազիա, որտեղ ազգագրական նյութեր հավաքելիս հատուկ ուշադրություն էր դարձնում հնագույն վերապրուկների սոցիալական ձևերին, ժողովրդական հավատալիքներին ու ավանդույթներին, ինչպես նաև վերջին շրջանում նկատվող կենցաղային փոփոխություններին: Ասոցիացիայի հանձնարարությամբ 1926 թ. ազգագրական նյութեր է հավաքել Աջարիայի բնակչության կենցաղի վերաբերյալ:

Ստեփան Դանիելի Լիսիցյան (1865-1947 թթ.), նշանավոր հայ գիտնական-հայագետ, պրոֆեսոր (1941 թ.), Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1945 թ.): Նրա 60-ամյա լարված ու հագեցած գործունեությունը ընդգրկում է գիտության ու մշակույթի ամենատարբեր բնագավառները: Նրանում հաջողությամբ «միավորվել էին» պատմաբանը, ազգագրագետը, աշխարհագետը, գավառագետը, գիտության կազմակերպիչը, մանկավարժը, մանկագիրը, թարգմանիչը, գրականագետը, հրատարակիչը և իհարկե՝ հասարակական գործիչը: Առանձնապես մեծ էր նրա ներդրումը խորհրդային շրջանի հայ ազգագրական գիտության զարգացման ու կազմակերպման գործում: Նա իրավամբ համարվում է Հայաստանում ազգագրական դպրոցի հիմնադիրներից մեկը²⁰: Ազգագրության բնագավառում նրա ծավալուն գործունեությունը առանձնապես նշանակալից էր 1920-1940 թթ.: Այն բաժանվում է երեք հիմնական ուղղությունների. դաշտային հավաքչական, գիտա-կազմակերպչական ու գիտա-մեթոդական, ինչպես նաև գիտահետազոտական: Ս. Լիսիցյանը 1925-1928 թթ. գլխավորում էր Հայաստանի գավառագիտության կենտրոնական բյուրոն, 1928 թ. մինչև կյանքի վերջը Պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի վարիչն էր: Մեծ է նրա դերը Հայաստանում կադրերի պատրաստման գործում: 1924-1947 թթ. Երևանի պետական համալսարանի դասախոս էր: 1921-1928 թթ. հիմնական հաստիքային, 1928-1931 թթ. արտահաստիքային աշխատակից էր Թիֆլիսի կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտում, 1931թ. հետո, երբ այն անվանափոխվեց Կովկասագիտության գիտահետազոտական ինստիտուտի, նա շարունակեց իր ակտիվ համագործակցությունը, որպես գիտաշխատող և թղթակից անդամ՝ Հայաստանից:

Բազմամյա գիտարշավների ընթացքում հավաքել է դաշտային հսկայական նյու-

¹⁹ **А. Ф. Ляйстер**, Проф. Г.Ф.Чурсин (некролог) – **Г. Ф. Чурсин**, Армяне Зангезура. Краткий этнографический очерк – Научные труды Закавказского коммунистического университета, вып.6, Тифлис, 1931, с. 221-224; **Д. Месхиძე**, Из истории кавказоведения. Этнограф Григорий Филиппович Чурсин - Кунсткамера. Этнографические тетради. СПб., 1993, вып. 2-3, с. 396-405.

²⁰ **Л. М. Варданян**, Степан Данилович Лисицян - основатель этнографической школы в Армении – Выдающиеся отечественные этнологи и антропологи XX века, М., 2004, с. 544-576.

թեր Հայաստանի և հարակից տարբեր շրջաններից, ինչպես նաև 1915 թ. Մեծ եղեռնից փրկված արևմտահայ գաղթականներից: Ս. Լիսիցյանը հեղինակ է հայ ազգագրությանը նվիրված մի շարք հիմնարար աշխատանքների, այդ թվում, մինչ օրս իր թարմությամբ չկորցրած «Ազգագրական հարցարանի» (Երևան, 1946 թ.): Այն ոչ միայն դաշտային նյութեր հավաքելու, այլև՝ հայերի ավանդական կենցաղամշակութային տարբեր տեսանկյուններին նվիրված բազմաթիվ հետազոտությունները ուղղորդող առաջին մեթոդական ձեռնարկն է: Նրան է պատկանում հանգուցային մի շարք խնդիրների մշակման ու լուծման առաջնությունը, որը այդ տարիներին առաջին անգամ էր ներկայացվում ոչ միայն հայ, այլև խորհրդային ազգագրության մեջ²¹:

Գուրգեն Ավետի Քոչարյան (1893-1972 թթ.), խորհրդահայ աշխարհագետ, պրոֆեսոր (1930 թ.), գիտության դոկտոր (1965 թ.), Խարկովի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ: Զբաղվում էր Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի տնտեսա-աշխարհագրական հետազոտություններով ու քարտեզագրությամբ: 1925 թ. Հայկական ՍՍՀ պետականում ղեկավարում էր հանրապետության տնտեսա-աշխարհագրական շրջանացման հանձնաժողովը, որի ներկայացրած Հայաստանի շրջանացման սխեման հաստատվեց 1926 թ.: Նույն թվականին լույս տեսավ նրա «Հայկական ՍՍՀ ստուգողական թվերը»: Գ. Քոչարյանը 1935-1940 թթ. աշխատել է Ադրբեջանի պետականում, նա ղեկավարել է հանրապետության առաջին ատլասի կազմման աշխատանքները: Նա հեղինակ է ավելի քան 100 գիտական աշխատանքների ու մասնագիտական քարտեզների²²:

Եվգենիա Գեորգիի Պչեկինա (1895-1972 թթ.), խորհրդային առաջին կովկասագետներից էր, Մոսկվայի հնագիտության ինստիտուտի (1916 թ.) և պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի (1924 թ.) շրջանավարտ էր: Ազգագրության և հնագիտության բնագավառի տաղանդավոր հետազոտողը իր ամբողջ կյանքը նվիրել էր օս ժողովրդի ուսումնասիրությանը: Բազմամյա հնագիտական պեղումներին զուգընթաց զբաղվում էր նաև ազգագրական ու բնագիտական նյութերի հավաքմամբ, ընդ որում ոչ միայն օսերի, այլև Կովկասի այլ ժողովուրդների: Շատ ժամանակ ու ջանքեր էր նվիրել թանգարանային գործին, մասնավորապես 1915-1920 թթ. աշխատել է Մոսկվայի հնագիտական ինստիտուտի արխիվում ու թանգարանում, իսկ 1920-1932 թթ.՝ Մոսկվայի պատմության պետական թանգարանում: Այստեղ աշխատելու տարիներին նա մեծ օգնություն է ցուցաբերել Կովկասի հանրապետությունների ու մարզերի թանգարաններին, հնագիտական ու ազգագրական գիտարշավներ է կազմակերպել այդ երկրամասի տարբեր շրջաններում: Հենց Մոսկվայի պատմության պետական թանգարանի և Վրաստանի լուսավորության ժողկոմատի հանձնարարությամբ 1921-1923 թթ. նա Վրաստանի տարածքում իրականացրել է հնագիտական մի շարք պեղումներ ու հետախուզումներ: 1924 թ. Մոսկվայի նշված թանգարանի և Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի հրահանգով, որպես հնագետ-կովկասագետ մասնակցել է Հարավային Օսեթիայի, ինչպես նաև Զանգեզուրի ու Լեռնային Ղարաբաղի գիտարշավներին: 1932 թ. Մոսկվայի թանգարանը նրան գործուղել է Ադրբեջանի հնությունների պահպանության կոմիտե, որտեղ նա գլխավորել է հնագիտական մի շարք աշխատանքներ:

²¹ **Լ. Մ. Վարդանյան**, Степан Лисицян и истоки армянской этнографии, Ереван, 2005.

²² Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986, էջ 476:

1930-ականներին Ե. Պշելինան գիտական աշխատանքը համատեղել է դասախոսականի հետ: 1924-1925 թթ. նա վրացերեն լեզու է դասավանդել Մոսկվայի արևելագիտության ինստիտուտում, 1930-1932 թթ. Մոսկվայի պետական համալսարանի թանգարանագիտության ամբիոնի դոցենտ էր և համատեղությամբ աշխատում էր Մոսկվայի թանգարանային աշխատողների որակավորման բարձրացման ինստիտուտի թանգարանագիտության ամբիոնում:

1939-1948 թթ. աշխատել է Պետական էրմիտաժի արևելքի բաժնում որպես ավագ գիտաաշխատող, որից հետո տեղափոխվել է հարավ-օսեթական գիտահետազոտական ինստիտուտ՝ տեղական նյութի հիման վրա ավարտին հասցնելու դոկտորականատենախոսությունը: Ե. Պշելինան 1952 թ. անցնել է կենսաթոշակի²³:

Լազո - Հակոբ Ղազարյան (1869-1926 թթ.), հայ գրող, գրականագետ, քրդագետ, մանկավարժ: Ծնունդով բայագետցի էր. կյանքի հիմնական մասն անց էր կացրել Թիֆլիսում: Մանկությունն անցել է քրդական միջավայրում, որտեղ միշտ պահպանվում էին հայ-քրդական կենցաղամշակութային սերտ շփումներ: Քաջատեղյակ քրդերի բարքերին, ապրելակերպին, լեզվին ազատ տիրապետելը, հիմք ծառայեց Հ. Ղազարյանի չթուլացող հետաքրքրությանը՝ ձեռնամուխ լինելու քրդերի պատմության, հոգևոր կյանքի ու կենցաղի ուսումնասիրությանը: Նա հեղինակ է քրդական թեմաներով մի շարք գրական ստեղծագործությունների, որոնք XIX դ. վերջերին - XX դ. սկզբներին հրատարակվել են հայերեն ու ռուսերեն լեզուներով՝ Թիֆլիսի հայկական պարբերական հրատարակություններում:

1926 թ. Լազոն սցենար է գրել Հ. Բեկնազարյանի «Զարե» կինոֆիլմի համար, որում հմտորեն վերականգնել է քրդերի ապրելակերպին ու ավանդույթներին վերաբերող դրվագներ, որոնցից շատերը այդ ժամանակ մոռացված էին: Հ. Ղազարյանը քրդերեն այբուբենի (գրված է հայերեն տառերով) և «Շամս» այբբենարանի (Երևան, 1921) կազմողն է. նա անգնահատելի ավանդ ունի քրդական մշակույթի ու կրթության զարգացման գործում: Անդրկովկասի քրդաբնակ մի շարք վայրերում, այդ թվում Հայաստանի ու Վրաստանի քուրդ-եզդիների շրջանում, Լազոն հավաքել է լեզվագիտական, բանագիտական և ազգագրական զգալի նյութեր, որոնք վերաբերում էին հոգևոր և նյութական մշակույթի տարբեր բնագավառներին: 1924 թ. գիտարշավից վերադառնալուց հետո նա հանդես է եկել քրդերի կյանքին, լեզվին ու ազգագրությանը վերաբերող դասախոսություններով: Հ. Ղազարյանի արխիվը պահվում է Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում. այն պարունակում է արժեքավոր ձեռագրեր՝ պատմության, ազգագրության, բանագիտության, լեզվաբանության վերաբերյալ (այդ թվում՝ քրդերեն-հայերեն բառարան), ինչպես նաև մի շարք գրական ստեղծագործություններ:

Թ. Ն. Աթաբեկով, տնտեսագետ, 1920-1930 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում: Ավելի մանրամասն տվյալներ գտնել նրա մասին, դժբախտաբար չհաջողվեց:

Ն. Գ. Ստեփանյան, գիտարշավի լուսանկարիչ, Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսության ֆակուլտետի ուսանող:

Վերոհիշյալ կազմով գիտարշավի ջոկատը 1924 թ. ամռանը (օգոստոսի 7 – սեպ-

²³ **Б. А. Калоев**, Е. Г. Пчелина – ученый-кавказовед – Этнографическое обозрение, 2004, №3, с. 98-111.

տեմբերի 6) սկսեց հետազոտման աշխատանքները նշված տարածքում: Ավելի արդյունավետ նյութեր հավաքելու համար գիտարշավի անդամները բաժանվեցին երկու խմբի, որոնցից առաջինը (Գ. Քոչարյան, Ս. Տեր-Ավետիսյան, Ս. Լիսիցյան) պետք է զբաղվեր Լեռնային Ղարաբաղի, իսկ մյուսը (Գ. Չուրսին, Ե. Պչեխյան, Լազո, ինչպես նաև Ս. Տեր-Ավետիսյանը)՝ Զանգեզուրի և Քոչստանի գավառի հետազոտությամբ: Կազմակերպչական հարցերը լուծելու նպատակով գիտարշավի անդամները Ստեփանակերտում հանդիպում ունեցան մարզի ղեկավարների հետ, որտեղ մշակվեցին վերջնական ծրագիրը և գիտարշավի մանրամասն երթուղին:

Ս. Լիսիցյանի վկայությամբ ազգագրական հետազոտությունների համար ընտրվեց նաև հատուկ երթուղի, որի նպատակն էր ընդգրկել բոլոր այն վայրերը, որոնցում հստակ երևում են երկրամասի կենցաղային յուրահատկությունները²⁴: Երթուղին կազմվեց այնպես, որ գիտարշավի անդամները հնարավորություն ունենան կտրել-անցնել ամբողջ Լեռնային Ղարաբաղը, սկզբում հարավային, ապա հյուսիսային ուղղությամբ և այցելեն ինչպես կենտրոնական, այնպես էլ նրա ամենահարավային ու հյուսիսային մասերը:

Ս. Տեր-Ավետիսյանին հանձնարարված էր նյութական մշակույթի հուշարձանների հետազոտությունը: Ժամանակի սղության պատճառով (ընդամենը՝ 10 օր) նա իր ուշադրությունը բևեռեց գլխավոր հուշարձանների՝ մասնավորապես դամբարանների վրա, որոնք լայն տարածում ունեին Ղարաբաղում: Ս. Տեր-Ավետիսյանը, առանձնապես զբաղվեց գիտարշավից, օգոստոսի 13-ից անցավ Խաչենով ու Ջրաբերդով, որտեղ տաս օրվա ընթացքում կարողացավ կազմել Խաչեն և Թարթառ գետերի ավազաններում գտնվող հնագույն հուշարձանների (դամբարանադաշտերի) ցուցակը, իսկ ազգագրական նյութեր հավաքելու և ճշտելու համար այցելեց հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կենտրոններ՝ Գանձասար և Խաթրավանք²⁵:

Գիտարշավի մասնակիցների մասնագիտական բարձր մակարդակը, աշխատանքների ճիշտ կազմակերպումը, հնարավորություն տվեցին մեկ ամսվա ընթացքում, ոչ մեծ կազմով, հավաքել պատմական, տնտեսագիտական, ազգագրական, հնագիտական, ցուցադրական (ավելի քան 100 լուսանկար) հսկայական նյութեր, որոնք ընդհանրացված տեսքով առաջին անգամ էին արտահայտում Ղարաբաղի բնակչության կյանքի ու կենցաղի ամբողջական պատկերը: Հետազոտման արդյունքները մասնագետների կողմից բարձր գնահատականի արժանացան: Գիտարշավի գործունեության մասին Անդրկովկասի գիտական ասոցիացիայի կողմից տրվեց հետևյալ գնահատականը. «Գիտարշավը մեծ աշխատանքներ է կատարել Լեռնային Ղարաբաղի,

²⁴ Իր մենագրության ներածականում հեղինակը գրում է, որ հետևելով այդ ծրագրին, մարզկենտրոն Ստեփանակերտից Ավետարանոց (Չանախչի), Թաղավարդ, Թաղլար և Տոդ գյուղերով միայնակ հասավ Հաղրուք, որտեղից էլ ամենահարավային՝ Ծամձոր գյուղ: Վերադառնալիս դարձյալ այցելեց Հաղրուք, այնուհետև Չրակուս, Սոս, Ճարտար, Գիշի, Ննգի և Դաշուշեն գյուղեր: Հետագայում, Ստեփանակերտ վերադառնալուց հետո, իր և Գ. Քոչարյանի երթուղիները համընկան ու միասին Վանք, Վաղուհաս, Հաթերք, Մաղավուս, Երիցմանկուք, Մեծշեն, Կուսապատ գյուղերի միջով մտան Մարտակերտ, որտեղից էլ անցան Աղդամ: Մանրամասն տե՛ս. *С. Д. Лисицян*, Армяне Нагорного Карабаха, Этнографический очерк, Ереван, 1992, с. 25.

²⁵ *С. Тер-Аветисян*, Памятники древности Нагорного Карабаха и скифская проблема – Известия научно-исследовательского института кавказоведения, вып.1, Тифлис.1934, с.1,5.

Քրդստանի և Ջանգեզուրի հետազոտման գործում: Տնտեսագիտական հետազոտություններ են կատարվել երեք շրջանների մի շարք գյուղերում, մասնավորապես Լեռնային Ղարաբաղում հատուկ ուշադրություն է դարձվել տնայնագործական ու արտագնա արհեստներին, Քրդստանում և Ջանգեզուրում նախօրոք կատարված ընտրությունը անկետային հարցման միջոցով հետազոտվել են ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը: Ազգագրական առումով առանձնապես կարևոր է պարզել Քրդստանի գավառի բնակչության կազմը և ծանոթանալ նրանց կենցաղի առանձնահատկություններին... Լեռնային Ղարաբաղի և Ջանգեզուրի ազգագրական հետազոտության նյութերը հնարավորություն տվեցին բնութագրելու կենցաղը, ավանդույթները և այդ մարզերի հայ բնակչության մտածելակերպը և պարզաբանելու այն փոփոխությունները, որոնք կատարվում են ժողովրդական կենցաղում ու վերջին տարիների մտածելակերպում»²⁶:

Կովկասագիտության պատմության մեջ այդ գիտարշավը նշանակալից իրադարձություն դարձավ մի քանի պատճառներով: Գիտարշավը կազմակերպող Ասոցիացիայի համար Օսեթիայի բազմակողմանի հետազոտման հետ մեկտեղ, այն համարվում էր հետագա լուրջ քայլ գիտարշավային հետազոտությունների գործունեության բնագավառում: Ստացված արդյունքները մեծ դեր խաղացին ու զգալի հետաքրքրություն առաջացրին ամբողջ Անդրկովկասի, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի և Ջանգեզուրի էթնիկ պատմության ու էթնոմշակութային ավանդույթների հետազոտման գործում:

Գիտարշավը կարևոր ուղենիշ դարձավ ոչ միայն կովկասագիտության, այլև հայ ազգագրության համար, քանի որ Ս. Լիսիցյանի բնութագրմամբ այն պետք է համարել բավականին մեծ տարածքի ազգագրական ընդգրկուն նկարագրի առաջին փորձ՝ Անդրկովկասի խորհրդայնացումից հետո²⁷:

Այսօրվա տեսանկյունից գնահատելով 1924 թ. Ղարաբաղ - զանգեզուրյան գիտարշավի արդյունքները՝ կարելի է ասել, որ նրա գիտական ու կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ անգնահատելի դաշտային նյութերը դարձան պատմության սեփականությունը, որոնք հավաքվել են 1920-ականների կեսերին, Անդրկովկասի հետհեղափոխական բարդ ու կարևոր առաջին տարիներին, երբ ամրապնդվում էին խորհրդային կարգերը, որոնց արդյունքում էլ սկսվել էր իրենց դարձնել ապրած շատ ավանդույթների վերացման կամ ձևափոխման գործընթացը: Գիտարշավից անմիջապես հետո հավաքված նյութերը ենթարկվեցին գիտական մշակման և Գիտական ասոցիացիայի ղեկավարների առաջարկությամբ (նրանք մեծ տեղ էին տալիս հրատարակչական գործունեությանը) պլանավորվեց հրատարակել Ասոցիացիայի «Աշխատանքներ» մատենաշարում²⁸:

²⁶ Закавказская Научная Ассоциация по изучению Кавказа и Ближнего Востока..., с.99.

²⁷ С. Д. Лисицян, Армянская этнография за 15 лет. – Советская этнография, 1936, №4-5, с.271.

²⁸ Մեծ նշանակություն էր տրվում նաև մեթոդական ձեռնարկների հրատարակմանը՝ նպատակ ունենալով օժանդակել դաշտային նյութերի հավաքմանը Անդրֆեդերացիայի հանրապետություններում ու մարզերում: Այս նպատակի համար Ասոցիացիան չորս լեզուներով (ռուսերեն, վրացերեն, հայերեն և թուրքերեն) հրատարակեց համապատասխան ծրագրեր, որոնք տրվեցին տեղերում աշխատող ու կարող անձանց՝ Ասոցիացիային արժեքավոր նյութեր տրամադրելու համար: Կարևոր էր նաև ԱԳԱ-ի աշխատանքը Կովկասի և Մերձավոր Արևելքի մասին գրականության մատենագիտական ցանկ կազմելու

Նախատեսվում էր հերթականությամբ հրատարակել «Ակնարկներ բնակչության տնտեսական կենցաղի, (Թ. Աթաբեկով և Գ. Քոչարյան), Լեռնային Ղարաբաղի հայերի (Ս. Լիսիցյան), Զանգեզուրի (Գ. Չուրսին) և Քրդստանի գավառի քրդերի (Լազո) ազգագրությանը, ինչպես նաև բոլոր երեք շրջաններին նվիրված պատմա-հնագիտական ակնարկ (Ս. Տեր-Ավետիսյան) և հոդված՝ Քրդստանի ու Զանգեզուրի քարայրների ու քարայրային կացարանների մասին (Ե. Պչեխնա)»²⁹:

Սակայն մի շարք հանգամանքների բերումով, որոնց մասին այժմ դժվար է դատողություններ անել, պլանավորված ոչ բոլոր ակնարկներն են ժամանակին հրատարակվել (Թ. Աթաբեկով, Լազո), իսկ Ս. Տեր-Ավետիսյանի, Ս. Լիսիցյանի, Ե. Պչեխնայի, ինչպես նաև Գ. Չուրսինի՝ աշխատանքներից մեկը հրատարակվեցին տարբեր ժամանակներում և բավականին ուշ, ընդ որում, գիտական այլ կազմակերպություններում: Այդ առումով, բացառություն կազմեցին Գ. Չուրսինի Օսեթիային և Քրդստանին վերաբերող աշխատանքները, ինչպես նաև Ղարաբաղին նվիրված Գ. Քոչարյանի աշխատանքը, որոնք հրատարակվեցին 1925 թ.:

Ինչ վերաբերում է Գ. Քոչարյանի հետազոտություններին, ապա ինչպես նշում է հեղինակը, նա «շրջել է Լեռնային Ղարաբաղում ու նյութեր հավաքել երկրամասի տնայնագործությունը հետազոտելու նպատակով... Այս հետազոտությունը լինելով ընդհանուր բնույթի, տալիս է զուտ կողմնորոշող նյութեր խորքային վերլուծության համար. և մի շարք հարցեր հետագա մանրամասն ուսումնասիրման կարիք ունեն»³⁰: Գ. Քոչարյանի աշխատանքը գնահատելի է այն առումով, որ հենվում է ոչ միայն իր իսկ գրառած դաշտային, այլև վիճակագրական բազմազան նյութերի, մասնավորապես «1921 թ. Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսական մարդահամարի արդյունքների», ինչպես նաև ֆինանսների ժողկոմի տվյալների վրա, որոնք հավաքվել էին հարկերի նպատակով, սակայն կարևորվում են նաև իբրև սկզբնաղբյուր:

Քանի որ այն ուներ տնտեսա-աշխարհագրական բնույթ, նրանում տրված էր տարածքի միջավայրի բնաաշխարհագրական, բուսականության, կենդանական աշխարհի, հանքային բազայի ընդհանուր բնութագիրը: Մեծ տեղ էր հատկացված Լեռնային Ղարաբաղի բնակչության հիմնական զբաղմունքներին՝ հողագործությանը (այդ թվում սակավահողության, հողի մշակման, ոռոգման, ցանքաշրջանառության և այլ խնդիրներին), խաղողագործությանը և գինեգործությանը, օղեթորմանը, անասնապահությանը, ձիաբուծությանը, շերամապահությանը և այլն: Ընդ որում, նշվածներից յուրաքանչյուրի համար բերվել են վիճակագրական տվյալներ՝ նոր կազմավորված բոլոր չորս վարչական շրջանների համար. Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ: Լուսաբանված է նաև առևտրի վիճակը, որը հանգամանքների բերումով (հետավորությունը կենտրոնից, ճանապարհների բացակայությունը, տնտեսավարման բնույթը) թույլ

գործում, որի համար 1924 թ. կատարվեց կովկասագիտության մասին եղած գրքերի հաշվառում, որոնք պահվում էին Թիֆլիսի պետական և հասարակական գրադարաններում. արդյունքում պարզվեց, որ տեղի գրապահոցներում շատ քիչ են նման գրքերը: Ստոցիացիայի գործունեության ձևերից մեկն էլ ինչպես Թիֆլիսում, այնպես էլ տեղերում կազմակերպված գիտական զեկուցումներն էին:

²⁹ Закавказская Научная Ассоциация по изучению Кавказа и Ближнего Востока..., с. 99-100.

³⁰ *Г. А. Кочарян*, Нагорный Карабах, Баку, 1925, с.3. Նշենք, որ հենց այդ ժամանակ, 1923թ. գիտաբանական արդյունքում, հրատարակվեց հետևյալ աշխատանքը. *Г. Ф. Чурсин*, Осетины (Этнографический очерк) – Труды Закавказской Научной Ассоциации, сер.1, Юго-Осетия, Тифлис, 1925, с.3-103.

էր զարգացած և հիմնականում իրականացվում էր ամենշաբաթյա շուկաներում՝ քոչվոր առևտրականների շնորհիվ: Միաժամանակ այդ պատճառները և հումքի պաշարների մեծ առկայությունը (բուրդ, մետաքս, կավ, փայտ, ծղոտ և այլն) ստեղծել են հարմար կացություն տնայնագործության հետևյալ ճյուղերի համար. բրդի վերամշակում, հյուսածո իրերի արտադրություն և այլն:

Գ. Քոչարյանը ուշադրություն էր դարձնում տնտեսական կարիքների համար պատրաստված տնայնագործական իրերի կիրառման բնույթի վրա, իսկ որոշ դեպքերում գեղարվեստական բարձրակարգ իրերի աստիճանական անհետացմանը, որոնք ժամանակին համարվում էին Ղարաբաղի հպարտությունը՝ գորգեր, խուրջիներ, անկողնակալներ (մաֆրաշներ) և այլն: Սրանց պատճառը և՛ տնտեսական էր (գործարանային ավելի բարձր տեխնոլոգիական արտադրության ներթափանցումը) և՛ սոցիալ-քաղաքական, որը «կապված էր վերջին տարիների դեպքերի և հատկապես Շուշիի ավերածությունների հետ, որտեղ պատերազմից առաջ գլխավորապես կենտրոնացված էին ղարաբաղյան գորգերի լավագույն տեսակները»³¹: Պետք է ընդգծել, որ այդ տվյալները ունեն ոչ միայն տնտեսական, այլև զգալի ազգագրական հետաքրքրություն, քանի որ արտացոլում են Ղարաբաղի գյուղացիության ավանդական տնտեսության ու կենցաղամշակութային կարևոր ոլորտները, որոնք պահպանել էին իրենց նշանակությունը՝ սկսած անցյալ դարի 20-ականներից: Չնայած Գ. Քոչարյանի աշխատանքը նվիրված էր Լեռնային Ղարաբաղի տնտեսությանը, նրանում կային նաև մի շարք տեղեկություններ, որոնք կապված էին Ղարաբաղի հայերի էթնիկ պատմությանը և սոցիալ-հասարակական կյանքին: Ուշադրության է արժանի գրքի հավելվածում գետեղված «Լեռնային Ղարաբաղի բնակավայրերի ցուցակը ըստ վարչական միավորների» և «1921 թ. Ադրբեջանի գյուղատնտեսական մարդահամարի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի տվյալները»: Գ. Քոչարյանը այս տվյալներում եղած անճշտությունները ուղղել է Լեռնային Ղարաբաղի վիճակագրական բյուրոյի թվերի հիման վրա: Նրանցում ներկայացված էին տվյալներ տնտեսությունների թվի, տարիքային կազմի, գերակշռող ազգությունների և առկա տղամարդկանց ու կանանց կրթական մակարդակի մասին՝ բոլոր վարչամիավորումներում ու ամբողջ Լեռնային Ղարաբաղում³²: Ընտանեկան ու հասարակական կյանքի հետազոտման համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում արտագնա արհեստագործության լայն տարածման տվյալները (արտագնացություն դեպի հարթավայրեր ու քաղաքներ), որոնք կարևոր դեր խաղացին Լեռնային Ղարաբաղում և կարևոր նշանակություն ունեցան Ղարաբաղի հայերի տնտեսության ու մշակութային կյանքում³³:

³¹ Գ. Ա. Կոչարյան, Нагорный Карабах..., с. 34.

³² Գ. Քոչարյանը «Բնակչություն» բաժնում նշում է, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանից առանձնացվել է որպես Ինքնավար Մարզ ազգային մեծամասնություն ունենալու հետևանքով. հայերը կազմում էին ամբողջ բնակչության 94.4, իսկ թուրքերը՝ 5.6%-ը, միևնույն ժամանակ նա գտնում է, որ 1921 թ. գյուղատնտեսական մարդահամարի տվյալներում կան անճշտություններ, մասնավորապես բնակչության ազգային կազմը ներկայացնելիս, քանի որ Լեռնային Ղարաբաղում կան նաև խառը բնակեցված գյուղեր (նույն տեղում, էջ 8, 46): Նշենք, որ այս տվյալները տեղ են գտել նաև ԼՂԻՄ-ի վիճակագրության 1969 թ. վիճակագրական ժողովածուի մեջ: Статистика Нагорный Карабах за годы советской власти (краткий статистический сборник), Степанакерт, 1969, с. 7.

³³ Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի ուսումնասիրության նկատմամբ չթուլացող հետաքրքրության

Լեռնային Ղարաբաղի հնագիտական հետազոտությունների արդյունքները Ս. Տեր-Ավետիսյանի կողմից ամփոփվել են հրատարակվել են միայն 1934 թ.: Ներկայացնելով Ղարաբաղի հուշարձանների նախապատմությունը նա արժևորել է Է. Ռեպերի և Խաչիկ վարդապետ Դադյանի կատարած հնագիտական պեղումները: Ս. Տեր-Ավետիսյանը, կենտրոնացած լինելով դամբարանների հետազոտությամբ, հատուկ ուշադրություն էր դարձնում նրանց տեղադրությանը, արտաքին ձևին ու տիպին, թաղման ձևերին, ինչպես նաև պեղումների գույքին: Նա անգնահատելի էր համարում այն դերը, որ ունեն Ղարաբաղի դամբարանները հին դարաշրջանի մշակույթի հետազոտման գործում: Այդ հուշարձանների մեծ մասը ներկայացնում են բրոնզի դարի տարբեր ժամանակաշրջանները և մեզ ծանոթացնում են տարբեր արհեստներին, մասնավորապես մետաղագործությանը³⁴: Հենվելով Է. Ռեպերի և Խաչիկ վարդապետի հնագիտական նյութերի, Կովկասի հին մշակույթի գիտակ, մարդաբան Ռ. Վիրխովի եզրակացությունների, Ն. Մառի՝ Կովկասի ժողովուրդների լեզուների նոր հետազոտությունների, ինչպես նաև իր ուսումնասիրությունների արդյունքների վրա, Ս. Տեր-Ավետիսյանը եկավ այն եզրահանգման, որ նմանություններ կան Ղարաբաղի դամբարանների և սկյութական մշակույթի միջև³⁵: Այս աշխատանքի հրատարակումից առաջ, 1926 թ. սկզբներին, գիտնականն իր աշխատանքի մասին հաղորդեց Կովկասի պատմա-հնագիտական ինստիտուտի գիտական խորհրդում՝ իր տպավորությունները կիսելով Լեոնիդ Գրադի գործընկերների հետ, որն էլ խթան հանդիսացավ մասնագետների հետաքրքրություններն ուղղորդելու դեպի Լեռնային Ղարաբաղի հնագիտական հուշարձանները: 1926 թ. գարնանը Ադրբեջանի ուսումնասիրման ու հետազոտման ընկերությունը Ի. Մեշչանինովի ղեկավարությամբ գիտարշավ կազմակերպեց Ղարաբաղի դամբարանները ուսումնասիրելու նպատակով³⁶:

Ս. Լիսիցյանին են պատկանում Լեռնային Ղարաբաղի 1924 թ. գիտարշավի ազգագրական հետազոտության արդյունքները, որոնք ավելի ամբողջական են ու ընդհանրացնող: Սա Լեռնային Ղարաբաղի հայերի առաջին ազգագրական համակողմանի հետազոտությունն է: Իբրև ժամանակի հայտնի հայագետ՝ Ս. Լիսիցյանի համար սա առաջին դաշտային աշխատանքի բավականին հաջողված մի փորձ էր: Լեռնային Ղարաբաղում նա հավաքել է բազմաբնույթ հսկայածավալ նյութեր՝ միաժամանակ ճշգրտելով ու լրացնելով Ե. Լալայանի ավելի վաղ հավաքած նյութերի հավաքածուն:

Ս. Լիսիցյանը հաշվի էր առել կարևոր մի հանգամանք. թեպետ Ե. Լալայանի դաշ-

վկայություն էր համարվում Գ. Մեյրանի աշխատանքը, որը նվիրված է Ղարաբաղի տնտեսական կյանքին և զարգացման հեռանկարներին և ուներ տնտեսա-աշխարհագրական բնույթ: Նրանում արտացոլված են նման հետազոտություններին բնորոշ տեսակետներ, բացառությամբ առևտրի ու տրանսպորտի ոլորտներին: Հատուկ արժեք ունեն ոչ միայն հեղինակի կողմից տեղերում հավաքված, այլև աշխատանքում լայնորեն օգտագործված բազմաբնույթ նյութերը, որոնք գրառվել են Մարգգործկոմի արխիվից, ժողկրթության, առողջապահության բաժիններից, Ղարաբաղի հողժողկոմի հաշվետվություններից, Կենտրոնական վիճակագրական վարչության Վիճակագրական տեղեկագրերից և 1925 ու 1927 թթ. Անդրկովկասի տնտեսա-վիճակագրական ժողովածուներից: Տե՛ս **Գ. Մեյրան**, Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա զարգացման հեռանկարները (Տնտեսական աշխարհագրություն), Թիֆլիս, 1928:

³⁴ **С. В. Тер-Аветисян**, Памятники древности Карабаха и скифская проблема..., с. 14, 15.

³⁵ Там же, с. 20-26.

³⁶ **И. И. Мещанинов**, Археологическая экспедиция Общества в Нагорный Карабах и Нахкрай, Известия Общества исследования и изучения Азербайджана, Баку, 1927, №4, с. 104-107.

տային հավաքչական աշխատանքների ժամանակահատվածից անցել է շուրջ 30 տարի, սակայն 19-20 դդ. սահմանագլխի հայ իրականության մեջ մեծ տարբերություններ կային նախահեղափոխական Հայաստանի (Ե. Լալայանի կողմից նյութերի մշակման) և Խորհրդային Հայաստանի առաջին տասնամյակում՝ նրա դաշտային հավաքչական գործունեության ժամանակների միջև: Ավելի ուշ՝ 1937 թ., նա այս տարածաշրջանում լրացուցիչ հետազոտություն կատարեց՝ հիմնականում ուշադրությունը բնեղելով անցած տասնամյակի մշակութային շինարարության ձեռքբերումների վրա: Ընդհանրացնելով ու վերլուծելով հավաքված նյութերը՝ նա գրեց պատմա-ազգագրական հետազոտություն՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի հայերին:

Մենագրության մեջ, որը սկսվում է աշխարհագրական ակնարկով, մանրամասն լուսաբանվում են բնակչության թիվն ու էթնիկ կազմը, տնտեսության և նյութական մշակույթի (գբադունք, բնակավայր, բնակարան, ինտերեր, կահ-կարասի, սնունդ, հագուստ) հիմնական տեսանկյունները, ընտանիքի ու ընտանեկան սովորույթների ու լորտները (հարսանեկան, ծննդյան, թաղման սովորույթները), ներընտանեկան ու դրացիական հարաբերությունները, փոխօգնության ձևերը, հոգևոր մշակույթի տարբեր կողմերը, մասնավորապես հավատալիքներն ու նրա հետ կապված պաշտամունքների բազմաթիվ ձևերը, ինչպես նաև օրացուցային տարեկան ցիկլի տոները: Հայերի նյութական և հոգևոր ավանդական մշակույթի բոլոր տեսանկյունները դիտարկվել են երկու համատեքստով՝ պատմական հետադարձ հայացքով (ռետրոսպեկտիվ) և սոցիալիստական շինարարության վերափոխումներով: Մեթոդական նման մոտեցումը նշված տարածքը հետազոտելիս, նրա համար պատահական չէր: Ս. Լիսիցյանը ընդգծել է, որ Լեռնային Ղարաբաղը հայկական եզակի այն երկրամասերից է, որի բնակչությունը ձևավորվել է պատմական վաղ դարաշրջանում, հետագայում պահպանել է իր էթնիկ կազմը, թեպետ նրա տարաբնակեցման արեալները, որ ուներ 17-18 դդ., նվազել են: Միևնույն ժամանակ, որպես գերակշռող մեծամասնություն կամ ամբողջապես զրկվել են բնիկ հայ բնակչությունից (Արևմտյան Հայաստան), կամ իրենց վրա կրել են այլ գավառների ազգագրական տարբեր խմբերի ազդեցությունը (օրինակ, Շիրակում և Արարատյան դաշտում), որը մեծ չափով կորցրել է իր նախնական խոսակցական ու կենցաղային նկարագիրը: Այդ առումով Լեռնային Ղարաբաղը հիմնականում պահպանել է կենցաղամշակութային ժառանգությունը: Ինչ վերաբերում է թուրք (ադրբեջանական) ժողովրդին, ապա այժմ նրանք կազմում են ամբողջ բնակչության (149 հազ. մարդ) գրեթե 10%-ը, ընդ որում Շուշի քաղաքում նրանց թիվը հասնում է չորս հազարի³⁷:

Ս. Լիսիցյանի աշխատանքը համարվում էր Հայաստանի պատմա-ազգագրական առանձին շրջանի ազգագրական առաջին հետազոտությունը, որում լիովին արտացոլված են հայերի ավանդական կյանքի ու կենցաղի հիմնական յուրահատկությունները: Ավանդական շատ երևույթներ ու կանոններ հայկական իրականության մեջ շարունակեցին կենցաղավարել հետհեղափոխական առաջին տասնամյակում, որը գիտնականը մանրամասն գրանցել էր 1924 թ. Լեռնային Ղարաբաղ կատարած գիտարշավի ժամանակ: Ս. Լիսիցյանի այս աշխատանքը շատ դժվար էր և ուներ անսովոր ճա-

³⁷ *Степан Лисицян*, Армяне Нагорного Карабаха, Этнографический очерк, Ереван., 1992, с. 41, 43. Միևնույն ժամանակ գիտնականը նշում էր, որ մինչ հեղափոխությունը թուրքալեզու ժողովուրդներին պաշտոնապես անվանում էին «թաթարներ»:

կատագիր. այն տպագրվեց միայն մեր օրերում: Այդ գրքի հրատարակման հետ կապված դժվարությունների մասին են վկայում նրա անձնական արխիվի փաստաթղթերը³⁸: Մենագրությունը, որ հեղինակը պատրաստել էր հրատարակման 1930-ականների կեսերին, լույս տեսավ տասնամյակներ հետո, երբ Երևանի նրա արխիվում 1970-ականների վերջերին պատահաբար գտնվեցին ձեռագրերը, որոնց շատ էջեր խունացած էին ու դժվար էին կարդացվում: Հաշվի առնելով նրա գիտական մեծ նշանակությունն ու նրանում ներկայացված դաշտային եզակի նյութերը, որոնք պատմական արժեք ունեն, ինչպես նաև հետաքրքրությունը այդ աշխատանքի նկատմամբ, հատկապես Լեոնային Ղարաբաղի խնդրի առնչությամբ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտխորհուրդը որոշեց այն հրատարակել: Ս. Լիսիցյանի արժեքավոր ու եզակի այդ մենագրությունը (խմբագիրներ՝ Դ. Վարդումյան, Լ. Վարդանյան) սկզբում հրատարակվեց հայերեն թարգմանությամբ ու պատկերազարդ բազմաթիվ նյութերով (1981 թ.), ապա ռուսերեն բնագրի հիման վրա (1992 թ.)³⁹: Այն գրավեց գիտական հասարակության ուշադրությունը և արժանացավ մասնագետների բարձր գնահատականին:

Լեոնային Ղարաբաղի հայերի ուսումնասիրության հետ մեկտեղ 1924 թ. գիտարշավը ունեցավ նաև ոչ պակաս կարևոր այլ արդյունքներ: Հավաքած դաշտային նյութերի հիման վրա Ս. Լիսիցյանը մի շարք խնդիրներ առաջ քաշեց ու գիտական վերլուծման ենթարկեց, որոնք նախկինում չէին լուսաբանվել ոչ միայն հայ, այլև խորհրդային ազգագրության մեջ: Հենց Ղարաբաղյան գիտարշավի նյութերն էլ սկիզբ դրեցին Ս. Լիսիցյանի հետագա բազմամյա ուսումնասիրություններին, որոնք ուղղված էին

³⁸ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 428, Լիսիցյանների ընտանեկան ֆոնդ, ց. 2, գ. 126, 307, ց. 3, գ. 103, ց. 4, գ. 300, 306, 307, 336, 341, 345: 1930-ականների ընթացքում ձեռագրերի հրատարակման համար հետաքրքրված են եղել մի շարք կազմակերպություններ. Անդրկովկասյան գիտական ասոցիացիան (ք. Թիֆլիս), որը կազմակերպել էր գիտարշավը, ԼՂԻՄ-ի ժողկրթության բաժինը (ք. Ստեփանակերտ), Ն. Մառի անվան կովկասագիտության ինստիտուտը (ք. Թիֆլիս), ՍՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտը (ք. Լենինգրադ), որոնք 1936 թ. պայմանագիր կնքեցին հեղինակի հետ դրանք հրատարակելու, սակայն 1936-1940 թթ. իրականացնել չհաջողվեց, ԳԱ Աղբյուրների մասնաճյուղի պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտը (հետագայում՝ Աղբյ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ): 1940 թ. հանգամանքների բերումով, պատրաստի ձեռագիրը Լենինգրադից ուղարկվում է Բաքու՝ հրատարակելու: Սակայն այն ոչ միայն չհրատարակվեց, այլև չվերադարձվեց հեղինակին, իսկ նրա մահից հետո (1947 թ.)՝ օրինական ժառանգներին, որոնց բազմաթիվ պահանջները (քսանհինգամյա) մնացին անպատասխան: Այս փաստաթղթերը մասամբ հրատարակվել են աշխատանքի հավելվածում: Տե՛ս. *Степан Лисицян*, Армяне Нагорного Карабаха... с. 191-206. Մանրամասն տե՛ս նաև. *Л. М. Варданян*, Степан Лисицян и истоки армянской этнографии..., с. 287-292.

³⁹ *Ս. Դ. Լիսիցյան*, Լեոնային Ղարաբաղի հայերը (Ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր և ուսումնասիրություններ, հ. 12, Երևան, 1981, էջ 7-84, *Степан Лисицян*, Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк, Ереван., 1992. 1920-1930-ականներին գրված այս աշխատանքը խմբագրելիս ձեռագրի ստուգման համար մեզանից մեծ ջանքեր պահանջվեցին, կազմվեցին անհրաժեշտ մեկնաբանություններ ու համապատասխան գիտա-տեղեկատվական ապարատ: Ռուսերենով հրատարակելու համար Լ. Մ. Վարդանյանի կողմից կազմվել է ազգագրական հին բառերների բացատրական բառարան (գլոսարի) և տեքստում առկա աշխարհագրական անունների, պատմական հուշարձանների և սրբատեղերի ուղեցույց, ինչպես նաև գրվել է նախաբան «Խմբագրի կողմից», որում բնութագրվել է Ս. Դ. Լիսիցյանի գիտական կենսագրությունը: Լեոնային Ղարաբաղի Բնքնավար Մարզի քարտեզը (1920-1930 թթ.) կազմել է Հ. Գ. Սարգսյանը:

Էթնոսի ազգագրական կարևոր օբյեկտներից մեկի՝ ավանդական բնակարանի հետազոտման գործին:

Լեռնային Ղարաբաղի հայերի ժողովրդական բնակարանին նվիրված նրա աշխատանքում մանրամասն նկարագրված են բնակելի տան և տնտեսական կառույցների հիմնական մասերն ու դետալները, նրանց նշանակությունը, ընդ որում տրված են տերմինների բացատրությունը հայերեն ու ռուսերեն լեզուներով⁴⁰: Առաջին անգամ ավանդական բնակարանը դիտարկվում էր ոչ միայն որպես հայ ժողովրդի նյութական մշակույթի արժանահիշատակ ուղորտներից մեկը, այլև որպես կարևոր աղբյուր Էթնոճագումնաբանական խնդիրների լուծման համար: Այս աշխատանքում Ս. Լիսիցյանը հայ ազգագրության մեջ առաջին անգամ փորձեց ներկայացնել ավանդական հայկական բնակարանի տիպաբանական դասակարգումը, որին հետագայում նվիրեց իր հետազոտությունների զգալի մասը: Գիտնականի արժեքավոր ներդրումներից էր նաև (ղարաբաղյան նյութերի հիման վրա) այսպես կոչված «գյուղացիական ժողովրդական» և հայկական պաշտամունքային կառույցների միջև եղած որոշակի ծագումնաբանական կապի բացահայտումը: Նրա կարծիքով միայն ղարաբաղյան բնակարանի հետազոտումը «հիմք է հանդիսանում անմիջական կապ տեսնել նրա հատակագծի և հայկական եկեղեցական գավթի՝ ժամատան միջև»: Ս. Լիսիցյանի այս աշխատանքը սկիզբ դրեց հայկական ժողովրդական բնակարանի նրա բազմամյա ուսումնասիրություններին, որը մենագրության տեսքով ավարտել այդպես էլ չհասցրեց: Նրա հետազոտությունների ոչ պակաս կարևոր օբյեկտներից էին հայերի սոցիալ-հասարակական ինստիտուտները և հոգևոր մշակույթի խնդիրները: Ղարաբաղյան գիտարշավի ժամանակ նա առաջին անգամ նյութեր հավաքեց «սուրբ» կամ «խաչ» հայ իրականության մեջ լայն տարածում գտած տեղական սրբերի պաշտամունքի մասին:

Տեղական պաշտամունքի թեմային նա մեծ ուշադրություն էր դարձնում նաև հետագա տարիներին, որի մասին վկայում են 1920-1930 թթ. դաշտային նյութերի բազմաթիվ տվյալները և հայ փախստականներից արված գրառումները: Հսկայածավալ այս նյութերի վերլուծությունը վկայում է, որ Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Հայաստանի պատմա-ազգագրական այլ մարզերի հայերի համար հարգանքի տուրք մատուցելու և պաշտամունքի «սուրբ» տեղեր էին ծառայում. 1. լեռնագագաթները, լեռնալանջերը, լեռնանցքները, ձորերը, առանձին ժայռերը, քարայրերը, գլաքարերը, քարակույտերը և այլն, 2. աղբյուրները, 3. պուրակները և ծառերը, 4. հանուն հավատի նահատակ-ճգնավորների գերեզմանները, 5. մարդկանց գերեզմանները, ովքեր մահացել են ոչ բնական մահով և առանց հաղորդման թաղվածները (ինքնասպանություն գործածները, խեղդվածները, սպանվածները, մարտում զոհվածները և այլն), 6. «սուրբ» օջախները:

Ս. Լիսիցյանի Լեռնային Ղարաբաղի (1924 թ.) և Զանգեզուրի (1931 թ.) գիտարշավի նյութերի հիման վրա մեր կողմից բացահայտվեցին կարևոր մանրամասներ, որոնք վերաբերում են պաշտամունքի առանձին օբյեկտներին և աշխատանքի հեղինակակից Էթնոժողովրդագիր-քարտեզագիր Հ. Գ. Սարգսյանի հետ կազմվեց քարտեզ՝ տվյալ պատմամշակութային արեալում դրանց տարածման վերաբերյալ⁴¹:

⁴⁰ *С. Д. Лисицян*, К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам) – Известия Кавказского историко-археологического института, Тифлис, 1925, т. 3, с. 97-108.

⁴¹ *Լ. Ս. Վարդանյան, Հ. Գ. Սարգսյան*, Հայոց սրբավայրերի դասակարգման փորձ (ըստ Ստ. Լիսիցյանի

Սրբերի պաշտամունքի հետ էր կապված անհատական ու համայնքային ուխտագնացությունը, որի ժամանակ տեղերում պարտադիր էին ծիսական համալիր արարողությունները, այդ թվում աղոթքը և մատաղը: Տարեկան ցիկլին որոշակի տոների հարմարեցումը, համայնքային ուխտագնացությունը, կազմում էին հայերի հոգևոր կյանքի ու ավանդական կենցաղի անբաժանելի մասը: Բերելով բազմակողմանի համեմատական նյութեր ոչ միայն Հայաստանի տարբեր պատմա-ազգագրական մարզերից, այլև Արևմտյան Եվրոպայից, Ս. Լիսիցյանը բացահայտեց «լեռնանցքների սրբերի» պաշտամունքի զարգացման, փոփոխության շարժընթացը՝ ամենահին պարզունակ ձևերից մինչև սոցիալ-հասարակական բարդ ինստիտուտները⁴²:

Պետք է նշել, որ Ս. Լիսիցյանի հետազոտությունները, որոնք հիմնված են Ղարաբաղի գիտարշավի նյութերի վրա, խնդիրների առաջադրմամբ զգալի դեր խաղացին Կովկասի ազգագրության զարգացման գործում և չեն կորցրել իրենց արդիականությունը:

Վերը դիտարկված խնդիրների համալիրում հարկավոր է նշել նաև խորհրդային հայտնի գիտնական-պարսկագետ Ի. Պետրուշևսկու (1898-1947 թթ.) հետազոտությունները. նա այդ նույն ժամանակահատվածում՝ 1928 թ. ամռանը, Ադրբեջանի հետազոտման ու ուսումնասիրման ընկերության հանձնարարությամբ այցելեց Լեռնային Ղարաբաղ և Ջանգեզուր՝ «նպատակ ունենալով ծանոթանալ Լեռնային Ղարաբաղի հայերի արդի հավատալիքներին և մարզում Հայոց Եկեղեցու գործերին: Խնդիր էր դրված պարզել, թե Ղարաբաղցիների կրոնական հավատքում ինչ տեղ են գրավում և ինչ փոխհարաբերությունների են ենթարկվել քրիստոնեական ու մինչքրիստոնեական տարրերը մեր օրերում»:

Ջանգեզուրի գիտարշավում ազգագրական հետազոտությունները կատարվում էին Գ. Չուրսինայի կողմից: Ջանգեզուրի հայերի վերաբերյալ դաշտային աշխատանքների ընթացքում նա ուշադրություն դարձրեց ռուսական ու հայկական գրականության մեջ եղած ազգագրական նյութերի առկայության, նրանց նկարագրական և հնացած բնույթի վրա, ինչպես նաև «այլ տեղերի հայերին ու մյուս ժողովուրդներին վերաբերող համեմատական նյութի բացակայությանը՝ նպատակ ունենալով պարզաբանել Ջանգեզուրի հայերի մեջ արմատացած ու պահպանված կենցաղի ձևերն ու մտածելակերպը»: Այս առումով նա իր առջև խնդիր դրեց ներկայացնել ոչ միայն հայ բնակչության կենցաղին նվիրված համառոտ ակնարկ, այլև տալ 1924 թ. ինչպես իր հավաքած, այնպես էլ գրականության մեջ առկա նյութերի համեմատական վերլուծություն: Համեմատություններ ու եզրահանգումներ տալու համար լայնորեն օգտագործել էր Կովկասի ժողովուրդների և այլ շրջանների ազգագրական համապատասխան տվյալները⁴³:

Հենվելով իր դաշտային նյութերին, ինչպես նաև օգտագործելով Ե. Լալայանի տվյալները, որ տպագրվել էին «Ազգագրական հանդես»-ում և ժողովրդական ուսուցիչներ Ե. Մելիք-Շահնազարովի, Ն. Գրիգորովի, Ն. Շիրակունու և այլոց «Կովկասի

Ջանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի դաշտային ազգագրական նյութերի), Երևան, 2001, էջ 368-376:

⁴² *С. Д. Лисицян*. Святыни у перевалов – Советская этнография, 1936, №4-5, с. 200-212.

⁴³ *Г. Ф. Чурсин*. Армяне Зангезура, Краткий этнографический очерк, Научные записки Закавказского коммунистического университета, 1, Тифлис, 1931, с. 229. Նշենք, որ գիտնականի մյուս աշխատանքը նվիրված է 1925 թ. նրա Աբխազիայում կատարած հետազոտություններին և հրատարակվեց տասնամյակներ անց, տե՛ս. *Чурсин Г. Ф.* Материалы по этнографии Абхазии. Сухуми, 1957.

տեղանքի ու ցեղերի նկարագրություն» ժողովածուի տարբեր համարներում լույս տեսած նյութերը, Գ. Չուրսինը գրեց համառոտ, բայց տեղեկատվությամբ հագեցած ազգագրական ակնարկ Զանգեզուրի հայերի մասին: Նրանում ներկայացված են բնակչության հիմնական զբաղմունքները (հացահատիկի մշակում, անասնապահություն, մեղվապահություն, որսորդություն), բնակարան, ծննդի, հարսանիքի, թաղման ավանդույթները, հավատալիքները (կրակի, աղբյուրի, ծառերի, կենդանիների պաշտամունք):

Անդրադառնալով Զանգեզուրի բնակչության ազգային կազմին՝ գիտնականը ընդգծել է նրա «արմատական փոփոխությունը 1920 թ. հայ-թուրքական ընդհարումից հետո»: Աշխատանքում ներկայացված են 1886 թ. «ընտանեկան ցուցակների», 1897 թ. Առաջին համառոտաստանյան մարդահամարի, 1922 թ. Գյուղատնտեսական մարդահամարի, 1926 թ. Համամիութենական մարդահամարի տվյալները, որոնք վկայում են, որ չնայած ակտիվ տեղաշարժերին, Զանգեզուրում բնակչության գերակշռող մասը կազմում էին հայերը⁴⁴: Այդ նույն գիտարշավի ժամանակ Գ. Չուրսինը Քրդստանի գավառում նյութեր հավաքեց նաև քրդերի ազգագրության վերաբերյալ (հիմնականում՝ Մինքենդ գյուղից), որի հիման վրա էլ նա գրեց «Ադրբեջանի քրդերը» աշխատանքը: Այս կապակցությամբ նա գրեց. «Քանի որ Ադրբեջանի քրդստանի քրդերը մինչ օրս երբևէ չեն ուսումնասիրվել, ես ինձ թույլ եմ տալիս մտածելու, որ իմ հավաքած տեղեկությունները կարող են ինչ-որ չափով հետաքրքրություն ներկայացնել»⁴⁵: Նշենք, որ նման հետաքրքրությունը մեծ է նաև այն առումով, որ Գ. Չուրսինի կողմից դաշտային նյութերը հավաքվել են 1923 թ.՝ Քրդստանի գավառը որպես հատուկ վարչամիավոր ստեղծվելուց անմիջապես հետո: Ուշագրավ է, որ 1925 թ. հրատարակված արժեքավոր այս աշխատանքում ներկայացված է ընդհանուր ակնարկ Քրդստանի գավառի մասին, համառոտ նկարագրված են բնակչության գլխավոր զբաղմունքները (հողագործությունը, նրա գործիքները և մեղվապահությունը), բնակարանը, սննդի համակարգը, նահապետական կարգերի մնացորդները: Ավելի հանգամանորեն են ներկայացված ընտանեկան ավանդույթները (ծննդի, հարսանեկան, թաղման սովորույթները) և ընտանեկան հարաբերությունները, ինչպես նաև նրանց մոգական ու տիեզերածին պատկերացումները:

Տարածքի հնագիտական աշխատանքների արդյունքների մասին համառոտ տեղեկություններ է պարունակում Անդրկովկասի գիտական ասոցիացիայի 1924 թ. աշնանը իրականացրած հետազոտությունների ամփոփագրում կամ հաշվետվության մեջ. «Հնագետ Տեր-Ավետիսյանը Լեռնային Ղարաբաղում և Քրդստանում հետազոտել է Ղոշավանքը, Ջրաբերդը, հայտնաբերել է դամբարանների նոր խմբեր (թաղումներ), Զանգեզուրում նկարագրել է Բաղաբերդի ու Հալիձորի ամրոցները, Տաթևի ու Վորոտնա վանքերը: Հնագետ Ե. Պչելինան նկարագրել է Քրդստանի ու Զանգեզուրի բազմա-

⁴⁴ Գ. Փ. Կուրսին, Армяне Зангезура..., с. 229-230.

⁴⁵ Գ. Փ. Կուրսին, Азербайджанские курды (Этнографические заметки) – Известия Кавказского историко-археологического института, т. 3, Тифлис, 1925, с. 1. Նշենք, որ մինչ այդ Ադրբեջանի Քրդստանի գավառի քրդերի մասին համառոտ տեղեկանք է եղել միայն **В. Ф. Минорский**, Курды (заметки и впечатления) – Журнал Министерства Иностранных дел, кн. III, Пг., 1915, с. 191; **С. А. Елизаров**, Краткий экономический очерк курдов Эриванской губ. – Записки Кавказского отд. Императорского Русского географического общества, кн. XIII, вып. 2, с. 8, примечание 2 աշխատանքներում:

թիվ քարայրեր, որոնցից շատերը բնակչության կողմից օգտագործվում են խոտ ու դարման պահելու համար, մասամբ նաև որպես անասունների փարախ և վերջապես՝ ապրելու համար»⁴⁶։ Ե. Պչելինայի աշխատանքը, որ լույս տեսավ միայն 1932 թ., ազգագրական բնույթի էր⁴⁷։ Այն նվիրված էր Քրդստանի գավառի արհեստական ու բնական քարայրերին, որոնք տեղացի քրդերի կողմից օգտագործվում էին ոչ միայն որպես բնակարան, այլ նաև անասնագոմ։ Հեղինակը նկարագրում է քարայրային կացարանի ներքին կառուցվածքը, կահ-կարասին, սնունդ պատրաստելու օջախի և հաց թխելու «թոնդիրի» կառուցվածքը, նշում է նաև քրդերի գետնափոր տների՝ «ղարաղամների» մասին։ Նա համառոտ բնութագիր է ներկայացնում այդ շրջանի քրդերի գլխավոր զբաղմունքների մասին, կեսդարյա անասնապահության ու հողագործության (հողի մշակման հմտությունները), գյուղատնտեսական և տնային աշխատանքների սեռատարիքային կազմակերպման, ինչպես նաև քրդական ընտանիքում կնոջ վիճակի մասին։

Շատ հետաքրքիր են տեղական պաշտամունքների մասին եղած տեղեկությունները։ Մասնավորապես Ե. Պչելինան մանրամասն նկարագրում է «Յանիչ-Յուգորուկ» հին սրբավայրը և նրա շուրջ գտնվող գերեզմանոցը, ինչպես նաև հին գերեզմանաքարեր՝ ձիու և ոչխարի արձանների տեսքով, որոնք գտնվում էին Շալվա, Մինքենդ, Ղարաղլաղ գյուղերում։ Առանձնահատուկ ուշադրության են արժանի աշխատանքի նկարագրող նյութերը՝ քրդստանի ջոկատի գիտարշավի երթուղիների քարտեզը, լուսանկարները (քարայրային բնակարանի ընդհանուր տեսարանը, ավանդական գութանը, կամը, կահ-կարասին), Շալվա ու Ննաձախ գյուղերի քրդական ու հայկական գերեզմանաքարերի հարթաքանդակների նկարները, որոնք կատարվել են Ե. Պչելինայի կողմից։

Քրդերի պատմության ու ազգագրության մասին նյութերը, որ հավաքել է Լազոն (Հ. Ղազարյան) 1924 թ. և հետագա գիտարշավների ժամանակ մնացին չիրատարակված։ Մ. Դարվեշյանը, ուսումնասիրելով Լազոյի արխիվը, հատուկ ուշադրություն է դարձրել նրա ազգագրական ժառանգությանը⁴⁸։ Ձեռագրերում պահպանվել են արժեքավոր տեղեկություններ ավանդական կենցաղի ու նրա հետ կապված սովորույթների ամենատարբեր կողմերին, մասնավորապես հասարակական կյանքին, նահապետական մեծ ընտանիքին, ամուսնության ձևերին (այդ թվում, օրորոցային նշանդրեքին, առնանգմանը և այլն), ունեցվածքի իրավունքի նորմերը՝ կապված բաժանվող ամուսինների միջև ունեցվածքը կիսելու ժառանգության կարգին, հյուրընկալության սովորույթներին, երիտասարդ ամուսինների հանգստի կազմակերպման ձևերին։ Հետաքրքրություն են ներկայացնում նաև հարսանեկան, ծննդյան, թաղման ծեսերը, անպտղության բուժման մոգական միջոցները և ժողովրդական այլ հավատալիքներ։ Լազոյի արխիվի նյութերը, որ գիտական շրջանառության մեջ է դրել Մ. Դարվեշյանը, չեն կորցրել իրենց պատմագիտական նշանակությունը նաև մեր օրերում։ Նրանք հնարավորություն են ընձեռում վերականգնել ու վերլուծել ավանդական շատ կանոններ, որոնք

⁴⁶ Закавказская Научная Ассоциация по изучению Кавказа и Ближнего Востока..., с. 99.

⁴⁷ *Е. Г. Пчелина*, По Курдистанскому уезду Азербайджана (путевые заметки) – Советская этнография, 1932, №4, с. 108-121.

⁴⁸ *Մ. Դ. Դարվեշյան*, Հակոբ Ղազարյանը և քրդերի ազգագրությունը, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1984, թիվ 3, էջ 67-73:

քրդերի՝ այդ թվում Հայաստանի և Անդրկովկասի քուրդ-եզդիների կենցաղից վաղուց դուրս են մղվել:

Ամփոփելով Անդրկովկասի գիտական ասոցիացիայի 1924 թ. Լեռնային Ղարաբաղի, Քրդստանի գավառի և Զանգեզուրի համալիր գիտարշավի բազմակողմանի հետազոտման արդյունքները, անհրաժեշտ է ընդունել, որ այն մեծ ավանդ ունեցավ կովկասագիտության զարգացման գործում: Հայ և ռուս անվանի գիտնականների դաշտային արժեքավոր նյութերի հիման վրա կատարված հետազոտությունները չեն կորցրել իրենց այժմեականությունը և նշանակությունը: Լեռնային Ղարաբաղի էթնիկ պատմության և էթնոմշակութային ավանդույթների հետազոտությունը շարունակվեց նաև հետագա տարիներին: Բավականին նյութեր հավաքվեցին 1960-ականների վերջերին Հայկական ՄՄՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի դաշտային երեք գիտարշավների ընթացքում: Մեր ժամանակներում այս խնդրին բազմիցս անդրադարձել են հայ, ռուս, արտասահմանցի պատմաբանները, ազգագրագետները, հնագետները, բանագետները: Հրատարակված բազմաթիվ աշխատանքների ցանկը ներկայացնելը մեր խնդիրը չէ և դուրս է մեր հոդվածի շրջանակներից: Այս հարցի վերաբերյալ հիմնական ուսումնասիրությունների ընդհանուր ամփոփոգիրը, սկսած Ե. Լալայանից մինչև XX դ. 80-ականները, հանրագումարի է բերված Հ. Մարությանի, Հ. Մարգարյանի, Զ. Խառատյանի «Արցախի էթնոմշակութային բնութագրման շուրջ» աշխատանքում⁴⁹:

Արդի էթնոմշակութային գործընթացներին, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի ժամանակակից հայկական ընտանիքի խնդիրներին են նվիրված մոսկովյան ազգագրագետ Ա. Տեր-Սարգսյանցի մի շարք հետազոտություններ (դրանք ներկայացված են հեղինակի «Հայեր: Պատմություն և էթնոմշակութային ավանդույթներ» մենագրության մեջ, Մոսկվա, 1998): Նշենք, որ մեր օրերում գիտական հասարակության կողմից չթուլացող Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային հետաքրքրության վկայություն հանդիսացան «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Պատմությունը, ներկան, ապագան» միջազգային գիտաժողովները (Ստեփանակերտ, 2006, 2007 թթ.), որին մասնակցեցին բազմաթիվ մասնագետներ Հայաստանից, Ռուսաստանից, Իտալիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից: Այդ հետազոտությունների առաջին ու կարևոր խթան հանդիսացավ Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի գիտարշավը հեռավոր 1924 թ.:

⁴⁹ Правда о Нагорном Карабахе, Материалы и документы, Ереван, 1989, с. 40-54.

*ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆ**Բանասիրական գիտությունների թեկնածու*

ԿԵՑՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ ԵՎ ԲԱՌՈՂՈՐՏ

Հակոբ Մովսեսի Բանաստեղծությունները իրար շարունակություն և լրացում են: Հոգևոր տեքստը միասնական է, քրիստոնեական մշակույթի հիմնատարերը դրսևորվում են տեքստային կտրվածքի ամեն մի մասում: Ամբողջի և մասերի, ավարտունի և անավարտի փոխներթափանցումները, այնուամենայնիվ, առ ինքնազարգացող հիերարխիկ կառուցվածք ուղղված են իբրև Խոսք՝ հոգու հավասարաձև: Հոգին Խոսքի սահմանն է, և Խոսքը՝ նրա «կեցությունը» կամ ինքնադրսևորումը՝ իբրև կառուցվածք: Ստացվում է, որ Խոսքն իր արտահայտման հնարավորությունների համակարգով ձգտում է հոգու ինքնարտահայտման կառուցվածքի սահմանին: Ավելացնենք նաև, որ ցանկացած միջանկյալ, կրոնական, փիլիսոփայական ու գուտ գեղագիտական արտահայտության պլանում հոգին ինքնադրսևորման ներքին երկխոսական կերպ է ընդունում՝ իր մեջ կառուցվածքը բաժանելով բանաստեղծի պոետիկական ընկալումների, որոնք պայմանավորում են խոսքային ձևերն ու կաղապարները և բուն բանաստեղծական (Խոսքի) ինքնընթացը: Այո, Հ. Մովսեսի պոեզիայում, որպես ներքին հակադրություն նախադիր գեղագիտական-կազմաբանական հանգույցներին, սկսվում է Խոսքի ինքնընթացումը: Մենք ականատես ենք նախադիր կառուցվածքների և Խոսքի ինքնընթացի զարմանալի հանգուցումների: Մտնելով բանաստեղծական խոսքի մոդել՝ խոսքի ինքնընթացը կառուցվածքի պայմանականությունը վերածում է անպայմանականության, մոդելայինը՝ անմոդելայինի:

Բանաստեղծը նախապես առանձնացրել է ենթակառուցվածքներ, որոնք ընդհանուր կառուցվածքի ավարտի վերջնական պահով ընթացքում անկանխատեսելի զարգացումներ են ունենում: Բացի այդ, Հ. Մովսեսի Բանաստեղծության ընդհանուր կառուցվածքը ենթակա է ավելի մեծ կառուցվածքի հեռահար ազդեցության՝ ներքնապես ընդունելով որակական համակառույց ուղղություն: Ունիվերսալ մոդելների փորձը թափանցել է նաև Հ. Էդոյանի Բանաստեղծություն: Վերջինս մշակույթների և դիցաբանության բանաստեղծական սինթեզ է անում, այնինչ Հ. Մովսեսը՝ քրիստոնեական մշակույթի ներքին հոսքերի միասնացում: Նրա Բանաստեղծությունը առանձնանում է ներտեքստային «օպոզիցիաների» ներդաշնությամբ, կարծես դրանք բացակայում են: Մինչդեռ Հ. Էդոյանի Բանաստեղծության մեջ «օպոզիցիոն» մասերը «երկխոսության» մեջ են, և զարգացումն ընթանում է այդ հիմքով: Ձևավորվում են «աբսուրդ» հարցերը, որոնք Ս. Գրքի հարցադրումների արդի «պրոեկցիաներն» են: Հ. Էդոյանի պոեզիան դիմորոշվում է հին եգիպտական և ավետարանական լեզվամտածողական շերտերի հակադրամիասնությամբ (Ֆր. Հյուդեշիլը միավորում է հին հունականն ու քրիստոնեականը): Հ. Էդոյանը ավելի լայն է օգտագործում չափածոյի ունիվերսալ մոդելներ

հնարավորությունները:

Կյանքի և հոգևոր բանաստեղծության հղկված ինքնատիպ մոդել է ստեղծում Հ. Մովսեսը, որտեղ շրջանառվող կոդերը իրենց կայուն դիրքով կռահվում են, բացվում (այդ կոդերը քրիստոնեական գրականության մեջ գրքից գիրք են անցնում): Հ. Էդոյանը ենթագիտակցական հոսքը խարսխում է չբացահայտվող կոդերի վրա: Հ. Մովսեսի և Հ. Էդոյանի բանաստեղծական տեքստերում գեղարվեստական «ինֆորմացիոն» հատուկ դեր ունեն իրենցով «հատուկ լեզու» պայմանավորող բանալիների խմբերը: Մյուս բաները հարաբերվում են դրանց՝ իբրև իմաստակիր և մշակութակիր առանցքների: Հ. Մովսեսի բանաստեղծության պարագայում «հղումային» բառաշարքերը աստվածաշնչյան են և Նարեկացու պոեզիայից: «Հղված» բառախումբը կամ բառախմբերը գերկառուցվածքային տարրեր են, որոնցով պահպանվում է «արտաքին» կապը սեփական տեքստային կառուցվածքի հետ: «Արտաքին» կապի հիմամբ նոր ուղղորդում է ստանում սեփական տեքստը և մտնում է հոգևոր դաշտ:

Հ. Մովսեսը տեքստ է ներմուծում աստվածաշնչյան բառեր, երբեմն Նարեկացու տեքստերի հղմամբ և միջնորդությամբ: Նման բառերը նոր տեքստում պահպանում են նախորդ տեքստերում ունեցած իմաստային հարաբերություններն ու զուգորդումները: Մակայն դրանք չեն կղզիանում: Հ. Մովսեսի պոեզիայում բոլոր բառային հարաբերությունները հավասարեցվում են դրանց, մտնում հոգևոր բանաստեղծության բացառիկ պայմանականության ոլորտ: Բառային հարաբերությունները սովորական աստիճանից բարձրանում են այլասացական հարթակ: Բանաստեղծությունը ձուլվում է Խոսքին: Բանաստեղծության ժամանակը դառնալով միակը՝ հնարավոր է դարձնում ծիսականի «հավաքչությունը», վերականգնվում են քրիստոնեական նախնական համայնքի հարաբերությունները, մարդու և ներկա աշխարհի կապերը՝ դրանց վերադարձի պահերով: Խմբային կապերն ու հոգեբանությունը առանցքային են՝ տրված խոր անհատական չափումների և գնահատականի մեջ: «Ես»-ի սահմանը լուծվում է Քրիստոսի մարդկային բնույթի մեջ: «Ես»-ը Քրիստոսի «Ես»-ի անձնավորման կերպի մեջ է (ի դեպ, Հ. Մովսեսի պոեզիայի «գլխավոր հերոսի»՝ Քրիստոսի անունը ոչ մի անգամ չի տրվում):

Աստվածաշնչական և նարեկացիական բառախմբերը բանաստեղծի համար «էներգետիկ կենտրոններ» են, որոնք ապահովում են մշակութային անփոփոխ հաղորդականությունը: Բանաստեղծությունը հագնում է համադրականի հղկվածությամբ: Համադրականության նպաստները հասնում են առավելագույնին: Հնագույն սակրալ իմաստի բառերը իրենց երբեմնի ամբողջական շղթայի մեջ են ներքաշում արդիական կառուցվածքի ռեալությունը: Ընդհանրապես ողջ ժամանակը իր արդիականով և արդիականությամբ դառնում է ծիսական: Այն ժամանակ է և արդիական է այնքանով, որքանով գոյաբանական-ծիսական է: Եթե այդպիսին չէ՝ ժամանակն իր արդիականությամբ Հ. Մովսեսի բանաստեղծության մեջ չկա. այն բանաստեղծի համար թափոն է:

Հ. Մովսեսի բանաստեղծական աղերսներն առանձնանում են «Տաղ Յարութեան Գրիգորի Նարեկացույն ասացեալ» տաղի հետ իրենց բազմաբնույթ հարաբերություններով, թեև նարեկացիական «հղումները» շատ են և բազմապիսի: Ասենք, «Կիրակին արդեն իջնում է, իջնում Արարատ սարից» («Ասացեք, որ ես գալիս եմ»): Դժվար չէ

նկատել, որ տողը մեզ հղում է «Տաղ Յարութեան»-ի «Սայլն այն իջաներ ի լեռնէն ի Մասեաց» տողին (կան այլ տարբերակներ՝ «Իջնում է, իջնում նա Արարատից», «Իջնում է սայլը, գիշեր և ցերեկ...» և այլն): «Մեղեդի լռության» բանաստեղծությունը բառային կապի մեջ է Նարեկացու «Տաղ ծննդեան»-ի հետ՝ «Երգ բուրումնավետ, երգ զարդարելի, ջրին կայլակող / գովելի գեղ», «գեղ գովելի երփնագարդեալ»: Հ. Մովսեսը «Տաղ դիմավորման» բանաստեղծության մեջ «երփնագարդեալ» բառը օգտագործում է «երփնագարդ» ձևով:

Տաղերի արքեսիպային հարցաձևերը (դրանք հիմքում ավետարանական են) ևս ընդօրինակվել են: Նարեկացի՝ «...թե՛ ո՞վ իցե», «ո՞վ է սա»: «Զի՞ այդ վերք ի ձեռքս քո», Հ. Մովսես՝ «Ո՞վ է նա...», «Այդ ո՞վ է կանգնած, այդ ո՞վ է այդպես», «Եվ ո՞վ է աջը մեր հոգուն պարգում», «Ասացեք, հայրեր, ե՞րբ պիտի իջնի», «Ի՞նչ բառեր, ասեք, և այդ քանի՞», «Իսկ դուք կարո՞ղ եք», «Ո՞վ է նա եղել»: Դիմում-բացականչությունն արտահայտող բառաձևերը միջնադարյան են, մասամբ նարեկացիական: «Տաղ Յարութեան»-ի «աթոռ ոսկեղէն», «բեհեզ», «սերովբեքն», «մանկունք», «քնար», «ճորտն», «գսայլիկն», «եզինք», «եղջիրք» բառերը Հ. Մովսեսն օգտագործում է ողջ տեքստի բոլոր մասերում՝ ապահովել հոգևորի դրանց «ներկրումային» դերը:

«Տաղ Յարութեան»-ի առաջին բառը սայլն է, որ «իջաներ ի լեռնէն Մասեաց»: Տաղի վերջում մեկնվում է սայլի այլաբանությունը՝ «Երկրորդ արեւնքն է Մովսեսի»: Հ. Մովսեսը սայլը հաճախադեպ է օգտագործում՝ կապված քրիստոնյաների խմբի, երթի, ճանապարհի, ընթացքի հետ: Նարեկացի՝ «Եւ ահա շարժէր սայլիկն այն, / Եւ ահա խաղայր անիւն այն». Հ. Մովսես՝ «Ճոնչալով պտտվում են անիվները փոքրիկ սայլի», «Ո՞վ է քշում ոսկեանիվ / սայլակը իր գիշեր ու տիվ», «... և ճիչերով, և լռությամբ, / զատիկ օրվա սայլակի մեջ», «Լույսը իր սայլով անցնում էր նորից», «...որ զվարթ նստած մեր ցնորքների յոթնանիվ սայլին»: Սայլը երկնային թափորը հասցնում է երկիր, իսկ Դանթեի պոեմում այն եկեղեցու խորհրդանիշն է: «Ճորտն...ճապուկ»-ը օգտագործված է նույնությամբ՝ «Երգեցին ճապուկ / ճորտերի ծոցից յոթ գույգ / սոխակ և տատրակ»:

Հ. Մովսեսի բանաստեղծությանն է անցնում «աթոռ ոսկեղէն»-ը՝ պահպանելով արքայական պատիվ, իշխանություն իմաստը (երկինքը Աստծո աթոռն է): Նարեկացու տաղում «եզինք են սաթ ու սպիտակ», դրանք սուրբ կենդանիներ են: Կենդանին նույնական է նաև «Օգոստոս» բանաստեղծության մեջ.

*Որ զվարթ նստած մեր ցնորքների յոթնանիվ սայլին՝
Ճիպոտդ՝ կարմիր եզան զավակին,
Իջնում էիր քո կանաչ սարերից...*

Սուրբ կենդանի իմաստով է գործածվում ցուլ բառը «Հրավերք» բանաստեղծության մեջ.

«... այ, օգոստոսի երկեղջուր ցուլն է հեռու ձորերում / պոզահարելով տեղահան անում դարպասը լույսի»: Ցուլ և լույս բառերը իմաստային դաշտում մոտեցվում են: Սակրալ տիրույթում են եզ, ջորի, ալյուր, այծ, գառ, ուլ, զամբիկ, աղավնի, տատրակ,

ձուկ, տապան, Արևելք, մոգ, յուղ, ձեթ, զմուռս, հոտ, փող, թմբուկ, աղ, խոսք, քնար, մոմ, վարագույր և շատ ու շատ այլ բառեր: Դրանց միջոցով ստեղծվում են քրիստոնեական համայնքի միջավայրն ու համայնքային աշխարհատեսությունը: Միջնադարյան մարդու համար տարածությունը ճանաչվում է առարկաներով: Որսորդի համար գերակայում են որսի կենցաղի առարկաները («... փոստեր թանկագին, կարպետ և խսիր: Վուշ և ապրշում: Եվ բամբակենի...»): Ժամանակը, ինչպես տարածությունը, նյութականացվում է, կա այնքանով, որքանով «լցված է» առարկաների մեջ:

Հ. Մովսեսի բանաստեղծության մեջ գերակայում է ներկա ժամանակաձևը: Բանաստեղծը վկայում է արարումը («... որն արարվեց մեր բոլորի հայացքի դեմ»):

Եվ փառքի մեջ է ողջ երկիրն արդեն...

... որտեղ ցնծության ծառերն են հառնում,

շրջում են այնտեղ և հավիտենից....

(«Քնած երեխաներ»):

Իջնում է սայլը, գիշեր և ցերեկ...

(«Որդեգրության տոն»):

Ներկան իրար է ձուլում խոսքի և կեցության կառուցվածքները: Քանդվում է երգասացության և կեցության միջնորմը: Երգասացականը հանգում է կեցությանը, և նյութական թանձրության է հասնում հոգևորը: Առարկան այլևս ոչ թե արտաքինապես ձև է, այլ ներսից և դրսից՝ էություն, էականություն (անգամ կարելի է ասել, որ Հ. Մովսեսի պոեզիայում այն վերածվում է էակի):

Անցյալ ժամանակաձևերից առաջնությունը տրվում է անկատարին, որը ներկայի քերականական հոմանիշն է:

Երեխաները յուղ էին թափում մեր գլուխներին:

Ըստ Ղուկասի՝ մեղավորուհին անուշահոտ յուղ է թափում Հիսուսի գլխին, կամ նա Հիսուսի ոտքերը օծում է անուշահոտ յուղով:

Տող-պատկերի գուգորությունը ավետարանական տող-պատկերի հետ ամենուր է և ամեն պահի: Անուշահոտ յուղ բառի օգտագործումը գրավում է աննախադեպ դիրք՝ «Եվ թարմացնենք թունդ ոսկեջուրը մեր բռնակների», «Համակ Անդորրի և Հանգստության ձեթն է կաթկթում մեր մատներից»:

Բանաստեղծը մեզ է ներկայացնում տիեզերական Ձատիկը՝ ներկայի մետաֆիզիկայով, ներկայի բնությամբ: Սրվում է Քրիստոսի հետ զգայական կապը: Աստված «հեղվում» է ամեն մի կառուցվածքի մեջ՝ նախապես և միշտ լինելով այդ կառուցվածքում, ինչպես աստվածաշնչյան տեքստում:

Հ. Մովսեսի բանաստեղծության մեջ հնչող փողն ու թմբուկը մեծ բերկրանքի, հանդիսության տոնը սկսելու համար են, մոխիրը՝ ապաշխարանքի, կենդանիները՝ գոհորության առարկա-նշաններն են: Ձիթենին նշանակ է խաղաղության, աղավնին՝ միամ-

տության, հավատարմության և անմեղության, աստղ, մոգ, փարախ բառերը մեր միտքը կապում են Քրիստոսի ծննդի և մոգերի երկրպագության հանգամանքներին: Հաճախադեպ է խնձոր բառի կիրառությունը, որն առկա է Նարեկացու «Տաղ Յարութեան»-ում՝ «Խայտար խնձորով, / խայտ խնձորով սիրոյ»...

Խնձորը սիրո խորհրդանիշն է, որի առատությունը մարդուն դարձնում է «ոսկի-արծաթ» («Ձմեռային խաղաղ տոներ»): Գինին հաղորդության խորհուրդ ունի («Ձեռքդ դիր սրտիս, վերցրու իմ գինին»), ձուկը նշանակում է հավատի լուռ դավանություն («... և ահա, մայրիկ, ես ինչպես մի ձուկ / զուլալ ջրերում իմ սեպտեմբերի»), հաճախ օգտագործվում է ձկնորս բառը (Քրիստոսի առաքյալներից շատերը ձկնորսներ էին): Հ. Մովսեսը թվարկում է նահապետական ժամանակների «մասնագիտություններ», զբաղմունքներ, որոնք նրա բանաստեղծության մեջ հոգևոր կոչումներ են դառնում. նետաձիգ, հովիվ, եզնարած, որմնադիր, ջորեպան, սայլորդ, աղեղնավոր, որսորդ, ձիթավաճառ,- այս ամենը ոչ միայն ինչ-որ նահապետական հարաբերությունների վերականգնումն է խոսքային կառուցվածքում, այլև հոգևոր ինչ-որ հիերարխիայի աստիճաններ: Մեզ հայտնի է նաև հովվի, եզնարածի, թագավորի կերպավորողը:

Հ. Մովսեսի հույժ սեփական լեզվում աղը նշանակ է պահպանող գործության: Մատթեոսի Ավետարանում ասվում է. «Դուք եք երկրի աղը»: Ճշմարիտ խոսքը լեզվի աղն է («... և մեր կրթքերին իջած լույսն / աղն է պսպղում մեր շրթունքներին»):

Ոսկի, կնդրուկ, գմուռն բառերը սակրալ տեքստերի «էպիկենտրոնում» են. դրանք մոգ արքաների նվերներն են մանուկ Հիսուսին («Այս գիշեր պիտի մենք գմուռն թափենք մեր ծխնիներին», «Ոսկի տեղած, դափը թնդաց»): Եղջյուրն օգտագործվում է իշխանության գործության և իմաստության իմաստով, Խոսքը հավասարա-ձևունակ է Որդուն և Մուրբ Հոգուն:

Քրիստոս առակախոս էր: Հ. Մովսեսը դիմում է այդ «Ժանրին»՝ «Լույսի առակը ասեմ, եղբայրներ», «Վարդի առակը ես ի՞նչ բառերով ասեմ, եղբայրներ», «Միրո առակն էլ ասեմ, եղբայրներ»: Նոր կտակարանում առակներն ունեն իրենց տեղը՝ «Մերմնացանի առակը», «Որոմների առակը» և այլն:

Եվրոպական փորձը

Հարուստ է քրիստոնեական ավադույթների օգտագործումը եվրոպական բանաստեղծության մեջ: Հ. Մովսեսը հոգևոր բանաստեղծության եվրոպական հոգևոր փորձը ևս հաշվի է առել: Բանաստեղծը ի մի է բերել եվրոպական հոգևոր պոեզիայի ավանդույթներն իր ստեղծագործության մեջ՝ ջնջելով օպոզիցիոն դիրքերը: Մինթեզի փոխարեն մենք ստանում ենք պոետիկական միահամակարգ պոեզիայի տպավորություն: Ավետարանական լեզվա-պատկերային և նարեկացիական ակունքավորումից զատ մենք Հ. Մովսեսի բանաստեղծության մեջ տեսնում ենք հյուլեռլինյան, նովալիսյան, ռիլկեական և թրակյան ավանդույթների առկայությունը: Հ. Մովսեսի բանաստեղծության մեջ հայկականը համաքրիստոնեական-եվրոպական չափումների մեջ է դրված, իսկ համաքրիստոնեական-եվրոպականը՝ հայկական:

Նախ ասենք, որ Նարեկացին արևելյան քրիստոնեության մոտեցումն ունի մարդու

հանդեպ, ըստ որի մարդը երկրային է և աստվածային, արևմտյան քրիստոնեությունը մարդուն դիտում է իբրև միմիայն երկրային ու մեղսավոր: Հ. Մովսեսը հետևում է Նարեկացուն՝ արտացոլելով տոնական հոգևորը.

*... Շուտով կիջնեն արևելքից,
ծնկի կգան դռների դեմ
դեսպանորդներ խուռն ու ցրիվ...
... Ժամն է աղի, ժամն է խեժի...
... Ժամն է ընտրյալ անոթների,
երկրի մաքուր ժամն է ահա՝
Ժամն անթերի:*

(«Մանրանկար գարնան»):

Բանաստեղծը հոգևոր շարժումը տարածում է ներկա պահի մարդկային կյանքի ողջ կտրվածքի վրա: Հոգևորը արթուն է բոլորի մեջ: Աստծո հետ հաղորդություն այլևս տարածական հեռավորից դուրս է:

Խմբային երթում հաղորդականության աստիճանը անհատականի համեմատությամբ բարձր է: Հ. Մովսեսը, սակայն, անհատական կոնցեպցիան չի ջնջում, այլ զուգահեռում է հոգևոր-ընդհանրականի հետ (խմբերգն ու մեներգը հնչում են զուգահեռաբար): Շոպենհաուրյան «անհատականացման սկզբունքը» (ապոլլոնյան սկզբունքը) և «համայնական արբեցումը» (դիոնիսոսյան սկզբունքը) իրար մեջ են և արտացոլում են միմյանց: Խմբային ապրումի մեջ հստակ երևում է անհատականը: Յուրաքանչյուր ոք փրկության ճանապարհին է, ցնծության մեջ պահպանում է հոգևոր և մարմնական ինքնությունը: Փրկության վերապրումը յուրաքանչյուրի մեջ է և, միաժամանակ, համատեղ ու համայնական: Փրկչական համայնքի մարդկանց զբաղմունքների անվանական «մեջբերումը» վկայում է նրանց անհատականության, համայնքում ունեցած տեղի մասին:

Հոգևոր և աշխարհիկ գրականության իրար կապող օղակը սիմվոլներն են, որոնք Ավետարանից և Նարեկացու տաղերից անցել են, ավելի շուտ՝ մի տեսակ վերաբնակվել են Հ. Մովսեսի պոեզիայում՝ ստեղծելով ոսկե հոգևորի խորհուրդը:

Բանաստեղծը խորհրդանիշների հարցում հետևում է վերոհիշյալ բանաստեղծներին: Միայլ չի լինի ասել, որ Հյուլեռլինի և Թրակլի օգտագործած սիմվոլները մոտ են նարեկացիական որոշ սիմվոլների: Գործում է քրիստոնեական գրականության ներքին տրամաբանության օրենքը: Այսպիսով, Հ. Մովսեսի պոեզիայում կողք-կողքի են հայ և եվրոպական հոգևոր գրականության խորհրդանիշները: Այդ բոլորը ի մի են հավաքվում հոգևոր լիության դաշտում: Սակայն Հ. Մովսեսը շրջանցում է Հյուլեռլինի և Թրակլի բանաստեղծության տառապանքի մղումները, «մթնշաղական արվեստի» պոետիկան, ընտրելով «լույսի գեղագիտությունը»: Բանաստեղծը համադրել է Նարեկացու, Շնորհալու, Մեծարենցի, Հյուլեռլինի, Ռիլկեի, Թրակլի և այլոց հոգեկան վերելքի խորհրդանիշները: Սինթեզն ընդգրկում է: Հյուլեռլինյան որոշ կապակցությունների նման են Հ. Մովսեսի պոետական մի շարք միավորներ՝ «օրերը տոն», «հարսները երկնքի», «ոսկե երագ», «ոսկերիզ սկիհ», «աջ ու ահյակ» և այլն:

Հ. Մովսեսի պոեզիայում հանդիպում են նաև թրակյան պոեզիայի գծապատկերներ՝ «մոխրագույն մարգարիտները կաթում են մեռած մատների միջով»: Հ. Մովսես՝ «Համակ Անդորրի և Հանգստության ձեթն է կաթկթում մեր մատներից»: Թրակ՝ «Հերովդեսի մորթած մանուկների», Հ. Մովսես՝ «Եվ ուրախ էին բոլոր մանուկները մորթվող»: Հ. Մովսեսը Թրակի ստեղծագործության հետ ունի կապակցությունների և բառերի ընդհանուր աղյուսակ (դարպաս, գայլ, աղավնի, օտարական, գիշեր, մահ, մենակյաց, ձիթենի, ձուկ, խնձոր, վարդ, հայելի, ջրհոր, արևելք, մակույկ, փող, մոխիր, ձիթենի, գինի, հնձվոր, խունկ, խեժ և այլն): Թրակ՝ «ոսկյա մի սայլ», «կարմիր բարձրանում է ձուկը», «արծաթ ձայն», «խաղաղ հայելիներ», Հ. Մովսես՝ «կարմիր սայլակներիս», «կանաչ մատակներ», «արծաթ խնձորներ», «արծաթ գիշեր», «հայելիներն են փայլում»:

Թրակի բանաստեղծության մոայլ մթնոլորտի դիմաց (ինչպես Հ. Մովսեսն է իր առաջաբանում ասում՝ «խաչելության փրկագործություն») Հ. Մովսեսի հոգևոր լիության բանաստեղծության փայլն է: Փրկիչը գիշերում՝ Թրակ, Փրկիչը ցերեկը, երկրի վրա՝ Հ. Մովսես: «Ես սպասում էի, և եկը տեսա», - սա Հյուդեոլիսի տողն է: Ինչպես տոնօրեքին՝ բանաստեղծությունից: Հակոբ Մովսեսը ևս «եկն» է տեսնում՝ «Եվ հովիվը ահա» (կարելի է ենթադրել, որ Քրիստոսն է):

Կիրակին

Կիրակի է: «Բնահողը մեր սրտերի ընդունում է թևավոր սերմն անմեռության»: Կիրակին «քայլ է գցում արևելքի դարպասներից» (արևելքից եկան մոգերը՝ երկրպագելու մանուկ Հիսուսին: Բացի այդ, արևելյան քրիստոնեությունը ընդունում է մարդու երկրային և աստվածային բնույթը: Արևելքը Եդեմն է):

*Կիրակին արդեն իջնում է, իջնում Արարատ սարից:
Ելնենք և գնանք, խոնարհվենք խաղաղ ջրերի վրա:*

Ջրերի վրա խոնարհումը վավերագրում է ինքնագտնումի պահը (երագում ջրի խորհրդանիշի մասին Կ. Յունգը գրում է. «Ջրերի մեջ նայողը տեսնում է իր սեփական դեմքը»):

Տիրում է Հանգիստ, Անդորր և Խաղաղություն, քանի որ Կիրակին, ինչպես և գրված է Հին Ուխտում, Աստծո Հանգստյան օրն է: «Խումբն այն փոքրիկ / տակավին անհայտ երկրից է եկել»: Փողերը ազդարարում են «եկը»: «Արարումն ավարտվեց արդեն»:

*Տոն է երկրային, և ինչ այլևս մերը չէ արդեն,
այստեղ մերն է հավիտենապես:*

Կիրակին առանձնակի է ընդգծվում Հյուդեոլիսի պոեզիայում: Մեր բանաստեղծության մեջ այն Մեծարենցի լեյտմոտիվներից է: Գ. Թրակյը Կիրակին ներկայացնում է այսպես. «Արևելքի դարպասներից արծաթյա մտավ օրը կարմիր» (Հ. Մովսես՝ կիրա-

կին «քայլ է գցում արևելքի դարպասներից»): Կիրակիի և Կիրակնամուտի երգիչ է Մ. Մեծարենցը:

Հ. Մովսեսը Կիրակիի մեջ տեսնում է արարումին հաջորդած արարչությունը: Գեղեցիկը գեղեցիկի համար է: Հոգևոր ասածը մաքուր կեցությունն է: Հ. Մովսեսի բանաստեղծության մեջ կեցությունը մաքուր կեցություն է, որտեղ բացակայում է կազմակերպման նշանը, կամ, ավելի ճիշտ, այն արդեն նախորդել է դրան: Այն Յոթներորդ օրվա բանաստեղծություն է: Գուցե տեղին է թրակլի «խաղաղ հայելիներ» կապակցությունը: Կիրակիի ներսում գործողություն տեղի չի ունենում, իրականությունը չի սահմանափակվում գործողությամբ (Ռիլկե՝ «գործողությունը ներսից է աճում»): «Ինչ երջանիկ կարող է իրը լինել, ինչ անմեղ...»: Այդ օրը բոլորը պատրաստ են նրան՝ առանց անվանման (Ռիլկե՝ «պատրաստ եմ նրան առանց անվանման»), «Այստեղ է ժամանակը ասելիության» (Ռիլկե):

Ճանապարհի տաղասացություն

Հոգևոր խումբը մաքուր կեցության ճանապարհն է անցնում (Հ. Մովսեսի քնարական հերոսը և նրա գործողությունը): Զվարթ միայնակները ցնծացող խմբի մեջ են: Մանուկներն են ճանապարհում: «Գնամ, գնամ, հասնեմ մոմե դարպասներին...»: Դրանք բացվում են արքայության վրա: Մաքուր կեցությունը և նրա խտացումը հանդիսացող հոգևոր իրականությունը հաստատուն է, որովհետև ճշմարտությունը մեկն է. «Եւ անամենուր Քրիստոսն է, դէպի Աստուած միակ ճամբան» (Թ. Տասնապետյան):

Կեցության կենդանի ճանապարհը Քրիստոսն է նաև Հ. Մովսեսի երգասացության մեջ: «Նա գալիս է դաշտերով», «Ինչ խաղաղ է իր ուղին»: Այդ եկի և ուղու անվերջ վերջի սպասման մեջ «ձեռքը սրտին» կանգնած է Բանաստեղծը:

Բոլորը գնում են: Նա էլ է ճանապարհին: Բոլորը և նա գնում են և կանգնում ճանապարհին:

Սա է կեցության ճանապարհի իմաստը՝ բոլորով գնալ, կանգնել ճանապարհին, ի մի լինել...

ԱՐՓԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԹԵՄԱՅԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ՀԵՆՐԻԿ ԷՂՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Հենրիկ Էդոյանը ժամանակակից հայ գրականության պոետական ավագ սերնդի լավագույն ներկայացուցիչներից է: Նա անցել է երկար ու դժվարին ճանապարհի և դեռ շարունակում է ստեղծագործել՝ ամրապնդելով իր պոետական մտածողությանն ու նկարագրին բնորոշ առանձնահատկությունները: Հեղինակի գրքերը թեմատիկ տարբեր շերտեր ունեն, որոնցից սույն հոդվածում մենք կանդրադառնանք մարդ-Աստված հարաբերություններին, մարդու հոգևոր ընկալումներին և աստվածային խոսքի ազդեցությանը կամ բացակայությանը ժամանակակից աշխարհում, վերջինիս հեռացումը ճշմարիտ արժեքներից և հոգևորի ու մարդու ներաշխարհի հետ առնչվող այլ հարցերի՝ օգտվելով Հ. Էդոյանի բանաստեղծական բոլոր ժողովածուներից¹:

Հեղինակի ստեղծագործությունները աստվածաճանաչողության և ինքնաճանաչողության փորձ կարելի է համարել, որի ընթացքում յուրաքանչյուր ընթերցող մասնակցում է Աստծո հետ բացած բանաստեղծի գրույցին: Առաջին շրջանի գործերում այս թեմային խորքային անդրադարձներ չկան. Աստված պատկերվում է որպես տիեզերական մի հզոր ուժ, որը կառավարում է ամեն ինչ՝ մնալով միստիկական անհայտության մեջ: Աստված կոչվում է նաև Արարիչ Ամենայն, հաճախ էլ ներկայացվում է ձեռքի և աչքի մետաֆորներով.

...Մենք միասին / նեղ արահետով իջնում ենք ներքև / դեպի տուն, որտեղ
մի արթուն աչք է / սպասում մեզ²:

Կամ՝

*Մեզ բարձրացնող ձեռքը ապրում է քաղաքում,
ամեն ինչ իր տեղն է դնում – սեղանը, աթոռը, մահճակալը,
աստղերի շարժումը, շենքը և սենյակը, / օդը, լռությունը, աղոթքի ճանապարհը³:*

¹ Հ. Էդոյանի բանաստեղծությունների առաջին գիրքը «Անդրադարձումներ» խորագրով լույս է տեսել 1977 թ., որին հաջորդել են «Պատկեր և կեսօր» (1980), «Երկրային ժամանակ» (1983), «Այժմ և միշտ» (1987), «Հարյուր տոնետ» (1993), «Քայլեր և ստվերներ» (Բեյրութ, 1996), «Կյանքը, իմ ուղին» (1999, հատընտիր է՝ բաղկացած նախորդ տարիների ժողովածուների լավագույն բանաստեղծություններից), «Հետգրություն» (2001), «Երեք օր առանց ժամանակի» (2005), «Երկու կյանք» (Հալեպ, 2006, ընտրանի է՝ կազմված «Հետգրություն» և «Երեք օր առանց ժամանակի» ժողովածուների բանաստեղծություններից) և «Փողոցի բաժանվող մասուն» (2006) գրքերը:

² Հ. Էդոյան, Երեք օր առանց ժամանակի, Եր., 2005, էջ 84: Հետագա մեջբերումները սույն ժողովածուից կնշվեն տեղում:

³ Հ. Էդոյան, Անդրադարձումներ, Եր., 1977, էջ 43: Հետագա մեջբերումները սույն ժողովածուից կնշվեն տեղում:

Նկատենք, որ Աստված ձեռքի մետաֆորով ներկայացվում է նաև սաղմոսներում.

*Գիտես անցյալս և ապագաս, Դո՛ւ ես ինձ կազմել
և Քո պահապան ձեռքը վրաս ես դրել... (Սաղմոս ԼԹ)⁴*

Էդոյանը Աստծո թեմային անդրադառնում է Ս. Երրորդության երեք դրսևորումներով՝ Հայր, Որդի և Ս. Հոգի: Այսպես, բանաստեղծություններից մեկում, որը նվիրված է հեղինակի հորը, նկատելի է զրույցը Հայր Աստծո հետ՝ հաստատելով Նրա՝ նաև մարդկության հայրը լինելու քրիստոնեական ճշմարտությունը: Բանաստեղծության խոհն էլ դրա ապացույցն է.

*Քո ձեռքի լապտերով, / իմ հայր, բոցավառիր / իմ առավոտը,
... Քո անտես ձեռքը մոտեցրու / իմ ձեռքին / և տուր ինձ հասունացած
պտուղը հայտնության, / որ ծաղկում է միայն խաղաղության ճյուղին⁵:*

Հաջորդ քայլին հեղինակն Աստծո ազդեցությունն իր կյանքում ներկայացնում է աղավնու սիմվոլով, որը Ս. Հոգու խորհուրդն ունի, քանզի մաքրագործում է մարդուն ու լցնում շնորհներով.

*Ցերեկվա մեջ (պատահել է) հառաչել, / թափառել եմ փողոցներում քաղաքի,
սեր եմ փնտրել, բայց աղավնին իմ կյանքի / չի լքել ինձ, դեպի օդ է ինձ կան-
չել...⁶*

Աստված բանաստեղծություններում պատկերվում է նաև Վարդի սիմվոլով, որը ևս բնորոշ է քրիստոնեական մտածողությանը.

*Կյանքի վերջնական հայտնությունն է սա... / այստեղ ապրում է վարդը կատար-
յալ,*

*խաչված սեփական ցողունի վրա: / ... Վարդը – մեզ տրված բախտի անցագիր,
որով մտնում ենք դռնից հավերժի / դեպի մի ուրիշ սահման ու երկիր:*

(«Պատկեր և կեսօր», էջ 71)

Էդոյանի գործերում այս կամ այն բանաստեղծական պատկերով հաճախ արտահայտվում է որևէ քրիստոնեական պատգամ կամ պատմություն և արծարծվում է հավատքի, քրիստոնեական ճիշտ ապրելակերպի հետ կապված որևէ խնդիր: Իմաստուն մարդն ամբողջ կյանքում հիանում է Տիրոջ ստեղծած աշխարհով և շնորհակալ լինում անգամ փոքրիկ ուրախությունների համար, իսկ մեղավորը ոչ միայն մոռանում է շնորհակալ լինել, այլև իրեն է վերագրում բոլոր հաջողությունները՝ չգիտակցելով, որ առանց Բարձրյալի մատնված է կործանման: Արդյունքում նա այնքան է հեռանում հոգևոր կյանքից, որ դառնում է մշտական պահանջատեր՝ Աստծուն հիշելով միայն նեղությունների պահին, այն էլ մեղադրելու նպատակով: Սա քրիստոնյայի նկարագրին դեմ պահվածք է, որը հեղինակին տրամաբանորեն հանգեցնում է հետևյալ հարցին.

⁴ Նոր Կտակարան և Սաղմոսներ, Եր., 2004, էջ 945:

⁵ Զ. Էդոյան, Երկրային ժամանակ, Եր., 1983, էջ 68: Նպուգա մեջբերումները սույն ժողովածուից կնշվեն տեղում:

⁶ Զ. Էդոյան, Պատկեր և կեսօր, Եր., 1980, էջ 95: Հետագա մեջբերումները սույն ժողովածուից կնշվեն տեղում:

«Աստված մեզ հետ է, Բայց մենք Նրա հե՞տ ենք»⁷: Այս հարցին մենք չենք կարող պատասխանել այն պատճառով, որ դեռ համապատասխանություն չկա մեր խոսքի, որն իրականում մեր էությունն է, և մեր գործի միջև: Մեկ այլ բանաստեղծության մեջ էդոյանն ընդգծում է այդ մեղավոր վիճակը. «Ես Կայսրինը տալիս եմ Կայսրին, ինչ Աստծուն եմ տալու - այն մոռանում եմ» («Երեք օր առանց ժամանակի», էջ 109): Բայց և հիշեցնում է, որ անկախ մեր վարքից, Աստված, լինելով արարիչ, մեզ ևս տվել է արարելու շնորհ, որից պետք է օգտվել՝ կերտելով ճշմարիտ արժեքներ: Անհրաժեշտ է հիշել. «Հին աստվածները տվել են մարմին, / նոր Աստվածը - կյանք ... » («Պատկեր և կեսօր», էջ 59): Այդ կյանքը, որ մեր մեջ է դրված, պետք է արժանի դարձնենք մեզնից վեր ապրող Կյանքի համար: Նշենք, որ հեղինակն իր պոեզիայում խոնարհվում է կնոջ առաջ՝ նրա մեջ տեսնելով արարելու մեծ շնորհ, որով կինը նույնանում է Տիրոջ հետ: Պատահական չէ բանաստեղծի հետևյալ միտքը. «Աստված՝ երկնքում, / կին՝ երկրի վրա...»⁸: Էդոյանը մշտապես սիրով ու մեծ ներշնչանքով է գրում նաև ծնողների մասին: Մոր մեջ ևս շեշտվում է արարելու և խնամելու գաղափարը:

Հաճախ հերոսը դիմում է Աստծուն՝ նրանից խորհուրդ հարցնելով և օգնություն խնդրելով: Երբեմն այդ դիմումներն այնքան սրտաբուխ են և նկատելիորեն ազդված Տերունական աղոթքից, որ իրենք էլ են աղոթքի պես հնչում: Ահա դրանցից մեկը.

*Ուղղիր իմ կյանքն, Աստված, / միայնակ չափում եմ ես փողոցն աջ ու ձախ,
գնում ու հետ գալիս / և նորից կրկնում ամեն ինչ սկզբից: / Կանգնեցրու իմ անկու-*

մը

իր ընթացքի մեջ, / թող ինձ հանգիստ քնեմ մինչև առավոտ:

(«Երեք օր առանց ժամանակի», էջ 113)

Քրիստոնյայի համար բնութագրական է նաև հայացքն Աստվածամորն ուղղելը՝ որպես մարդու ամենամոտ բարեխոսի. «Աստվածամայր, աղոթիր Տիրոջը, թող Նա / ների մարդուն այս... » («Երկրային ժամանակ», էջ 20):

Աստվածաճանաչողության այս ուղին ի վերջո հանգեցնում է ինքնաճանաչողության: Եթե նկատի ունենանք, որ մարդը ստեղծված է Աստծո պատկերով ու նմանողությամբ, ապա կարող ենք ասել, որ իր եսի մեջ անգամ նա շարունակում է փնտրել Տիրոջը: Այս գաղափարը թանձրացած է «Պատկեր և կեսօր» գրքում, որտեղ հեղինակը շատ հարգալից է պատկեր հասկացության նկատմամբ՝ դրանում հասկանալով հոգևոր արժեքներ («Խանութում չեն վաճառվում պատկերներ, / ինչքան էլ խանութը մեծ ու շքեղ լինի...», էջ 31, կամ «Քարը տանջվում է ամրության ցավից, / (նա չունի պատկեր, անուն ու սահման)», էջ 57): Կեսօրն էլ նմանեցվում է Փրկչի երկրորդ գալստին, երբ մարդկության ժամանակի այդ շիկացման կետում ամեն ոք կդատվի ըստ իր պատկերների: Այս գրքում հերոսը բացահայտ խոստովանում է. «Ես չեմ ճանաչում ինքս ինձ» («Պատկեր և կեսօր», էջ 7): Մա 21-րդ դարի մարդու ամենամեծ ողբերգությունն է, որը դժվար է հաղթահարել, քանի որ ամեն անգամ, երբ դու Տիրոջը հակառակ որևէ քայլ ես անում, կորցնում ես Աստծո պատկերը և ուրեմն կորցնում ես ինքդ քեզ: Հեղինակը նաև հետև-

⁷ Հ. Էդոյան, Հետգրություն, Եր., 2001, էջ 342: Պատկեր և կեսօր, Եր., 1980, էջ 95:

⁸ Հ. Էդոյան, Քայլեր և սովերներ, Բեյրութ, 1996, էջ 10:

յալ դիտարկումն է անում. որքան մարդիկ վեր են բարձրանում առօրյա ճղճիմություններից ու չարիքից և մոտենում են Աստծուն, այնքան նմանվում են մեկը մյուսին, քանի որ նմանվում են այն հիմնական աստվածային պատկերին, որով ստեղծվել են ի սկզբանե: Ելքը գտնված է. պատել «երջանկության անիվը խաբուսիկ / դեպի ետ, / դեպի սկիզբ» («Երեք օր առանց ժամանակի», էջ 106): Այս սկզբի մեջ կրկին կա Աստծո գաղափարը: Էդոյանը սկզբի ու վերջի դիտարկումներին զուգահեռ հաճախ է խոսում նաև վերևի ու ներքևի մասին, որ միջակայի մտածողության դրսևորումներ են.

*Երկու աշխարհներ – / վերևն ու ներքևը, / և նրանց միջև՝
ուժը բացարձակ:*

(«Երեք օր առանց ժամանակի», էջ 8)

Վերևը և ներքևը միաժամանակ տարբեր երևույթների սիմվոլներ կարող են դառնալ: «Մարդու տառապանքը կապված է Աստծու տառապանքի հետ. ներքևինը (մարդը) իր մեջ կրկնում է Վերևին (Աստծուն). դա Աստծուն հաշտեցնում է մարդու հետ՝ նրան տալով վերադարձի հնարավորություն», – նկատում է Էդոյանը⁹: Բայց ժամանակները բերել են նրան, որ մարդը երկինք է նայում և տեսնում է այն Աստծուն, Ով համարժեք է իր աշխարհայացքին, բայց շատ հեռու է Աստծո ճշմարիտ պատկերից, ինչպես և մարդուն Իր պատկերով ու նմանողությամբ ստեղծած Տերը դժվար թե այսօր շատ բան գտնի նրա նախնական էությունից: Աստվածաստեղծ այս հսկա տիեզերքում մարդն իր մեղքերի ու սխալների պատճառով ինքնական գնում է կործանման՝ չկարողանալով իմաստավորել իր կյանքը: Արդյունքում իրերը սկսում են հետևել և իշխել նրան՝ վերածելով «ստվերի»: Նման խոհերի հաճախ կարելի է հանդիպել Էդոյանի պոեզիայում: Նույն մտորումները կարելի է տեսնել նաև Սաղմոսներում.

Մարդն իսկապես շրջուն մի ստվեր է միայն. / զուր տեղն է տազնապում, դիզում՝

առանց գիտենալու, թե ով է ժառանգելու այն:

(Սաղմոս ԼԹ)¹⁰

Ստացվում է, որ ամեն ինչ կատարվում է մեր կամքից անկախ, այնինչ Աստված մեզ տվել է ազատ կամք, և իմաստուն լինելու դեպքում ինքներս կարող ենք կարգավորել մեր կյանքը՝ առաջնորդվելով Քրիստոսի խոսքով և գործով: Չէ՞ որ Նա ժամանակների մի դժվարին խճուղում եկավ օգնելու մարդուն և ցույց տվեց նաև հետագա փրկության ճանապարհը՝ մշտապես մնալով նրա կողքին: Բայց հեղինակն ընդգծում է այն փաստը, որ մարդկությունը ոչ մի դաս չի քաղել աստվածորդու զոհաբերությունից. դարերի ընթացքում նրա անվերջ զոջումներին մշտապես հաջորդել են մեղքերը, սիրո յուրաքանչյուր ճիգ ուղեկցվել է արգելքներով ու հուսալքումներով, և Տիրոջը մերձենալու յուրաքանչյուր փորձին հաջորդել են երկարատև հեռացումները: Խաչի վրա Հիսուսի աղաղակը կարծես ուղղված է ոչ թե Հորը, այլ բոլոր ժամանակների մարդկանց, յուրաքանչյուրին առանձին-առանձին հենց իրենց մեղքերի գործման պահին. «Ինչու՞» ես ինձ

⁹ «Գարուն», 2005, թիվ 1, էջ 31:

¹⁰ Նոր Կտակարան և Սաղմոսներ, Եր., 2004, էջ 786:

լքում» - հնչում է սարսափազդու / դարերի ականջներում ...»¹¹:

Ճշմարիտ հավատացյալի ամենաբնորոշ հատկանիշն այն է, որ նա հասկանում է Քրիստոսի զոհաբերության խորհուրդն ու խորքը, և դա նրա համար սոսկ պատմական իրադարձություն չէ կամ էլ անհավատալի իրողություն, այլ իր հավատքի հիմքը: Հետևաբար Էդոյանը ճիշտ է գտել այս թեմայի ծանրության առանցքը, որին նա զուգահեռում է սիրո գաղափարը: Ըստ բանաստեղծի՝ սերը պետք է դառնա կյանքի աղբյուր և պատրաստ լինի զոհաբերության, քանի որ Քրիստոս, Ով սեր էր, ևս գնաց զոհաբերման՝ այդ ճանապարհով տալով շատ ավելի մեծ պտուղներ, քան կարող էր լինել ցանկացած այլ դեպքում:

*Եվ Սերը խաչ էլավ, / մեխվեց նրա վրա, / որ խաչված սերը / ցած իջներ խաչից*¹²:

Սերը դառնում է մարդու մաքրագործման ու փրկության գլխավոր ճանապարհը: «Նոր Կտակարանում Քրիստոսի միջոցով Աստված բացահայտվում է որպես Սեր...» (դիտարկումը հեղինակինն է)¹³: Էդոյանը ընդգծում է նաև, որ սիրո մասին չպետք է խոսել, այն պետք է ապրել:

Սիրել մերձավորին - / Դա ամենաերկար / ուղին է սիրո

Դա հավասար է / քո կյանքի չափերին / բոլոր հավանական տարբերակներում

Դրանից հետո / անհնար ոչինչ չկա / սիրո ճիգերի մեջ:

(«Փողոցի բաժանվող մասում», էջ 70)

Այս գործում հեղինակը բանաստեղծորեն ներկայացրել է «Սիրի՛ր ընկերոջդ քո անձի պես» կարևորագույն պատվիրանը¹⁴: Նա ընդգծում է, որ սերը մարդուն տրվում է որպես իր անցած դժվարություններով, բայց ճշմարտությամբ լեցուն ճանապարհի դափնեճյուղ, որպես վերածննդի խորհրդանիշ: Այսինքն՝ սերն է մարդու միակ պարզելը, եթե նա դիմանում է բոլոր ցավերին:

Աստված, որ բանաստեղծություններում ներկայացվում է իբրև սեր, ժամանակ առ ժամանակ բացահայտվում է նաև իբրև լույս: Ըստ Էդոյանի՝ աստվածային լույսի ներկայությունից կամ բացակայությունից է կախված մեր կենսաձևը, տրամադրությունն ու տրամադրվածությունը: Հողվածներից մեկում հեղինակը նկատում է. «Լույսը» ընկալվում է իբրև ներքին լույս, որ աստվածային էությունից բխելով՝ թափանցում է մարդու հոգու մեջ և լուսավորում նրա ռելիեֆը»¹⁵: Բայց լույսի գաղափարը սեփականացնելու համար պիտի առավել քան ուժեղ լինել, քանի որ աստվածային լույսից հեռու մարդուն բնորոշ է անորոշությունն ու հեռացումն ինքն իրենից և շրջապատող աշխարհից, որին հաջորդում է օտարումը՝ մարդուն մատնելով վերջնական ներփակման: Այդ օտարումը տանում է մենության կամ ծնվում է մարդու մենակ լինելուց: Մենությունն Էդոյանական հերոսի ամենատիպական հատկանիշներից է, որ սկսվում է

¹¹ **Է. Էդոյան**, Փողոցի բաժանվող մասում, Եր., 2006, էջ 102: Հետագա մեջբերումները սույն ժողովածուից կնշվեն տեղում:

¹² **Է. Էդոյան**, Այժմ և միշտ, Եր., 1987, էջ 102: Հետագա մեջբերումները սույն ժողովածուից կնշվեն տեղում:

¹³ «Գարուն», 2005, թիվ 1, էջ 32:

¹⁴ Նոր Կտակարան և Մաղմոսներ, Եր., 2004, էջ 131:

¹⁵ «Սովետական գրականություն», 1978, թիվ 7, էջ 138:

առաջին գրքից և հասնում մինչև վերջինը: Թեմատիկ այս շերտը ոչ միայն պոետի էության արտացոլքն է, այլև մեզանից յուրաքանչյուրի, **որ մենակության** այդ սարսափելի զգացումը տանում ենք մեր ծննդյան առաջին օրվանից: Բայց և նկատենք, որ բանաստեղծի հոգում այդ մենությունը շատ խորն է նստած, որն էլ չափազանցված շերտերով տարածվում է նրա տեսած ու նկարագրած աշխարհի վրա: Ըստ Էդոյանի՝ մենակությունն անհրաժեշտ է ապրել, քանի որ դա ևս ճանապարհ է այն հաղթահարելու: Մենակության մասին խոսելիս բանաստեղծը հաճախ է անդրադառնում օրվա գաղափարին՝ շեշտելով, որ եթե մարդու կյանքն ամբողջանում է օրերով, ապա պետք է արժանապատիվ ապրել դրանք: Երբ առավոտյան արթնանում ես հույսերով ու երազներով լի, բայց օրն ապրում ես աստվածային լույսից հեռու, ապա, բնական է, որ օրվա վերջում պետք է կորուստներ ունենաս: Այս ամենը հերոսի հայացքը ժամանակ առ ժամանակ դեպի անցյալն է ուղղում, հատկապես իր մանկությանը, որի մեջ աստվածային մաքրությանը վերադառնալու խորհուրդ կա: Սակայն ժամանակի ընթացքում նա հասկանում է, որ անցյալը մարդուն զրկում է ներկայից և խանգարում է լիարժեք ապրել իր օրը, որքան էլ այն վատը լինի: Անցյալի մասին հուշերը դառնում են մի յուրօրինակ դամբարան: Հերոսը չի ուզում նաև ապագայով ապրել, քանի որ այն ևս շեղում է մարդու ուշադրությունը ներկայից: Տարիների ընթացքում հեղինակը ճշգրտում է իր վերաբերմունքը ժամանակի երեք չափումների հանդեպ.

Անցյալն իմ մարմինն է, որ ինձ է հետևում, ...

Ապագան իմ երազն է, որին մոտենում եմ ...

Ներկան ես ինքս եմ...

(«Փողոցի բաժանվող մասում», էջ 57)

Ընդհանրապես Էդոյանի պոեզիայում ժամանակի գաղափարին շատ են անդրադարձները: Բանաստեղծը նեղվում է ժամանակի սղությունից և անկառավարելիությունից: Նա կարծես ժամանակի ստրուկը լինի, ով տիրոջ չափ խելացի է, բայց զրկված է ինքն իրեն տնօրինելու հնարավորությունից: Լուռ մի զրույց կա (միգուցե նաև բողոք) Աստծո հետ: Ուստի պատումը ժամանակի մասին կրկին դառնում է Աստծուն հասկանալու ճանապարհ, որն օգնում է հաղթահարել և իմաստավորել նաև մահն ու մահվան վախը: «Մի խոսիր մահվան մասին» բանաստեղծության մեջ հեղինակը շեշտում է, որ քրիստոնյայի համար մահը մի նոր կյանքի սկիզբն է («Այժմ և միշտ», էջ 126):

Էդոյանի պոեզիայում մեծ է իմաստային կենտրոնացումը նաև «անուն» բառի շուրջ: Եվ դա պատահական չէ, քանզի Արևելքի շատ ժողովուրդների մեջ «որևէ անձի անունը նույնանում է տվյալ անձի հետ և նշանակում է նույն ինքը՝ այդ անձը»¹⁶.

և հետո հիշում եմ, / իմ անունն եմ հիշում, / որը հագել եմ չմրսելու համար:

(«Անդրադարձումներ», էջ 23)

Քո անունն է քո բնակարանը, ոչ թե մարմինդ, / քանի որ անունն ապրում է առանց մարմնի,

իսկ մարմինը ապրում է միայն անունով:

(«Պատկեր և կեսօր», էջ 140)

¹⁶ Նոր Կտակարան և Սաղմոսներ, Եր., 2004, էջ 677:

Ինչպես տեսնում ենք, հերոսի համար իր անունը պաշտպանական նշանակություն ունի, որն ամփոփում է նրա էությունը, նաև մարմնի ու անվան միջոցով ստեղծվում է հոգու ու մարմնի հակադրություն, անունն ու հոգին դառնում են հոմանիշներ:

Հաճախ մարդկանց թվում է, որ անունից՝ էությունից, հրաժարվելու դեպքում կարող են փոխել իրենց կյանքը, բայց հեղինակը զգուշացնում է.

*թողնելով քո անունը չես գտնի ուրիշ անուն,
այլ կմնաս իբրև անանուն կերպարանք, որի մեջ ամեն ոք
կարող է տեղավորվել...*

(«Երեք օր առանց ժամանակի», էջ 115)

Բանաստեղծն անդրադառնում է նաև մարդու ներսում առկա կասկածներին, դիմակների միջոցով սեփական եսը սքողելուն և այլ անառողջ ընկալումների, որոնք տարիների ընթացքում բերում են նրան, որ մենք դադարում ենք ուրախանալ մեր ունեցածով և այն, ինչ մերը չէ, համարում ենք մեր կորուստը: Այս բոլոր իրողությունները կաշկանդում են մարդու միտքը և արգելում աստվածային խոսքի մուտքը նրա ներաշխարհ: Նման հոգեվիճակներն Էդոյանը երբեմն տալիս է անսպասելի, բայց տիպիկ պատկերներով, որն ավելի է ընդգծում մարդու անկումն ու հեռացումն Աստծուց. «Նոր շենքերն արդեն ծածկում էին հեռվում / եկեղեցու դեմքը» («Երկրային ժամանակ», էջ 12): Բանաստեղծը շեշտում է, որ տեխնիկական զարգացումները ոչինչ են, եթե արդյունքում անտեսվում է եկեղեցին, այսինքն՝ եթե մարդը կորցնում է իր հոգևոր էությունը:

Ստեղծագործական զարգացումների ընթացքում Էդոյանի գրքերում շատանում են այն բանաստեղծությունները, որոնք գրված են աստվածաշնչյան տարբեր թեմաների ներշնչումներով, բայց ասելիքի առումով կապված են ժամանակակից իրականության հետ¹⁷:

«Հետգրություն» գրքում մի տպավորիչ բնորոշում կա.

Բանաստեղծությունից մինչև Ավետարան մի քայլ է միայն,

¹⁷ «Պատկեր և կեսօր» գրքում կա «Արարքը» վերնագրով բանաստեղծություն (էջ 88-89), որտեղ Էդոյանն աստվածաշնչյան պոեթի օգնությամբ, բայց ժամանակակից մարդու տեսանկյունով վերլուծում է Աբելի ու Կայենի ինքնաբացահայտող քայլերը: Հիշտ նույն երևույթը նկատելի է «Լռություն» բանաստեղծության մեջ («Այժմ և միշտ», էջ 143), որտեղ հեղինակը ներկայացնում է աշխարհի արարումը: «Աղջիկ, վեր կաց» սոնետում Էդոյանն աստվածաշնչյան հայտնի պատմությամբ ցանկանում է ընդգծել, որ եթե մենք հետևենք Աստծո խոսքին, ապա կարող ենք արթնանալ ամեն վայրկյան, քանի որ իրականում ոչ թե ապրում ենք, այլ թաղված ենք մեղքերի մեջ («Հարյուր սոնետ», էջ 62): Իսկ ահա «Քայլեր և ստվերներ» գրքում կա «Ճանապարհի երգեր» խորագրով մի շարք, որտեղ ընդգրկված բանաստեղծությունները նվիրված են Հովհաննես Մկրտչին, Սիմոն Կյուրենացուն, Մարիամ Մագդաղենացուն և այլոց: Այս գործերի յուրահատկությունը նրանում է, որ դրանք գրված են առաջին դեմքով՝ հայտնի նորկտակարանյան հերոսների անունից: Այսպես, «Սիմոն Կյուրենացի» գործում Էդոյանը, օգտվելով Կյուրենացուն վերաբերող հայտնի փաստից, շեշտում է այն, որ ծանր չէ մեր ուսերին տանել Քրիստոսի խաչը, երբ հասկանում ենք դրա խորհուրդը: «Ավագակ» բանաստեղծության մեջ Էդոյանն ընդգծում է այն, որ եթե մարդուն վերապահված է փրկություն, ապա դա կարող է լինել անգամ մահվան շեմին, ինչպես Քրիստոսի հետ խաչվող ավագաններից մեկի հետ եղավ: Իսկ ահա «Ճանապարհի դեպի Էմմաուս» գործը մեր կասկածների ճանապարհն է. Հիսուսի հարությունն անժխտելի իրողություն է, բայց մենք դեռ խարխափում ենք անհավատության մեջ:

որ երբեք չի արվելու:

(«Հետգրություն», էջ 277)

Չի արվելու նրա համար, որ Ավետարանը անառիկ մնա, և անթերիի այս շոշափելի նմուշի կողքին ստեղծագործողները բոլոր ժամանակներում և **բոլոր** տարածությունների վրա կատարելագործվելու տեղ ունենան: Բանաստեղծը զարգացման այդ ճանապարհն անցնում է ոչ միայն պոեզիա գրելով, այլև խորացնելով իր ըմբռնումները պոեզիայի մասին: Ինչպես ինքն է նկատում. «...Ժամանակակից պոեզիան գնում է հենց ինքնաճանաչողության»¹⁸: Տարիների հետ մեծանում է Էդոյանի պատասխանատվությունն իր գործի ու իր կոչման հանդեպ, և նա, հավատարիմ իր պոետական ավանդներին, պոեզիայի դիպուկ բանաձևումներ է տալիս՝ կարևորելով նրա դերը ոչ միայն պոեզիա ստեղծողի, այլև ընթերցողի համար:

Դեռ հին եզիպտական պոեզիան էր խոսում պոետի ու նրա գործի նշանակության մասին.

Իմաստուն պոետներ / աստվածային ժառանգների ժամանակներից,

...Նրանք չեն կառուցել պղնձե բուրգեր, / ...չեն թողել ժառանգներ իրենցից հետո,

...նրանց ժառանգությունը գրվածքների մեջ է, / խրատների մեջ՝ նրանց

շուրթերից ելած¹⁹:

Էդոյանը պոեզիան համարում է «հավերժության տոմս» («Պատկեր և կեսօր», էջ 83) և այդ «հավերժությունը» պայմանավորում է ժամանակի ընթացքում նրա դիմադրելիության ունակությամբ և կյանքին մոտ լինելու փաստով. «Ամեն հաջողված բանաստեղծության / սկիզբը կյանքն է - մշտապես արթուն...» («Երկրային ժամանակ», էջ 88): Նա նաև զգուշացնում է, որ պետք չէ իրականության մեջ եղած աղբը բերել գրականության. անկախ մեր կյանքում առկա բացերից՝ գրականությունը մաքուրի ակունքները պետք է մատնացույց անի, որ աղբը չկլանի հենց իրեն՝ գրողին: Մակայն ժամանակակից աշխարհում շատ դժվար է մշտապես պահպանել մաքուրի ակունքները: Պոեզիայի փրկության համար պոետի ինքնատիպության հարցն է բարձրացվում և ազատումը խոսքի մեջ գերիշխող ողբերից («Երեք օր առանց ժամանակի», էջ 102): Մեկ այլ ճանապարհ էլ կա. սովորել «արվեստն ապրելու և ոչ գրելու» («Երեք օր առանց ժամանակի», էջ 61): «Գրելու արվեստը չեն սովորում, ով սովորում է՝ նա կորցնում է դա: Գրելիս պետք է սովորել Ոգին. միայն այդ տեղից կարելի է մոտենալ արվեստին», - արդեն հոդվածի մեջ բանաստեղծության ասելիքը բացատրում է Էդոյանը²⁰:

21-րդ դարն ամենավտանգավորն է իր զարգացումներով, քանի որ գտնվում է Աստծուց ամենահեռացած վիճակում: Ժամանակակից աշխարհի բերած ավերածություններն ավելի շատ ազդում են մարդու հոգևոր ներաշխարհի վրա: Ամեն ինչ վերածվել է փողի ու սեռի համար մղվող պայքարի՝ մարդու արժեքը հավասարեցնելով զրոյի: «Ե-

¹⁸ «Գարուն», 2005, սեպտեմբեր, էջ 14:

¹⁹ Հին Արևելքի պոեզիա, Եր., 1982, էջ 19:

²⁰ «Գարուն», 2005, սեպտեմբեր, էջ 14:

րեք օր առանց ժամանակի» գրքում այս ամենը ներկայացվում է երեք օրվա անժամության մեջ. խաչելությունից մինչև հարություն մարդկությունը մնում է առանց Տիրոջ (ժամանակն ու Աստված դառնում են հոմանիշներ, ինչն Էդոյանի պոեզիայում բազմիցս նկատելի երևույթ է), երբ պիտի որոնի ու գտնի Նրան: Բայց ողբերգությունն այնտեղ է, որ այդ երեք օրերը շարունակվում են արդեն երկու հազարամյակ:

Վերջին՝ «Փողոցի Բաժանվող մասում» գիրքը կրում է արդեն տարիքն առած բանաստեղծի մտահոգությունների և ապրումների կնիքը: Կյանքի մայրամուտին հասած հերոսն իրեն պատկերացնում է Տիրոջ առջև կանգնած և բնավ ոչինչ չի գտնում պատմելու: Փողոցի Բաժանվող մասն էլ երկու աշխարհների սահմանագիծն է խորհրդանշում, որտեղից երկու հստակ ընդգծված ճանապարհ կա հերոսի համար՝ կա՛մ անկում, կա՛մ փրկություն: Այսքան տարիների անցած ճանապարհից հետո հերոսի համար այլևս վերջնականապես պարզ է, որ միակ փրկությունը Աստծուն գտնելու և Նրան ապավինելու մեջ է.

Թե գոնե մի պատուհան / չբացես դեպի երկինք – / տեսնելու պտույտները երկնային

ողորտների, / բոլոր դռները երկրային ճշմարտության / կփակվեն քո առջև:

Ոչ մի դուռ չի բացվի / առանց երկնքի: Չկա / ուրիշ ուղի:

(«Փողոցի Բաժանվող մասում», էջ 74)

Հ. Էդոյանի գրքերը հայելու պես արտացոլում են բոլոր այն ընթերցողների հոգեվիճակը, ովքեր որոնումների և սեփական կյանքի արժևորման ճանապարհին են: Բանաստեղծը մատնանշում է սխալը և միաժամանակ ցույց տալիս դրանից դուրս գալու ճանապարհը, որն իրատեսական է դարձնում ժողովածուները: Վերջին գրքում հեղինակն ապավինում է Աստծո ողորմածությանը, որ Նա մարդկանց կմոտեցնի իմացության ակունքներին, առանց որի նրանք դառնում են Հոբի որդիները, որից ժառանգել են տառապանքը, Բայց ուրացել են Արարչին: Արդյունքում մարդու մեջ եղած դատարկության ծանրությունը նրան թեքում է հողին, և սատանան էլ անվերջ ինչ-որ բաներ է շնջում, որի պատճառով մարդը մնում է երջանկության հավերժական փնտրտուքների և հավերժական սխալի մեջ («Փողոցի Բաժանվող մասում», էջ 108): Բայց և Տերն էլ մշտապես ներում է մարդու մեղքերը և սպասում նրա վերադարձին, թեկուզ դա լինի փողոցի Բաժանվող մասից:

Հոդվածի վերջում կարող ենք փաստել, որ հեղինակի գրույցը Աստծո հետ տարիների և ստեղծագործական զարգացումների ընթացքում դառնում է առավել իմաստալից ու կառուցիկ՝ վերջնականապես կենտրոնանալով Աստծուն գտնելու, կյանքն իմաստավորելու և այսքան չարիքի ու կեղծիքի մեջ սեփական դեմքը չկորցնելու խնդիրների վրա:



ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԿՈԹՈՂԱՅԻՆ ՀԱՏՈՐ ՄԸ՝ «ՀԱՅ ՎԱՆՈՐԱՅՔ»

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչատունը այս օրերուն հրապարակ հանեց հայ եկեղեցական ճարտարապետութեան ու պատմութեան համար կենսական կարևորութիւն ներկայացնող հատոր մը, որ Կեսարիոյ երբեմնի Առաջնորդ Տրդատ եպս. Պալեանի «Հայ վանորայք» գործն է: Տրդատ եպս. 19-րդ դարավերջի ու 20-րդ դարու սկիզբներու մտաւորականներէն մէկն է, որ զոհուած է 1922-ի Իզմիրի դէպքերուն: Իրեն հետ միասին զոհուած են իր արժէքավոր աշխատասիրութիւններն ու ձեռագիրները:

Պալեան եպիսկոպոս իր կենդանութեան օրերուն ամենուրեք շրջելով ու ականատեսի վկայութիւն բերելով՝ նկարագրած էր մեծ թիւով վանքերու ու եկեղեցիներու այդ շրջանի վիճակը հայաբնակ վայրերու տարածութեան վրայ: Իր աշխատանքին առաջին մասը հրատարակուած էր 1914-ին Իզմիրի մէջ, բայց պարագաներու բերմամբ գրքին ցրուումը եղած էր անկատար, ու գիրքերը հաւանաբար բնաջնջուած էին տակաւին առանց գործածուելու, այս պատճառաւ ալ գործը գրեթէ անգտանելի էր: Արշակ Ալպոյաճեանի, Համագասպ Ոսկեանի նման պատմաբաններ օգտագործած էին Պալեան Սրբազանի ուսումնասիրութիւնները եւ կերպով մը միջնորդ դարձած էին Պալեան եպիսկոպոսի ուսումնասիրութիւններուն եւ ընթերցողներուն միջեւ: Այժմ Մայր Աթոռը վերջապէս հրատարակած է թանկարժէք հատորը, զայն խմբագրելու աշխատանքը յանձնելով Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան ֆաքիւլթէի աւարտականներէն Կարինէ Աւետեանի: Դուրս եկած է հոյակապ հատոր մը, որու շնորհիւ հայոց վանքերու ու եկեղեցիներու պատմութիւնը ուսումնասիրողներ այսուհետեւ իրենց տեղեկութիւնները պիտի քաղեն ուղղակի աղբիւրէն, եւ պատիւ պիտի ընեն հեղինակին:

Կարինէ Աւետեան, որ ներկայիս կ'աշխատի Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Արեւելագիտութեան էնսթիթիւի մէջ, բովանդակալից իր ներածականին մէջ կը ներկայացնէ հեղինակն ու գործը, կը պատմէ թէ ինչպիսի հանգամանքներով է որ Տրդատ եպիսկոպոս սկսած է աշխատիլ այս նիւթին վրայ, եւ ո՞ր թերթերուն մէջ հրա-

տարակած է իր ուսումնասիրությունները: Գիրքին մեջ կը տողանցեն վանքեր Էնկիրին, Գայսերին, Սվազեն, Եւդոկիայեն, Շապին Գարահիսարեն, Ամասիայեն, Կիրինեն ու Տիվրիկեն, Տրապիզոնեն, Կիւմիշհանէն, Գոնիայեն եւ Կարինեն, Բաբերդեն, Երզնկայեն ու տակաւին ինչ ինչ տեղերէ, հարիւրաւոր վանքեր, յարակից մանրամասնություններով: Պալեան Տրդատ եպիսկոպոս իր գիրքին մեջ հաւաքած է ինչ որ կրցած է հաւաքել իւրաքանչիւր վանքի մասին: Ոմանց մասին երկար նկարագրականներ կան, ոմանց մասին պարզապէս կարճ վկայություններ: Բայց պատկառելի ցանկ մը կայ մեր ձեռքին մէջ: Եւ ասիկա անուններու տողանցք մըն է, որ յարգանք ու ցաւ կը յառաջացնէ միաժամանակ, որովհետեւ մարդ նախ կը զարմանայ վանքերու առատութեան ու անուններուն վրայ, ապա ցաւ կը զգայ անոնց անհետացած կամ հիմնովին վնասուած ըլլալուն վրայ: Եւ ասիկա նիւթ մըն է, որ ինչպէս իր ներածականին մէջ ալ դիտել կուտայ Կարինէ Աւետեան, մօտէն հետաքրքրած է օտար հեղինակներն ալ, որոնք կը սիրեն ուսումնասիրել Անատոլիոյ տարածքին վրայ հայկական յուշարձանները եւ այս նիւթի շուրջ յօդուածներ կը հրատարակեն գիտական օտար պարբերաթերթերու մէջ: Հատորը ունի ծանօթագրություններու լայն բաժին մը: Ներածականն ու ծանօթագրութեան բաժինները ինքնին առանձին հատոր մը կ'արժեն բնականաբար: Եւ հատորին վերջաւորութեան ալ դրուած են արդի ժամանակներու լուսանկարներ, որոնց հեղինակն է Հրայր Բազէ: Գիրքը մասնաւոր կարեւորություն կը ստանայ նաեւ անով, որ վանքերու պատմութեան առընթեր կը ծանօթացուին մեծ թիւով հոգեւորականներ կամ առաջնորդներ, որոնք Իզմիրի մէջ կամ այլուր պաշտօնավարած են զանազան շրջաններուն եւ անուն մը թողած են մեր վանքերու պատմութեան մէջ: «Հայրենագիտական» շարքէն հրատարակուած այս առաջին հատորին կը թուի թէ պիտի յաջորդեն ուրիշներ ալ: Մեր գնահատանքը կը յայտնենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչատան, մանաւանդ այս թանկագին հատորը խմբագրող Կարինէ Աւետեանին:

«ՄԱՐՄԱՐԱ», 30 հոկտեմբեր, 2008 թ.

ԳԻՐՔ ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԵԼԻՔԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ վերջերս լույս տեսավ նույն ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Արտակ Վլադիմիրի Մաղալյանի «Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ.» (խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր Պավել Չոբանյան, գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտոր Է. Դանիելյան, պատմ. գիտ. թեկնածու Ֆ. Մայիլյան) վերտառությամբ աշխատությունը: Շուրջ 326 էջ պարունակող մենագրությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, վերջաբանից, ռուսերեն և անգլերեն լեզուներով ամփոփումներից: Ուսումնասիրությունը շարադրվել է մեծաթիվ նորահայտ ձեռագրերի, արխիվային վավերագրերի, XVII-XVIII դդ. հայ պատմագիրների և նախախորհրդային ու խորհրդային շրջանի պատմաբանների աշխատությունների հիման վրա: Աշխատության հավելվածում զետեղված 50 փաստաթղթերը, որոնց մեծ մասը հրատարակվում է առաջին անգամ, նոր լույս են սփռում Արցախի մելիքությունների պատմության մի շարք հիմնահարցերի վրա:

Մեր օրերում Արցախի պատմության ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական կարևորություն և արդիականություն ժամանակակից քաղաքական գործընթացների, այդ թվում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի ծագման ուսումնասիրության տեսակետից: Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ տասնամյակներ շարունակ աղբրեջանական պատմագրությունը Արցախի պատմությունը ներկայացրել է պատմական փաստերի կեղծման ու իրականության խեղաթյուրման ուղիով:

Հենց սկզբից նշենք, որ մասնագետ-պատմաբանների և ընթերցող հասարակայնության սեղանին է դրվել խիստ ուշագրավ և մեծաթեք մի աշխատություն, որում պարունակված պատմագիտական հարուստ նյութը հնարավորություն է ընձեռում հետագա ուսումնասիրողներին Արցախի պատմության մի շարք հարցերում կատարել փաստագրական բնույթի էական ճշգրտումներ: Ինչպես նշվում է աշխատության առաջաբանում, հեղինակի շարադրանքի առանցքը Արցախի մելիքությունների ավելի քան երկդարյա պատմության ժամանակաշրջանի ուսումնասիրությունն է: Առաջին գլխում քննության են առնված Արցախի մելիքությունների իրավասությունների և պարտականությունների հետ կապված մի շարք հիմնահարցեր: Ինչպես օրինակ՝ հանգամանակից քննության են ենթարկված մելիքների իրականացրած դատավարությունը, հարկային քաղաքականությունը, վերջիններիս ենթակա գավառների հոգևոր գործերի, մասնավորապես՝ պաշտոնավարող հոգևորականների նշանակման և եկեղեցաշինության գործում ունեցած մասնակցությունը և այլն: Մելիքությունների անցած ուղին խորապես ըմբռնելու համար կարևոր նշանակություն ունի մելիքական տների տոհմաբանության ուսումնասիրությունը: Ուստի Ա. Մաղալյանն աշխատության երկրորդ գլխում փաստերի համադրմամբ քննարկել է Արցախի մելիքությունները և դրանցում իշխող մելիքական տների տոհմաբանությունը: Յուրաքանչյուր մելիքական տան տոհմաբանությունը ներկա-

յացնելիս հեղինակը մատենագրական և արխիվային նյութերի հիման վրա տալիս է նաև տվյալ մեղիքության պատմությունը:

Նորահայտ ձեռագիր աղբյուրների և արխիվային տվյալների հիման վրա Ա. Մաղալյանը կազմել և ամբողջացրել է Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների, Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանների, Կուսապատի Աթաբեկյանների, Խաչենի Հասան-Ջալալյանների, Վարանդայի Մելիք-Շահնագարյանների և Դիզակի Մելիք-Եզանյանների տոհմածառերը, ինչն էլ ավելի է ամբողջացնում կատարված աշխատանքը: Ուսումնասիրությունում ցույց են տրված այս տոհմերի տեղաշարժերը: Մելիք-Բեգլարյանների դեպքում՝ սկսած Ուտիքից մինչև Արցախի Գյուլիստան գավառ, այնտեղից մինչև Վրաստան՝ Բորչալուի գավառ (այժմ՝ Մառնեուլի) և Բողոտփորի (այժմ՝ Բոլնիսի) գավառներ, Լոռի և Տավուշ, Մելիք-Իսրայելյանների դեպքում՝ Սյունյաց աշխարհի Մաղավուզ և Խնածախ գյուղերից մինչև Ջրաբերդ գավառ, այնտեղից մինչև Գանձակի գավառ, Աթաբեկյանների դեպքում՝ Կուսապատից մինչև Ռուսաստան, Պարսկաստան, Եվրոպա, ինչպես նաև Բաքու, Թիֆլիս, Երևան և Էջմիածին, Մելիք-Շահնագարյանների դեպքում՝ Գեղարքունիքից մինչև Վարանդա, իսկ Մելիք-Եզանյանների դեպքում՝ Լոռուց մինչև Դիզակի Տող գյուղը, այնտեղից մինչև Բաքու:

Հայտնի է, որ Հայոց անկախ պետականության բացակայության պայմաններում մեղիքությունները մնացել էին այն միակ կառույցը, ուժը, որոնց հենքի վրա վերստին պետք է վերականգնվեր Հայոց պետականությունը: Հարկ է նշել, որ Արցախի մեղիքությունների գոյության երկարատև ժամանակահատվածում եղել են այնպիսի տիրակալներ, որոնք խուսափել են նվաճողների հանդեպ հարկային պարտավորությունները կատարելուց: Մասնավորապես, այդպիսի իշխանություններ էին Վարանդայի Մելիք-Հուսեինը (1730-1736) և նրա եղբորորդի Մելիք-Միրզաբեկը (1736-1744): Ըստ էության մեղիքություններն ազատ էին ու ինքնիշխան այնքան ժամանակ, քանի դեռ Արցախում Վարանդայի Մելիք-Շահնագար Բ-ի թողտվությամբ բուն չէր դրել վաչկատուն սարջալլուների ցեղապետ Փանահ խանը: Վերջինիս և նրա որդուն՝ Իբրահիմ խանին, հաջողվեց զգալիորեն թուլացնել Արցախի մեղիքությունները: Մելիք-Շահնագար Բ-ի գործած այդ սխալ քայլը ծանր հետևանքներ ունեցավ արցախահայության համար: Ինչպես իրավամբ նկատել է Ա. Մաղալյանը. «...միայն Արցախյան հերոսական ազատամարտի շնորհիվ հաջողվեց սրբազրել Մելիք-Շահնագարի թույլտված շուրջ 240-ամյա ճակատագրական սխալը»:

Աշխատության վերջաբանում Ա. Մաղալյանը բարձրացնում է հայ ժողովրդի միաբան լինելու և պատմությունից դասեր քաղելու գաղափարը և իրավացիորեն եզրահանգում, որ «Արցախի մեղիքությունների պատմությունը նաև միաբան լինելու մի յուրօրինակ դաս է գալիք սերունդներին: Այդ դասը հաշվի չառնելու դեպքում մեր Հայրենիքի այլևայլ անկյուններում ևս կարող են հայտնվել նորօրյա փանահներ և իբրահիմներ»:

Ամփոփելով մեր խոսքը՝ նշենք, որ Հայոց պատմագիտության համար շահեկան սույն մենագրությունը կարևոր քայլ է Արցախի պատմության ամբողջացման ճանապարհին, և կցանկանայինք այն թարգմանված տեսնել նաև օտար լեզուներով:

*ԳԵՎՈՐԳ ՄՐԱՊԻՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ՆՈՐ ԳԻՐՔ ԱՐՑԱԽԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հրանտ Աբրահամյան, Մարտնչող Արցախը
1917-2000 թթ., Գիրք Գ (1985-2000), «Դիզակ
պլյուս» հրատարակչություն, Ստեփանա-
կերտ, 2007, 744 էջ:

Արցախի 20-րդ դարի պատմության ուսումնասիրության ասպարեզում իր ուրույն տեղն ունի պատմագիտության դոկտոր պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանը: Նա ընթերցող հասարակությանը հայտնի է հատկապես Արցախի 1918-21 թթ. և դրանից հետո ընկած շրջանի պատմության ուսումնասիրությամբ:

Վերջերս լույս տեսավ Հ. Աբրահամյանի «Մարտնչող Արցախը» եռամաս ուսումնասիրության Գ մասը, որը լրացնում է Հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի Արցախ-Ղարաբաղյան պատմության պակասը: Այն ընդգրկում է Արցախի 1985-2000 թթ. ազատագրական պայքարի ամբողջական պատմությունը, ներառյալ շարժման հետ կապված բավականին մանրամասնություններ: Աշխատությունը գրված է Հայաստանի և Արցախի Հանրապետությունների արխիվային նյութերի, հրապարակի վրա եղած բազմաթիվ գրքերի և մամուլի հարուստ փաստերի հիման վրա: Այն բաղկացած է ներածությունից (11 էջ), վեց գլուխներից, վերջաբանից և օգտագործված աղբյուրներից ու գրականության ցանկից: Աշխատության մեջ հանգամանորեն քննարկված է Արցախի պատմության ավելի քան 15-ամյա ժամանակահատվածի ազգային-ազատագրական պայքարի, Արցախի Հանրապետության ստեղծման ու կայացման, երկրամասի տոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի հետ առնչվող հիմնական հարցերը: Ըստ էության աշխատությունը արցախահայության 1985-2000 թվականների պատմությանը նվիրված ամբողջական ուսումնասիրություն է: Հ. Աբրահամյանը, օգտագործելով արխիվային համապատասխան նյութերը, մամուլը և հրապարակված բազմաթիվ գրքեր, դիտարկում է մի շարք խնդիրներ և առաջին անգամ ամբողջացնում երկրամասում կատարված իրադարձությունների շղթան:

Աշխատության առաջին գլուխը նվիրված է 1985-ից՝ Գորբաչովյան «վերակառուցումից» մինչև 1988-ի գարունը արցախահայության ազգային ազատագրական պայքարի նոր վերելքին: Այստեղ հանգամանորեն շարադրված է պայքարի սկզբնավորման պատմությունը: Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ տասնամյակներ շարունակ անթեղված կրակից բոց բռնկվեց և Արցախը ոտքի կանգնեց իր ազատությունը կերտելու համար: Մինչև հիմա հանգամանալից խոսք չի ասվել Արցախից Մոսկվա մեկնած պատվիրակությունների, ստորագրահավաքների, առաջին գաղտնի կազմակերպությունների գործունեության մասին: Եվ, վերջապես, 1988-ի փետրվարի 20-ի իրադրությունների, առանձնապես Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանի մասին, իրադարձություն, որն իր վրա գրավեց ոչ միայն

Խորհրդայն Միության, այլև աշխարհի շատ ժողովուրդների, հատկապես սփյուռքահայության ուշադրությունը: Ընդունված որոշումով մարզային խորհուրդը նոր ուղի բացեց ազատագրական պայքարի պատմության մեջ:

Դրանից հետո շարժումը թե՛ Արցախում և թե՛ Հայաստանում ընդունեց համաժողովրդական բնույթ, որի մասին աշխատությունում հանգամանորեն շարադրված է: Հեղինակը աշխատության հաջորդ գլուխներում ներկայացնելով շարժման ընթացքը՝ ցույց է տալիս, որ Արցախ-Ղարաբաղում հանրապետության ստեղծումը դարձել էր պատմական անհրաժեշտություն: Նա ընդգծում է, որ «Արցախի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը առաջ մղելու և պետականության հետագա զարգացման գործը կազմակերպելու մեջ չափազանց մեծ է Հայ Առաքելական Եկեղեցու Արցախյան թեմի դերը, որը վերականգնվեց 1989 թվականին, մինչդեռ Ադրբեջանի իշխանությունների կողմից փակվել էր 1933 թվականին» (էջ 473): Թեմակալ առաջնորդ Պարզև եպիսկոպոս Մարտիրոսյանը բոլոր ուժերը գործադրեց ազգային ազատագրական պայքարը իր վերջնական հաղթանակին հասցնելու համար:

Աշխատությունում հանգամանորեն շարադրված են Արցախի Հանրապետության հռչակումից հետո տեղի ունեցած իրադարձությունները: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հ. Աբրահամյանի աշխատության 5-րդ գլուխը, որն անվանվում է «Արցախյան բարդույթը աշխարհաքաղաքական հորձանուտներում» (էջ 623): Հեղինակը արխիվային նորահայտ նյութերի հիման վրա ցույց է տալիս, թե ինչպես Ադրբեջանի իշխանությունների գործադրած բռնարարքների հետևանքով ադրբեջանահայության զգալի մասը, որը հասնում էր 470 հազարի, ստիպված էին ջարդված, թալանված հեռանալ իրենց օջախներից՝ թողնելով մեծ քանակությամբ հարստություն: Ադրբեջանի իշխանությունը այդ ամենի համար ոչ մի կոպեկ չփոխհատուցեց, մինչդեռ Հայաստանից հեռացած 160 հազար ադրբեջանցիների թողած ունեցվածքը լիովին փոխհատուցվել է:

Հայտնի է, որ շարժման հենց սկզբից Արցախ-Հայաստանում կազմակերպվել են կամավորական ջոկատներ, որոնք մեծ դեր են խաղացել սահմանների պաշտպանությունն ապահովելու և բնակավայրերը փրկելու համար: Նոյեմբերյան-Արարատ-Գորիս-Արցախ այդ ամբողջ տարածքի վրա գործել են բազմաթիվ կամավորական ինքնապաշտպանական ջոկատներ, որոնց գործունեությունը չնայած համառոտ, այնուամենայնիվ նկարագրված է մենագրության մեջ: Կամավորական ջոկատներից մինչև ազգային բանակի ստեղծումը հերոսական քայլ էր, պատմական խիստ անհրաժեշտություն:

Հեղինակի ուշադրությունից չի վրիպել Արցախ-Հայաստանի հայ հասարակական-քաղաքական ուժերի կողմից Արցախյան շարժման նկատմամբ ունեցած վերաբերմունքի և այդ պայքարի մասնակցության հարցերը: Արցախյան շարժմանը լայն մասնակցություն է ունեցել հայ կինը (էջ 576-604), որին հատուկ վերնագիր է նվիրված մենագրության մեջ: Հարյուրավոր հայ կանայք զենքը ձեռքին կամ կարմիր խաչի նշանով մարտնչել են Արցախում, ազատագրված տարածքներում, Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Հեղինակը անչափ նվիրվածությամբ է խոսում նրանց կատարած հերոսական աշխատանքի մասին:

Հ. Աբրահամյանի աշխատության վերջին վեցերորդ գլուխը նվիրված է 1994-2000 թթ. ԼՂՀ սոցիալ-տնտեսական, հասարակական և քաղաքական կյանքի նկարագրությանն ու վերլուծությանը (էջ 668-730): Հետպատերազմյան տարիներին Արցախի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության ամենասկսիվ մասնակցությամբ և օժանդակությամբ իրագործվել են բազմաթիվ խնդիրներ՝ հողի սեփականաշնորհումից մինչև երկրամասի քայքայված տնտեսության վերականգնումը: Կարևոր է այդ ժամանկաշրջանում երկրամասի հասարակական-քաղաքական կյանքի վերլուծությունը, որը նույնպես տեղ է գտել մենագրության մեջ: Աստիճանաբար, օր օրի վեր է բարձրանում Արցախը, չնայած նրա ներքին կյանքում դեռևս կան լուրջ հակասություններ և թերություններ, որոնք ներկայացնելուց հեղինակը չի խուսափել:

Չնայած կարճ (էջ 3), բայց բավականին հետաքրքիր է շարադրված աշխատության վերջաբանը: Հեղինակը հարցնում է. «Աշխարհում ո՞վ է տեսել, որ 14 տարեկան պատանին լինի տանկի հրամանատար, բայց դա եղել է Արցախում, հայոց հողում, որտեղ 150 անչափահասներ հերոսաբար մարտնչել են իրենց հայրերի և պապերի կողքին: Եվ Արցախը պայքարել ու դիմացել է» (էջ 727): Հ. Աբրահամյանը երիցս ճիշտ է, երբ գրում է. «Հաղթանակը հենց այնպես չի գալիս, այն կերտվում է մարդկանց արյամբ, երբ կա ազգի միասնություն, համաժողովրդական պայքար, երբ իշխում է հաղթանակի ոգին» (էջ 727): Իրոք, Արցախը դարձավ խորհրդային կայսերապետության խորտակման համար պայքարողների առաջնեկներից մեկը, որը լավագույնս ներկայացված և լուսաբանված է:

ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հրնթացա Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց քահանայական ձեռնադրություն և օծում:

Ձեռամբ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Գերաշնորհ Ս. Սահակ եպիսկոպոս Մաշալյանի՝ յոթ սարկավագներ ստացան քահանայական ձեռնադրություն: Ձեռնադրող Սրբազան Հայրը նորընծա քահանաներին վերանվանեց հոգևոր նոր անուններով. Արայիկ սրկ. Ղալայանը վերանվանվեց Ս. Ներսես, Վարդան սրկ. Մարոյանը՝ Ս. Արսեն, Արսեն սրկ. Մարությունը՝ Ս. Տաթև, Հովիկ սրկ. Մալխասյանը՝ Ս. Եզնիկ, Անդրանիկ սրկ. Առաքելյանը՝ Ս. Փառեն, Գոռ սրկ. Նազարյանը՝ Ս. Արշակ, Պետրոս սրկ. Գումբայանը՝ Ս. Արարատ:

Ձեռնադրությունից հետո Սահակ Սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց և, անդրադառնալով հոգևորականի քրիստոսատուր առաքելությանը, ընդգծեց, որ նորընծա քահանաները հոգևոր հայրեր պիտի լինեն ժողովրդի համար, պիտի ապրեն նրանց հոգսերով և մխիթարանք ու սփոփանք բերեն իրենց բանավոր հոտին:

«...Դուք ժողովրդի հայր պիտի լինեք: Պիտի սրբեք նրանց արցունքները, պիտի մտնեք փոթորկալի տները և խաղաղություն բերեք, աղքատներին պիտի բերեք հույս, իսկ հիվանդներին՝ բժշկություն: Ձեզ պիտի տեսնեն ու ասեն, որ իրենց հոգևոր հայրն է գալիս: Ձեր այս մեծ առաքելության մեջ դուք մենակ չեք, քանի որ Տեր Հիսուս տվեց Սուրբ Հոգին, և դուք այսօր, քահանայական այս ձեռնադրությամբ, ստացաք Սուրբ Հոգու գործությունն ու շնորհները: Միայն թե այդ շնորհները նման են սերմերի. եթե չցանվեն ու չխնամվեն, ապա չեն մեծանա: Ուստի դուք ձեր ստացած շնորհներն ի գործ պիտի դնեք և օգտակարություն բերեք մխիթարանքի կարոտ մեր ժողովրդին: Քահանայի գործն Աստծո և ժողովրդի միջև միջնորդ լինելն է: Աստծուց օրհնություն պիտի առնեք ու բաշխեք ժողովրդին, իսկ ժողովրդից պիտի առնեք նրանց հոգսերն ու խնդիրները և մատուցեք Աստծուն: Դժվարին, բայց փառավոր է ձեր առաքելությունը», - նշեց Սրբազան Հայրն իր քարոզում (տե՛ս էջ 44):

Մայր Աթոռում քառասնօրյա պահեցողության շրջանն ավարտելուց հետո Նորին Սրբության բարձր տնօրինությամբ նորաօծ եկեղեցականները հովվական ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տ. ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ՂԱԼԱՅԱՆ

(ավագանի անունը Արայիկ)

Ծնվել է 1970 թվականի ապրիլի 5-ին Վանաձոր քաղաքում:

1977-1987 թթ. սովորել է Վանաձորի Բաժնու անվան միջնակարգ դպրոցում:

1987-1992 թթ. սովորել է Վանաձորի Ս. Խ. Թևոյանի անվան Պոլիտեխնիկումում:

1988-1990 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

2002-2004 թթ. սովորել է Քահանայից պատրաստման լսարանում:

2004 թվականի հոկտեմբերի 3-ին, ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005-2006 թթ. որպես ազատ ունկնդիր ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006-2008 թթ. որպես սարկավագ սպասավորել է Գուգարաց թեմի Վանաձորի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցում՝ համատեղելով Գուգարաց թեմի առաջնորդարանի գործավար-քարտուղարի պաշտոնը:

2008 թվականի նոյեմբերի 9-ին, ձեռամբ Տ. Սահակ եպս. Մաշալյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԱՐՄԵՆ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԴՅԱՆ

(ավագանի անունը Վարդան)

Ծնվել է 1979 թ. նոյեմբերի 16-ին Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղում:

1985-95 թթ. սովորել է տեղի Մարգար Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցում:

1998-2000 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

2000-2004 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2004-2006 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. Ս. Վարդանանց տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. հուլիսին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ ծառայության է անցել Մայր Աթոռի Ճարտարապետական բաժնում՝ իբրև գործավար-քարտուղար:

2007 թ. մարտ ամսին պաշտպանել է ավարտաճառ «Ստեփաննոս եպս. Սյունեցու ավագ օրհնության շարականների և տաղերի աղբյուրագիտական և բառամթերքի աստվածաբանական վերլուծություն» թեմայով:

2008 թ. մարտի 15-ից ծառայության է անցել Արարատյան Հայրապետական թեմում՝ որպես երիտասարդաց միությունների հոգևոր խորհրդատու: Նույն թվականի հունիսի 1-ից որպես հոգևոր սպասավոր ծառայության է կոչվել ՀՀ Զինված ուժերում:

2008 թ. նոյեմբերի 9-ին, ձեռամբ Տ. Սահակ եպս. Մաշալյանի, ձեռնադրվել է ամուս-

նացյալ քահանա:

Տ. ՏԱԹԵՎ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՈՒՔՅԱՆ

(ավագանի անունը Արսեն)

Ծնվել է 1983 թ. հուլիս 19-ին Գյումրի քաղաքում:

1990-2000 թթ. սովորել է Գյումրու Ավետիք Բսահակյանի անվան թիվ 26 միջնակարգ դպրոցում:

2000 թ. ընդունվել է Գյումրիի Հոգևոր Ընծայարան: 2003 թ. կրթությունը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. Ս. Վարդանանց տոնին Մայր Տաճարում, ձեռամբ Ս. Ներսես արքեպ. Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. հուլիսին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ ծառայության է կոչվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում:

2007 թ. ապրիլին պաշտպանել է ավարտաճառ «Քրիստոնեական դաստիարակությունը ընտանիքում և հավատքի ձևավորումը երեխաների մոտ» թեմայով:

2008 թ. նոյեմբերի 9-ին, ձեռամբ Ս. Սահակ եպ. Մաշայանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

(ավագանի անունը Հովիկ)

Ծնվել է 1980 թ. Արարատի մարզի Արարատ գյուղում:

1986-97 թթ. սովորել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1997-2000 թթ. սովորել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում:

2000-06 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. հուլիսից Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ նշանակվել է ծառայության Մայր Տաճարի թանգարանում:

Նույն թվականի հոկտեմբերի 8-ին, ձեռամբ Ս. Փառեն եպ. Ավետիքյանի ձեռնադրվել է սարկավագ:

2007 թ. օգոստոսի 30-ին պաշտպանել է ավարտաճառ «Օրբելյանների տոհմի նվիրատվությունները Սյունյաց եկեղեցիներին ու վանքերին» թեմայով:

2008 թ. փետրվարի 20-ից ծառայությունը շարունակել է Երևանի Ս. Երրորդություն եկեղեցում:

2008 թ. նոյեմբերի 9-ին, ձեռամբ Ս. Սահակ եպ. Մաշայանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՓԱՌԵՆ ՔԱՀԱՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(ավագանի անունը Անդրանիկ)

Ծնվել է 1984 թ. մարտի 7-ին Արմավիրի մարզի Մուսալեռ գյուղում: 1991-2001 թթ.

2008

ԷԶՄԻԱԾԻՆ

ԺԱ 137

սովորել է Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոցում:

2001-2005 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2005-2007 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. հոկտեմբերի 8-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Ս. Փառեն եպս. Ավետիքյանի:

2007 թ. մայիսի 31-ին պաշտպանել է ավարտաճառ «Թաղման ծեսը» թեմայով:

2007 թ. հուլիսի 1-ին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ ծառայության է նշանակվել Մայր Տաճարում՝ որպես լուսարար:

2008 թ. հուլիսի 20-ից ծառայությունը շարունակել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում:

2008 թ. նոյեմբերի 9-ին, ձեռամբ Ս. Սահակ եպս. Մաշայանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ԱՐՇԱԿ ՔԱՀԱՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

(ավագանի անունը Գոռ)

Ծնվել է 1983 թվականի սեպտեմբերի 7-ին Էջմիածին քաղաքում:

1990-2001 թթ. սովորել է Էջմիածնի թիվ 11 միջնակարգ դպրոցում:

2001-2007 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թվականի հոկտեմբերի 8-ին, ձեռամբ Ս. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2007 թվականին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ նշանակվել է ծառայության «Շողակաթ» հեռուստաընկերությունում նախ որպես գործավար-քարտուղար, ապա՝ հոգևոր-կրոնական հաղորդումների պատասխանատու:

Պաշտպանել է ավարտաճառ ««Երգ Երգոց»-ի բույսերի խորհրդաբանական-մեկնաբանական քննություն» թեմայով՝ արժանանալով գերազանց գնահատականի:

2008 թվականի նոյեմբերի 9-ին, ձեռամբ Ս. Սահակ եպիսկոպոս Մաշայանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ զավակ:

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ԳՈՒՄԲԱԼՅԱՆ

(ավագանի անունը Պետրոս)

Ծնվել է 1985 թ. հունիսի 28-ին Էջմիածին քաղաքում:

1992-2001 թթ. սովորել է Էջմիածնի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցում:

2002-2008 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2006 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթազյանի:

2007 թ. հուլիսի 17-ին պաշտպանել է ավարտաճառ «Միոն» ամսագրի մատենագիտությունը 1991-2000 թթ.» թեմայով:

2008 թ. հուլիսի 10-ից Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ ծառայության

Է կոչվել Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում:

2008 թ. նոյեմբերի 9-ին, ձեռամբ Տ. Սահակ եպս. Մաշայանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի, Կալկաթայի Ս. Նազարեթ հայոց եկեղեցում նոյեմբերի 15-ին տեղի ունեցավ Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն Հարություն սրկ. Համբարձումյանի քահանայական ձեռնադրության արարողությունը (տե՛ս էջ 30):

Տ. ԱՎԵՏԻՍ ՔԱՀԱՆԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

(Ավագանի անունը Հարություն)

Ծնվել է 1979 թ. ապրիլի 16-ին Երևան քաղաքում:

1985-1996 թթ. սովորել է տեղի թիվ 144 միջնակարգ դպրոցում:

1996-1998 թթ. ուսանել է Գյումրիի Հոգևոր Ընծայարանում և ստացել ընդհանուր միջնակարգ և ճեմարանական կրթություն:

1998-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում:

2003 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփաննոսի տոնին, ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Աղամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2004 թ. Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ ծառայության է անցել Մայր Տաճարում՝ որպես լուսարարապետի պաշտոնակատարի օգնական:

2005 թ. հունվար-ապրիլ ամիսներին սովորել է Հնդկաստանի Հայդերաբադ քաղաքի «CENTRAL INSTITUTE OF ENGLISH AND FOREIGN LANGUAGES» ինստիտուտում և ստացել անգլերեն լեզվի թարգմանչի և ուսուցչի վկայական:

2005-2007 թթ. աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ինտերնետային գրասենյակում որպես տնօրենի օգնական:

2006 թ. դեկտեմբերի 27-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Վարդան Արևելցու աստվածաբանական հայացքները» թեմայով՝ ստանալով «քաջալավ»:

2007 թ. մարտ ամսին հայրապետական տնօրինությամբ ծառայության է կոչվել հնդկահայոց հովվությունում՝ Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրենի հանգամանքով:

2008 թ. նոյեմբերի 15-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա Կալկաթայի Սուրբ Նազարեթ եկեղեցում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՕԾԵՑ «ԿՈՇ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց ՀՀ Արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի Ս. Հարություն եկեղեցու օծման արարողությունը: Եկեղեցին կառուցվել է ազատագրկվածների ջանքերով, ճարտարապետը Անահիտ Թարխանյանն է:

Արմավիրի թեմի առաջնորդ Ս. Սիոն եպիսկոպոս Աղամյանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների հետ օժեց եկեղեցու տասներկու պուները, Մկրտության ավազանը և սրբապատկերները: Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հոգեպարար շարականների երգեցողության ներքո, կատարեց խորանի՝ չորս Ավետարանիչների պուների և Ս. Սեդանի օծման արարողությունը: Վեհափառ Հայրապետն աղոթքով հայցեց Բարձրյալ Տիրոջից անսասան պահել նորած եկեղեցին, որպեսզի այնտեղ աղոթող հայորդիները մշտապես արժանանան տերունական օրհնության և հաղորդ դառնան երկնային պարգևների:

Հավարտ արարողության Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնության խոսքն ուղղեց ներկաներին: Նորին Սրբությունը նշեց, որ շուրջ 16 տարի հոգևոր սպասավորներն իրենց առաքելությունն են իրականացնում կալանավայրերում՝ լծվելով ազատագրկված անձանց հոգևոր ծարավը հագեցնելու գործին: Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ վերջապես նաև իրականացել է «Կոշ» քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների ու ազատագրկյալների՝ եկեղեցի ունենալու ցանկությունը: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ եկեղեցու կառուցումը պիտի հոգևոր մի վերածնություն առաջ բերի ազատագրկվածներին, եկեղեցու կամարների ներքո նրանք պիտի կանգնեն աղոթքի, Աստծո առջև պիտի բացեն իրենց սիրտը, գոջան և ապաշխարեն, քանզի համաձայն Ավետարանի՝ սուրբ և խոնարհ սրտերն են հաճելի Աստծուն: Հայոց Հայրապետը պատահական չնկատեց կալանավայրերում մատուռների ու եկեղեցիների կառուցումը, որովհետև մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատգամն ու պատվիրանն է դա, Ով չեկավ առողջների, այլ կարիքավորների և նեղյալների համար, ովքեր կարիք ունեն Տիրոջ պատգամի, խոսքի և սիրտ, որպեսզի նրանք ճիշտ կողմնորոշվեն կյանքում, ուժ գտնեն կանգնելու ճիշտ ճանապարհի վրա և իրենց կյանքն աստվածահաճ կերպով կազմակերպեն և ապրեն: «Ահա այս հավատով է, որ մենք այսօր կատարեցինք օծումն այս եկեղեցու, որ պիտի նպաստի, որպեսզի դուք ներհայեցողությամբ, ինքնաքննության ու ինքնազննումի ճանապարհով կարողանաք գտնել բարու ճանապարհը, զերծ մնալ մեղքերից և հույս ու լավատեսություն ամբարել ձեր հոգիների մեջ, որպեսզի դուրս գաք այս վայրից և որպես արժանավոր քաղաքացիներ մեր երկրի՝ ձեր օգտակար ծառայությո՛ւնը»:

յունը բերեք մեր Հայրենիքին»,- դիմելով ազատագրկվածներին՝ ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ, ՀՀ Արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը, Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ, գեներալ մայոր Աշոտ Մարտիրոսյանը, «Կոշ» քրեակատարողական հիմնարկի պետ, փոխգնդապետ Լյովա Բաղդասարյանը, ԱԺ պատգամավորներ, հասարակական կազմակերպությունների ղիտորդական խմբի ներկայացուցիչներ:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Մ. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՕԾՎԵՑ ԼԵՌՆԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ Ս. ՄԱՐԳԻՍ ՄԱՏՈՒՌԸ

Նոյեմբերի 18-ին հանդիսապետությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Մեպուհ եպիսկոպոս Չուլջյանի՝ կատարվեց Տաշիրի տարածաշրջանի Լեռնահովիտ գյուղի Սուրբ Սարգիս մատռան Սուրբ Մեղանի և Մկրտության Ավագանի օծման արարողությունը: Սույն թվականի նոյեմբերի 10-ին ձեռամբ Սրբազան Հոր արդեն օծվել էր մատուռի գմբեթի խաչը:

Մատուռը կառուցվել է գյուղին կից՝ ժողովրդի կողմից սիրված Կարճադոշ բլրի վրա՝ բարերարությամբ Վահե Կարապետյանի:

Մատուռի օծման արարողության ավարտին Մեպուհ Սրբազանն իր օրհնության ու շնորհավորական խոսքն ուղղեց բոլոր ներկաներին. «Գոհություն ենք հայտնում Բարձրյալն Աստծուն, որ մեզ պարգևում է խաղաղ կյանք՝ ստեղծագործելու և կառուցելու համար նորանոր սրբավայրեր ու կատարելու բազում այլ Աստվածահաճո գործեր: Անկասկած այս սրբավայրն այսուհետ կծառայի ձեր սրտաբուխ աղոթքները երկինք բարձրացնելու և միաբանվելու մեր Մայր Եկեղեցու անսասանության, մեր անկախ հայրենիքի բարգավաճման ու հայ ժողովրդի բարօրության համար»:

Սրբազան արարողությանը մասնակցում էին Տաշիրի տարածաշրջանի հոգևոր հովիվ Ս. Զարեհ վարդապետ Կաբադյանը, Ստեփանավանի տարածաշրջանի հոգևոր հովիվ Ս. Վռամ աբեղա Ղազարյանը, բարերարի գերդաստանը, գյուղի և մերձակա տարածքի հավատացյալներ:

Արարողության ավարտին Սրբազանը օրհնեց բարերար Վահե Կարապետյանին ու նրա ընտանիքին և շնորհակալություն հայտնեց սույն աստվածահաճո աղոթավայրի կառուցման համար, և ապա Կարապետյան գերդաստանի կողմից ներկաներին մատուցվեց երախտիքի ու գոհության մատաղ՝ գյուղացիների արևշատության, հարազատ գյուղի անսասանության և Մայր հայրենիքի ու Սուրբ Եկեղեցու պայծառության համար:

ՂԻԻԱՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում (Աստվածաբանական համալսարան) տեղի ունեցավ ավարտաճառերի պաշտպանություն:

Ճեմարանավարտ երկու սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը հետևյալ թեմաներով. «Միջին հայերենի կրոնաեկեղեցական բառապաշարը» (Արամ սրկ. Ծատուրյան)՝ ղեկավարությամբ Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիթ Գյուրջինյանի, «Մկրտիչ Նաղաշի կենսագործունեությունն ու ստեղծագործական ժառանգությունը» (Էդգար սրկ. Երանյան)՝ ղեկավարությամբ Բանասիրական գիտությունների դոկտոր Վարազ Ներսիսյանի:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

«ՄԵԾ ՄԱՅՐԱ» ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿ ՖԵԹՆԻՅԵ ՉԵԹԻՆԸ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ

Հոկտեմբերի 29-ին Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Մեպուհ եպիսկոպոս Չուլջյանի հրավերով Վանաձոր այցելեցին «Մեծ մայրա» գրքի հեղինակ Ֆեթիյե Չեթինը, Հրանտ Դինքի հարազատները, ինչպես նաև գրքի թարգմանիչ Ռուբեն Մելքոնյանը: Չեթինը, լինելով փաստաբան, հրապարակախոս, իրավապաշտպան, հասարակական գործիչ և Հրանտ Դինքի ընտանիքի շահերի պաշտպան, հայտնի է ոչ միայն Թուրքիայում, այլև արտասահմանում, հատկապես հայկական սփյուռքում: Այստեղ նրան ճանաչում են «Մեծ մայրա» գրքով, որի երկրորդ հրատարակության առթիվ էլ նա եկել է Հայաստան: Այս գիրքը թարգմանված է հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իտալերեն լեզուներով:

Այցը Վանաձոր բավականին բովանդակալից էր Ֆեթիյե Չեթինի համար: Նա այցելեց Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ, ուր հանդիպում ունեցավ բանասիրական ֆակուլտետի ուսանողների ու դասախոսների հետ: Բացման խոսքով ելույթ ունեցավ Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Մեպուհ եպո. Չուլջյանը: Սրբազան Հայրն իր օրհնությունը ուղղեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց Ֆ. Չեթինին հրավերն ընդունելու համար: Նա իր խոսքում ասաց. «Արդարության ջատագով յուրաքանչյուր մարդու նկատմամբ մեր հարգանքը մեծ է»: Շնորհավորական խոսք ասաց նաև ՎՊՄԻ-ի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը: Բանասիրական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Արտակ Մարուխանյանը և Վալերի Փիլոյանը մանրամասն ներկայացրեցին և վերլուծեցին «Մեծ մայրա» գիրքը, որից հետո Ֆ. Չեթինը պատասխանեց ուսանողների հարցերին: Նա նշեց. «Ես գրել եմ այս գիրքը, որ մարդիկ իմանան իրականությունը: Անհրաժեշտ է առերեսվել անցյալին, ինչի համար առաջին քայլն այն իմանալն ու հիշելն է: Ես ներողություն եմ խնդրում իմ Հերանուշ տատիկից և նրա ճակատագիրն ունեցողներից»:

Հանդիպման ավարտին Ֆ. Չեթինին և Հրանտ Դինքի հարազատներին հանձնվեցին հուշանվերներ, սակայն ամենաթանկ նվերը Չեթինը համարեց «Հինգալա» հայկական ժողովրդական երգը: Այն Չեթինին հիշեցրեց մանկությունը, երբ քաղցր ձայնով պարբերաբար մրմնջացել է իր մեծ մայրը՝ Հերանուշ տատը:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՉԵԽԱՅԻ ՄԵԶ

Սոյն թուականի Նոյեմբեր 7-10-ը Չեխիայի Պրագա քաղաքին մեջ, հիւրընկալութեամբ Չեխիայի հայոց հոգեւոր հովիւին, գումարուեցաւ Համազգային Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպութեան չորրորդ ժողովը, որուն իրենց մասնակցութիւնը բերին հետեւեալ թեմերն ու հովուութիւնները. Չեխիայի, Վիեննայի, Լեհաստանի, Հունգարիոյ, Հոլանդիայի (Ամստերդամ եւ Ալմելոյ), Իտալիոյ (Հռոմ եւ Միլանոյ), Շվեդիոյ եւ Բելգիայի հովուութիւնները:

Նոյեմբեր 7-ին երեկոյեան ՀՀԵԿ-ի Եվրոպայի ներկայացուցչական ժողովի անդամները հանդիպում մը ունեցան տեղի հայ համայնքի եւ երիտասարդներու հետ, իսկ Նոյեմբեր 8-ի առաւօտեան ՀՀԵԿ-ի անդամները մեկնեցան դէպի Բրնոյ քաղաք, եւ համալսարանի սրահին մէջ տեղի ունեցաւ ժողովին առաջին նիստը: Բարի գալուստի խօսք արտասանեց Չեխիայի հայոց հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Բարսեղ վարդապետ Փիլաւչեանը: Ներկաներուն իրենց օրհնութիւնները յղեցին Եվրոպայի ՀՀԵԿ պատասխանատու եւ Իտալիոյ հայոց հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Առն վարդապետ Շահենեանը եւ Հոլանդիայի հայոց հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Տաթև վարդապետ Յակոբեանը՝ Աստուծոյ օգնականութիւնը հայցելով կարեւոր այս կազմակերպութեան յաջողութեան համար: Իր հերթին Առն վարդապետը մասնաւոր կերպով անդրադարձաւ Հայոց Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրելին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատած սոյն նախաձեռնութեանը, որպէս հիմնական առաքելութիւն մը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանաւորութեան ներքոյ: Այնուհետեւ, ան իր խօսքին մէջ յատկօրէն շեշտեց հայ երիտասարդի առաքելութիւնն ու պարտականութիւնը եւ ինչպէս պէտք է նեցուկ կանգնիլ եւ աշխատիլ Հայ Եկեղեցւոյ զօրացման եւ հայ մշակոյթի տարածման համար: Նոյն օրը երեկոյեան Բրնոյ քաղաքին մէջ ներկայացուցչական ժողովի անդամները հանդիպում մը ունեցան տեղի հայ համայնքին եւ երիտասարդներու հետ:

Կիրակի Նոյեմբեր 9-ին առաւօտեան Պրագա քաղաքին մէջ շարունակուեցաւ ՀՀԵԿ-ի Եվրոպայի ներկայացուցչական ժողովի երկրորդ նիստը, որուն նախագահեց Չեխիայի հայոց հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Բարսեղ վարդապետ Փիլաւչեանը: Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան տիար Աշոտ Ոսկանեանը, երգչուհի Յասմին Կարապետեանը եւ Էրիք:

Կիրակի Նոյեմբեր 9-ին կէսօրէ ետք ժամը 13:30 Պրագայի եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Սուրբ Պատարագ, պատարագիչն էր Հոգշ. Տ. Առն վարդապետ Շահենեանը: Յաւարտ Պատարագի տեղի ունեցաւ նաեւ ՀՀԵԿ Եվրոպայի ներկայացուցչական մարմնի երիտասարդներու ուխտադրութեան արարողութիւն: Երիտասարդներն ուխտեցին մնալ հաւատարիմ զաւակները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եւ նուի-

2008

ԷԶՄԻԱԾԻՆ

ԺԱ 145

րումով ծառայել այն առաքելության, որուն կոչուած են: Իսկ Կիրակի երեկոյեան ժամը 20:30-ին տեղի ունեցաւ գեղարուեստական երեկոյ նուիրուած հայ երգին: Համերգին իրենց մասնակցութիւնը բերին երգչուհի Յասմին Կարապետեանը եւ Էրիք:

ՀՀԵԵԿ-ի Եվրոպայի ներկայացուցչական չորրորդ ժողովը պաշտօնապէս փակուեցաւ Սուրբ Պատարագով:

*ԴԻԻԱՆ ՀՀԵԵԿ-Ի ԵՎՐՈՊԱՅԻ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ*

Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս

ՆԻԻ ՃԸՐՁԻԻ ՍՐԲՈՑ ՂԵԻՈՆԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Կիրակի Նոյեմբեր 2-ին՝ Ֆերլոնի (Նիւ Ճրքի) Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցւոյ ծումը ապրեցաւ պատմական օր մը՝ երբ Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան բացումը կատարեց նորակառոյց «Կրթական եւ Երիտասարդական Կեդրոնի»-ն, որ կը գտնուի եկեղեցւոյ յարակից հողամասին վրայ:

Նոյն օրը հաւատացեալներու խոտնեւալ բազմութիւն մը Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցի փութացած էր՝ ներկայ գտնուելու համար Ս. Պատարագին, զոր մատոյց թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը:

Տրուած ըլլալով որ նոյն օրը Հայաստանեայց Եկեղեցիներուն մէջ պիտի նշուէր Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի օծման եւ գահակալութեան 9-րդ տարեդարձը, առաջնորդ Սրբազան Հայրը իր քարոզը սկսաւ Գոհաբանական Աղօթքի հետեւեալ տողերով. «Տէր Աստուած մեր, ընդունէ Քու ժողովուրդիդ աղաչանքները, եւ Տէր Գարեգին Բ. մեր սրբազնագոյն Կաթողիկոսը, զոր ընտրեցիր Հայոց ազգին հայրապետութեան եւ առաջնորդութեան, իր վեհ կոչմանը մէջ հաստատուն եւ անսասան պահէ երկար ատեն: Տուր անոր առիթ, որպէս զի Քու ժողովուրդդ հեզութեամբ եւ ուղղափառութեամբ առաջնորդէ. բարձրացուր տիեզերքի մէջ քու օծեալիդ եղջիրը: Արժանի դարձուր զայն ըլլալու հաւատարիմ եւ իմաստուն տնտես Քու նոր ուխտիդ»: Ծարունակելով իր քարոզը՝ Սրբազան Հայրը ըսաւ. «Այսօր Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի օծման եւ գահակալութեան 9-րդ տարեդարձն է, եւ հայկական բոլոր եկեղեցիներուն մէջ, ըստ աւանդութեան, Հայրապետական Մաղթանք կը կատարուի՝ առիթը ընծայելով որ մեր սրտաբուխ աղօթքի մրմունջները բարձրացնենք առ Աստուած՝ խնդրելով որ Իր շնորհները առատացնէ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին վրայ, որ զլուխն ու առաջնորդն է Հայց. Եկեղեցւոյ եւ յաջորդը Ս. Գրիգոր Լուսաւորչի: Կաղօթենք այս ընտրեալ ծառային համար՝ որպէս զի ան կարենայ առաջնորդել բովանդակ հայութիւնը՝ իմաստութեամբ ու առաքինութեամբ՝ խոնարհութեամբ եւ ուղղափառութեամբ»: Ապա, առաջնորդ Սրբազան Հայրը շնորհատեց Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ ծումը՝ որուն անդամները կոչեց «Գարի տնտեսներ», որոնք ամէն ջանք ի գործ դրին իրականացնելու համար այս ծախսալից կեդրոնը: «Շնորհիւ հաւատացեալներու նուիրատուութեանց՝ Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցին աւելի վճռականութեամբ պիտի շարունակէ իր առաքելութիւնը». ըսաւ Սրբազան Հայրը, նոյն ատեն իր հպարտութիւնը յայտնելով ի տես ներկայութեանը երիտասարդներուն, որոնք կը ծառայեն Ս. Խորանին եւ կանդամակ-

ցին դպրաց դասին եւ երիտասարդաց կազմակերպութեան, ինչպէս նաեւ կը յաճախեն Հայ Դպրոց եւ Կիրականօրեայ Վարժարան:

Առաջնորդ Սրբազան Հօր քարոզի աւարտին տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանքի արարողութիւնը:

Ս. Պատարագէն ետք՝ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի առաջնորդութեամբ, ներկաներու թափօրը յառաջացաւ դէպի նորակառոյց կեդրոնի մուտքը եւ մասնաւոր արարողութենէ ետք կատարուեցաւ ժապաւէնի հատումի արարողութիւնը: Այս առիթով Նորին Սրբազնութիւնը իր գնահատանքը յայտնեց երեք գլխաւոր նուիրատուներուն՝ Չարլզ եւ Կրէյս Փինաճեաններու, որոնց անունով կոչուած է Երիտասարդական Կեդրոնը, Ճիմ եւ Սանտրա Լայթնըրի, որոնց ծնողաց ճորճ եւ Շաքէ Շահինեաններու անունով կոչուած է Կեդրոնի Մարգարանը եւ Սիրան Կապրիէլեանի, որուն ողբ. ամուսնոյն Սարգիսի եւ իր անունով կոչուած է Կրթական Կեդրոնը: Ժապաւէնի հատումէն ետք՝ առաջնորդ Սրբազան Հայրը ի մէջ այլոց ըսաւ որ Սրբոց Ղեւոնդեանց ծովսը, Արեւելեան թեմին մէջ, օրինակելի ծովս մըն է:

Ապա բոլոր ներկաները հիւրասիրուեցան Եկեղեցւոյ Ապաճեան Սրահին մէջ: Կարգադիր Յանձնախումբի ատենապետ Մարկարէթ Աճէմեան եւ հանդիսավար Կլէն Աճէմեան ղիմաւորեցին բոլոր մասնակիցները:

Կեդրոնի կառուցման յանձնախումբի ատենապետ Ճիմ Լայթնըր շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց՝ որոնք իրենց մասնակցութիւնը բերած էին այս ծախսալից ծրագրի իրականացման, որ արժած էր աւելի քան հինգ միլիոն տոլար: Կեդրոնի ծախսերը հոգալու համար, ան ըսաւ որ մէկ միլիոն տոլարի հիմնադրամ մը հաստատելու գործընթացը սկիզբ առած է: Շուտով նոր յայտագիրներ պիտի կազմակերպուին նոր կեդրոնի ներկայացուցած յարմարութիւնները օգտագործելու համար:

Կեդրոնի ճարտարապետն է եկեղեցւոյ ծխականներէն Թամըս Աշպահեան: Կեդրոնը ունի վեց դասարաններ, հանդիսասրահ, գրասենեակ, ժողովասրահ, խոհանոց, ճաշարսրահ եւ արդիական մարգարան:

Տիկին Սիրան Կապրիէլեան ըսաւ որ մենք ընդարձակեցինք մեր եկեղեցին, կառուցինք համայնքային կեդրոն մը, եւ ահա այժմ ունեցանք Կրթական եւ Երիտասարդական Կեդրոն մը: «Ինծի համար մեծ ուրախութիւն է որ իմ մասնակցութիւնս բերի այս տեսիլքի իրականացման մէջ»:

Սանտրա Լայթնըր-Շահինեան, որուն ծնողաց ճորճ եւ Շաքէ Շահինեանք անունով կոչուած է Կեդրոնի Մարգարանը, խօսեցաւ ընտանիքի կարեւորութեան մասին: «Ինծի համար մեծնալը եւ ծնողք դառնալը լաւագոյն դասն էր սորվելու համար թէ մէկը պէտք է սիրես քու կեանքէդ աւելի: Այս կեդրոնը Սրբոց Ղեւոնդեանց ընտանիքի նոր սերունդին տրուած նուէրն է» ըսաւ ան:

Չարլս Փինաճեան ըսաւ որ այս նոր Կեդրոնը Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ պատմութեան մէջ կը հանդիսանայ նոր հանգրուան մը:

Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ պատմութենէն քաղուած լուսապատկերներ ցուցադրեց Երիտասարդաց Կազմակերպութեան անդամ Շանթ Մարութեան:

Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժշ. Տ. Տիրան քինյ. Պօհաճեան իր ուրախութիւնը յայտնեց ծուխի այս նոր իրագործումին ի տես եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակցողներուն: «Այսօր նոր էջ մը կը բացուի մեր ծուխի կեանքին մէջ, եւ ասիկա սկիզբն է բազմաթիւ ուրախ առիթներու», ըսաւ Տէր Հայրը:

Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ ծխականներու եւ ներկաներու ուրախութիւնը բացառիկ էր: Այս խանդավառ մթնոլորտին մէջ բոլորը կը շնորհաւորէին զիրար եւ իրենց շնորհակալութիւնը կը յայտնէին մասնաւորապէս Կեդրոնի կառուցման գլխաւոր նուիրատուներուն:

Հաւաքոյթը վերջ գտաւ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի փակման աղօթքով եւ բոլորին կողմէ երգուած Տէրունական աղօթքով:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՎԱՔԸ

Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 2-ը Վիեննայում «Մկրտությունը մեր Եկեղեցիների կյանքում» թեմայով տեղի ունեցավ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի և Եվրոպայի Բողոքական Եկեղեցիների Միության չորրորդ հավաքը, որին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մասնակցեց Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը:

Հավաքի ընթացքում զեկուցողներն անդրադարձան Ուղղափառ և Բողոքական եկեղեցիներում մկրտության խորհրդին առնչվող խնդիրներին:

Ժողովականները Կարդինալ Քյոնիգ Հաուսի մատուցում մասնակցեցին նաև երեկոյան ուղղափառ աղոթքի արարողությանը:

*ՄԱՅԸ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ*

ԵՆԽ ԵՎ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՈՍՍԵԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԴՊՐՈՑՈՒՄ

Նոյեմբերի 17-ին Բոսսեի էկումենիկ դպրոցում սկսվեց ԵՆԽ և Կաթոլիկ Եկեղեցու միջև համատեղ աշխատանքային խմբի հանդիպումը՝ համանախագահությամբ Նորին Սրբազնություն Նիֆոն միտրոպոլիտի (Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցի) և Նորին Սրբազնություն Մարտին արքեպիսկոպոսի (Կաթոլիկ Եկեղեցի):

Հանդիպման ընթացքում մասնակիցներն անդրադառնալով են աշխատանքային խմբի օրակարգի հարցերին, որոնք վերաբերում են էկումենիկ փաստաթղթերի ընդունման գործընթացներին, էկումենիզմի հոգևոր ակունքներին, միգրացիայի և երիտասարդության հարցերին:

Մասնակիցները նաև այցելեցին ԵՆԽ և ծանոթացան ԵՆԽ գործունեությանը՝ հանդիպումներ և քննարկումներ ունեցան ԵՆԽ ծրագրերի պատասխանատուների և աշխատակիցների հետ: Այդ օրերին հանդիպումներ տեղի ունեցան Շվեյցարիայում պապական նվիրակ Սիլվիանո արքեպս. Թոմասիի, Շամբեզիի Ուղղափառ կենտրոնի պաշտոնության հետ, մասնակիցները այցելեցին Ռեֆորմիստական Եկեղեցու կենտրոն, ինչպես նաև Գրանդշոնի Ռեֆորմիստական վանք:

Հանձնախմբում Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի թեմական պատվիրակ Գերաշնորհ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ նոյեմբերի 17-22-ի լիագումար նիստին անձնափոխանորդի կարգավիճակով մասնակցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը:

*ՄԱՅԸ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՄԻՋԵՎԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ*

«ԿՐՈՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ»

Նոյեմբերի 18-20-ը Բրյուսելում կայացավ Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի և Եվրոպայում Գերմանիայի Եկեղեցիների միության կողմից կազմակերպված «Կրոնը հասարակական կյանքում. օրենսդրական մարտահրավերներ և գործընթացներ» թեմայով իրավաբանների և մասնագետների համաժողով:

Եվրոպայի 22 Եկեղեցիներ ներկայացնող իրավաբաններ քննարկեցին բազմաթիվ հարցեր, որոնք վերաբերում են Եկեղեցի և պետություն հարաբերություններին: Քննարկումների ընթացքում նրանք մասնավոր անդրադարձ ունեցան Եկեղեցու և քաղաքացիական հասարակության հարաբերությունների, Եվրոմիության ֆոնդերից Եկեղեցիների օգտվելու, Եվրոմիության հակախտրական քաղաքականության գործնական ազդեցությունների խնդիրներին, Լիսաբոնյան Համաձայնագրի 17 (վերաբերում է Եվրոմիության և Եկեղեցիների միջև թափանցիկ և կանոնավոր երկխոսությանը) հոդվածի հետագա բարեփոխմանը, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի դիտանկյուններից կրոնական ազատության խնդիրներին:

Հանդիպման ընթացքում մասնակիցները ընտրեցին ընդհանուր հետաքրքրության թեմաներ հետագա աշխատանքների համար: Անդրադարձ կատարվեց նաև տարբեր երկրներում գործող փոքրամասնական Եկեղեցիների իրավունքներին, եկեղեցական կառույցների կարգավիճակի և Խորհրդային Միության փլուզումից հետո սեփականության վերադարձի խնդիրներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում էր Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Իրավաբանության ֆակուլտետի դեկան դոկտոր Թոմ Սամվելյանը:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ*



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ԴԵՄՊԱՆԻՆ

Նոյեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ արտակարգ և լիազոր նորանշանակ դեսպան Մարի Յովանովիչին:

Ողջունելով դեսպանի այցը Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները հայտնեց նորանշանակ դեսպանին՝ հաջողություններ մաղթելով իր առաքելության ընթացքում: Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ դեսպանն իր գործունեությամբ կնպաստի երկու պետությունների հարաբերությունների առավել զորացմանը: Նորին Սրբությունը նաև ի դեմս դեսպանի շնորհակալություն հայտնեց ԱՄՆ իշխանություններին Հայաստանին բերած զորակցության համար:

Տիկին Յովանովիչը իր հերթին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին օրհնության և բարեմաղթանքների համար՝ վստահեցնելով, որ իր կարելին պիտի անի երկու ժողովուրդների մերձեցման համար:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացին, հայ-թուրքական հարաբերություններին և հասարակական կյանքում Եկեղեցու դերակատարությանը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 1-ին, շաբաթ - Տոն ամենայն սրբոց՝ հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Ս. Մուշեղ արքեպիսկոպոս Բաբայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Նոյեմբերի 2-ին, կիրակի - Ը. կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Ս. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Նոյեմբերի 8-ին, շաբաթ - Սրբոց հրեշտակապետացն՝ Գաբրիելի եւ Միքայելի եւ ամենայն երկնային զորացն:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Ս. Գաբրիել արքեպիսկոպոս Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Նոյեմբերի 9-ին, կիրակի - Թ. կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Ս. Սահակ եպիսկոպոս Մաշայանը: Հընթացս Ս. Պատարագի ձեռամբ պատարագիչ Սրբազան Հոր Մայր Աթոռի յոթ միաբաններ ձեռնադրվեցին ամուսնացյալ քահանաներ: Ձեռնադրության ավարտին Սրբազան Հայրը «Ինչպես Հայրս ուղարկեց Զիս, այդպես ալ Ես կուղարկեմ ձեզ աշխարհ. առե՛ք Ս. Հոգին» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 44):

Նոյեմբերի 16-ին, կիրակի - Ժ. կիր. զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Ս. Մովսիկ վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Նոյեմբերի 21-ին, ուրբաթ - Ե. օր Յիսնակաց պահոց: Ընծայումն Սուրբ Աստուածածնի երկց ամաց ի Տաճարն:

Այսօր Ս. Վարդան-Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանում Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Ս. Մաղաքիա արքեպիսկոպոս Ամիրջանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 46):

Նոյեմբերի 23-ին, կիրակի - Ա. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Ս. Արտակ վարդապետ Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր

Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Նոյեմբերի 29-ին, շաբաթ - Տօն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Վարդան արեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Նոյեմբերի 30-ին, կիրակի - Բ. կիր. Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 49):

“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Ноябрь 2008 г.)

1. Патриарший молебен по случаю 9-ой годовщины интронизации Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, 2 ноября 2008 г. (с. 3).
2. **ДЬЯКОН АРАМ ЦАТУРЯН** - Первосвятительский визит Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, в Румынию и Молдову, 24-27 октября 2008 г. (с. 4-13).
3. **СВЯЩЕННИК АВЕТИС АМБАРЦУМЯН, ДЬЯКОН АРАМ ЦАТУРЯН** - Первосвятительский визит Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, в Индию, 5-16 ноября 2008 г. (с. 14-34).
4. Встреча Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян с Эмиром Шаржи, 24 ноября 2008 г. (с. 35).
5. Послание благословения Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян по случаю 600-летия строительства Армянской церкви Св. Богородицы в городе Яш в Румынии, 2 октября 2008 г. (с. 36-37).
6. Собрание Верховного Духовного Совета в Первопрестольном Святом Эчмиадзине, 28 ноября 2008 г. (с. 38-39).
7. Вручение призов победителям конкурса “Лучший учитель года” в Первопрестольном Святом Эчмиадзине, 1 ноября 2008 г. (с. 40-41).
8. Праздник Первых Армянских Просветителей в Первопрестольном Святом Эчмиадзине, 30 ноября 2008 г. (с. 42-43).

ПРОПОВЕДИ

9. Проповедь Его Преосвященства епископа Саака Машаляна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 9 ноября 2008 г. (с. 44-45).
10. Проповедь преподобного архимандрита Магакии Амиряна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина на праздник введения во храм Пресвятой Богородицы, 21 ноября 2008 г. (с. 46-48).
11. Проповедь Его Преосвященства епископа Армаша Налбандяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 30 ноября 2008 г. (с. 49-51).

ИСТОРИКО - ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

12. **РУБЕН РАФИКОВИЧ ГАСПАРЯН** – Новоявленная лапидарная надпись из

монастыря Св. Христофора (исследование по литографии)-(с. 52-69).

13. **КАРЕН САРКИСЯН** – “Судебник“ Мхитара Гоша как памятник средневекового армянского права (историкоправовое исследование)-(с. 70-73).
14. **АЗНИВ АКОПЯН** - Господние праздники Армянской Апостольской Церкви и их проявления в народной жизни (церковное исследование)-(с. 74-80).
15. **АЛА ХАРАТЯН** – Концепция Даниела Варужана о становлении рода в сборнике “Сердце рода” (литературоведческое исследование)-(с. 81-87).
16. **Л. М. ВАРДАНЯН, А. Г. САРКИСЯН** – Этнокультурные исследования Нагорного Карабаха в 1920-х годах (историковедческое исследование)-(с. 88-109).
17. **НОРАЙР КАЗАРЯН** - Слово бытия. Структура и словесная среда (литературоведческое исследование)-(с. 110-117).
18. **АРПИ ХАЧАТРЯН** - Духовная тема в поэзии Г. Эдосяна (литературоведческое исследование)-(с. 118-126).

РЕЦЕНЗИИ

19. “Армянские монастыри” – монументальный том об армянских монастырях (о книге Трдата Паляна. подготовил к печати К. Аветисян)-(с. 127-128).
20. **ГЕВОРК СТЕПАНЯН** – О меликствах и меликских домах Арцаха (о книге Артака Магальяна “Меликства Арцаха и меликские дома в XVII-XIX веках”)-(с. 129-130).
21. **ЭДИК МИНАСЯН** – Новая книга о новейшей истории Арцаха (о книге Гранта Абрамяна “Воюющий Арцах в 1917-2000 гг.”)-(с. 131-133).

В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

22. Рукоположение в священники в Первопрестольном Святом Эчмиадзине, 9 ноября 2008 г. (приведены также биографии священников Нерсеса Галаляна, Арсена Сарояна, Татевы Марукяна, Езника Малхасяна, Аршака Назаряна, Арарата Гумбальяна)-(с. 134-137).
23. Рукоположение в священники в Калькутте (приведена биография священника Аветиса Амбарцумяна), 15 ноября 2008 г., (с. 138).
24. Католикос Всех Армян освятил в уголовноисполнительном учреждении Кош нововозведенную церковь, 30 ноября 2008 г. (с. 139-140).
25. Освящена часовня Св. Саркис в селе Лернаовит, 18 ноября 2008 г. (с. 141).
26. Защита выпускных работ в Геворкянской Духовной Семинарии, 20 ноября 2008 г. (с. 142).

2008

ԷՋՄԻԱԾԻՆ

ԺՄ 157

-
-
27. Автор книги “Моя бабушка” Фетние Четин в Ванадзоре, 29 октября 2008 г. (с. 143).
 28. Представительское собрание в Чехии Молодежной организации Армянской церкви в Европе, 7-10 ноября 2008 г. (с.144-145).
 29. Открытие новопостроенного образовательного и молодежного центра церкви Св. Гевондянц в Нью-Джерси, 2 ноября 2008 г. (с. 146-148).

МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ

30. Четвертый сбор Конференции Европейских церквей и Союза Протестанских Церквей Европы, 30 октября-2 ноября 2008 г. (с. 149).
31. Встреча совместной рабочей группы Всемирного Совета Церквей и Католической Церкви в экуменической школе Боссе, 17 ноября 2008 г. (с. 150).
32. “Религия в общественной жизни. правовые вызовы и процессы”, Брюссель 12-20 ноября 2008 г. (с. 151).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

33. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, посла США в Армении, 3 ноября 2008 г. (с. 152).
34. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение ноября 2008 г. (с. 153).

**“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(November 2008)**

1. Celebrations of the 9th anniversary of enthronement of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, 2 November, 2008 (p. 3).
2. **DEACON ARAM TSATOURIAN** - Pontifical visit of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Romania and Moldova, 24-27 October, 2008 (p. 4-13).
3. **FR. AVETIS HAMBARDZOU MIAN, DEACON ARAM TSATOURIAN** - Pontifical visit of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to India, 5-16 November, 2008 (p. 14-34).
4. Meeting of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, with the Ameer of Sharzha, 24 November, 2008 (p. 35).
5. Letter of Blessings of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the 600th construction anniversary of Holy Mother of God Armenian Church of Iasi (Romania), 2 October, 2008 (p. 36-37).
6. Convention of the Supreme Spiritual Council in the Mother See of Holy Etchmiadzin, 28 November, 2008 (p. 38-39).
7. “The Best Teacher of the Year” prize awarding ceremony in the Mother See of Holy Etchmiadzin, 1 November, 2008 (p. 40-41).
8. Feast of the First Armenian Illuminators in the Mother See of Holy Etchmiadzin, 30 November, 2008 (p. 42-43).

SERMONS

9. Sermon delivered by His Grace Bishop Sahak Mashalian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, on the occasion of the priestly ordination, 9 November, 2008 (p. 44-45).
10. Sermon delivered by Rev. Fr. Maghakia Amirian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, on the occasion of the Feast of Presentation of the Holy Virgin to the Temple, 21 November, 2008 (p. 46-48).
11. Sermon delivered by His Grace Bishop Armash Nalbandian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, 30 November, 2008 (p. 49-51).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

12. **ROUBEN RAFIK GASPARIAN** – A newly discovered inscription in the monastery of St. Christopher (research of lapidary inscriptions) – (p. 52-69).

13. **KAREN SARKISSIAN** – “Code” by Mkhithar Gosh as a monument to the Armenian medieval law (historical- juridical research) – (p. 70-73).
14. **AZNIV HAKOBIAN** – Dominical Feasts of the Armenian Apostolic Church and their manifestation in the national life (ecclesiastical research) – (p. 74-80).
15. **ALA KHARATIAN** – The concept of race-formation of Daniel Varouzhan in the collection of works “The Heart of the Race” (literary research) – (p. 81-87).
16. **L. M. VARDANIAN, H. G. SARKISSIAN** – Ethnic-Cultural Researches in Nagorno-Karabakh in 1920s (historical research) – (p. 88-109).
17. **NORAYR GHAZARIAN** – Speech of Existence: composition and word sphere (literary research) – (p. 110-117).
18. **ARPY KHACHATRIAN** – Spiritual Theme in the Poetry of Henrik Edoyan (literary research) – (p. 118-126).

LITERARY REVIEW

19. “Armenian Monasteries”, a wonderful book about Armenian monasteries (on the book “Armenian Monasteries” by Bishop Trdat Palian, prepared for publication by K. Avetian) - (p. 127-128).
20. **GEVORG STEPANIAN** – On the princedoms of Artsakh (on the book “Princedoms of Artsakh in the 17th-19th centuries” by Artak Maghalian) – (p. 129-130).
21. **EDIK MINASSIAN** – A new book on the new history of Artsakh (on the book “Struggling Artsakh in 1917-2000” by Hrant Abrahamian) – (p.131-133).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

22. Priestly ordination in the Mother See of Holy Etchmiadzin, 9 November, 2008 (biographies of Fr. Nerses Ghalalian, Fr. Arsen Saroyan, Fr. Tathev Maroukian, Fr. Yeznik Malkhassian, Fr. Paren Arakelian, Fr. Arshak Nazarian, Fr. Ararat Gumbalian) - (p. 134-137).
23. Priestly ordination in Calcutta, India, 15 November, 2008 (biography of Fr. Avetis Hambardzoumian) - (p. 138).
24. His Holiness Karekin II, Catholicos of All Armenians consecrated the newly built church of “Kosh” prison, 30 November, 2008 (p. 139-140).
25. Consecration of St. Sarkis chapel in Lernahovit village, 18 November, 2008 (p. 141).
26. Defense of theses at the Gevorkian Theological Seminary, 20 November, 2008 (p. 142).
27. Fetniye Chetin, the author of the book “My Grandmother” in Vanadzor, 29 October, 2008 (p. 143).
28. Assembly of the Pan-Armenian Youth Organization of Europe in the Czech Republic, 7-10 November, 2008 (p. 144-145).
29. Inauguration of the newly built educational and youth center of St. Ghevondiants Church in New Jersey, 2 November, 2008 (p. 146-148).

INTER-CHURCH NEWS

30. The fourth meeting of the Conference of European Churches and the European Community of Protestant Churches, 30 October – 2 November, 2008 (p. 149).
31. The meeting of the joint working group of the World Council of Churches and the Catholic Church held in the Ecumenical Institute of Bossey, 17 November, 2008 (p. 150).
32. “Religion in the social life: juridical challenges and processes”, Brussels, 12-20 November, 2008 (p. 151).

AUDIENCES IN THE MOTHER SEE

33. Audience granted by His Holiness Karekin II to the Ambassador of USA to Armenia, 3 November, 2008 (p. 152).
34. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during November 2008 (p. 153).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական մադթանք Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 9-րդ տարեդարձի առիթով	3
ԱՐԱՄ ՍԱՐԿԱՎԱԳ ԾԱՏՈՒՐՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցելությունը Ռումինիա և Մոլդովիա	4
Տ. ԱՎԵՏԻՍ ՔԱՀԱՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, ԱՐԱՄ ՍԱՐԿԱՎԱԳ ԾԱՏՈՒՐՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցելությունը Հնդկաստան	14
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Շարժայի Էմիրի հետ 35	
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության Գիրը Ռումինիայի Յաշ քաղաքի Ս. Աստվածածին հայոց եկեղեցու կառուցման վեցհարյուրամյակի առիթով	36
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով	38
«Տարվա լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	40
Հայոց Առաջին Լուսավորիչների տունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ..	42

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին քահանայական ձեռնադրության առիթով	44
Տ. Մաղաքիա աբեղա Ամիրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին Ս. Աստվածածնի տաճարին ընծայման տոնի առիթով	46
Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	49

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌՈՒԲԵՆ ՌԱՖԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ – Նորահայտ արձանագրություն Ս. Քրիստափորի վանքից	52
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ – Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» որպես	

հայ միջնադարյան իրավունքի հուշարձան	70
ԱԶՆԻՎ ՀԱԿՈՐՑԱՆ – Հայ Առաքելական Եկեղեցու Տերունի տոները և դրանց դրսևորումը ժողովրդական կյանքում	74
ԽԱՌԱՏՅԱՆ ԱԼԱ - Դանիել Վարուժանի ցեղակերտման կոնցեպցիան «Յեղին սիրտը» ժողովածուում	81
Լ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Հ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ – Լեոնային Ղարաբաղի Էթնոմշակութային ուսումնասիրությունները 1920-ական թթ.	88
ՆՈՐԱՅՐ ՂԱԶԱՐՅԱՆ - Կեցության խոսքը. Կառուցվածք և բառոլորտ .	110
ԱՐՓԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ – Հոգևոր թեմայի արձարծումները Հենրիկ Էդոյանի պոեզիայում	118

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հայկական վանքերու մասին կոթողային հատոր մը՝ «Հայ վանորայք»	127
ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ - Արցախի մելիքությունների և մելիքական տների մասին	129
ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ - Նոր գիրք Արցախի նորագույն պատմության մասին	131

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	134
Տ. Ներսես քահանա Ղալալյան	135
Տ. Արսեն քահանա Մարոյան	135
Տ. Տաթև քահանա Մարության	136
Տ. Եզնիկ քահանա Մալխասյան	136
Տ. Փառեն քահանա Առաքելյան	136
Տ. Արշակ քահանա Նազարյան	137
Տ. Արարատ քահանա Գումբալյան	137
Քահանայական ձեռնադրություն Հնդկաստանում	138
Ամենայն Հայոց Կաթողիկոսն օծեց «Կոշ» քրեակատարողական հիմնարկի նորակառույց եկեղեցին	139
Օծվեց Լեոնահովիտ գյուղի Ս. Սարգիս մատուռը	141
Ավարտաճառերի պաշտպանություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում ..	142
«Մեծ մայրս» գրքի հեղինակ Ֆեթնիյե Չեթինը Վանաձորում	143
Եվրոպայի Համազգային Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց կազմակերպության ներկայացուցչական ժողով Չեխիայի մեջ	144
Նիւ Ճըրզիի Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցւոյ նորակառույց կրթական եւ երիտասարդական կեդրոնի բացումը	146

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի և Եվրոպայի Բողոքական Եկեղեցիների միության չորրորդ հավաքը	149
ԵՀԽ և Կաթոլիկ Եկեղեցու միջև համատեղ աշխատանքային խմբի հանդիպում Բոսսեի Էկումենիկ դպրոցում	150
«Կրոնը հասարակական կյանքում. օրենսդրական մարտահրավերներ և գործընթացներ»	151

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում ԱՄՆ դեսպանին	152
Եկեղեցական բեմ. լուրեր	153
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата	155
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	158